


910.4(38)

B-36







2-29

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԸՆԸՔԸՐՍԵԼՅ

ՅԵՂԵՂԵ



ՀԱՏՈՐ Զ.

Handwritten scribbles or marks at the top of the page.

mirrored text from the reverse side of the page, appearing as bleed-through. The text is mostly illegible but includes words like "PUBLISHED" and "BY".

2004

910.4(38)

2214

Մատենադարանի գրքագրարան

P-36  
պ.

391-ԱԿ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

# ԿՐՏԱԼՐՈՅՆ ԸՆԵՔԸՐՄԵԼՅ ՅԵՂԵԳԱ

ԳՐԵՆԼ ԳԻՄՆՈՎՈՒԹՅԱՆ

Ի Յ Յ ՊԸՐԹԵՆԻՐՄԵԼՅ

ՆԻ ԲԵՐԳՄԱՆԵՆԼ

Ի Հ Ե Գ ՈՒՆՐԳԱՅ Վ Հ Ի Ր Մ Ի Զ Ե Ա Ն

Ի Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն ՈՒ Ի Տ Ի Ն


1004  
18046



Ի Վ Լ Ե Ն Տ Ի Կ

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Մ Ր Բ Ո Յ Ն Վ Ա Չ Ա Ր ՈՒ

1846 . Ռ Մ Ա Ն



1180  
9(38)

180HP  

---

1001

1910  
1001  
180HP





ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԸՆԸՒԲԸՐՍԵԼՅ

ՅԵՂԵՂԵ

ԳՎՍԻՍ Հ.Օ.

Ի Դեղոս և ՚ի Բոլոր կղզիս :

Ի ԲԱՐԵՐԱՍՍ նահանգիս ուր կամն, զաչալըրջոց զեղածիծաղ աւուրց բերէ: զարունն զնմանութիւն. զի որովք մատուցանէն և որովք խտտանայն, երկաքանչիւրովքն բերկրէ զսիրտս բարեօք: Ղառազայթք արեգական ոչ ևս ՚ի գոլորշեաց թանձունց նսեմացեալ, և չև ևս արծարծեալք յերեսաց բոցակէզ չնկանն, լոյս ջինջ և անայլայլակ հանգչի հեզաբար զերևելեօքս առ հասարակ, հանգոյն այնմ որով յԱղլմնպոս ճառազայթեն զիքն լուսապսակք:

Ի ծագել ծայրակարմիր ճառազայթից նորա ընդ որորտս՝ տատանին ծառոց տերևք նորընծիւղք,

հնչեն քաղցրաձայն ափունք Վղիսեայ 'ի յերգս  
 Թռչնոց, և յԱմեա լերին գեղջուկ սրնգաց հնչեն  
 արձագանք: Այ իբրև հանդերձի 'ի մայրն իւր  
 մտանել, ծածկին երկինք աստեղազարդ քողովն,  
 և յաւերժահարսունք Մտօրիկեայ ելանեն երկրն-  
 չոտ ոտիւք կայթս տալ Թեթևս 'ի դալարւոջ:  
 Այլ ընդ հուպ ծագէ նա անդրէն, և ոչ ևս իւրն-  
 դրի զովն ցայգական և երիկեան պայծառութիւն-  
 զի գողցես իմննոր արեգակն ընդ նորաստեղծեալ  
 տիեզերս սփռեալ ծաւալի, և յերանգս անծա-  
 նօթս մահկանացուաց գունազեղէ զարևելս:  
 Այրկեան 'ի վայրկեան յաւելու բնութիւնն  
 'ի գեղ, և բոպէ 'ի բոպէ նկրտի 'ի կատարումն  
 բոլորից էիցս ցուցակութեան գործ մեծ:

Աւուրք գեղապայծառք, ո՛ր գիշերք զուար-  
 ձալիք, որպիսի յոյզս յիս ներգործէին տպաւո-  
 ռութիւնքն անդուլ ազդեցեալք 'ի ձէնջ 'ի ըզ-  
 գայութիւնս իմ: Այլ դէք բերկրութեանց, ո՛վ  
 գեղ գարնայնոց, յամենայն 'ի փառս քո տեսա-  
 նեմ՝ զայս ամ զարդարեալ զքեզ: Այու յաղ-  
 Թանակաւ ընդ դաշտս Ալլադայ ձեմ առեալ, և  
 'ի վարսիցդ զծաղիկս քակեալ սփռէիր նոցին 'ի  
 զարդ. և յերևելքո 'ի հովիտս, հովիտք 'ի դա-  
 լարագեղ փոխէին 'ի մարգս. և 'ի լերինս երևեալ  
 քո, ծոթոր և Թիւմ բուրէին բիւր ազգի ազգի  
 անուշահոտութիւնս. և ընդ օդս սաւառնեալ,  
 զզուարթութիւն երեսաց քոց անդ ծաւալէիր:  
 Այր 'ի բարբառ քո դիմեալ, Թօթափեր շուր-

Ձանակի զնետան հրավառս , և երկիրն 'ի նոցունց վառեալ բորբոքէր : Մենայն ինչ ծնանէր վերբատին առ 'ի զարդարել , և ամենայն ինչ զարդարէր առ 'ի հաճոյ լինել : Մյսպէս երևեցաւ աշխարհ յելանէն 'ի համապարփակ վճէն , 'ի բարեբաստ պահուն՝ յորում մարդ շլացեալ 'ի պայծառութենէ օթեանին իւրոյ , և ապշեալ և հաճ ընդ գոյութիւն իւր , ոչ առ այլ ինչ թուէր ընկալեալ զմիտս՝ բայց առ 'ի ճանաչել զբարեբաստութիւն իւր , ոչ առ այլ ինչ զսիրտ՝ բայց առ 'ի ցանկալ այնմ՝ , և ոչ առ այլ ինչ զհոգի՝ բայց առ 'ի զգալ զայն :

Վեղեցիկս այս եղանակ գեղեցկագոյն ևս առեալ բերէր տօնս՝ որպէս այն՝ որ 'ի լրումն չորից ամաց կատարի 'ի Վեղոս 'ի պատիւ ծննդեան Մրտեմեայ դիցն և Մպողոնի<sup>2</sup> : Ի բազմահոլով դարուց և այսր պաշտօն դիցս 'ի կղզեոջ անդ պաշտի . այլ զի սկսանէր թողանալ , աթեհասցիք յաւուրս պեղոպոնեսական մարտին սահմանեցին անդ տեսիլս խաղուց , որ շարժեալ ձգեն անդր զբազմութիւն ազգաց : Մանկուոյն աթե-

1 Գիտնս . Տիեզերագր . առջ 528 : Յիշատ . բանաս . կաճառ . հտ . 27 . էջ 211 :

2 Քորսիմի . տարեգր . առ տիկ . հտ . 2 . էջ 326 :

\* Ի վեցերորդ առուր թարգեղիտնի ամսոյն աստիկեցւոց կատարէր տօն ծննդեան Արտեմայ , և յեօթներորդումն

Մպողոնին : Արդ յերրորդում ամի 109 ոգիմպիադին սկիզբն թարգեղիտնի անկանէր յերկրորդ օր մայիսի 341 ամին Կ . Ք . ապա վեցերորդ և եօթներորդ օր թարգեղիտնի հանդիպէին յաթերորդ և յիններորդ օր մայիսի :

նացւոց եռային ողիք հանդիսանալ անդ, և քաղաքն առ հասարակ յուզեալ դղրդէր: Պատրաստէր և հանդէս հրեշտակութեանն, որ գնաց ամի ամի մատուցանել 'ի մեհենին Ղեղեայ գոհութիւն վասն յաղթութեանն՝ զոր տարաւ Սեւէոս ընդդէմ մարդացլուն: Ի նախն նաւու, որ զգիւցաղնն ած 'ի Արետէ, չու առնէ հանդէսն. և վաղ խի քրմին Մարդոնի սրբազան աջովն ըղխելը նաւին պսակեալ էր: Իջի ես 'ի Պիրէոն ընդ Փիլոտայ և ընդ Սիւսեայ. և ահա ծածկեալ էր ծովն նաւօք, որ ձգէին առազաստ՝ դէմ եղեալ 'ի Ղեղոս: Ըեղև մեզ պարապ ընտրութեան, զի յախշտակեալ բարձին զմեզ նաւատիք. որոց բարձրագոյ աղաղակ ցնծութեանն ընդ աղմուկ բազմամբոխ ժողովրդեանն խոնելոյ 'ի ծովէզր անդր խառնեալ թանձրանայր: Պարզեցին զառազաստս, մեկնեցաք 'ի նաւահանգստէն, և հասաք ընդ երեկո 'ի Վէոս կղզի՝:

Ի վաղիւ անդր քերեալք առ Պիրեաւ, և թողեալ զՏէնոս յահեակ, մտաք 'ի կիրճն՝ որ բաժանէ ը Ղեղոս և ընդ հռենէ կղզի: Եւ ահա երևեցաւ մեհենն Մարդոնի, զոր ցնծութեամբ բազմաւ ողջունեցաք: Ղեղոս գրեթէ առհասարակ յանդիման աչաց մերոց կայր. և յածէաք զաչս մեր անյազ ընդ հոյակապ շինուածսն, ընդ կամարակապս գեղեցկակերտս, և ընդ անտա-

1 Թուկիդ. գիրք Գ. էջ 104:

2 Եսթին. թուղթ 1. 'ի գործս Դեմոսթ. էջ 205:

ուսմէ բազմութիւն սեանցն՝ որովք քաղաքն զարգարի : Այլ 'ի տեսարանն յայն զբաղեալք, որ ըստ մատչել մեր անդր այլակերպէր, չկամէաք իմն հասանել անդր :

Հասեալք 'ի ծովեզրն, փութացաք 'ի մեհեան անդր՝ որ հեռի է 'ի ծովէ քայլս իբր հարիւր : Այրիսիքթոն որդի Աեկրոպայ, յառաջ քան զամս աւելի քան զհազար, արկ զհիմունս նորա՝, և պետութիւնք Այլադայ ոչ դադարէն 'ի զարդարելոյ զայն : Հիւսք և բոլորք ծաղկանց խիտ առ խիտ կախեալ զորմոց, զանազանեալ երանգօքն յաւելուն զպայծառութիւն պարոսեան կճին՝ որով մեհեանն կառուցեալ է՝ : Տեսաք 'ի ներքս անդ զպատկեր Մարդնի, հնութեամբն առաւել քան ճարտարութեամբ գրօշուածոյն հռչակաւոր : Յաջում զաղեղն կալեալ, և 'ի ձախում զերեսին Շնորհս՝ առ 'ի ցոյց երաժշտութեն 'ի նմանէ ունելոյ զսկիզբն և զգեղգեղանս իւր . 'ի ձեռն առաջնոյն քնար, երկրորդին սրինգ, և երրորդին երգիոն :

Սերձ 'ի պատկեր անդր կայ բազինն, որ ընդ հրաշակերտս աշխարհի 'ի համարի է՝ : Այլ ոսկի 'ի նմա, և ոչ կիճ՝, ածէ զարմացումն . այլ եղջիւրք

1 Թուրքիոյ, ուղևոր. հտ. 2. էջ 1136 :

հտ. 1. էջ 300 :

5 Պլուտ. յղ. հանձար .

2 Եւստեր. քրոնիկ. գիրք Բ. կենդան. հտ. 2. էջ 983 :

3 Սփոն, ուղևոր. հտ. 2. Մարտիազ. վերտառ. 1 : էջ 1136 :

4 Պլուտ. յղ. երաժշտ. յոգ. 13 :

կենդանեաց, որ բռնի կորացեալ, և արուեստաբար ընդ իրեարս խառնեալ առանց շաղախոց, կազմեն զկերտուածն հաստատուն և համեմատ: Վարմք պարապեալք ՚ի զարդարել զայն ծաղկամբք և սաղարթիւք<sup>1</sup>, ցուցանելին մեզ զճարտար խառնուած մասանցն. և մի ՚ի մանկապունից անտի պաշտօնելից ասէ. Մպողոն ինքնին ՚ի մանկութեան իւրում հիւսեաց զգոսա. և եղջիւրքդ այդոքիկ ահագինք, զորս տեսանէքդ կախեալ զորմոց և յորոց բազինա այս կազմեալ է, վրիժակք են այժից վայրենեաց ճարակաւորաց ՚ի Անթուս լէրին, որք ընդ հարուածովքն Մլատեմեայ անկան տապաստ<sup>2</sup>: Մտանօր ամենայն ուրեք աչք սքանչելիս տեսանեն. արմաւենիդ, որոյ զմեօք սաւառնին ուղէչք, է նոյն այն՝ յոր յեցաւ Ատոնէ յերկնել զգիւն զորս պաշտեմք<sup>3</sup>: Ինդիր ինչ երկրաչափական, որոյ լուծումն ճշգրիտ ոչ տացի թերևս մինչ ՚ի սպառ, արար անուանի զձև բազնիս: Ի ժամանակի յորում ախտ ժանտ ՚ի կղզւոջս ճարակէր, և պատերազմ պառակտէր զԱլլադա, հարքն մեր հարցին զգիս, և հրաման պատասխանոյ եղև նց, դադարել պատուհասին՝ եթէ երկպատիկ զբազինն գործեսցեն<sup>4</sup>: Աոյա

<sup>1</sup> Սփանհ. ՚ի Կալլիմ. հտ. 2. էջ 97:

<sup>2</sup> Կալլիմ. տաղ յԱպողոն, տող 62:

<sup>3</sup> Հոմեր. Ոգիս. գիրք 2. տող 162: Կալլիմ. ՚ի Իւեղոս. տող 208: Թէոփր. բուսաբան

գիրք Դ. գլ. 14. էջ 489: Կիկեր. յԳ. օր. գիրք Ա. հտ. 3. էջ 115:

<sup>4</sup> Պլատ. յԳ. գիւին Սոկր. հտ. 2. էջ 479: Վաղ. Մտքս. գիրք Ը. գլ. 12:

Թուեցաւ կրկնապատկել զայն ըստ ամենայն կողմանց . այլ 'ի կառուցանելն զայն՝ յապուշ եղեն ընդ անհեթեթ մեծութիւնն , զի ութապատիկ գտաւ մեծ քան զսա՝ զոր տեսանէքդ : Աւ բազում ինչ փորձս ընդ վայր փորձեալ , հարցին ապազ՝ Պղատոն՝ որ դառնային յայնժամ՝ Այդիպտոսէ : Ապատասխանի ետ որոց առաքեցանն , զի կամէր աստուածն հրամանաւ պատասխանուոյն խաղ առնել զտղիտութիւն Հուսաց , և յորդորել զնոսա 'ի պարապումն չափական գիտութեց՝ վախճան առնելով անդադարելի հերձուածոցն : Աւ եցոյց նոցա հնարս պարզ և զործնական 'ի լուծումն խնդրոյն . այլ մինչև հասեալ պատասխանուոյն , դադարեաց ախտ սրածութեանն : Հայնժամ Փիլոսոս ասէ ցիս . Օայդ խակարդեօք զուշակէր հարցուկն :

Աւ թէպէտ դաշն ձայնիւ բարբառէր , լուաւ զայն մի ոմն 'ի դեղոսացւոց անտի , և մատուցեալ առ մեզ՝ եցոյց բազին մի ոչ որպէս զմիւսն բազմազարդ , և ասէ . Օբազինս զայս ոչ եթաց արիւն զոհից , և ոչ փայլեաց 'ի սմա բոց ողջակիզի . աստ Պիւթագոր ըստ օրինակի ամբոխին մատուցանէր կարկանդակս և զարի և ցորեան՝ , և ոչ ինչ երկբայելի է զի զիտնական նուերք առնն մեծի աստուածահաճոյք էին քան զնախճիրս արեանցն , որ ողողեն հանապազօր զբազինս մեր :

1 Աղեմ. աղեքս. յաճախատ. յղ. Ժուժկալ. կերակր. գիրք գիրք է. էջ 848 : Պորփի. ը Բ. էջ 153 :

Եւ ապա եցոյց մեզ զամենայն որ ինչ 'ի ներքս 'ի մեհենի անդ էր . և լեւաք նմ' պատկառանօք , և զարմանայաք ընդ իմաստուն բանս նորա , ընդ քաղցր հայեցուած նորա , և ընդ գութն՝ զոր առ նէր ընդ մեզ : Ը՛յլ իբրև ծանեաք խօսակցութեամբ ընդ միմեանս՝ զի Վիլրկղէս էր նա , հիացումն կալաւ զմեզ : Օ՛ ի էր նա մի յերևելէաց 'ի Վեղոս մեծութեամբքն և իշխանութեամբ , և էր նա հայր չքնաղագեղին Վամենեայ՝ զորմէ տիկնայք Ելլազայ առ հասարակ ճառս արկեալ խօսէին . և էր նորա ընկալեալ թուղթս ընծայականս յաթենացւոց , ասանջականել զմեզ : Արոյ բազում անգամ գիրկս արկեալ մեզ , և ապա ասէ . Փութայք եկայք ողջունել զթերափս իմ , տեսանել զՎամենէ և զօծնս հարսանեաց նորա , տեսանել զԱ եւկիպպէ զմայր նորա բարեբաստիկ , և խնդակից լինել նմա : Այ իբրև զօտարս ընկալցին նոքա զձեզ , այլ որպէս զբարեկամս իւրեանց 'ի վերայ երկրի , և զորս երկինք 'ի բազում ժամանակաց սահմանեալ էին նոցա : Եւ կալեալ զձեռանէ մերմէ յաւել . Ը՛յո , երգուեալ 'ի գիս , ամենեքին որ սիրեն զառաքինութիւն՝ սիրելի լիցին Վիլրկղէայ և ընտանեաց նորա :

Եւ այնպէս փութացուցանէր զմեզ , զի յերանէն 'ի մեհենէ անտի՝ հազիւ 'ի հարեանցի ինչ եզև մեզ ակնարկել 'ի բազմութի անդրեացն և բազնաց , որ շուրջ գնուլաւ կան : Ի մէջ արձանացս



այսոցիկ ամբառնայ պատկեր Մարտիրոսի իբր քսան  
և չորս ոտնաչափ 'ի բարձրութի' . երկայնահեր  
հիւսք վարսից զուսովքն ծածանել, և զանգրաձև  
խորշաբաղ փութուած վերարկուին 'ի ձախուսն  
թուի տատանել 'ի զեփիւռ քաղցրաշունչ : Պատ  
կերն և պատուանդան նր անդատին 'ի նմին կճէ  
միապաղաղ դրօշեալ, զոր Վաքսեցիք նուիրեցին  
զպատկերն զայն 'ի մեհեան անդր : Մընթեր  
հսկայաձև պատկերիս Վիկիաս զօրավար աթե  
նացւոց ետ կանգնել արմաւենի պղնձի<sup>1</sup>, ըստ ազ  
նուութեան նիւթոյն և ճարտարագործ : Մնոր  
ևս 'ի բացէ բազում ուրեք 'ի ներքոյ անդրեաց  
դրոշմեալ կայր արձանագիրս այս մեծապանծ<sup>2</sup> .  
Վիտա աշխի - գիւնեօքն հուշահատոր, Յեռակերպօքն  
Լուսադէայ և Մեխերմեայ հուշակեացի առ յաղայս :  
Ճարտարքս այսոքիկ կացին յառաջ քան զեր  
կուս դարս . այլ զհետ նոցա կացեալ Փիղիաս և  
Պրաքսիտեղէս մթացուցին զփառս նոցա : Մյս  
պէս որք զփառս իւրեանց կամին յաւերժացու  
ցանել, զննափառութեան իւրեանց թողին ան  
մահ զյիշատակ :

Վաղաքին զեղոտացւոց ոչ աշտարակք են և  
ոչ պարիսպք, և չիք նորա պատսպարան այլ բաց  
յերեսաց Մարտիրոսի<sup>3</sup> : Տունք 'ի նմա աղիւսեայք

1 Թուրքիոյ, ուղևոր .  
հա. 1. էջ 301 : Միոն, ուղևոր .  
հա. 1. էջ 107 :

2 Թուրքիոյ, անդ :

3 Պլուա. 'ի նիկ. հա. 1.

էջ 525 :

4 Պլին. գիրք Լ. 2. գլ. 5 .  
հա. 2 :

5 Կալլիմ. 'ի Գեղոս, տող  
24 : Կիկեր. Ճառ վասն հրեշա-

Մանիլ. գլ. 18. հա. 5.

էն, կամ՝ի պիտակ յանհարթ կճէ՝ որ առատ է ՚ի կղզւոջն՝ : Փիլոկղէայն առ եզր ծովակի միոջ կառուցեալ էր՝, և ծովակն ծածկեալ ՚ի կարապից՝, և շուրջանակի գրեթէ յամենայն կողմանց պատեալ արմաւենեօք :

Ըզզ եղև Վեւկիպպեայ դարձ առն իւրոյ, և եկն ընդ առաջ մեր. մեք համարէաք զնա զՎամենէ, այլ ոչ յամեաց զհետ նորա և նա ինքն, և թուէր յաչս մեր նոյն ինքն Ըստղիկն : Այսոր գորեաց զմեզ Փիլոկղէս համարձակել ը միմեանս. և անդ զնորասէր բարեկամութեանն կրից և ըզվաղեմի մտերմութեանն բերկրանաց միանգամայն առաք զփորձ :

Ղոխութիւն փայլէր անդ ակներև, այլ այնու խոհական իմաստութեամբ սահմանեալ ՚ի պէտս, զի ոչ ինչ ՚ի կարևորայն թերի, և ոչ յաւելորդս ինչ թուէր անդ ծախեալ : Ստրուկք, բարեբաստք ՚ի ծառայութեան, կանխէին քան զակնարկութիւնս մեր. կէսք վճիտ քան զբարեղարկանէին ջուր ՚ի լուացումն ձեռաց և ոտից մերոյ՝, այլք միրգս ՚ի վերայ սեղանոյ զեղուին ՚ի պարտիզին ՚ի մէջ մրտենեաց : Վախ քան զամենայն հեղաք նուէրս գիցն ասպնջականութեան :

Այս ապա հարցանէին զմեզ վասն իրաց ու-

1 Թուրքն շոր ուղևոր. հտ. սող 7 :

1. էջ 305 :

3 Եւրիպիդ. ՚ի Յովն, սող

2 Երոզոս. գիրք Բ. գլ. 167 : Նոյն յՎիկիդ. ՚ի Տար. 171 : Կալլիմ. յԱպոլոն, սող 1103 :

սող 59 : Թէոգն. առածք :

ղեորութեանս , և Վիլոկղէս գորովէր ստէպ 'ի յիշատակ բարեկամացն իւրոց՝ զորս թողեալ էր յերկիրն Ալլադայ : Աւ յետ վայրիկ մի զբօսանաց զրուցատրութեան , ելաք ընդ նմա տեսանել զարատրաստութիւն տօնիցն :

Օ ի 'ի վաղիւ անդր սկիզբն լինէր նոցա \* , այն օր 'ի պատիւ ծննդեանն Աբտեմեայ սահմանեալ 'ի 'Աեղոս ' : Անոյր տակաւ կղզին յեկաւորաց , զորս կրօնք , շահ և զբօսանք ձգէին անդր : Չմնայր նոցա տեղի բնակութեան 'ի տունս , կանգնէին վրանք 'ի քաղաքամիջի , կանգնէին և 'ի դաշտս . ծանօթք 'ի բազում ժամանակաց մեկնեալք 'ի միմեանց , դիմեալ գիրկս արկանէին իրերաց : Ատեսարանս յայտօսիկ խանդաղատելիս այսր անդր 'ի կղզւոջն ձգեալք գեգերէաք . և ոչ ինչ նուազ քան 'ի տեսեալս ուշ եգեալ բանիցն Վիլոկղէայ , ուսանէաք զբնութիւն և զհանգամանս երկրին՝ որ անուանին էր ընդ ամենայն Ալլադայ :

'Աեղոս շրջաբերի իբր ութ հազար քայլ . և լայնութի նորա է իբր երկր մասն երկայնութեանն ² : Աեառն Անթուս ձգեալ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ սահմանէ զդաշտն , որ տարածանի ընդ արեմուտս մինչև 'ի ծովեզր . 'ի դաշտի անդ քաղաքն կառուցեալ է ³ : Ասկ այլոց կողմանց կղզւոյն առա-

\* Եւթերորդ օր մայիսի ամին 341 Ն . Ք . :

¹ Դիտք . լայերս . դիրք Բ . յօդ . 44 :

² Թուրքիոյ , ուղեոր . հա . 1 . էջ 287 :

³ Սարաբ . դիրք Ժ . էջ 285 :

պար է երկիրն և անբեր, և 'ի հարաւակողմն և եթ  
կազմեն բլուրք զեղեցկանիստք հովիտս զուար-  
ճակս<sup>1</sup>: [Բայ յ]նոպայ այլ զեւտ ոչ բղխեցոյց  
անդ բնութիւնն, այլ ջրամբարք և լիճք 'ի նմա  
բազումութեք պահեն զանձրեւջուրս ընդ ամիսս  
բազումս:

[Գեղոս քրմապետք ոմանք 'ի սկզբանէ թա-  
զաւորեալ<sup>2</sup>, ապա աթենացիք կալան զկղզին, և  
սրբեցին զայն յաւուրս պեղոսոնեսական մար-  
տին<sup>3</sup>: Գերեզմանք հին բնակչաց նորա փոխե-  
ցան 'ի հռենէ կղզի. անդ յաջորդք նոցա զառա-  
ջինն տեսին զոյս, և անդ վերջինն ծագեսցէ նո-  
ցա օր: Բայց թէպէտ և զրկեալք 'ի հայրենի  
խանձարրոցն և 'ի գերեզմանաց<sup>4</sup>, կեան անդ 'ի  
խոր խաղաղութեան: Սոլեզնութիւն խուժայ-  
նոց<sup>5</sup> մախանք ազգաց, և թնամութիւնք մարդ-  
կան լուծանին յերեսաց սրբոյ երկրին. նժոյգք ա-  
մեհիք Բրեսին ոչ առնեն զերկիրն սմբակակոխ  
արիւնաթաթաւ ոտիւք. և ամենայն որ ինչ զնըշ-  
մարանս բերէ մարտի, տարամերժեալ է անտի.  
և ոչ հաւատարմագոյնն մարդկան 'ի կենդանեաց  
դտանէ անդր մուտ, զի մի 'ի տկարագոյնսն և  
յերկչոտս քան զամենայն կենդանիս լիցի վնասա-


<sup>1</sup> Եւրիպիդ. Իփիգ. 'ի  
Տաւր. տող 1235: Թուրնը  
Ֆոր ուղեւոր. հտ. 1. էջ 311:  
<sup>2</sup> Վիրգիլ. Ենեակ. գիրք  
Գ. տող 30: Ովետ. ալլարան.  
Գիրք ԺԳ. տող 632:

<sup>3</sup> Թուկիդ. գիրք Գ. գլ. 104:  
<sup>4</sup> Եսթին. Թուղթ առ Փի-  
լոկր. էջ 205: Պլուտ. առակ.  
լակոն. հտ. 2. էջ 230:  
<sup>5</sup> Երոդոտ. գիրք 2. գլ. 97:

կար\* : Ասողալու թիւն ընտրեաց իւր յօթեան  
 զՎեղոս, և յարքունիս իւր զառն Վիլոկղեայ :  
 Այս իբրև մերձեցաք անգր, ընդ առաջ եղև  
 մեզ պատանի մի՝ որոյ գնացք և հասակ և կերպա-  
 րան գերքան զմարդոյ էին : Այս ասէ Վիլոկղէս  
 ցմեզ . թէ ազենէս է դա, այն որ զգուսար իմ  
 զՎամենէ առնոց է՝ ի հարսնութիւն, և արդ իսկ  
 Ակիպպէ սահմանեաց զօր հարսանեացն : Ասկ  
 թէ ազենէս գիմեալ՝ ի զիրկս Վիլոկղեայ, ասէ .  
 յամ՝ ի ժամ յաւելուն ինձ գոհութեան առ  
 քեզ պարտք, հայրիկ : շուրջ անուակիսնք հա-  
 ճեցին կցորդել ինձ՝ ի շորհակալութիւն . դոքա  
 բարեկամք իմ են, զի սիրելիք ենքո . արդ այժմ  
 զփորձ առնում, զի և առաւելութիւն ինդու-  
 թեան հանգոյն վշտաց՝ կարօտի կարեկցութեան :  
 Այս դարձեալ առ մեզ, յաւել . Աթէ երբէք ի-  
 ցէ՝ ի սիրտ ձեր անկեալ սէր, ներիցէք ինձ զա-  
 ռաւելութիւն ինդութեանս . իսկ եթէ չիցէ,  
 տակայն ի տեսանել զՎամենէ՝ դարձեալ ներես-  
 ջիք : Այս ի ինդակիցն լինել մեր ընդ նմա, թուէր  
 հանդարտել իմն զգայութեանցն նորա ազմուկ,  
 և սփոփէր սիրտ նորա ընկձեալ ի բարեբաստու-  
 թեանէն :

Այս ընկալան Ակիպպէ և Վամենէ զՎիլոկ-  
 զէս, որպէս Մարտիանք ընդունելն զԱկտոր ի

\* Այս էր օրէն պահել շունս  
 ի Դեղոս, (Սարգս. զիրք ժ.  
 էջ 486.) զի վտանգ էր ի նո.



դառնալ մտանել նորա 'ի պարիսպս Վիլինի : Այս պատրաստեցան ընթրիք 'ի սրահի ուրեք , որ անդրեօք և նկարագործ պատկերօք զարդարեալ էր . և սիրտք մեր զեղեալ 'ի վայելուչ խնդու[թիւնն , զմայլէին 'ի բերկրանս մտերմու[թեան և համարձակու[թեան :

{ Կայնժամ Փիլոկղէս եղ 'ի ձեռս Վամենեայ քնար , և յորդորէր զնա նուագել զօրհնու[թիւնս ծննդեան Ղրտեմեայ և Ղսողոնի : Այդեա դրստրիկ իմ , ասէ , որ ինչ վաղիւ 'ի մեհենին Վեղեայ 'ի կայ[թս [թե[թե զարշապարացն ձեացուցեն օրիորդք . որպէս զի հիւրքս մեր Ղսաքարսիս և Փիլոտաս տեղեկագոյն լիցին սկզբման տօնիցս մերոց , և ճշմարտու[թեան տեսարանին՝ որում կալոց են 'ի զնին :

Այս առեալ Վամենեայ զքնարն , էած նախ իբր վարկպարագի հնչմունս ինչ գորովականս և խանդաղատելիս՝ որ չեղեն անլսելի թէագեներեայ , և ապա յանկարծ յարդարեալ զմատն 'ի նուագ դորացի՝ նկարագրեաց բոցատիպ զցասումն Հերայ անողոքելի ընդդէմ ատելոց նախանձորդին՝ ,  
 “ Ի զուր է Վատոնայ խուսափել 'ի վրէժխնդրու[թենէ Հերայ . դէպք 'ի չարիս ելին նմա հաճոյ լինել Ղրամազդայ , հարկ է արգասեաց սիրոյն լինել գործի պատուհասի նորա , և 'ի միասին ընդ նմա կորնչել : Հերա յերկինս կայր , Ղրէս

1 Կալլիմ. 'ի Իեզոս , տող 40 :

Մասնա լերին 'ի լծարակիա, և Վրիս 'ի մի 'ի լե-  
րանց մերձ 'ի ծով. յերեսաց նոցա զարհուրին  
օգբ և երկիր և կղզիք : Վատոնայ յերկունս գողով  
զգողանի հարեալ և խոռվեալ, դիմէ այսր անդր  
բազմոյած՝ մինչև հասանէ 'ի թեւսաղիա, յեզր  
դետոյն որ զաշխարհն ոռոգանէ : Ոսնակառեանց  
վայրիկ մի, ստէ, ո՛ր Պենէնն. և ընկալ 'ի խաղաղ  
ալիս քո գորդիս Ղարամազդայ, զորս 'ի ծոցի խնամ  
կրեմ : Յաւերժահարսունք թեւսաղիոյ, դատերք  
աստուածոյն առ որ պաղատիմ, օգնեցէք ինձ առ  
'ի դու թ ածել զնա : Ղընա զսէ ինձ, և 'ի ձայն  
մաղթանաց խնոց սրբն թաց և ս գնան ալիք նորա :  
Ո՛վ Պեղիոն, ո՛վ լերինք ահագինք, դուք միայն ինձ  
ասպատանք. բարէ, և հրաժարիցէք տալ ինձ 'ի  
նաեմաստուեր խոռոչս ձեր խշտեակ ինչ, զոր ոչ  
զլանայք առիւծու ծննդականի :

Ըստանօր Պենէնն խանդաղատեալ, նահան-  
ջէ զփրփրադէզ ալիան : Տեսանէ զայն Ղընս, և  
մոնչէ առ ցաման. և սպառնայ ընդ ծխաշունչ փլա-  
տակօք Պանգէննի ծածկել զգեան : Հնչեն օգբ 'ի  
գոլուն սպառնալեաց նր և 'ի շկահիւն տիգին ընդ  
ասպար : Ընկնոյն հանգոյն բանակի դորդէ զգաշ-  
տրս թեւսաղիոյ, և շարժեալ դողացուցանէ զլեռն  
Ոսա, և 'ի հեռաստան վայրս ձգեալ մոնչմամբ՝  
թաւալի 'ի քարանձաւս Պինդեայ խորինս : Պե-  
նէննի անշուշտ 'ի վերայ կայր կորուստ, եթէ Վա-  
տոնէ ոչ 'ի բաց մեկնէր 'ի վայրացն՝ ուր զցասու մն  
երկնից ընդ իւր ձգէր : Վայ նա 'ի կղզիս մեր 'ի

ինդիբր ասրատանի, և մերժի 'ի բաց. զի սպառնալիք Երեայ ընուն զնոսա արհաւրօք:

Ի Վեղոս միայն յաղթանակէ գութ ընդդէմ երկիւղի. Վեղոս քարաժայռ էր յայնժամ անբեր և անապատ, հողմունք և ալիք բաղխէին զնա յամենայն կողմանց: Եւ իբրև մղեալ ընկեցին զնա 'ի մէջ Արևկաղայցն, լուաւ զկահան Ատոնայ և զկայ էառ, և ընկալաւ զնա յամայի եզերս Ենոպայ: Ետուածուհին լի գոհութեամբ անկանի առ արմին միոյ 'ի ծառոց, որ սիռէ զնովաւ հովանի, և միշտ դալարադեղ ընդ բարերարութեանն իւրում վայելեացէ նա գարուն: Ենդ վաստակաբեկ 'ի դժնդակ երկունան բանայ զառկայծեալ աչս իւր՝ յորս փայլէ ուրախութիւն յեռեալ 'ի տիարս ցառոց, և տեսանէ զգրաւահանս ցանկալիս զայնքանոյ սիրոյն, զմանկունս՝ որ յետ այնքան արտասուաց զերկունս նորա լուծին: Եւ Երժահարսունք Ենոպայ, ցնծութեան նորա ականատեսք, ազգ առնեն զայն ընդ տիեզերս երգովք օրհնութեան. և Վեղոս ոչ ևս խաղալիկ անկայուն կոհակաց, այլ 'ի սիւնս հաստատունս յեցեալ կայ 'ի խորս ծովու', և 'ի հիմունս երկրի խարխիք սեանցն յեցեալ: Վառք նորա համասփիւռ ծաւալին, և յամենայն կողմանց զիմեն ազգք 'ի հանդէս տօնից նորա աղերսաւորք աստուածոյն՝ որ 'ի ձեռն նորա ընկալաւ զկեանս, և զոր տեսիլ երեսայ նորա երանաւետէ .:



Այս իբրև զվերջինս զայս նուագէր Ամենէ զբան-  
 դարձոյց զաս իւր 'ի Սէպտեմբր, և եղև մեզ ու-  
 զի առնուլ . բայց դեռ ևս յուզէին սիրտք մեր  
 'ի ծուփս երկիւղի և գթութեան : Այ որփէական  
 քնար և ոչ յուշկասպարեաց զայլայլիկք հնչմունս  
 այնպիսիս աղիողորմն ուրէք երբէք լսելի արարին :  
 Այինչդեռ Ամենէ նուագէրն , Փիլոտաս և ես  
 ձայնս հրաշականս ստէպ արկանէաք՝ բռնազբօ-  
 սեալք իմն 'ի զարմացմանէ . Փիլոկղէս և Ալկիսպ-  
 պէ յաճախէին յորդորակս գորովականս , ընդ  
 որս Ամենէ առաւել քան ընդ գովութիւնս մեր  
 բերկրէր . իսկ Սէպտեմբր ունկն զնելով , լուռ  
 և եթ կայր :

Ահաս անազան ուրեմն օրն ցանկալի . և մինչ  
 դեռ արշարոյսն ծագէր աղօտաջահ ընդ ոլորտս ,  
 նախաշաւիղ արեգական , հասաք մեք 'ի ստորոտ  
 Աինթայ : Այ յոյժ բարձրաբերձ է լեառն՝ , այլ  
 բլրաձև քարաժայռ պիտակ . երփն երփն զերանգան  
 շրջ շրջելով . և մանաւանդ շողշողեն 'ի նմա մասն-  
 կունք գորշախայտք , բազմախայք , խաւ 'ի խա-  
 ւոյք : Ա բարձանց բլրոյն ակնարկեալ տեսանէաք  
 բազմութիւն յոյժ կղզեաց մեծամեծաց և մա-  
 նունց սիւռեալ ընդ ալիս գեղեցիկ անկարգու-  
 թեամբ որպէս աստեղք յերկինս : Այսին ընդ  
 նոսա աչք անյագաբար , կորուսանեն զնոսա և  
 դարձեալ հետազօտեն . մերթ ընդ կամակորկիրձն

1. Թուրքիոյ . ուղևոր . զևոր . հտ . 1 . էջ 111 : Աւե-  
 հտ . 1 . էջ 307 : Սփոն . ու . լըր . օրագր . գիրք Ա . էջ 58 :

անցանելով՝ որ անջրպետեն ընդ նոսա, և մերթ  
դեգերեալ ընդ լինն որ ՚ի նոսա, և ընդ լոյծ դաշ-  
տրս: Օ ի ոչ է անդ տեսանել ծով մեծ անողորտ,  
ուր ընկձին միտք և հիանան, և սիրտ անհանգիստ  
խնդրէ անդորր ՚ի նմա այսր անդր, և ոչ այլ ինչ  
բւրեք գտանէ՝ բայց ամայի ընդարձակատարր և  
տարածութիւն անսահման, յոր խորասուզեալ  
կորնչի: Այլ անդանօր ալիք ՚ի ծոց իւրեանց աս-  
պընջականեն զմարդիկ. քաղաք իմն է տեսանել  
անդ ցան և ցիր ընդ մկանուէս ծովու սիռեալ. նոյն  
և զինքն իսկ աշխարհին եգիպտացւոց է տեսանել  
անդ, յորժամ՝ Աեղոս ծովացեալ ընդ դաշտս,  
Թուի իմն ՚ի վերայ ալեացն բարձեալ բերել  
զբուրս՝ յորս ասպատանին բնակիչք՝:

Հորովք ՚ի կղզեացս, ասէ Փիլոկղէս, կոչին  
Բորթք\* . զի շուրջ զՎեղեաւ բոլորեալ կան՝:  
Սեսոսար արքայ եգիպտացւոց զկէսս ՚ի սոցանէ  
զինուք նուաճեաց՝. զայլս Սինուլս արքայ կրե-  
տացւոց ընդ օրինօք իւրովք կացոյց՝. և փիւնի-  
կեցիք՝, կարիացիք՝, սարսիկք, Հոյնք՝, և ա-  
մենայն ազգք՝ որք տիրեցին ընդ ծով՝ կալան զսո-  
սա ՚ի միմեանց, կամ յաւելան ՚ի բնակիչս սոցա՝:

1 Երոզոս. գիրք Բ. ԳԼ. 97:

Դիոգ. գիրք Ա. էջ 33:

\* Κυκλος բորթ, յորմէ կիւկ

լադայքն Բորթ կղզիք ըստ մե.

բուսն պատշաճեալ լեզուի:

2 Պլին. գիրք Դ. ԳԼ. 12.

հա. 1. էջ 111:

3 Դիոգ. գիրք Ա. էջ 51:

4 Թուկիդ. գիրք Ա. ԳԼ.

4: Դիոգ. գիրք Ե. էջ 349:

5 Պոլար, աշխարհագր. էջ

405:

6 Թուկիդ. անդ: Դիոգ.

անդ:

7 Երոզոս. գիրք Ը. ԳԼ. 46:

Բայց զաղթականք Յունաց անտես արարին զօտարացն, և օգուտք կարևորք զբախտ Բողոքից կղզեացս կցորդեցին ընդ Ալլադայն անբաժանելի:

Ահաք 'ի սկզբանէ կացուցին իւրեանց Թագաւորս, այլոց կացուցին յաղթականք'. այլ սէր ազատութեան ընդաբոյս 'ի Յոյնս, և ս առաւել 'ի կղզայինս, եբարձ 'ի նոցանէ զուծն՝ ընդ որով հեծէին: Այլ կազմեցան կացին բնակիչք կղզեաց իւրաքանչիւր 'ի հասարակապետութիւնս սակաւաւորս, բազմագոյնք 'ի նոցանէ ինքնիշխանք, նախանձընդդէմք միմեանց. որով ջանային 'ի կշիռ ունել զմիմեանս, խնդրելով զնիզակահցութիւն և զպաշտպանութիւն բնակչաց ցամաք երկրի: Սինչ դեռ վայելէին նոքա յերանաւէտ խաղաղութեան, զոր անփառունակ նսեմութիւն հայթայթէ ազգաց, զումարեցաւ Բսիա ընդդէմ Աբրուպայ, և ծածկեցին պարսիկք բազմութեամբ նաւաց զծով: Աղ զիք սասանեալ, տկարացան պառակտմամբ. կէսք վատութեամբ ձեռն ետուն Թշնամւոյն, այլք արիութիւն զդէմ կալան: Այլ յետ պարտութեան նորա, խորհուրդ կալան աթենացիք նուաճել զկղզիս առ հասարակ. և իբր անխտիր զմարտակցութիւն և զմատնութիւն 'ի մեղս համարեալ, մի ըստ միոջէ հնազանդեցուցին զնոսա պատճառանօք՝ որ աւելի և որ նուազ զիպաւորօք:

Ըթէնք ետ նոցա զօրէնս խւր, և հարկս ըստ  
խրաբանչխւր զօրու թեանն սահանջի: Ի նոցանէ:  
Ընդ հովանեաւ նորա բարդաւաճեն Ի նտա վա-  
ճառականութի, երկրագործութի, և արուեստք-  
և բարեբաստք արդեօք գտանելին, եթէ մար-  
թէր նոցա մոռանալ՝ զի եղեն երբեմն ազատք:

Այ ամենեքին բազմաբերք են, այլ ոմանց Ի  
նոցանէ հաղիւ Ի սէտս բնակչացն բաւեն բերք:  
Արպէս Սիկոնեայն՝ զոր տեսանես Ի բացէ յա-  
րեւելից Վեղոսի, ոչ ինչ աւելի քան զաստարեզս  
քսանեչորս հեռի Ի նմանէ՝: Այ անկանին անդ  
Ի փեղկից լեբանց վտակք, արգասաւորել զգաշ-  
որս՝ անդ երկիրն մասնեալ Ի բոցակէզ տապ  
արեգական, ցանկաց հանապաղ օգնականութեան  
երկնից. և տաժանաւոր երկամբք ընծիւղեն Ի  
ձոց նորա ցորեան և այլ արմախք կարեօրք Ի  
սարէնս մշակին: Թուի ամենայն զօրութի նորա  
ժողովեալ Ի նօրաստ այգեաց և թղենեաց, որոց  
ստուղք՝ անուանի են յոյժ: Ապրաւ, լրտամարդի  
և այլ ևս թռչունք անցաւորք բազումք են անդ՝:  
Ըստ այս ամենայն, որ և Ի մերձաւոր կղզիս  
գտանին, սակաւ ինչ օգնեն բնակչացն. զի ընդ  
ամլութեան երկրին, և օդք անդ անհարթք են:  
Վլուխք նոցա վաղ Ի բնական զարդուցն կողոպ-

1 Թուրնըֆոր, ուղեօր. հտ. 1. էջ 278:

2 Սփոն, ուղեօր. հտ. 1. էջ 115: Ուելք, օրագր. գեղք Ա. էջ 65:

3 Թուրնըֆոր, անդ, էջ 281:

4 Նոյն անդ: Սփոն, ուղեօր. հտ. 1. էջ 115: Ուելք, օրագր. գեղք Ա. էջ 65:

տին՝ . և գանդուրք վարտից որ վայելուչ յօրինեն զգեղ՝ ոչ առ այլ ինչ թուին սարգևեալ մանկաւոյն միկոնացւոյ, բայց ՚ի արամութիւն նոցա ընդ վաղանցիկ կորուսան:

Սիկոնացիք բամբասին աղահօր և սատառաբոյժք՝ . և ոչ այնպէս բամբասէին, եթէ շոպիք էին ՚ի մեծութեան և մնախառք: Օի կարօտութեան այն խի չարագոյն աղէտք են, ծնուցանել զախտս, և չկարել առնել զնոսա ներքի:

Փորբագոյն այլ բերրի քան զՍիկոն Հուենէ, զոր անսանես ընդ արեմուտս ոչ ինչ հեռագոյն քան զբայլս հինգ հարիւր՝, նշանաւոր է ճոխութեամբ բլրոյն և դաշտաց: Ինդ կիրճն, որ բաժանէ զերկոսին կղզիսդ, շղթայ երբեմն ձգեալ կցորդէր զնոսա . քանզի Պողիկրատ բռնաւոր սամեցւոց՝ խորհէր սովին հնարիւք սրբութեան միոյն հազորդ առնել զմիւսն՝: Իսլ Հուենեայ իրաւացի ևս սրատճառք են մեծարեցոյ ՚ի մէնջնա զաճիւնս հարցն մերոց սահէ, և զմերսն սաւ

1 Պլին. գիրք ԺԱ. ԳԼ. 37. հտ. 1. էջ 615: Ստրաբ. գիրք Ժ. էջ 487. Թուրք. խոր. ու. զեօր. հտ. 1. էջ 280:

2 Աթեն. գիրք Ա. ԳԼ. 7: Ստրաբ. ՚ի բառն Μυαώγ.

3 Թուրք. խոր. անգ. էջ 315:

4 Թուրք. գիրք Ա. ԳԼ. 13. գիրք Գ. ԳԼ. 104:

5 Չայնու ժամանակաւ կրեստս սրաշարեաց զԵփեսոս քա.

զաք. բնակիչք քաղաքին առ ՚ի գտանել օգնականութիւն յԱրտեմայ, որ վեհագոյն ՚ի դիւն նոցա էր, ձգեցին չուան ՚ի սարսպաց իւրեանց մինչև ՚ի մեհեան աստուածուհւոյն եօթն աստարիչաւ հեռի: (Երոզոս. գիրք Ա. ԳԼ. 26: Պողիկն. ՚ի մարթանան, գիրք Զ. ԳԼ. 50: Եղիան. զան. սատմ. գիրք Գ. ԳԼ. 26.)

Հեսցէ : Ի բլուր անդր, որ հանդէպ մեր կայ, փոխեցան գերեզմանք որ էին 'ի Վեղոս'. և օրրսօրէ բազմանան հրաժարեցելովքն 'ի մէնջ, և ամբառնան 'ի ծոցոյ երկրի որպէս ակոյեանք՝ զորս սպառնող հովանեաւն ծածկէ մահ :

Վարձո՞ զաչս քո ընդ հիւսիսային արեւմտակողմն, ահա ծովեղերք Տենեայ կղզւոյ : Աքտաքոյ մայրաքաղաքին է մի 'ի դիցանուէր անտառաց՝ զորս յաւերժացուցանեն կրօնք, և 'ի զուր ժամանակն շեղջակուտէ 'ի վերայ նոցա ձմերուես : Վսեմաստուեր ուղիք ածեն 'ի հոյակապ մեհեանն, զոր բնակիչք ըստ պատգամաց Ապողոնի կանգնեցին երբեմն Պիսիդոնի. և է դա մի 'ի վաղնջուց ասպատանաց Ալլադայ՝ շուրջանակի կանգնեալ կան շինուածք մեծամեծք, յորս պատրաստին ճաշք հասարակաց, և համախմբի ժողովուրդն 'ի տօնս աստուածոյն : Ինդ օրհնութիւնս նորա նուազի և խափանել նորա կամ փարատել զհիւանդութիւնս 'ի մարդկանէ՞, և զսատակել զօձս՝ որ անբնակ առնէին երբեմն զկղզին՞ :

Արք նախ մշակեցինն զկղզին, երկիր նոր կա-

1 Թուկիգ. գիրք Գ. գլ. 104 : Սորաբ. գիրք ժ. էջ 486 : Թուրնըֆոր, ուղևոր. հտ. 1. էջ 316 :

2 Սորաբ. գիրք ժ. էջ 487 :

3 Տակիտ. տարեգր. գիրք 4. թիւ 63 :

4 Սորաբ. գիրք ժ. էջ 487 :

5 Փիլոքոր. առ Կղեմ. աղեքս. յորդոր առ հեթ. էջ 26 :

6 Պլին. գիրք Գ. գլ. 12 :

հտ. 1. էջ 211 : Ստեփ. բիւզանդ. 'ի բառն Դիյոս.

ցուցին զայն . երկիր որ հատուցանէ վարձս քրրտանց մշակին , և կանխէ խոկ քան զվաստակս նորա : Սատուցանէ 'ի լիութի պիտոյից նորա զազնուագոյնս 'ի պտղոց , և զարմտիս աղբի աղբի : Աքբերք յաճախաւորք բղխեն յամենայն կողմանց ' . և դաշտք 'ի հարկատուութենէ նոցա դալարացեալ գեղեցիկք ևս ներհակօքն երևին , անջրդի և ամայի լերամբք՝ յորոց շուրջ պատինն՝ : Մոգ Տենոս և ընդ Մոզրոս բաժանէ կիրճ՝ , երկուտասան ատպարիզաց լայնութեամբ՝ :

Երկնք դալարագեղք են և յՄոզրոս որպէս 'ի Հռենէ , և աղբիւրք անդ առատահոսք քան 'ի Տենոս , հովիտք զուարճալիք որպէս 'ի թուսաղիա , և պտուղք պարարիչք աչաց և քմաց՝ : Ալ է նա հոչակաւոր վասն դժուարամարտ պատերազման նուաճելոյ զայն աթենացւոց , և սպանդարամետական պաշտամամբքն՝ որ անդ մեծահանդէս կատարին :

Տեսի զխրախունս որ 'ի տօնս անդ կատարին՝ , և տեսի զայնոսիկ 'ի տիս՝ որոյ տպաւորութեցն յիշատակք ոչ առանց բերկրութեան զարթնուն 'ի միտս : Ալի էս 'ի նաւ մի՝ որ դառնայր յԱլբիոյ , և մինչդեռ պշուցեալք ընդ արևելք՝

1 Պլին . գիրք Դ . գլ . 12 . հտ . 1 . էջ 211 : Եւստատ . 'ի Դիոնիս . տիեզերագր . տող 526 :

2 Թուրնըֆոր . ուղևոր . հտ . 1 . էջ 357 :

3 Սկիւլաքս . առ աշխարհա

գիրս , հտ . 1 . էջ 55 :

4 Թուրնըֆոր . անդ . էջ 348 :

5 Պաւսան . գիրք 2 . գլ . 26 . էջ 518 : Փելլոսոր . պատկեր . գիրք Ա . գլ . 25 . էջ 799 :

զարմանայաք ընդ գեղանշոյլ հանդերձանս ծնին  
 դեան աւուրն, բարձրագոյ ազաղակ բիւրա-  
 ւոր մարդկան՝ ձգեցին զաչս մեր յԱնդրոս:  
 Մկզբնածագ շող արփւոյն հարկանէր 'ի մի 'ի  
 բլրոց պսակեալ հոյակապ մեհենաւ. յամենայն  
 կողմանց դիմէր անդր ամբոխն, և շուրջ զմեհե-  
 նաւն խոնեալ ամբառնային զձեռս 'ի վեր, ընդ  
 երկիր տարածանէին, անձնատուրք 'ի զառան-  
 ցանս ցնծութեան: Մատուցեալ 'ի կղզի անդր,  
 ելաք 'ի բլուրն. և հնչէր յունկն մեր խառնա-  
 ձայն բարբառ. Ակայք, տեսէք, ճաշակեցէք զի  
 ուղի գինւոյ՝ որ գունդագունդ 'ի մեհենէ աստի  
 Վիտնիսեայ բղխէ, ջուր էր ահանակիտ երէկ և  
 յայտմ՝ իսկ գիշերի և յառաօտուս. սքանչելիք  
 են աստուծոյն, ամի ամի 'ի սմին աւուր 'ի սմին  
 ժամու գործեալ. նոյն և առ վաղիւ և յերիր  
 աւուր և զաւուրս եօթն անընդհատ գործեցի՝:  
 Աւ զհետ հատուկտիր բանիցն լուաք երգ քաղ-  
 ցրածայն և ցանկալի, բերելով զիմաստս զայս.  
 Իցէ Լքբեղոյոս անուանի շամբիւք եղեգանց,  
 և Պենէոն փառաւորեալ հովտին զոր ուողանէ,  
 և Պակտողոս ծաղկամբք որ զեզերս նորա ծած-  
 կեն. այլ աղբիւրն զոր նուագեմք՝ քաջս զմար-  
 գիկ և ճարտարախօսս յարդարէ, ինքն Վիտ-  
 նիսոս բղխեցոյց զայն՝:

1 Պեն. գիրք Բ. ԴԼ. 103.  
 հա. 1. էջ 121. գիրք ԼԱ.  
 ԴԼ. 2. հա. էջ 549:

2 Փիլոսոփ. պատկեր. գիրք  
 Ա. ԴԼ. 25:



Սինչ դեռ քուրմք մեհենին զգեանափոր ուղիսն ունելով, ուստի վտակն բղխէր, զմիամտութեամբ ժողովրդեանն խաղ առնէին, կամէի իմն խնդակից լինել նոցա ընդ յաջողութիւն հնարիցն. բայց խաբէին նոքա զամբոխն ՚ի բարեկենդանութիւն նորա :

Վրեթէ նովին հեռաւորութեամբ ՚ի բացեայ է յԱնդրոսէ և ՚ի Արոսէ կղզեակն Վիարոս, անմարդաբնակ և ժայռիք սեսպացեալ. զոր արժան էր աւազակաց առնել բնակութիւն, սրբեալ ՚ի նոցանէ զերկիր : Յամենայնէ զրկեաց զնա բնութիւն, ճոխացուցեալ գոզցես ամենայնիւ զԱրոս :

Հովիւք կէացիք աստուածական ընծայէն պաշտօն և նուիրեն զհօտս իւրեանց Մրիստեայ հովուի, որ նախ գաղթականս ՚ի կղզի անդր էած : Եւ համարին դառնալ նմա երբեմն և բնակել ՚ի խաղաղաւէտ անտառս, պահպանելով ՚ի խորոց անտի մայրեաց զարջառս իւրեանց քան զձիւն սպիտակս :

Վուրմք կէացիք ամի ամի ՚ի ծագել չնիկ ատեղն ելանեն ՚ի լեառն մի բարձր, մատուցանել զոհս նմա և Մրամազդայ, և խնդրել ՚ի նոցանէ զգարձ աջողակ հողմոց, որպէս զի զաւուրս քա-

1 Տակիտ . տարեգր . գիրք Գ . ԳԼ . 69 : Յորնազ , երգիծ . 10 . սող 170 :

2 Վիտոգ . գիրք ՚Ի . հա . 1 . էջ 325 : Վերգիլ . մշակ . գիրք

Ա . սող 14 :

3 Հերակլ . պոնգ . առ Կիկեր . յԳ . բզճ . գիրք Ա . ԳԼ . 57 . հա . 3 . էջ 47 : Ագոզ . նիտս սրգոնաւ . սող 535 :

ուսումն բեկցին նորօր բոցակէզ ճառագայթք արեգական , և զովացին օգր :

Աէացիք կառուցին մեհեան Մարդնի , և զԱ<sup>1</sup> թե՛նասայն սահեն մեծարամօր , զոր կանգնեաց Վեստոր 'ի դառնայն իւրում 'ի Տրուլագայ , և զսպանդարամետական տօնա ընդ սաշտամունս պլոց զից կատարեն<sup>2</sup> : Արօնասիրութիւն նոցա ձգէ 'ի նոսա զինամն զից . առատարեր է կզ զին և սարարտարօա<sup>3</sup> . բնակիչք նորա կորովի մարմնով , և զօրաւոր մտօք 'ի բնէ . և բազմութիւն յոյժ է նոցա , մինչև հարկ լինել նոցա բաժանել 'ի չորս քաղաքս<sup>4</sup> . յորոց զիսաւօր է Հուղիս , կառուցեալ 'ի վերայ միոյ 'ի բլրոց , և կալեալ զանունս յառատահօս աղբերէն<sup>5</sup> որ 'ի ստորոտ բլրոյն բզիսէ<sup>6</sup> : Արեւոս քսան և հինգ ասպարիզս հեռի 'ի տեղւոջէն<sup>7</sup> նաւահանգիստ է նորա , և աղիստնդիսիւք վաճառաց մեծացուցանէ զնա :

Կերունիս բազմամնակեաց ալեօք զարդարեալս մարթեր տեսանել 'ի Հուղիս<sup>8</sup> , եթէ սովորութիւն կամ օրէնք չթողացուցանէին զանձնասարանութիւն վաթմնամենից<sup>9</sup> որոց ոչ և ս է վայելել զկենցաղս , և ոչ սպասաւորել հայրենեաց<sup>10</sup> : Վանգի աւօթ համարին յերկարակեաց

1 Աթեն . զերբ յ . ԳԼ . 22 . էջ 456 :

2 Վերդել . մշակ . զերբ Ա . սող 14 :

3 Սորաք . զերբ յ . էջ 486 :

4 Թուրքիոյ , ուղեօր . հա . 1 . էջ 332 :

5 Հերակիզ . պոնա . յլ . քաղաքով :

6 Սորաք . անդ . Ազիան . զան . պատմ . զերբ Դ . ԳԼ .

37 : Վաղ . Մոքս . զերբ Բ . ԳԼ . 6 :

քան զինքեանս լինել, և ունել 'ի վերայ երկրի տեղի՝ զոր չկարեն խուլ, և գրաւել անձանց զկեանս՝ զոր վասն հայրենեաց ընկալան։ ( )<sup>1</sup> Ե ցնծութեան է նոցա օր վախճանին . հրաւիրեն զբարեկամս իւրեանց, և սրահաւորք արբեալ զբաժակ զեղց՝ ընկզմին տակաւ 'ի քուն յաւերժական։

Մ. յարան յանդուզն արիութի յամենայն ինչ խիզախէ առ 'ի սրահել զազատութիւն։ Պաշարեալք երբեմն յաթենացոց, և ստիպեալք առ ստիցն վասնզի լինել անձնատուր, սպառնացան նոցա խողխողել զամենայն ձերս՝ որ էին 'ի քաղաքին, եթէ ոչ մեկնէին 'ի բաց՝։ Մ. աթենացիք ստկացեալք թէ 'ի գութ շարժեալք կամ թէ առ երկիւղի և եթէ ոչ զխտեմ, թողին 'ի խազազութեան զազգն՝ որ ընդդէմ բնութեան և մահու խիզախէր։ Մ. յլ յեա ժամանակաց նուաձեցին զնա, և զգծնացուցին ծառայութեամբ և արուեստիւք։ Քաղաքն հոյակապ շինուածովք զարդարեալ է, և սրբիսպք նորա յանհեթեթ 'ի մեծամեծ փրմաց կերտեալ. և ուղիք բարձրա կառոյցք ընդ զառ 'ի վեր բլրոց մերձաւորաց զիրամատոց առնեն զնա՝։ Մ. յլ քան զամենայն ինչ առաւել յաճախեն նմա պարծանա արք երեւելիք, որք կացին անդ . ընդ որս Սիմոնիդէս, Քարիդիդէս և Պրոդիկոս՝։

<sup>1</sup> Սարաբ . գիրք ժ . էջ 486 . հա . 1 . էջ 332 և 333 .

<sup>2</sup> Թուրքիոյ . ուղեոր . <sup>3</sup> Սարաբ . անդ .

Սիմոնիդէս՝ որդի Վէտարեպեայ, ծնաւ յերրորդում ամի յիններորդի հինգերորդի ողիմպիադին՝<sup>1</sup>։ Օսա մեծարեցին թագաւորք և իմաստունք և արք աւագք ժամանակին։ Որպիտի որ Վպարքոնն էր, զոր պաշտէին արդեօք Ղթէնք՝ Եթէ Ղթէնք կարէին կալ ընդ տերամբ՝<sup>2</sup>։ Որպիտի որ Պաւսանիանն էր արքայ սպարտացւոց, զոր յաղթուածինք ընդդէմ Պարսից ամբարձին ՚ի ծայր փառաց և ամբարտաւանութեան՝<sup>3</sup>։ Որպիտի որ Ղըլեւանն էր արքայ թեսաղացւոց, որ մթացոյց զփառս նախորդաց իւրոց, և յաւել պայծառացուցանել զազգն՝<sup>4</sup>։ Որպիտի որ Հերոնն էր, որ բռնաւորութիւն սկսեալ թագաւորել ՚ի Սիրակուսա, եղև ասպա հայր սիրակուսացւոց՝<sup>5</sup>։ Որպիտի որ և Թեմիստոկղէսն էր, թէպէտ և ոչ թագաւոր՝ այլ ՚ի վերայ մեծազօր թագաւորաց յաղթանակեալ՝<sup>6</sup>։

Թագաւորք ըստ սովորութեան՝ որ և ցարդ պահի, հրաւիրէին յարքունիս իւրեանց զարս բազմահմուտս և զերահանձարս։ Եւ էր զի կացուցանէին զնոսա ՚ի պայքար հանձարաբանու-

<sup>1</sup> Փարրիկ. մատենագ. Յու. նաց. հտ. 1. էջ 591: Յիշատ. բանաս. կաճառ. հտ. 13. էջ 250:

<sup>2</sup> Ա. Ք. 558 ամօք:

<sup>3</sup> Պլատ. յիպպարք. հտ. 2. էջ 228:

<sup>4</sup> Եղիան. զան. պատմ. Գիրք Թ. ԳԼ. 41:

<sup>5</sup> Թեոփր. ՚ի գեղոնն, 16.

տող 44: Պլուտ. յղ. եղբայր. սիր. հտ. 2. էջ 491: Սողամ. պատմ. Եկեղեց. Գիրք Ա. էջ 322:

<sup>6</sup> Քսենոփ. ՚ի Հերոնն. էջ 901: Եղիան. զան. պատմ. Գիրք Ե. ԳԼ. 15:

<sup>7</sup> Պլուտ. ՚ի Թեմիստ. հտ. 1. էջ 114:

Թեանց՝ որ փայլեն քան լուսաւորեն . և էր դարձեալ՝ զի խնդիրս առնէին նոցա զգաղտնեաց բնութեան , զօրինաց բարոյականին , և զկարգաց անշութեան . և սարտ էր նոցա տալ պատասխանի բացայայտ , արագ և ճշգրիտ , զի առաջի կայր նց ուսուցանել զայր Թագաւոր , հաճել զղբանիկս , և յամօթ առնել զոտիս : Բազմագոյնք ՚ի պատասխանեաց նոցա ընթանային ընդ ամենայն Ալլադա , և աւանդեցան իսկ յետնոց , այլ ոչ ևս յարգին առ սոսա . զի կէսք ակնարկէն յիրս անծանօթս , և կէսք ՚ի ճշմարտութիւնս կարի ծանօթս առ մեօք : Ի պատասխանիս Արմենիդեայ են ինչ ինչ , որք ընդ յարակից հանգամանացն եղեն հրօշակաւորք :

Ի ճաշել նորա երբեմն՝ ընդ արքային սպարտացւոց , աղաչեաց զնա Թագաւորն՝ տալ հանձարեղ բանիւ առհաւատչեայ բարձր կարծեացն՝ որով իմաստասիրութիւն նորա մեծարէր : Իսկ Արմենիդեայ խելամուտ լեալ ամբարտաւան խորհրդոց Թագաւորին և դժնդակ ելից նոցա , ասէ . Յիշեա զի մարդ ես : Պաւսանիաս մնտտի իմն և սովորական զպատասխանիս զայս վարկանի . այլ նա անկամամբն ՚ի չնորհաց Թագաւորին՝ եցոյց ՚ի նմա ճշմարտութիւն իմն նոր , և կարեւորագոյն ՚ի ճշմարտութիւնս անծանօթս Թագաւորաց :

Այլ երբեմն՝ եհարց զնա զչիտոյն սիրակուսա-

1 Եղիան . զան . պատմ .  
ԳԼՈՒԽ 41 :

2 Արիստոտ . ճարտ . գիւրգ  
Բ . ԳԼ . 16 . հտ . 2 . էջ 586 .

յւոց, որ լաւ իցէ, գիտութիւն թէ մեծութիւնք :  
 Այլ էր հարցուածն այն յորոգայթ Սիմոնիդեայ .  
 զի վասն գիտութեանն ցանկալի էր ամենեցունց ,  
 իսկ ինքն ցանկայր մեծութեանց , և հարկ էր նմա  
 կամ կրիցն իւրոց մատն լինել , և կամ դատա-  
 պարտել զգնացս իւր . նմին իրի 'ի հեզնութիւն  
 լեալ ապաստան , ասէ . Այլ թէ ոչ լաւագոյնք էին  
 մեծութիւք , յաճախէին 'ի տունս մեծատանց  
 իմաստասէրք : Ալ լուծումն խնդրոյս այսորիկ՝ յա-  
 ճախադոյն ևս պարծանս արար իմաստասիրութե-  
 ՛ք իստիպպոս . քանզի հարցեալ 'ի Սիմոնիդեայ  
 արքայէ, թէ ընդէր իմաստունք՝ թէ պէտ և անտես  
 լեալ 'ի մեծատանց՝ մեծարէն զնոսա հանապաղ՝ ,  
 ասէ . Օ ի նորա ճանաչէն զկարօտութիւն իւ-  
 րեանց , իսկ սոքա զիւրեանցն ոչ ևս :

Այլ էր Սիմոնիդէս քերթող, նոյն և իմաստա-  
 սէր՝ . և զեղեցիկ զուգաւորութիւն երկոցունց  
 աջողութեանցս արար սիտանեզոյն զհանձար  
 նորա , և զիմաստութիւն նորա ցանկալի : Այլա-  
 նակ բանից նորա քաղցր է և պարզ , ներդաշնա-  
 կաւոր և յընտրութիւն և 'ի կարգ բառիցն  
 զարմանալի : Առազէ օրհնութիւնս դից, զյաւ-  
 թութիւնս ( Նունաց ընդդէմ Պարսից , և զմիցա-  
 նակս գուպարայաղթ նահատակաց : Ակարա-

1 Գիող. լայերոս. գիրք Բ. 22. հտ. 2. էջ 415:

յոգ. 69 :

3 Գիտնիս. աղիկ. յգ. բնն .

2 Պղատ. յղ. հաս. գիրք Կոստենագր. հտ. 5 .

Ա. հտ. 2. էջ 331 : Կիկեր. էջ 420 : Կուրնաիլ. գիրք Ժ .

յղ. բն. գից. գիրք Ա. ԴԷ. ԴԷ. 1. էջ 631 :

գրեաց նա 'ի չափ տաղի զԹագաւորութիւն Վաւ  
բիւսեայ և զՎարեհի, և պարապեալ գրեթէ յա  
մենայն աղգս քերթութեանց՝ յաջողեցաւ առա  
ւել յեղերերգութիւնս և յերգս կեղերջականս՝<sup>1</sup>  
Այ ոք հմուտ քան զնա գտաւ վսեմ և բերկրալի  
արուեստին յուզելոյ զկիրս և խանդաղատելոյ, և  
ոչ ոք ճարտարագոյն քան զնա նկարագրեաց զդէպս  
և զաղէտս աղիողորմն՝: Այ ինքն լեւելի լինի 'ի տաղ  
սըն, այլ ողբք և հեկեկանք. մերթ տառապելոց  
ընտանեաց կոծ չէ մահ հօր կամ որդւոյ՝. մերթ  
հեծութիւնք Վանայեայ գորովագութ մօր, որ  
մանկամբն 'ի գրկի մաքառի ընդ ամեհի ալիս, և  
անդունդս շուրջանակի բիւրս տեսանելով բա  
ցեալ՝ մահունս բազմաբիւրս կրէ 'ի սրտի՝. և  
մերթ բարբառ Մքիլեայ, որ 'ի խորոց շիրմին ե  
լեալ գուժէ Յունաց հանդերձելոց մեկնել 'ի  
ծովեզերացն Իղիոնի զարկածս անբաւս՝ զոր եր  
կինք և ծով պատրաստեն նոցա՝:

Վկարագիրքս այսոքիկ զորս Վիմնիդէս յօ  
րինէ հոգեշարժս և գորովականս, պարզեք են  
կարևորք մարդկան: Օ ի բարերարութիւն մեծ  
է քամել յաչաց նոցա զցանկալի արտասուանս՝ զոր  
ցօղեն մտադիւր, և տածել 'ի սիրտ նոցա զկարե  
կցութիւնն սահմանեալ 'ի բնութենէ առ 'ի համ

1 Փարբիկ. մատենագ. Բու.  
նաց, հտ. 1. էջ 592:

2 Դիոնիս. աղիկ. յղ. քնն.  
նախն. մատենագր. հտ. 5.  
էջ 420:

3 Հարպոկր. իբրան. Ταμύν.

4 Դիոնիս. աղիկ. յղ. շա  
րագր. բառից, էջ 221:

5 Ղանգին. յղ. վսեմի.  
դԼ. 15:

բոլորս նոցա ընդ միմեանս, և որ միայն կարօղն է միաբանել զթշուառս :

Այս քանզի բարբ մարդկան ազդեն և 'ի միտս նոցա, 'ի դէպ է կարծել՝ զի և իմաստասիրութի Սիմոնիդեայ էր քաղցր և առանց գոռութեանս : Այս դասակտութիւնս նորա, որչափ ինչ 'ի սակաւ մասենից նորա, և յիմաստից բազմաց մարթ է 'ի միտ առնուլ, բովանդակի յայտոսիկ :

“ Սի հետազօտեսցուք զանհուն խորս գերաբուն էին<sup>1</sup>. շատ լիցի մեզ գիտել որ ինչ 'ի հրամանէ նորա գործին<sup>2</sup>, և զի նորա միայնոյ է զօրութի<sup>3</sup>: Իսկ մարդկան զօրութի զոր 'ի նմանէ ընդունին, է իբրև կաթիլ մի յաղբերէ<sup>4</sup>: Սի որ պարծեսցի 'ի կատարելութիւն, յոր ժամանակ ոչ կարէ<sup>5</sup>: Բարբինութիւնս 'ի գահաւանդս սեպացեալս եղ զկայեան իւր<sup>6</sup>. զհասեալն անդր բազմաշխատ ճգամբք, բիւր դէպք դժնդակք գահավիժեն 'ի վայր : Այս զի կեանք նոցա խառն է 'ի բարւոյ և 'ի չարէ, բազում ուրեք դժուարին է գոլ առաքինի, և անհնարին յարատեւել 'ի նոյն<sup>7</sup>: Յանկալի լիցի մեզ գովել զառաքինութիւնս. իսկ զհակառակսն անտես արասցուք ըստ պարտեաց՝

1 Կեկեր. յղ. բն. դից. գիրք Ա. գլ. 22. հտ. 2. էջ 415 :

2 Սիմոնիդ. առ Թէոփ : Անտիոք. առ Աւսուլ. գիրք Բ. էջ 256 :

3 Պղատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 344 :

4 Սիմոնիդ. անդ. : Անտիոք. անդ, էջ 108 :

5 Պղատ. անդ, էջ 344 :

6 Կղեմ. աղեքս. յառա. խապ. գիրք Դ. էջ 585 :

7 Պղատ. անդ. : Ստրաբ. էջ 560 :



եթէ յանցաւորն այլովք մասամբք սիրելի իցէ մեզ<sup>1</sup>, և ըստ հեզու[թեան՝ եթէ անծանօթ որ իցէ : Ս<sup>2</sup>ի խստիւ զայլս դատեսցուք . յուշ լիցի մեզ զի մարդիկ տկարք են<sup>3</sup>, սահմանեալք կալ սուղ ինչ ՚ի վերայ երկրի, և ՚ի ծոց նորա մինչև ՚ի սպառ<sup>4</sup> : Արանայ ժամանակն, և դարք բիւրաւորք են կէտ մի առ յաւիտենիւ, կամ խուն ինչ մասն անհատին<sup>5</sup> : Ի կիր արկցուք զվայրկեանքս երազասահս ՚ի վայելլս բարեաց որ անկ են մեզ<sup>6</sup>, յորոց գլխաւորք ՚ի նոցանէ են առողջութի, գեղ և մեծութիւնք ստացեալք արդարութեամբ<sup>7</sup> . և վայելլութեամբ սոցա բերկրեսցուք զցանկալի բերկրութիւնն, որ առանց նորա կեանք և մեծութիւն և անմահութիւն իսկ չեն ախորժելի<sup>8</sup> . :

Օ իմաստքս զայսոսիկ վնասակարս, որ լքուցանեն զսիրտս առաքինեաց, և զյանցաւորաց բառնան զխէթ մտացն խղճի, ՚ի դէպ էր համարել մորրութիւնս և եթ մտաց, եթէ Սխմնիդէս ՚ի ներելն այլոց յաւերջր առնել ընդ անձին իւրում խստութիւն : Եւ յլնա յանդգնեցաւ սաղրել լմեմիստոկղեայ զանիրաւութիւն, և ոչ ամօթ համարեցաւ զովել զսպանողս Վապարքեայ՝ յորմէ զլաւում բարերարութիւնսն ընկալեալ էր : Եւար-

1 Պզատ . ՚ի Պրոտագ . հտ . 2 . էջ 111 :  
 1 . էջ 346 : 5 Ստոր . ճառ . 96 . էջ 531 :  
 2 Պլուտ . յլ . միսիթ . հտ . 6 Վզեմ . աղեքս . յաճախ .  
 2 . էջ 107 : խապ . գիրք Դ . էջ 574 :  
 3 Ստոր . ճառ 120 . էջ 608 : 7 Աթեն . գիրք ԺԲ . էջ  
 4 Պլուտ . յլ . միսիթ . հտ . 512 :

ձեալ բամբասի նա յոյժ և յազահուծիւն , որպէս զի և ոչ առատաձեռնութիւն Հերոնի կարէր յազեցուցանել զայն , և ըստ բնաւորութեան ախտին օր ըստ օրէ յաւելոյր յանցազութիւն <sup>1</sup> : Այս նախ նուաստացոյց զբերթութիւն , վաճառական լինելով գովասանական տաղից անարգ վարձկանութեամբ : Ասէր իսկ պարծելով , զի այլոյ իրիք ցանկութեան չէր բաւական յայնմ հասակի՝ բայց մթերից ընչից <sup>2</sup> . և զի լաւ էր նմա մեծացուցանել զթշնամիս իւր յետմահու , քան կարօտել բարեկամաց իւրոց ՚ի կենդանութեան <sup>3</sup> . և զի չիք որ ազատ ՚ի թերութէ , և անստգտանելի զոր՝ ասէր՝ եթէ գտանէի , աշխարհաբարող առնէի զնա : Այց ջատագովութիւնքս այսորիկ անտեղիք ոչ արդարացուցին զնա առաջի հասարակաց , որոյ վճիռք անյեղ լիք չներեն երբէք ախտից՝ որ ՚ի նուաստութենէ սրտի քան ՚ի տկարութենէ գան յառաջ :

Այս մեռաւ Սիմոնիդէս ամաց իբր իննանից <sup>4</sup> : Ի պարծանս համարին նմա , զի յաճախեաց ՚ի Աէոս զսոյժառութիւն տօնից դիցն <sup>5</sup> , և զի զութերորդ լարն յաւել ՚ի քնար <sup>6</sup> , և զի արուեստա-

<sup>1</sup> Աթեն . գիրք ժ . Դ . 74 . 21 . էջ 656 : Եղիան . զան . պատմ . գիրք Ը . 74 . 2 :

<sup>2</sup> Պլուտ . յղ . ծերոյ տըն . տեսել զհաս . հտ . 2 . էջ 786 :

<sup>3</sup> Ստոր . ճոռ . 10 . էջ 132 :

<sup>4</sup> Աբսոնեան վէճք , գար

58 : Սուիդ . ՚ի Σιμων . 7 . 4 . կիան . ՚ի Մակրոր . հտ . 3 . էջ 228 :

<sup>5</sup> Աթեն . գիրք ժ . 74 . 22 . էջ 456 :

<sup>6</sup> Պլին . գիրք է . 74 . 56 . հտ . 1 . էջ 416 :

կանին յիշողութեան ինքն եղև հնարագիւտ<sup>1</sup> :  
 Բայ անուհի նորա փառք այն են՝ զի խրատս  
 օգտակարս թագաւորաց ետ, և զի բարեբաստ  
 զՍիկիլիա արար՝ ՚ի զգաստութիւն ածեալ  
 զՇերոն, և սախալեալ զնա խաղաղութեամբ կալ  
 ընդ սահմանակիցս և ընդ ժողովուրդ իւր և ընդ  
 ինքն իսկ :

Ըզգատոհմն Սիմոնիդեայ էր մի յայնցանէ,  
 յորս է քրմութիւն Սուսայից մշտնջենաւոր :  
 Թոռն նորա համանուն զրեաց զազգարանու-  
 թեանց և զգիւտից, որ յաճախեն փառս մարդ-  
 կեղէն մտաց<sup>2</sup> : Բաբիղիդէս եղբօրորդինորա զոգ-  
 ցես իմն կենդանացոյց զնա ՚ի քնարերգական տաղս :  
 Յստակութիւն բանից, կարգաւորութիւն իմաս-  
 տից, և զեղեցկութիւնք պատշաճք և մինչև ՚ի  
 սպառ անուաղելիք<sup>3</sup>, ետուն Բաբիղիդեայ յաղ-  
 թանակս՝ նախանձեղիս Պինդարեայ<sup>4</sup> : Արկոբին  
 սորա հաւասարապէս զտին շնորհս առաջի շերո-  
 նի արքայի առ ժամանակ մի, և զարքունեացն  
 Սիրակուսայ բաժանեցան զվարկս. այլ իբրև ոչ ևս  
 պաշտպանութիւն թագաւորին խափանէր զնո-  
 սա ՚ի պատշաճ կայիցն . Պինդարոս ամբարձաւ  
 գեր ՚ի վեր, և Բաբիղիդէս եկաց յերկիր ՚ի խո-  
 նարհ :

<sup>1</sup> Սիկեր . յղ . ճարտ . գիրք  
 Բ . գլ . 86 . հտ . 1 . էջ 137 :  
 Պլին . գիրք 1 . գլ . 24 . էջ  
 387 :

<sup>2</sup> Սուիդ . ՚ի Σίμων .

<sup>3</sup> Գոնգին . յղ . վտե մի .  
 գլ . 33 :

<sup>4</sup> Պարտալ . Պլին . ՚ի սիւթ .  
 2 . տող 175 :

Մինչդեռ սա մշանջենաւորէր 'ի Սիկիլիա զփաւ  
 ուր Տայրենեացն, Պրոդիկոս խմաստակ պայծա-  
 ռացուցանէր զայն յայլ և այլ քաղաքս Ալլադայ՝  
 արտասանելով ճառս քաջարուեստս, յեռեալս  
 հանձարեղ այլաբանութեամբք, ինքնազարդ՝ վեհ  
 և ներդաշնակաւոր ասացուածով: Այլ թէպէտ  
 ճարտարխօսութիւն նորա էր վարձկան անարդ,  
 և ամայի 'ի գեղեցկութիւն ձայնի՝. այլ զի 'ի տիպս  
 կերպարանաց զօշոտիչս յանդիման առնէր զառա-  
 քինութիւն, զարմանալի եղև թեբացւոց, գովելի  
 աթենացւոց, և մեծարոյ սպարտացւոց՝: Բայց  
 սարա 'ի յառաջ բերել խմաստս կործանիչս կրօ-  
 նից՝, անարգեցաւ յաթենացւոց որպէս զեղծուցիչ  
 մանկուոյն, և դատապարտեցաւ 'ի մոլեխինդ:

Այնչհետի 'ի Աէայ է Աիւթնոս կղզի, հըռ-  
 չակաւոր արօտիւքն՝. և այսր ևս մօտ առ մեզ եր-  
 կիրն զոր տեսանես լը արեմուտս՝ է Սիկիրոս կղզի  
 արգաւանդահող՝, ուր մի յերիցագունից խմաս-  
 տասիրաց ծնաւ՝. ասեմ'իսկ զՍերեկիդէս, որ ե-  
 կաց յառաջ քան զամս երկերիւր՝, և արար յե-  
 ղափոխութիւն մեծ յիմաստասիրութեան: Այլ 'ի

1 Պայլ. բառգիրք արհ.՝  
 'ի բառն *prodicus*. հտ. 21.  
 էջ 167: Յիշատ. բանաս. կա-  
 ճառ: Տէս և որ ինչ 'ի ԾԼ.  
 գլուխ գրոցս ասացեալ է զՊրո-  
 դիկայ:

2 Փիլոսար. յղ. վարուց  
 իմաստակ. գիրք Ա. էջ 496:

3 Նոյն անդ, էջ 483:

4 Սիկեր. յղ. բն. գից, գիրք  
 Ա. գլ. 42. էջ 432:

5 Եւստատ. 'ի Դիոնիս.  
 տիեզերագր. տող 526:

6 Հոմեր. Ողիս. գիրք ԺԵ.  
 տող 405:

7 Դիոդ. լայերոս. գիրք Ա.  
 յօդ. 116:

8 Նոյն անդ, յօդ. 121:

Հիւանդանալ նորա , իբրև ոչ ևս էր ասարանաց ,  
Պիւթագոր աշակերտ նորա մեկնեալ յԱտալիոյ  
եկն ժողովել զնորա շունչ վախճանին<sup>1</sup> :

Վարձո՞ զաչս քո՞ ՚ի հարաւ , և տե՛ս ընդ ոլորտս  
զգողորչին թանձր և նաեմ՝ որ աղօտացուցանէ  
զարիիասկիզբն ճառագայթս . անդ են Պարոս և  
Նաբսոս :

Մաջնոյն զրեթէ երեքարիւր ասպարէզ շրջա-  
պատ է՝ . անդաստանք բերրիք , հօտք բազմա-  
հոյք<sup>2</sup> , նաւահանդիստք կրկին ասպահովք՝ , և զաղ-  
թականք ՚ի նմանէ ՚ի հեռաստան վայրս սրի-  
ռեալք<sup>3</sup> տացենքեզ ՚ի միտ առնուլ ընդ աղօտ զգօ-  
րու թիւն բնակչաց նորա : Նա ՚ի դուզնաբեայ բա-  
նից աստի խելամուտ լիցիս բուսոյ բարուց նոցին ,  
զոր դէպք յերևան ածին :

Միլէտոս քաղաք Յոնիոյ պառակտեալ յու-  
ղէր ՚ի դժնեայ հերձուածս<sup>4</sup> . և քան զամենայն  
ժողովուրդս հռչակաւորս իմնասու թիւ , դիպողա-  
գոյնք թուեցան նմա պարոսացիք ՚ի դարձուցա-  
նել առ ինքն զխաղաղութիւն : Նստրեաց նա ՚ի  
նոցանէ իրաւարարս . որոց ոչ կարացեալ միաբա-  
բանել զպառակտեալն , որ դառնացեալ էին  
ատելութեամբ ՚ի բազում ժամանակաց , ելին ՚ի

1 Դիոգ . ՚ի ծագկաք . վա-

ղեսի . էջ 242 : Յամբղիկ . վարք

Պիւթագ . գլ . 35 . էջ 202 :

2 Պլին . գիրք Դ . հտ . 1 .

գլ . 12 :

3 Թուրնքֆոր ուղևոր . հտ .

1 . էջ 203 :

4 Սկիւլաքս յաշխարհագիրս .

հտ . 1 . էջ 22 :

5 Սարաք . գիրք ժ . էջ 487 :

6 Երոզոս . գիրք Ե . գլ . 28 :

քաղաքէն և անցին ընդ դաշտս, և գտին զայնս սիկ խոպան և ամայի, բաց 'ի վիճակաց ինչ՝ զորս սակաւք ոմանք 'ի քաղաքայնոց դեռ և ս մշակէին :  
 Օ արմացեալք ընդ անխուով խաղաղութիւննոցա, կացուցին զնոսա՝ առանց ինչ ընդ բանս ածելոյ՝ 'ի տեսչութիւն իրաց հասարակաց, և վաղ ընդ փոյթ բարեկարգութիւն և առատութիւն գարձան 'ի Միլետոս :

Զարչաւել Վարեհի յԱլլադա, միաբանեցին ընդ նմա պարոտացիք, և նախատանաց պարտութեան նորա 'ի Մարաթոն եղէն կցորդք՝ Վաստիպեալք ամրանալ 'ի քաղաք իւրեանց պաշարեցան անդ 'ի Միլտիադեայ՝ Վա ընդ երկար դիմամարտեալք, ինդրեցին ապա խօսել 'ի խաղաղութիւն. և իբրև պայմանք դաշանցն երկուստեք եղէն ընդունելի, բոց 'ի կողմն Միկոնեայ ամբառնայր յօդս, դէպ լեալ հըոց ընդ անտառս ճարակել : Վա որք 'ի բանակին էին և 'ի քաղաքի, նշաննառատորմին Պարսից զհօրն զայն կարծեցեալ, իբր թէ յօգնութիւն գային կղզոյն, ժպրհեցան դրժել բանից դաշանցն, և Միլտիադ գարձաւ յետս : Վա 'ի խիստ բանափայրն զարմանալի զձախողութեան իրացն ելոյժ զվրէժ. բայց խստագոյն և ս պարոտացիք ընկալան պատուհաս, յաւերժացեալ դրժողութեան նոցա յառակս :

1 Երոզոտ. գիրք 2. գլ. 133 :

2 Եփոր. առ Սակեփ. 'ի Ոգր. նեպոս 'ի Սիլտիադ, գլ. 7 :

Իսկ յարշաւանս Վսերբսեայ, մատնիչք եղեն  
 Համազգեացն՝ կացել ՚ի նիզակակցութեան Պար-  
 սից, և մատնեցին զՊարսս անգործութեամբ :  
 Եւ աւատորմ նոցա կայր ՚ի նաւահանգստին Վիւթ-  
 նեայ պարսպորդ, գէտակն ունելով ելից մար-  
 տին՝ առ ՚ի յաւելուլ ՚ի կողմն յաղթականին :  
 Այլ զմտաւ ածին, զի վերջացեալք յօգնականու-  
 թենէ յաղթութեան նորա՝ ձգէին յանձինս  
 զչրէժինդրութիւն . և զի տկար պետութեան,  
 ՚ի ստիպել յերեսաց երկուց մեծազօր պետու-  
 թեանց՝ որ զսահմանս միմեանց ջանայցեն հա-  
 տանել, բազում այն է՝ զի չիք այլ ապաստան,  
 բայց ընդ հոսանս ուղիսիցն աղխաղխեալ գնալ, և  
 դիմել ՚ի փառս՝ ողբալով զազատութիւն : Օայ-  
 սորիկ վաղ զփորձ առին պարոսացիք . զի թէպէտ և  
 զառաջինն զօրութեամբ հարկաց զյաղթօղս ճա-  
 կատամարտին Սաղա մեայ նահանջեցին<sup>3</sup>, այլ ա-  
 պա նուաճեցան ընդ լծով նոցա զրեթէ անդի-  
 մագարձ :

Իսկ զինք են Շ նորհաց ՚ի Պարոս . և Մինուսց  
 արքային կրետացւոց զոհ երբեմն մատուցանելով  
 անդ<sup>2</sup>, գոյժ եհաս նմա զի Մնդրոզէոս օրդի նու-  
 բա սպանեալ էր յԱտտիկէ ՚ի պատերազմի : Եւ  
 վախճան արարնա զոհին, արկեալ ՚ի բաց զպսակն  
 սարդենի՝ որով պսակեալն էր . և հեկեկելով  
 հրաման տուեալ նուազածուին, լուեցոյց զսը-

<sup>1</sup> Երոզոս . գիրք Ը . ԴԷ . 67 :

<sup>3</sup> Ապողոդ . գիրք Գ . ԷԶ

<sup>2</sup> Նոյն անդ , ԴԷ . 112 :

րինգն : Այլ քրմաց զիրաւացի սղոյն պահեալ զյիւ-  
շատակ , 'ի հարցանել ուրուք՝ թէ ընդէր պսակս  
և նուագարանս ոչ 'ի կիր արկանեն 'ի պաշտա-  
մունս զոհիցն , ասեն . Օ՛ր 'ի սմին պաշտամանս ,  
առ սովին բազնաւ , բարեբաստագոյնն 'ի հարց  
լուա զգոյժ մահու որդեկին սիրով սիրեցելոյ ,  
և գտաւ թշուառագոյն քան զամենայն մարդ :

Բազումք 'ի քաղաքաց պարծին խանձարուք  
լեալ հոմերի , այլ ոչ ոք վիճի յափշտակել 'ի  
Պարոտէ զպարծանս կամ զամօթ 'ի լոյս ածելոյ  
նորա զՎրբիղորոս՝ : Վերթոզս այս , կացեալ յա-  
ռաջ քան զամս իբր երեքարիւր և յիսուն՝ , էր  
յազնուական ազգատոհմէ . և նախապատմեաց  
հարցուին դեղփական զծնունդ նորա , և զհան-  
դերձեալ փառսն՝ : Յոյք պատրաստեալք պատ-  
գաման՝ զարմանային ընդ զօրութիւն բացատրու-  
թեան տաղից նորա և ընդ վեհ իմաստս՝ . յար-  
տուղութիւնսն իսկ եցոյց նա զարիական կորով  
հանձարոյն՝ , ընդարձակեաց զսահմանս արուես-  
տին , յաւել զնոր չափ տաղի և նորանոր գեղգե-  
ղանս յերաժշտութիւն՝ : Ար ինչ հոմերոս 'ի  
դիւցազնականին արարքերթութեան , զնոյն Վր-

<sup>1</sup> Փարր . մտտենագ . Յուն .  
հա . 1 . էջ 572 : Յիշատ .  
բանաս . կաճառ . հա . 10 .  
էջ 36 :

<sup>2</sup> Երոզոս . գիրք Ա . ԴԼ .  
12 : ԱԼ . ԳԵԱ . գիրք ԺԷ .  
ԴԼ . 21 : Կիկեր . տուսկուլ .  
գիրք Ա . ԴԼ . 1 . էջ 234 :

<sup>3</sup> Եւսեք . պատրաստ . ա-  
ւեա . գիրք Ե . ԴԼ . 33 . էջ 27 :

<sup>4</sup> Կուրնաիլ . գիրք Ժ . ԴԼ . 1 :

<sup>5</sup> Ղոնգին . յԴ . վտեմի ,  
ԴԼ . 33 :

<sup>6</sup> Պլուտ . յԴ . երաժշտ .  
հա . 2 . էջ 1140 :



քիղոքոս արար 'ի քնարականին . երկոքին առ  
 հասարակ յիւրեանցն կարգի կացին նախատիւք<sup>1</sup>,  
 երկաքանչիւրոցն քերթածք ընթերցան յաշխար-  
 հաժողովն Ալլադայ<sup>2</sup>, և երկոցունցն իսկ տօնա-  
 խմբի ծնունդ<sup>3</sup> : Այց թէպէտ և անուանք նո-  
 ցա հաւասարեալ՝ այլ կարգք նոցա չեղէն ան-  
 խտիր, չնորհապարտ մեծարանաց տալով պա-  
 րտացւոյն զերկրորդ տեղին<sup>4</sup> : Այլ որ քան զՏո-  
 մերոս և եթ գտանի ստորադաս, նա զառաջինն  
 ժառանգէ տեղի :

Իսկ ըստ բարուց և ըստ ուղղութեան կենաց  
 պարտ էր ընդ անարգագոյնս 'ի մարդկանէ կալ  
 Աբբիղոքեայ : Այլ երբէք հանձար այնպիսի վսեմ  
 կցորդեցաւ ընդ բարս դժնդակս և յոռիս որպէս  
 զնորայն : Պղծէր նա զտաղս իւր բանիւք ցոփու-  
 թեան և խենէշ նկարուք<sup>5</sup>. զեղոյր 'ի նոսա յա-  
 ճախութեամբ զլեղի դառնութեան, որով պա-  
 րապէրն սիրտ նորա<sup>6</sup> : Արեկամք նր և թշնամիք  
 և սիրուհիք վատշուէրք նշաւեք էին առ հա-  
 սարակ արիւնուշտ նեախց երգիծանաց նորա .  
 և այն ևս նորանշան, ինքն իսկ զայս ամենայն  
 աւանդէ<sup>7</sup>. զի ինքնին զիւր կեանս նկարագրեալ,

1 Վէլլ . Պատերկուղ . գիրք Ա . ԴԼ . 5 :	5 Ենոմ . առ Եւսեբ . 'ի պատրաստ . աւետ . գիրք Ե . ԴԼ . 32 :
2 Քամեւ . առ Աթեն . գիրք ԺԴ . ԴԼ . 3 . էջ 620 :	6 Պինդ . սիւլթ . 2 . տող 100 :
3 Ծագկաբաղ . գիրք Բ . ԴԼ . 47 . էջ 173 :	7 Եղիան . զան . պատմ . գիրք 2 . ԴԼ . 13 :
4 Վաղ . Մաքս . գիրք 2 . ԴԼ . 3 :	

ոչ ամաչէ նկատել զայս ամենայն ոճիրս, և ժպրհի  
խակ յանդիման աննել տիեզերաց :

Վեռարողըօջ գեղ մանկութեան՝ Աեորուղեայ  
դատեր Վիկամբեայ գերեալ էր զսիրտ նորա՝ և  
իրբև խոստմունք երկուստեք թուէին աներկեան  
առնել զբարեբաստութիւն իւր և զկատարումն  
հարսանեացն, ցանկութիւն շահից ՚ի ներքս ան-  
կեալ՝ ետ նախամեծար առնել զոսոխ նորա :  
Հայնժամ քերթողն, առ զայրոյթ քան առ վիշտ  
սրտին, յուղեալ տատանեաց զօձս՝ աւանդեալս  
ի ձեռս նորա ՚ի ժանտիցն դժոխոց, և այն-  
պիսի նախատանօք երզիծոյց զԱեորուղէ և  
զազգահանս նորա, մինչև անձնամահ զբաւել  
նոցա ՚ի կենաց՝ զոր թունիւքն դառնութեան լը-  
ցեալ էր նորա անխնայ :

Ղա կարօտութեան մեկնեալ ՚ի հայրենեացն,  
չոգաւ ընդ գաղթականս պարտացիս՝ ՚ի լճատոս :  
Ղնդ այլ իմն ճարակ մնլեգնութե իւրում եզիտ,  
և զրգուեաց ընդդէմ իւր զցասումն հասարակաց :  
Ղնդ հուպ ՚ի վերայ հասին դէպք ցածուցանե-  
լոյ զայն : զի պատերազմէին թասեցիք ընդ ազգս  
մերձաւորս, և չոգաւ նա ընդ զօրս . այլ ընդ տե-  
սաննել զթշնամիս՝ վահանընկէց դարձաւ ՚ի փա-  
խուստ : Ղն ելլադացւոյ չիք մեծ ևս քան զայս  
նախատինս, այլ նախատինք զտարապարտ նա-

1 Պարսպ . Ովբաա . տաղ .  
երգ . 6 . տաղ 13 :

2 Ծաղկաքաղ . դիրք 7 .  
7Լ 25 . էջ 271 :

3 Կղեմ . աղեքս . յաճա-  
խապ . դիրք Ա . էջ 358 :

4 Եղիան . զան . պատմ .  
դիրք Վ . 7Լ 13 :

խառնարան և եթ ամաչեցուցանեն . իսկ Մ. քրի-  
զորոս համարձակ 'ի միում ուրեք 'ի տաղիցն  
խոստովան լինելով զվատուծիւն իւր , սակ .  
Թողի զասպար իմ , բայց զտից միւս այլ . սա-  
կայն զկեանս իմ ասրեցուցի ' :

Մ. յսպէս խիղախէր նա ընդդէմ կշտամբու-  
թեան հասարակաց , զի սիրտ իւր զնա ոչ կշտամ-  
բէր . և այսպէս առ ոտն կոխեալ զօրէնս լաւու-  
թեան , յանդգնեցաւ երևել 'ի Սպարտա : Մ. յլ  
զինչ մարթէր նմա ակն ունել 'ի ժողովրդէնէ ,  
որ ոչն երբէք զարմանայր ընդ այն ինչ՝ զոր ոչն  
յարգէր : Արամեցան սպարտացիք 'ի տեսանել  
զնա 'ի քաղաքամիջի իւրեանց , և վարեցին զնա  
անդէն 'ի բաց՝ , և զգիրսնորա տարադրեցին յա-  
մենայն սահմանաց տէրութեան իւրեանց՝ :

Մ. յլ 'ի ժողով աղիմակիական խաղուցն մտիթա-  
րեցաւ նա 'ի վերայ նախատանացն : Վանդի ար-  
տասանեաց անդ 'ի պատիւ Հերակղեայ զհռչա-  
կաւոր օրհնութիւնն , որ նուագի ցարդ յամե-  
նայն հանդէս յաղթանակի գուպարայաղթ նա-  
հատակաց՝ : Վազմութին շուայլեաց նմա դրուա-  
տիս , և դասաւորք սահմանեցին նմա պսակ՝ յայտ  
արարեալ , զի չիք քերթած արժանաւորագոյն  
գոհութեան քան զայն՝ որ ուսուցանէն զպարտս  
մեր :

1 Արխատոսի . 'ի խաղաղ .  
տող . 1296 :

2 Պլուտ . կարգադր . լա-  
կան . հտ . 2 . էջ 239 :

3 Վազ . Մաքս . 71րբ 2 .

71 . 3 :

4 Պլենդ . ողիմոյ . 9 . տող 1 :

Եւ սպանաւ Մըքիղորոս 'ի Վալլանդայ նաքսեցոյ, զոր 'ի բազում ժամանակաց հետէ հալածէրն: Հարցուին զեղփական համարեցաւ զմահ նորա 'ի թշնամանս քերթողութե, և սաստեալ սպանողին ասէ՝. Ե՛լ 'ի բաց 'ի տաճարէս որ զձեռն քո մխեցեր 'ի սիրելին Մուսայից: Բայց Վալլանդաս եցոյց աղերսանօք ոչ ինչ արտաքոյ օրինաց պաշտպանութեան անձին գործեալ: Ե՛լ Հարցուին թէպէտ և ողորեալ յաղերսանաց նորա, ստիպեաց զնա հեղուլ նուէրս հաշտարարս զայրացերոյ ստուերին Մըքիղորեայ՝: Ե՛ս վախճան եղև առն, որ աջողութեամբք մտացն զարմանալի, յոռութեամբքն նախատելի, և ժպլը հութեամբն լեալ էր երկիւղալի:

Ոչ իբրև զնա երևելիք լեալ, այլ արգոյքքան զնա, Պողիգնոտ, Մըկեսիղայոս և Միկանովր պարոսացի վաղվաղեցին զզարգացումն այրեցականին նկարչութեան՝: Եւ այլ ոմն 'ի ճարտարաց պարոսացւոց եղև անուանի օտար վաստակովք: Ե՛ս ինքն է Մգորակրիտոս, զոր Պիղիայ աշակերտեալ իւր՝ զուր ջանացաւ ամբառնալ զնա 'ի կարգ ոստիսաց իւրոց՝. փառակից իւր առնէր զնա, և դրոշմէր զանուն նորա 'ի քանդակս իւր, ոչ զմտաւ ածեալ՝ զի գրոցին ճարտարութիւն նշաւակեր

1 Պուլա. յգ. յամբ վեր. հա. 2. էջ 703:  
 Ժուց գից, հա. 2. էջ 560: 4 Նոյն, գերք 1, 2. ԴԼ. 5.  
 2 Սուիգ. 'ի բառն Արչմ. հա. 2. էջ 725:  
 3 Պլեն. գերք 1, 6. ԴԼ. 11.

զիսարէութիւնն , և մասն լինէր բարեկամութեանն :

Մ.ՅԼ փոխանակ նախատպաց մատոյց Պարոս ճարտարաց նիւթ առատ : Նաճկէն զերկիր վէմք կոխածոյք քարահատիցն Սարպէսեայ լերին <sup>1</sup> : Մնդ ընդ գետնափոր շաւիղս 'ի լոյս աղօտաջահ լապտերաց <sup>2</sup> խէ վշտագին ամբոխ ստրկաց զհատորս վիմաց մեծամեծս՝ որ փայլէն 'ի վսեմագոյն շինուածս Ալլաղայ , ևս և 'ի ճակատ եգիպտական բաւղին <sup>3</sup> : Մազումք 'ի մեհենաց կճիւս այսուիկէն դրուագեալ , զի գոյն նորահայն համարի անմահից <sup>4</sup> : Ար երբեմն զի անդրիագործք ոչ ևս զայլ վէմ քանդակէին . և արդ իսկ խնդրէն <sup>5</sup> զայն անձկանօք <sup>6</sup> , թէպէտ և ոչ միշտ ըստ ըզձից նոցա պատահէ . քանզի ստուար մասունք բիւրդեայք՝ յորոց է կազմած նորա՝ պատրէն խաբուսիկ ցուլիքն զաչս , և ցայտեն ընդ գրչաւ ճարտարին 'ի տաշեղս : Մ.ՅԼ թերութեանն յաղթեն առաւելութիւնք , և մանաւանդ ձիւնափայլ սպիտակութիւն նորա , յոր յաճախ ակնարկէն քերթողք , և երբեմն 'ի ճահ նկարագրի քերթութեանն : Պինդարոս զմիօջէ 'ի տաղիցն իւրոց ասէ . Վալափայլ քան զկիճ՝ պարտեան կանգնեմ անդրի :

1 Ստեփ. 'ի Մաթ. Վերգիւ. Ենեակ. գիրք 2. տող 471 : 2 Պլին. գիրք 12. ԳԼ. 3. հտ. 2. էջ 725 : Աթեն. գիրք Ե. էջ 205 : 3 Պլին. անդ. ԳԼ. 13. հտ. 5. հտ. 2. էջ 725 : 4 Պլատ. յղ. օր. հտ. 2. գիրք ԺԲ. էջ 936 : 5 Սարաբ. գիրք Ժ. էջ 487 : Պլին. գիրք 12. ԳԼ. 3. հտ. 2. էջ 725 :

Եւ Մնակրէոն գոչէ՝ Ո՛վ վեհո նկարաց, առ զերանգս վարդի և զկաթին և զպարոսեան կձի՛ի կենդանագիր սիրուհւոյն իմոյ :

Մնդ Վաքսոս և ընդ Պարոս բաժանէ կիրճ անձուկ. չիք ՚ի Ռորր կղզիա հաւասար ընդարձակութեան Վաքսեայ, և առատութեամբն մրցի ընդ Սիկիլիոյ՝ Ռայց գեղ նորա ծածկի յաչայ ուղևորին մատուցելոյ ՚ի ծովեզր նորա՝ զի ոչ ինչ տեսանեն անդ աչք, բայց լերինս անմատոյցս և ամայիս : ՄԼ լերինքն այնոքիկ ամբարտակք ընդդէմ ստահակ հողմոց ՚ի բնութի՛ կանգնեալք, պատսպարեն զդաշտս և զհովիտս՝ զորս համասփիւռ գանձիւքն ծածկէ՝ : Օ ՚ի անդ նա հանդէս առնէ ամենափարթամ առատութեանն. անդ աղբիւրք անսպառք զկարկաջահոս և զլճիտ ալիսն ՚ի բիւր ազգի ազգի կերպարանս բղխեն, և խաչինք ՚ի խիտ դալարիսն մորրին ճարակաւորք : Մնդ, ոչ ինչ հեռի ՚ի գեղեցիկ փանց Ռիբլինեայ՝, ժամանեն անձեռնհաս ՚ի յափշտակողաց թուզք քաղցրահամք՝ զորս Վիոնիսոս բնակչաց կղզւոյն ծանոյց, և ուկոյզք հռչակաւոր գինեայն՝ որ քան զամենայն ազգս գինւոյ գրեթէ առհասարակ մեծարին : Վոնենիք, նշենիք՝ և ձիթենիք աձեն

1 Անակր. տաղերգ. 28. տող 27 :

2 Ագաթեմ. գերբ Ա. ԳԼ. 5 : Պլին. գերբ Դ. ԳԼ. 12. էջ 212 :

3 Թուրնըֆոր, ուղևոր. հա.

1. էջ 213 :

4 նոյն անդ :

5 Ստուգար. մատեան ՚ի բառն Βίβλιος.

6 Աթեն. գերբ Բ. ԳԼ. 12.

էջ 52 :

և բազմանան անաշխատ ընդ դաշտս, զորս ամի ամի ծածկեն հունձք առատք: Ստրուկք անդ ժիրաժիրք ոչ դադարեն 'ի ժողովելոյ զգանձան', և հոյք նաւաց 'ի կրելոյ զնոսա 'ի տար աշխարհս:

Սակայն յառատութեան անդ բնակիչք կղզւոյն քաջք են և արիք և նախանձաւորք յոյժ ազատուէ իւրեանց: Յառաջ քան զամս երկերիւր, հասարակապետութիւննոցա ժամանեալ 'ի ծայր մեծութեան իւրոյ, ութ հազար այր կարող էր զինուորել<sup>1</sup>: Արար իւր պարծանս քաջութեան, զդէմ ունելով Պարսից՝ նախ քան զնուաճելն 'ի նոցանէ<sup>2</sup>, և թօթափեալ զլուծնոցա 'ի պահուն՝ յորում դիմեալ զնային նորա բոլորումն տիրել Ալլադայ<sup>3</sup>: Օրութիւնք նորա ընդ ծով և ընդ ցամաք գումարեալ ընդ Յունացն առհասարակ, նշանաւորք ցուցան 'ի ճակատամարտս Սաղամինայ և Պղատեայ • այլ նովին իսկ խորհուրդ 'ի միտս արկին աթենացւոց՝ չթողացուցանելոյ զօրանալ պետութեան, որ զայնպիսի հզօր օգնականութիւնսն մատուցանէրնոցա: Ամին իրի յորժամ Վթէնք խորհեցան ընդդէմ դաշանցն նուաճել զնախնի նիզակակիցս իւրեանց, նախ 'ի Աքսոս ածին զհարուածս<sup>4</sup>, և ոչ այլ ինչ թողին նմա՝ բայց զանդորր ժառանգութիւն տօնիցն իւրոց և զխաղուց:

1 Երոզոս. գերք Ե. գլ. 31:

2 Նոյն անդ. գլ. 30:

3 Նոյն անդ:

4 Գիոգ. գերք Ե. գլ. 325:

5 Թուկիդ. գերք Ա. գլ.

38 և 137:

Պիտնիսոս իշխան է կղզւոյն, նոյն ինքն և իննամակալ նորա . և ամենայն ուրեք են անդ պատկերք բարերարութեան . և գոհութեան : Բնակիչք նորա փութան ցուցանել օտարաց ըզվայրն, ուր յաւերժահարսունք դայեկեցին աստուածոյն<sup>1</sup> : Պատմեն զսքանչելիան զորս գործէ նոցա, զի նովաւ ժառանգեն զմեծութիւնան, և զի մեհեանք և բազինք իւրեանց ծխին նմա զցայգ և զցերեկ : Ըստ ուղերձի պաշտօն ուսուցողին մշակել զձիթենի<sup>2</sup>, և անդ զիցն՝ որ հեղու յողկոյզս զօշարակն աստուածըմպելի<sup>3</sup> : Օ ի յայլ և այլ դէմս պաշտեն զնա, առ ՚ի յաճախել զհաւճոյական իւրեանց զպարտս :

Ը ուրջ զՊարոսիւ կան կղզիք երեք, Սերիփոս, Սիփնոս, և Սելոս : Օ Սերիփոս այսպէս ՚ի միտս քո նկարեցիր<sup>4</sup> . լերինս բազումս սեպացեալս անջրդիս, և ՚ի լերանցամէջս անդ վիհս անդրնդախորս՝ յորս մարդիկն թշուառ տեսանեն հանապազ զգլխով իւրեանց ՚ի կախ զժայռան ահազինս, վրէժխնդրութեանն Պերսէոսի արձանս : Վանզի զրոյցք իմն ծաղրալիցք, այլ բնակչաց կղզւոյն ահարկուք, ունին զնոցանէ այսպէս . Պերսեայ սպառազինեալ ՚ի կառափն Սելուսայ, և ՚ի ժայռան ստակալիս երբեմն զնախնիս

<sup>1</sup> Դիոգ. գերք Ե. էջ 325 : Ա. ԴԼ. 24. էջ 30 :

<sup>2</sup> Աթեն. գերք Գ. ԴԼ. 5 .

<sup>4</sup> Տակիտ. տարեգր. գերք

էջ 78 :

Դ. ԴԼ. 21 : Պլուտ. յԷ. ար-

<sup>3</sup> Արքիլ. առ Աթեն. գերք

սոր. հտ. 2. էջ 602 :



նոցա այլակերպեալ <sup>1</sup> :

Անտի սուղ ինչ ՚ի բացեաց ընդ յարազուարճ երկնաւ նկարեալ ՚ի մտի դաշտս ծաղկաւէտս և միշտ ծածկեալս բերովք, վայր փափկու թեան, ուր օղբ անասական անդրքան զսովորականն սահման երկարաձգեն զկեանս մարդկան . այս է գեղեցկու թեանցն Սիփնեայ պատկեր ընդ աղօտ <sup>2</sup> : Բնակիչք նր էին երբեմն փարթամագոյնք ՚ի կղզայինս մեր <sup>3</sup> : Արկիրն պեղեալ ՚ի նոցանէ , ամի ամի մատուցանէր նոցա հարկս ամբառ ոսկւոյ և արծաթոյ : Օտասանորդ գանձուցն նուիրէին Ապողոնի ՚ի Աեդիփա , և ՚ի նուիրաց անտի մթերեցան առաւելագոյն գանձք մեհենին : Այլ ապա ծով զայրազնեալ յորդեաց ՚ի բովն փաստակարս , և չմնաց ինչ նոցա ՚ի նախնի մեծութեանցն՝ բայց մորմոք կորստեանն , և որ առ ՚ի նոցանէ յուսութիւնքն <sup>4</sup> :

Մի յարգաւանդագոյն կղզեաց եզէական ծովուն է Սեղոս <sup>5</sup> : Ածումբն , և որ այլ ևս ՚ի ծոց երկրի նիւթք հրավառք , պահեն ՚ի նմա ըզերմութիւն ստածիչ , և համեղաճաշակ զբերս երկրին պատրաստեն :

Մինչ գեռ ժողովուրդն կայր անդ յազատութեան , զոր ժառանգէրն ՚ի բազում դարուց հե-

<sup>1</sup> Սարաբ . գիրք ժ . էջ 497 : Ապող . հոգ . գիրք Գ . սող 1515 :

<sup>2</sup> Թուրնըֆոր , ուղևոր . հո . 1 . էջ 172 :

<sup>3</sup> Աբողոս . գիրք Գ . գլ 57 :

<sup>4</sup> Պաւսան . գիրք ժ . գլ .

11 . էջ 823 : Հիւսիք . և Սու-

իդ ՚ի բառն Տիֆուսի :

<sup>5</sup> Թուրնըֆոր , անգ . էջ 148 :

տէ, աթենացիք 'ի պեղոպոնեսական մարտին խորհեցան հնազանդեցուցանել զնա, և ստիպեցին ձեռն տալ 'ի մի կողմն, զի նա անմէտ յերկաքանչիւր կողմանս կայր ընդ Մթէնս և ընդ Սպարտա՝ ուստի բնիկն էր: Այլ 'ի չառնուլ նորա յանձն՝ զրդուեալք, յարձակեցան 'ի կղզի անդր բազում անգամ. և վանեալք 'ի բաց, դարձան ապա անդր միահամուռ ամ զօրութեամբ իւրեանց: Առաջեցաւ կղզին, այլ 'ի նախատինս յաղթողացն. զի անիրաւութեամբ սկիզբն արարեալ մարտին, անգթութեամբ արարին վախճան նմին: Թման պարտեալքն գերի յԱտտիկէ, և սաղրանօք Մկիբիադեայ սպանան առ հասարակ որք միանգամ զէն առնուլ կարող էին՝. իսկ այլք հեծէին 'ի շղթայս մինչև զօրութիւն սպարտական ստիպեաց զՄթէնս՝ արձակել զնոսա անգրէն 'ի Սեղոս՝:

Եւստասէր ոմն մեղոսացի, ականատես լեալ ամենայն չարեացն՝ որ հասին հայրենեաց իւրոց, համարեցաւ 'ի միտս իւր՝ զի թշուառականաց, որոց չիք յոյս 'ի մարդկանէ, ոչ ևս պարտ է չափով բարեպաշտել առ դիւս: Օգիտագորայ ասեմ, յորմէ մանտինեացիք ընկալան զօրէնս և զբարեբաստութիւնն զոր ժառանգեն: Առանդուն

1 Թուկիդ. գիրք Ե. գլ. 85:

2 Նոյն անդ. գլ. 116:

Սորաբ. գիրք Ժ. էջ 484:

Պլուտ. Մկիբի. հտ. 1. էջ

3 Պլուտ. 'ի Լիսանդր.

հտ. 1. էջ 441:

4 Եղիան. զան. պատմ.

գիրք Բ. գլ. 23:

մտօքն զակատեալ նորա 'ի ցնորս երկդոնենին տաղից, զառածաւ 'ի ծառայական երկիւղ դից, և յաւել 'ի պաշտօն իւր հոյլ իմն արարողութեանց', և շրջէր ընդ Ալլադա նուիրիլ 'ի խորհուրդս : Բայց իմաստասիրութիւն նորա անսասան յանհարթութեանց, որ ընդ տիեզերս լինին, նկուն եղև յանիրաւութենէ՝ զոր եհաս նմա կրքել : ( ) 'ի մի 'ի բարեկամաց նորա ժխտեաց նմա զաւանդն, և 'ի հաստատութիւն ժխտութեանն երգումն առաջի բազնաց ետ : Առութիւն դիցն ընդ ստերդմնութիւն նորա, և ընդ անդթութիւն՝ զորս աթենացիք արարին 'ի Սեղոս, ապշեցոյց զիմաստասէրն, և 'ի կարի երկիւղածութենէն գահալիժեցաւ յանաստուածութիւն : Յարոյց 'ի վերայ իւր զքուրմն՝ նշաւակելով 'ի գիր և 'ի բան զգաղտնիս դիւցական խորհրդոց, զժողովուրդն՝ խորտակելով զպատկերս դից<sup>1</sup>\*, և զԱլլադա առհասարակ՝ ուրանալով զգիս համարձակ<sup>2</sup> : Բողոք բարձին ամենեքեան, և անուն

1 Սեքս . Եմպիրիկ . ընդդ . րնարան . գիրք Թ . էջ 561 :  
 2 Հիւսիք . Մելէս . 'ի բառն λισσαρ .  
 3 Լիւսիաս յԱնդոկ . էջ 111 : Տասիան . ճառ ընդգէմ յուն . էջ 95 :  
 4 Պարսպ . Արխատի . յԱմպսն , սող 828 : Ազէմ . սղէքս . յորդ . առ հեթ . էջ 21 :  
 \* 'ի պանդոկի ուրեմն դէպ լեալ նմա չգտանել ինչ փայտ,

արկ զպատկեր Հերակլեայ 'ի հուր, և ակնարկելով յերկստասան նահատակուին դիւցազինն, ասէ . Մնայ քեզ արդերեքասաներորդն , եփել զճաշ իմ : (Պարսպ . Արխատի . յԱմպսն , սող 828 :)  
 5 Աիկեր . յղ . բն . դից . գիրք Ա . գլ . 23 . հա . 2 . էջ 416 : Սեքսս . Եմպիրիկ . պիւռոնական կարծ . գիրք Գ . գլ . 23 . էջ 182 :

նորա եղև 'ի սոսկումն<sup>1</sup> : Այլակող յատենէ ա-  
թենացուոց եհաս նման , և քաղաք 'ի քաղաքէ հա-  
լածական շրջէր<sup>2</sup> . սակ հատաւ զլիտոյ նորա քան-  
քար մի , և երկու՝ որ որ կենդանւոյն կալցի զնա .  
և առ 'ի յաւերժացուցանել զյիշատակ հրու-  
վարտակին , 'ի սիւն պղնձի ետուն քանդակել  
զայն<sup>3</sup> : Առ ոչ ևս ուրեք յԱյլադա գտեալ<sup>4</sup> Ախա-  
գորայ ապաստան , 'ի փոխչէլն ընդ ծով՝ կորեաւ  
նաւաբեկութեամբ<sup>5</sup> :

Առք յաճեալք ընդ մարդս , չտեսանեն ոչ զխո-  
տրն փնասակար՝ որ խառնէ զթոյնան ընդ ծաղ-  
կունս , և ոչ զցածուն ծաղիկն՝ որ ծածկի ընդ  
դալարւով այսպէս 'ի նկարագրել զվայրս որ շուրջ  
զ'Աղէաւ գործեն պսակ , պարտ է ինձ անտես  
առնել զժայռս՝ որ խառն ընդ նոսա ուրեք ուրեք  
գտանին , և ոչ զկղզեակս բազումն՝ որ ոչ առ այլ  
ինչ աստանօր պիտանացու են , բայց 'ի զարդա-  
րել զտաստակ նկարուն՝ զոր ընծայեմ 'ի տեսիլ :

Սով բաժանէ զմարդիկն , այլ զբօսանք կցոր-  
դեն զնոսա . են նոցա տօնք հասարակաց , որք մերթ-  
այսր և մերթ անդր զնոսա համախմբեն . բայց դա-  
դարեն ամենեքին 'ի սկսանել մերոցն : Արպէս  
հոմերոս զգիցն ասէ<sup>6</sup> , թէ դագարին 'ի խորին

<sup>1</sup> Արխատի . յԱմսոն , էջ 828 : պիան . գիրք Բ . հատ . 2 . էջ 493 :

<sup>2</sup> Պարսպ . Արխատի . 'ի Գորաս , տող 323 : <sup>4</sup> Աթեն . գիրք ԺԳ . գլ . 9 . էջ 611 :

<sup>5</sup> Արխատի . 'ի Հաւան , տող 1073 : Յովսէպ . յԱղ . <sup>6</sup> հոմեր . յԱգոզոն , տող 4 :

խորհրդոյն և յառնեն յաթողոց՝ յերևել Մարզնի՝ ՚ի մէջ նոցա : Մնայանան մեհեանք մերձակայք, և որ ՚ի նոսա երկրպագեալ զիք թողուն ածել ՚ի Վեղոս զխունկս պատրաստեալս ՚ի պաշտօն իւրեանց : Վուրակու թիւնք մեծահանգէսք կամ թափօրք առաքին առ այս, բերելով ընդ իւրեանս պարս պատանեաց և օրիորդաց . և պարբս այսօրիկ են յաղթանակ զեղեցկութե, և երևել լազոյն զարդ տնիցս մերոց : Յամենայն կողմանց զիմեն այօր, ՚ի ծովեզերաց Մոխոյ, ՚ի կրղզեաց եղեական ծովուն, ՚ի ցամաք երկրէն Վլադայ, և ՚ի դաւառաց ևս հեռաւորաց : Հասանեն այսր ՚ի ձայն նուազարանաց, ՚ի բարբառ ցրնծութեան, և ամենայն պերճ և շքեղ սպասուք : Վաք նոցա ծաղկազարդք, և նաւաստիք ծաղկապսակք, և ցնծութիւն նոցա այնչափ առաւել երևելի, որչափ զի համարի առ նոսա ՚ի կրօնս մոռանալ զամենայն վիշտս և զհոգս, որ խափանեն կամ աղմկեն զայն :

Վս մինչ դեռ խօսերն Փիլոկղէս, արագ արագ այլակերպէին տեսարանք՝ ևս քան զևս յաւելեալ ՚ի զեղեցկութիւն : Սեկնեալ գային ՚ի նաւահանգստից Սիկոնեայ և Հռենեայ չու նաւատորմից փոքրկանց, որ ածէին նուէրս ՚ի Վեղոս : Վս այլ նաւատորմք ՚ի հեռաստանէ նշմարէին . և

1 Թուկիդ . գիրք Գ . ԳԼ . 4 . էջ 287 :  
 104 : Վաղլիմ . ՚ի Վեղոս , առջ 2 Սփանհ . ՚ի տաղան Գեղոս .  
 273 : Պաւտան . գիրք Դ . ԳԼ . 4 . էջ 488 :

բազմութիւն անթիւ և բազմակերպ նաւաց սահեալ գային ընդ ալիս, երբն առեալ բիւր ազգի ազգի երանգոց: Անդ էր տեսանել զնոսա մերթ ընդ միջնաշաւիղս կղզեացն՝ ՚ի դուրս յարձակեալ, մերթ խոտորնակի զմիմեամբք անցեալ, մերթ զհետ միմեանց մտեալ, և մերթ ՚ի միասին խումբ գործեալ: Հողմ քաղցրասիւք փարէր զծիրաներփնեալ առագաստիւք նոցա, և ընդ ոսկեզօծ թիակօքն ալիքն փրփրադէզ յարփիասկիզբն ճառագայթից հրափայլ ցոլանային:

Երեսարհագոյն ՚ի ստորոտ լերինն ամբօխ ծովածաւալ ողողանէր զգաշտ. և կարգ կարգ բազմութեանն կուռ զմիմեամբք մածեալ՝ ծածանէին, տատանեալք որպէս զհունձս հողմակոծեալս. և շուկ շփոյթ և խառնածայն ՚ի հրճուանաց ձայնից նոցա գողցես իմն ծփայր ընդ ծովն ծայրածաւալ:

Եւ մինչ դեռ սիրտք մեր յուզէին սաստկապէս ընդ տեսիլն, և չյագէին աչք մեր, մրրիկ ծխոյ ծածկեաց զգմբէթ մեհենին՝ ՚ի վեր ընդ օդս զիզացեալ: Հայնժամ Քիլիկիէս ասէ ցմեզ. Սկիզբն է տօնից, ահա այրին խունկք ՚ի բազնին: Եւ վաղվաղակի ընդ քաղաքն և ընդ դաշտ և ընդ ծովէզր բարբառ եղև. Տօնք են, ելցուք ՚ի մեհեանն:

Տեսաք և ահա էին անդ օրիորդք դեղոսացիք ծաղկապսակք, ՚ի հանդերձս շքեղաշուքս, և ամենայն զարդուք մանկութեան և զեղոյ պճնեալք:

Խամենէ պարագլուխ նոցին կացեալ յօրինէր զկա-  
քաւս աղէտից Լատոնայ<sup>1</sup>, 'ի տեսիլ ածելով  
զոր աուրբ առաջ երգեացն 'ի լուր մեր: Եւ  
պարակիցք նորա յարմարէին կայթից նորա  
զՏնչմունս ձայնիցն և զքնարաց, այլ նուազք  
նոցա ոչ լսելի լինէին, և նուազածուք իսկ ստէպ  
դադարէին, զմայլեալք 'ի տեսիլ Խամենէայ:

Եւ զի խուսէր նա 'ի ցամանէ Հերայ, և  
թուէր սրանալ օդաթուիչ. և էր զի զկայ առ-  
նոյր, և հանգիստ նորա յայտնագոյն զսրտին ցու-  
ցանէր տազնապ: Ի՞նչ ազէնէս բերէր անդ զգէմս  
Լըեայ, և պարտ էր նմա սպառնալեօք մերժել  
յափանցն Պենէոնի զԼատոնէ. այլ նա իբրև ե-  
տես առ ոտս իւր զԽամենէ բազկատարած աղա-  
ջաւոր, զկարաց առնել այլ ինչ քան զաչսն 'ի բաց  
դարձուցանել: Եւ Խամենէայ 'ի կերպարանաց  
անտի խստութեան զահի հարեալ, նուազեցաւ  
անկաւ 'ի վերայ բազկաց պարակցացն իւրոց:

Եւ մենքեան որ անդն կային՝ 'ի գութ խան-  
դադատեցան, այլ ոչ խափանեցաւ կարգ պաշ-  
տամանցն: Եւ սելի եղև անդէն պարերգութիւն  
մանկաւոյ, որ Լըշալուսոյն թուէին որդիք՝ ա-  
ռոյգք և գեղանշոյլք: Եւ 'ի նուագել նոցա զօրհ-  
նութիւն Լըտեմեայ, օրիորդք դեղոսացիք յօ-  
րինէին կաքաւս զուարթս և թեթեւս<sup>2</sup>: Տնչմունք,  
որ զկայթս ոտից նոցա ուղղէին, զեղուին 'ի սիրտ

<sup>1</sup> Ղուկիան. յգ. կաքաւ. հատ. 2. էջ 291:

<sup>2</sup> Վաղլիմ. 'ի Դեղոս, տող  
303:

նոյ քաղցր զմայլումն : Լորրա ծաղկանց բարձեալ բերելով նոցա , արկանէին գողգոջուն ձեռամբ զվազեմի դրօշերովն Լստղկան՝ զոր Լրիադնեայ բերեալ էր 'ի Արեաեայ , և Թեոսի 'ի մեհեան անդր նուիրեալ զայն՝ :

Լնդուստ և այլ քաղցրաձայնութիւն լինէր լեւի , և այն էր հանդիսիցն եկաւորաց 'ի Հոռնեայ և 'ի Միկոնեայ : Սպասեալ մնային նորա 'ի կամարահապ գաւթին , ահն ունելով մտիցն 'ի սրբութիւնն : Տեսաք զնոսա , և թուէին յաչս մեր յամբ և Աղանակք առ դրան սպարանից Լրեգահանն կացեալք :

Տեսաք և զԹափօրս Աէոսի և Լնդրեայ . և տեսիլ նոցա թուէր տեսիլ Շնորհաց և Տարփանաց , որ գային տիրել 'ի մի Արանելեաց կղզեացն :

Յամենայն կողմանց հասանէին Թափօրք , հըն չեցուցանելով զօղս նուագօք օրհնութեց՝ : Արոց կարգեալ և յօրինեալ անդէն 'ի ծովեղերին զհանդէս չուոյն , խաղային հանդարտաբայլ՝ դէմ եղեալ 'ի մեհեան անդր , 'ի բարբառ ցնծութեան ժողովրդեանն , որ զնորօք խոնեալ զեղոյր : Ամատուցանէին նորա աստուածոյն հանդերձ երկրրպագութեամբ , զերախայրիս բերոց երկրի՝ :

1 Կալլիմ. 'ի Դեղոս , տող 306 : Պաւսան . գիրք Թ . էջ 393 : Պլուտ . 'ի Թեոսի , հտ . 1 . էջ 9 :

2 Պլուտ . 'ի Արիկ . հտ . 1 . էջ 535 :

3 Կալլիմ . անդ , տող 278 :



և սրաշտամունքս այսօրիկ, և այլն ամենայն որ սրաշտեր 'ի Վեղոս, կատարելին սրարուք և երգովք և նուազարանօք<sup>1</sup> : Այլ յեկանել թափօրացն 'ի մեհենէն, գնային յապարանս պատրաստեալս 'ի գանձուց քաղաքացն՝ զորոց բերելին զնուէրս<sup>2</sup> :

Արևելագունից յարդի քերթողաց յօրինեալ էր օրհնութիւնս վասն տօնին . այլ յաղթանակք նոցա ոչ նսեմացուցանելին զփառս երիցագունիցն քան զնոսա զարդարողաց զտօնն : (Սուէին անդր իսկ ոգիք քերթողացն հասեալ . աստ Աղէնեայ Ա իկիացւոյ լսելի լինելին քաղցրաձայն նուազք, այն որ ընդ առաջինսն 'ի քերթողաց նուիրեաց զտաղս 'ի սրաշտօն դից<sup>3</sup> . անդ Սիմօնիդեայ երգք աղիողորմք խանդաղատելին զլսօղս<sup>4</sup> . և անդր ևս 'ի բացէ հնչելին Վաքիդիդեայ ներդաշնակութիւնք զմայլեցուցիչք<sup>5</sup> , և կամ Պինդարեայ ստահակ աշխոյժք<sup>6</sup> . և Հոմերոնի 'ի միջոյ վսեմ ոլորակաց նհնչեալ բարբառ , սրտկառանօք լինելի լսելի<sup>7</sup> :

Ամարեաք յայնմ վայրի 'ի հեռուստ զթափօր աթենացւոց : Հանդոյն դատերացն՝ Աերեայ, որ զհետ կառաց տիրուհոյն ծովուց գնան ընդ ալիս, ամբոխ թեթեւնթաց նաւաց խաղային

<sup>1</sup> Առկիան . յղ . կաքու . հա . 2 . էջ 277 :

<sup>2</sup> Երոցոս . գիրք Դ . ԳԼ . 35 :

<sup>3</sup> Նոյն անդ : Վալլիմ . 'ի Դեղոս , տող 305 : Պաւսան . Գիրք Թ . ԳԼ . 27 . էջ 762 :

<sup>4</sup> Սուիդ . 'ի Σιμωνιδ .

<sup>5</sup> Պարսապ . Վալլիմ . 'ի Դեղոս , տող 28 :

<sup>6</sup> Պինդար , իսթմ . 1 . տող 4 :

<sup>7</sup> Թուկիդ . գիրք Գ . ԳԼ . 104 :

չուրջ զորբազան պատերազմիկ նաւան : Մա-  
 գաստքն՝, պայծառագոյնք քան զձիւն , փայլէին  
 իբրև զկարասս՝ որ թեւածեն զջուրք Վայխտ-  
 րեայ և Սենանդրի : Ի տեսիլն յայն ծերք  
 յամբաքայլ ՚ի ծովեզրն հասեալք՝ անձկային ա-  
 ւուրց մանկութեան իւրեանց , յորժամ՝ Վիկիաս  
 զօրավար աթենացոց առաջնորդէր հանդիսինս  
 Վառչ ՚ի Վեղոս , ասէին , զհանդէսն ած , այլ  
 լուէլեայն ՚ի Հուկէն , որ աստ հանդէպ մեր կայ՝ :  
 Մնդ գիշերն ամենայն կազմեցաւ զկրճիւս կա-  
 մուրջ , որոյ ատաղճք վաղու ևս պատրաստեալ  
 էին գունազեղք և ոսկեճամուկք , և ոչ այլ  
 ինչ մնայր աշխատութիւն՝ բայց ընդ իրեարս  
 զօղեալ պատշաճել զնոսա : Մսպարեղք իբր  
 չորք էին երկայնութիւն կամրջին . և ազնիւ  
 գորգովք էր ծածկեալ՝ և զարդարեալ բոլորիւք  
 ծաղկանց : Իսկ ՚ի վաղիւ անդր ընդ այգանալ ա-  
 չարջոցն՝ անց հանդէսն ընդ ծով . ոչ որպէս բա-  
 նակն Վսերքքսեայ յաւեր ազգաց , այլ ՚ի բեր-  
 կրութիւն նոցա . և առ ՚ի տալ նոցա կանխաւ  
 զճաշակ , եկաց հանդէսն ընդ երկար ՚ի վերայ  
 ալեացն ՚ի թռիչս , նուագելով զօրհնութիւնս , և  
 պակուցանելով զաչս ամենեցուն ՚ի տեսիլ՝ որպի-  
 սի ոչ ևս տեսցի ընդ արեգակամբ :

(Ընամօրն , զոր տեսաք հասեալ անդր , գումարէր  
 գրեթէ առհասարակ ՚ի վաղնջուց ազգատոհմիցն

աթենացոց՝ և էին ՚ի նմա բազումք ՚ի քաղաքայնոց՝ զորս կոչելին՝ Վուխրակս՝ և սարք կրկին՝ սատանեաց և օրիորդաց՝, երգել զօրհնութիւնս և յօրինել կաքաւս. և յաւազանւոյն ոմանք՝ ժողովել զտուրս, և խնամել զսկստ հանդիսին՝, Վին և տեսուչք տասն ընտրեալք վիճակաւ ՚ի վերակացութի զոհիցն՝. զի զտեսուին զայն յիւրեանս զբաւեցին աթենացիք, ՚ի զուր քրմաց և աւազանւոյն՝ Վեղոսի բողոք բարձեալ՝ պահանջելով զիրաւունս, զոր չկարեն առնուլ ուժգին՝:

Ըստ ծայրայեղ սերձութեան քաղաքին աթենացոց երեւեր հանդէսն ամենայն շքով: Ար ՚ի յանդիման վինել աստուածոյն, նուիրեաց նմա սրակ ոսկի՝ հազար և հինգ հարիւր դրամակշռոց. և ապա լուաք զբառաչ եզանցն հարիւրոց, որ ՚ի սայր սրոյ քրմացն տապաստ անկանելին: Օհետ զօհիցն յօրինեցան կաքաւք. յորս աթենացիք յանդիման արարին զարշաւանս և զչարժմունս կղզւոյն Վեղեայ, մինչ դեռ խաղալիկն էր հողմոց, և վարէին զնա մըրիւք ընդ երեսս ծովու՝:

1 Երոզոս. գիրք 2. ԴԼ. գիրք 9. էջ 765:

87:

\* Θεωρός Թեորոս, այսինքն է նուիրակ, որում յանձն էր մատուցանել զօհս ՚ի գիմաց քաղաքայնոցն իւրոց: Θεωρία Թեորիա՝ նուիրակութիւն կամ հանդէս սուրբ, թագօր: (Սուխգ. ՚ի Θεωր.)

2 Պղատ. ՚ի Փեգ. հտ. 1. էջ 58: Վսենոփ. յիշատ.

3 Թէյլեր ՚ի Սանտուիկեան վէմն, էջ 50:

4 Պողիտակ. գիրք Ը. ԴԼ. 9. յօդ. 107: Վաղէս, ՚ի Հարպոկր:

5 Իւսմսթ. յգ. պսակ. էջ 495: Պլուտ. առակ. լակոն. հտ. 2. էջ 230:

6 Ղուկիան. յգ. կաքաւ. հտ. 2. էջ 291:

Եւ 'ի կատարել պարուն, մանկախն դեղոսացի խառնեցաւ ընդ 'նոսա՝ ձեացուցանել զչրջանս կրետական բաղին 'ի նմանութիւն (Թ)եսեայ, որ 'ի յաղթահարել զմարդացուն զկարաւս զայս առ բազնին յօրինեաց՝: Նարտարագոյնք 'ի նոցանէ ընկալան 'ի պարգև եռոտանիս մեծագինս՝, զորս նուիրեցին աստուածոյն. և քարոզք երկու որ գային զՏէտ Հանդիսին՝, կարդացին 'ի լուր ամենեցուն զանուանս նոցա:

Վանքարք աւելի քան զչորս են ծախք աթեւնացւոց 'ի բաշխս մրցանակաց յաղթողացն, 'ի մատուցումն նուիրաց և զոհոց, և 'ի չու և 'ի հայթայթանս պիտոյից հանդիսին՝: Եւ կալուածք մեհենին 'ի Հռենէ և 'ի Վեղոս և 'ի ցամաք երկիրն Ելլադա անտառք և տունք, դարբնոցք պղնձոյ, և բաղանիք, 'ի կրօնասէր ժողովրդոց թողեալք նմա 'ի ժառանգուի: Եւ յս առաջին գանձք մեծութեանց նորա. իսկ երկրորդ, շահ արծաթոյն՝ որ 'ի կալուածոց աստի մթերեալ յԱրտեմիսին\*, տուան ապա ոմանց ոմանց 'ի մերձաւոր քաղաքաց 'ի վաշխի: Յայտոսիկ յաւելեալ և տոյժք ըմբռնելոցն յամպարչտութեան՝ որ մե-

1 Կալեիմ. 'ի Վեղոս, տող 312: Պրուտ. 'ի Թեսեոս, հտ. 1. էջ 9: Պողոտակ. գիրք Դ.

2 Թէլլեր 'ի Սանտուիկեան վէմն, էջ 68:

3 Պողոտակ. գիրք Թ. 74.

6. յօդ. 61: Աթեն. գիրք Զ. 44. 6. էջ 234:

4 Թէլլեր, անգ.:

\* Խորան նուիրեալ Արտեմայ:

5 Թէլլեր, անգ.:

Հենին են անկ , գումարին 'ի լրումն քառից ամաց միահամուռ իբր քսան քանքար . զորս Մինիկտիոնք երեք կամ՝ գանձաւորք ընտրեալք յաւազանոյն աթենացւոց ժողովէն , և անտի առնուն զճախս հանդիսի նուիրակութեանն՝<sup>1</sup> :

Ար իբրև կատարեաց զարշտամունս՝ վասն ուրոյ 'ի բազին անդր եկեալն էր , ածին զմեզ 'ի ճաշ՝ զոր աւագանին ղեղոսացւոց տայր բնակչաց կղզւոյն<sup>2</sup> : Այսոն 'ի խուռն բազմեալ էին յեզր գետոյն Անուպայ ընդ ծառովք , որոց սաւառնէին զնորօք ուղէչք : Մենեքին անյազարար անձնատուրք 'ի բերկրանս՝ բիւր ազգի ազգի բանս զմոյլանաց բարբառէին , յայտ առնելով որ 'ի նոսա կրէր բարեբաստութի : Արախութիւն անասակ 'ի միաբարբառ աղաղակ ցնծութեան ընդ սաղարթախիտ հովանեան յաճախէր . և 'ի փրփրաղէզ սղալջակել նաքսեան գինոյն 'ի բաժակս , ամենայն ուրեք հնչէր բարձրաձայն անուն՝ Արկիասայ՝ որ նախ ղժողովուրդն 'ի գեղեցիկ վայրս անդ համախմբեաց , և սահմանեաց զանձս 'ի վայելումն բարերարութեանն մինչև 'ի սպառ :

Հայլ իմն տեսարան զմնացուած աւուրն եղև մեզ անցուցանել : Արգիչք գեղեցիկաձայնք կացին 'ի սպքար երաժշտութեան<sup>3</sup> , և բազուկք զինեալք 'ի դաստապանս պղնձիս մատեան յլմբ-

<sup>1</sup> Վէճ՝ Սանտուիկեան :

ԿՂ 525 :

<sup>2</sup> Յետ կոյս մասենին 'ի տեղեկութիւնսն . Թիւ Ը :

<sup>3</sup> Թուկից . գիրք Գ . ԴԼ . 104 :

<sup>4</sup> Պլուտ . 'ի 'նիկ . հա . 1 .

շամարտ՝ : Բռնամարտութիւն, վաղք և արշաւք մի ըստ միտջէ ածան՝ի զնին . և յիշեցաք որ ինչ ամօք յառաջ յողիմպիական խաղսն տեսեալ էր\* : Բնդ հարաւակողմն կղզւոյն գծեալ էր ասպարէզ . և առ նովաւ բազմեալ կային հրեշտակք աթենացոց , աւագանին դեղոսացոց , և ամենայն հանդիսականք թափօրոցն շքեղ զգեստութն : Հոյք չքնաղ մանկտւոյն զզիցն համախմբելոց յողիմպոս բերէին ճշգրիտ զպատկեր : Չիք ամեհիք ածեալք ՚ի լուսագեներեայ և յոսոխաց նորա յարձակեցան ընդ ասպարէզն՝ . և ՚ի դարձադարձ ընթացս նց՝ կայր մարտն ընդ երկար անսպարտելի : Բայց լուսագենէս հանգոյն աստուածոյն , որ ՚ի միջոց ամպոց երասանակեալ զկառսրն՝ սլանայ հասանէ յարեմուտս , ոստեաւ փայլակնաբար ՚ի միջոց ոսոխացն , և եհաս ՚ի նպատակ անդր ՚ի վայրկենի՝ յորում արեգակն հասանէր յիւրն : Եւ ստակեցաւ առաջի բազմութեան խոնելոցն ՚ի զնին ՚ի մերձակայ բլուրս , յանդիման գրեթէ ամենայն դատերաց Ելլադայ՝ և ակներև Եամենեայ , որ առաւել յորդորէր զնա քան զտեսիլ ամենայն մարդկան և զզից :

Ի վաղիւ անդր կատարէր տօն ծննդեանն Եպողմնի\*\* : Բնդ կաքաւս որ անդ յօրինեցան ,

1 Հոմեր . յԱպոլլոն . տող 107 . 2 :

149 :

\* Տես ՚ի ԼԸ գլուխ գրոցս :

2 Թուկիդ . գերք Գ . գլ 104 :

3 Դիոդ . լայերա . գերք Գ .

\*\* Յեօթներորդ աւուր թար .

գեզիոնի ամեանն , որ հան .

դիպի յիններորդ օր մայիսի :

տեսար և զպար նաւորդաց ոմանց՝ որք զբազ-  
 նաւ ուրեք կայթիւ տալով, գանաճեճ առնէին  
 զայն խարազանօք՝ 1 յւ յետ նորանշան արարո-  
 ղութեանն, զորոյ ոչ կարացար գուշակել զխոր-  
 հուրդ, յանդիման արարին զխաղս մանկականս՝  
 որովք աստուածն ՚ի մանկութեան զբօնոյր :  
 2 Զեռս յետս կապեալ կաքաւելով պարտ էք նո-  
 ցա խաճանել զկեղև զիցանուէր ձիթենւոյն . ուր  
 զլորումն նոցա ստէպ և քայլափոխք անսովորք  
 շարժէին զտեսօղս ՚ի ծաղր անհեթեթ՝ որ ոչ ՚ի  
 ճահ թուէր, այլ նորա ոչ ինչ անարգութիւն  
 համարէին զայն շքոյ սրբազան պաշտամանցն :  
 3 Կանգի այսպէս համարին 4 յոյնք, զի ոչ է մարթ-  
 ըստ արժան բաւականին մերժել ՚ի բաց ՚ի պաշ-  
 տամանէ զից զսուգ և զարտմութիւնս՝ . նմին իրի  
 և ՚ի տեղիս տեղիս օրէն է արանց և կանանց կա-  
 տակել զմիմեանս առաջի բազնաց, և չիք իսկ  
 սահմանեալ չափ համարձակութեան և թան-  
 ձրութեան կատականացն :

Կաւորդքս այսօրիկ էին վաճառականք տարաշ-  
 խարհիկք՝ զորս բարեպատեհ վայր բնակութեան  
 կղզւոյն, ազատութիւնն որ անդ, և բազմախնամ  
 փոյթ աթենացւոց և պայծառութիւն տօնիցն  
 աճեալ ձգեն բազմութեամբ ՚ի 5 Կեղաս : 6 Կային  
 նորա անդր փոխանակել զմեծութիւնս իւրեանց

1 Կալլիմ. ՚ի Գեղաս, տող  
 321 : Սփանճ. ՚ի Կալլիմ. հտ.  
 2 . էջ 520 :

2 Սփանճ . անդ . էջ 521 :  
 3 Սարաբ . զիրք յ. էջ 486 :

ընդ ցորենոյ և ընդ գինւոյ և ընդ այլ ազգի ազգի պարէնս՝ ՚ի կղզիս շուրջանակի. ընդ պատմութեանս՝ որ յԱմորդոս գործին՝ ՚ի կարմրոյ<sup>1</sup>, ընդ ճոխ ծիրանիս՝ որ ՚ի Այով կղզւոջ կազմին<sup>2</sup>, ընդ պաղլէղն հռչակաւոր՝ որ ՚ի Մեղոս<sup>3</sup>, և ընդ պղինձն աղնիւ՝ որ ՚ի սկզբանէ և այսր հատանի ՚ի բովուց Գեղոսի, և ճարտարութիւն արուեստի գործէ զնոսա յանօթս ընտիրս<sup>4</sup>: Շտեմարան իմն դանձուց ազգաց թուէր կղզին. և մերձ ՚ի տեղի անդր՝ ուր մթերէին գանձքն, դեղոսացիք՝ որոց օրէնք ՚ի վերայ կային տալ ջուր բազմութեանն<sup>5</sup>, տարածանէին ՚ի վերայ երկայն սեղանոց բլիթս և համադամն ափ յափոյ գործեալ<sup>6</sup>:

Ստաղիւրագոյնս հետազօտէի զկիրս, զորս փարթամութիւն և կարօտութիւն ծնանէին ՚ի վայրս ոչ ինչ հեռաւորս ՚ի միմեանց. զի համարէի՝ թէ չիք ինչ դուզնաբեայ ընդ տիեզերս, զոր չիցէ արժան ուչիւ նկատել: Գեղոսացիք եղեն հնարագիւտ պարարելոյ զհաւս, և էնոցս անտի շահ մեծ<sup>6</sup>: Տեսի զոմանս ՚ի նոցանէ, զի ՚ի վերայ

<sup>1</sup> Հիւսիք. և ստուգար. մնտեան, ՚ի բառն Ա'բօրդ. Թուր. նըֆօր, ուղեւոր. հա. 1. էջ 233:

<sup>2</sup> Ովրատ. գիրք Դ. տաղ. էրդ. 13:

<sup>3</sup> Դիոգ. գիրք Ե. էջ 293: Պլին. գիրք 15. գլ. 15. հա. 2. էջ 714:

<sup>4</sup> Պլին. գիրք 17. գլ. 2. հա. 2. էջ 640:

<sup>5</sup> Աթեն. գիրք Դ. գլ.

22. էջ 173:

<sup>6</sup> Թուի իմն ՚ի բանից Աթենէոսի, զի յաւուրս տօնիցն ՚ի Գեղոս գնէին ՚ի շուկայն ՚ի վաճառ միս գատին և խողենի, ձկուռնս, և բլիթս գործեալ չամանով որ է հատ հանգոյն սամթի:

<sup>6</sup> Պլին. գիրք Ժ. գլ. 50. հա. 1. էջ 574: Կոլումէլ. յղ. գլ. 2. իրաց. գիրք Ը. գլ. 2:



աստիճանաց կարով՝ զձու 'ի ձեռին կալեալ, և 'ի տեսիլ ամբոխին գուշակէին 'ի ձեռոյ 'նորա ըզմարին՝ որոյ զայն ածեալ էր : Այն ինչ զայս 'ի վեր առեալ կայի 'ի զնին 'նորանշան տեսարանին, և ահա խթեր զիս ոմն ուժղին արմկաւ . և էր նա մի յիմաստակաց աթենացոց՝ ը որում լեալ էր ինձ բարեկամութիւն, և ասէ ցիս . (Ծնող անդր 'ի բաց, Անաբարսիս, ոչ են իրքդ այդ արժանի աչաց իմաստասիրի . էկ, և յաղնուականագոյն փոյթ և 'ի բարձրագոյն տեսութիւնս զվայրկեանս քո պարապեցո : Այ տարաւ զիս 'ի տեղի ուրէք բարձր, ուր ժողով իմաստակաց պայքարեալ վիճէին՝ յուզեալ ինդիրս դժուարիմացս զմեզարեան ազանդոյն : Պարագլուխ 'նոցին Աբողիդէս միլետացի, այր բուն և սաստիկ՝ զոր 'ի Սեզարա տեսեալ էր իմ զնա\*, վիճաբանէր այսպէս . Որ էն 'ի Սեզարա, յԱթէնս ոչ է . արդ են մարդիկ 'ի Սեզարա, ապա մարդիկ յԱթէնս ոչ են : Այ 'ի սնտլաստակ լինել լսողաց 'ի լուծումն դժուարին ինդրոյն, յանկարծակի եղև բարբառ հասանելոյ հանդիսի Տենտացոց, որք ընդ 'նուէրս իւրեանց և զխերբորէացոցն բարձեալ բերէին :

Իպերբորէացիք բնակեն 'ի հիւսիսակողմն Այլ

1 Կիկեր . 'ի Ղուկուղղ . 44 .  
18 . հտ . 2 . էջ 26 :

\* Գլտ 'ի Այլ գլուխ գրոցս :  
3 Գիոգ . լայերտ . անդ .

2 Գիոգ . լայերտ . գիրք Բ . յօդ . 107 :  
յօդ . 106 :

Եպոսոյ՝, ջերմնագոյնք՝ ի սրաշուն Մշոպոնի. և Է  
 ցարդ ի Վեղոս չիբա՛ կրկուց ի բրնձհեաց նա-  
 ցա, որք չոգան երբեմն անդր՝ յաւելուլ արարո-  
 զութիւնս ի սրաշուն աստուածոյն: Պահի անդ  
 ի մեհենի ուրեք Մրտեմեաց և ամիւն նուիրա-  
 կայն, որ յառաջ քան զայն եկեալ յերեսաց ի-  
 պերբորեացոց ի կղզի անդր՝՝ եղեն չարա-  
 մահ, և յայնմհեակ ի ձեռն այլոց յղեն նորա  
 զերախայրիս հնձոյն ի նուէր: Սի ի ցեղեց  
 բնակեալ մերձ ի Վկիւթս, ասնու ի նոցանէ  
 զնուէրն, և աւանդէ այլոց ազգաց՝ որք ամեն  
 զայն յեզերս ազրիական ծովուն. և անտի ի-  
 ջեալ Աշպիրոս, անցեալ ընդ Ալլադա, և հա-  
 սեալ Արբիս, ամին ի Տենու՝:

Ի տեսիլ սրբազան նուիրայն՝ ճառք զգարմն-  
 նալեաց աշխարհին իպերբորեացոց անկան: Օ ի  
 անդ արիւն հանապազ գարուն և անձերանալի  
 մանկութիւն և ասողջութիւն, և անդ բնա-  
 կիչք երկրին ի հազար ամաց հեակ ի տօնս և  
 ի զբօսանս անցուցանեն զաւուրս սրայծառս՝:  
 Մի զաւատս այս բարեբատ ի մի ի ծագաց  
 երկրի բնակէ, սրպէս երեկօրնական սարակգրն  
 ի միւս նորին ծայր. զի շեղև հնար մարդկանս

1 Յիշատ. բանաս. կածառ.  
 հա. 7. էջ 113 և 127:

2 Երոզոս. գերք Դ. ԳԼ. 35:

3 Նոյն անդ. ԳԼ. 33. Կաշ  
 լիմ. ի Վեղոս, սոզ 283:

4 Պինգ. սիւթ. սապերդ.  
 10. սոզ 53. Նոյն. ի Սիւննիդ.

սա Սարար. գերք ԺԵ. էջ  
 711. Պլին. գերք Դ. ԳԼ. 12.  
 հա. 1. էջ 219:

'ի դիւրամնատոյց վայրս զբարեբաստում թեան հաստատել օթեան :

Ս'նը զեռ եռանդն Յունաց 'ի վէստ առասպելեաց պտոցիկ վառեալ բորբոքեր , զիտեի ես զբազմութիւն կայմիցն կանդնաւորաց 'ի նառահանդիսան Վեղոսի : Օ 'ի նաւատորմք նախարաց շրջէին զառաջս խրեանց 'ի ծովեզր . ե յառաջս անդ զեղայօրէն զարդարեալս՝ էին նշանք ազգաց խրայքանչիւր սեփականք : Վերեայք փթ խովտացոյցն , ե աթեանացոյց կառք վարեալ 'ի Պաղատայ , ե բխովտացոյց սրասիկեր Վաղմեաց օձ 'ի ձեռին : Վէսք 'ի նաւատորմից անտի չու առնէին . այլ ընդ զեղեցկութեանցն , զբոս դարձուցանէին 'ի հայրենիսն , այլք փոխանակէին . սրախս յերկայն ե 'ի խաղաղաւեա զիշերի ընդ կորուսելոց յարեմուստ ստակոյց՝ այլք յարեւելից ծագեն յերկինս :

Վըրկարաձգեցան տօնքն զաւուրս բազումն , ե բազումք եղեն ձիրնթացք . ե եղև մեզ յաճախ կալ 'ի ծովեզր անդր 'ի վնին լուղորդացն հոչաւ կաւորաց զեղոսացոյց՝ , որ հոսեալ միջէին զանձինս 'ի ծով , ե մերթ մխիրձս հարեալ ծածկէին 'ի խորն , մերթ 'ի վերայ ջուրցն երեւաց թեթեացեալ կային , ե մերթ ճակատամարտ յալիս անդ գործէին , զհաւաստիս համբաւոյն՝ որ վնցէ ընթանայր՝ ճարտարութն խրեանց տալով :

1 Աւրիտիդ . Իփիդ . ՄՆԷ .  
տող 240 :

2 Դիոդ . լայերոս . զերբ Բ .  
յոդ . 22 : Սուիդ . ի բառն ձն :

## ԳՎ ՈՒՅԻ ՏԼԻ .

Կարծեալ 'ի Գեղոս վասն հարսանեկան հանգիսից :

Ի ՏՕՆՍ անդ 'ի Գեղոս յաղթանակէր սէր ,  
 և հոյք մանկաւոյն խոնեալ անդր այլ ինչ քան  
 զնորայն ոչ զխտէին օրէնս : Այր զի միաբանու-  
 թեամբ ընդ հիմենեաց զհաւատարիմ ամուսնաց  
 պսակէր նա զհաստատութիւն , և էր զի արկա-  
 նէր աղմուկ և նուազումն 'ի սիրոս անխորձս . և  
 յաճախութեամբ յաղթանակացն պատրաստէր  
 'ի պայծառազոյն յաղթանակ հարսանեացն Ա-  
 մենեաց և ժեպեկենեաց :

Բնաստես լեալ արարողութեանցն , որ 'ի  
 հարսանիս նոցա կատարեցան , պատմեմ աստանօր  
 որ ինչ տեսի . նկարագրելով զամենայն՝ զոր օ-  
 րէնք , սովորութի և մնասպառութի մուծին յան-  
 երկեանութիւն և 'ի բարեբաւտութի սրբազու-  
 նին 'ի դաշինս : Այս եթէ մնտի ինչ 'ի սոսա զբա-  
 ցի մանրատրամ արարեալ , պարզութիւն ժա-  
 մանակին յորում այնոցիկ եղև սկիզբն՝ ազնուա-  
 ցուցեն զայն :

Առութիւն և խողաղութիւն դառնացին 'ի  
 Գեղոս . հոսէր ամբօրին 'ի բաց օրակս զգեա ,  
 որ սղողեալ զգաշտա՝ 'ի ձոր իւր տակաւ ամիտիցիս  
 լճակիչք կղզոյն վաղայարօցք քան զարշարցան ,  
 ծաղկատրակք մատուցանելին անդազար 'ի մեհէ-

նին և առ տամբք խրեանց զոհս , մաղթելով 'ի զից յաջողութիւնն հարսանեացն Իամենեաց , յամ էր կապանացն զօղելոյ , և էսք մեք ժողովեալք յապարանս Փիլոկղեայ . բացաւ զունն բնակութե Իամենեայ , և ելին հարսն և փեսայն , և ծնողք նոցա ընդ նոսա , և պաշտօնեաց պետութեանն հաստատիչ ուխտի զաշինն : Պարզք էին արցմանք ուխտին . չգոյր 'ի նմա կասկած ինչ երկիւղի՝ թէ զուցէ վէճք շահուց 'ի մէջ ինսամեաց ծնանիցին , կամ պատճառք սպասհարզանի 'ի մէջ ամուսնաց . այլ վասն օժտին , քանզի կցորդութիւնն ինէր արեանն (Սեւաղենեայ և Փիլոկղեայ , օրէնքն և եթ Սողանի յիշատակէին . որ միամօր դստեր սահմանէր ընդ մերձաօրայունի ազգականին իւրում ամուսնանալ , զի մի մեծութիւնք ազգատոհմին օտարացին :

Իմենեքին զգեցեալ էսք զգետոս մեծագինս , զոր Իամենէ ետ մեզ՝ . իսկ զգետոք փեսային նորին իսկ Իամենեայ էին ձեռագործք : Իսկ հարսինն զարդ՝ էր քառամանեակ ընդերուզեալ ահամբք պատուականօք , և հանդերձ ծիրանի ոսկեթել , յորում երբին կարմրոյ չ սակոցն խառնէր ձաճանչ , Սեկոն և կնճիթն , խառն ընդ այլ բոցս նուիրականս Իսողկան՝ , սրակէին զվարսրս երկապանջիւրոցն զեղածփեալս և խղա-

1 Երխտոփ . 'ի Պլուտ . սող 671 :

սող 529 : նոյն . 'ի հուսն . 2 նոյն 'ի Պլուտ . անդ :

Թուրան<sup>1</sup> : Ի սպասս յայտոսիկ հանդերձանաց  
 հեծեալք ՚ի կառս<sup>2</sup>, վարեցին ՚ի մեհեանն կոյս :  
 Բնդ աջմէ հարսինն բազմէր փեսայն, և յահե-  
 կէ մի ՚ի բարեկամաց (Ս)էադենեայ՝ առննթերա-  
 կաց հանդիսին<sup>3</sup> : Եւ ամբոխն աճապարեալ  
 սփռէր ծաղիկս, և խունկս անուշունս բուրէր  
 յանցս նոցա, և աղաղակէր : Ալ մահահանացուք  
 սոքա, այլ Բարդոն և Արոնիս, այլ Բարեմիս և  
 Ենդիմիսն, այլ Բարդոն և Բնահիս են սոքա :  
 Եւ հմայս աւետաւորս կանխէին սլատմել մեզ  
 առ ՚ի խափանել զչարագոյժ հմայս : Ամն ստէր  
 Տեսի այգուն զոյգս տաարակաց սաւառնեալ յօդս  
 ընդ երկար, և հանգուցեալ յուղէշ ծառոյս ՚ի  
 միասին : Եւ այլ ոք անդուստ : Հարածեա զճննճ-  
 ղուկղ մենակեաց, հեծել այլուր ընդ կորուստ  
 ժուժկալ վարուժանին. զի չիք ինչ չարագոյժ քան  
 զտեսիլ դորա<sup>4</sup> :

Վուրմ առ դրան մեհենին ընկալաւ զամուս-  
 նաւորսն, մատուցեալ երկաքանչիւրոցն ոստ բա-  
 ղեղան՝ ՚ի նշանակ անմեկնելի կցորդութեան նո-  
 ցա. և ած զնոսա ՚ի բազին անդր, ուր պատրաս-  
 տեալ էր երինջ ՚ի զոհ Բարեմեայ<sup>5</sup> ողջախոհին,

<sup>1</sup> Եւրփայլգ. Իփիգ. յԱԷԼ. սող 903 : Պարսապ. Արխատոփ. ՚ի խաղաղ. սող 869 : Նոյն, ՚ի Հաւան, սող 159 :

<sup>2</sup> Եւրփայլգ. ՚ի Հեղինէ, սող 728 : Ղուկիան. յԷ. խը. բախճ. հա. 3. էջ 450 :

<sup>3</sup> Սուրգ. ՚ի Ζεϋτος. Պոզի. տեկ. գիրք Ժ. գլ. 7. յօդ. 33 :

<sup>4</sup> Եղիան. յԷ. կենդան. գիրք Գ. գլ. 9 :

<sup>5</sup> Եւրփայլգ. Իփիգ. յԱԷԼ. սող 1110 :

հաշտ առնել զնա և զՎՊԹ ենաս՝ և որք միան-  
 զամ՝ ՚ի դից չէին լեալ ընդ լծով Հիմենեայ: Պա-  
 ղատանք մատուցան և առ Վիտս և Հերա, որոց  
 միութիւն և սէր կացցէ անբակ մինչև ՚ի սպառ՝ .  
 առ երկինս և առ երկիր, որոց ընդ միմեանս զու-  
 զակցութեամբ գործի առատութիւն և արդա-  
 սաւորութիւն՝ . առ Պարկայս, որ իշխեն կենաց  
 մահկանացուաց՝ . առ Շորհոս, զի սպայծառա-  
 ցուցեն զաւուրս բարեբաստիկ ամուսնացն . և  
 առ Մատղիկ՝ որ ծնան զՍէր, և զբարեբաստու-  
 թիւն ետ մարդկան՝ :

Վրմաց զընդերս զոհիցն հետազօտեալ, յայտ  
 արարին զկամս երկնից ընդ հարսանիսն: Այլ առ  
 ՚ի լրումն արարողութեանցն անցաք յԱրտեմի-  
 սիոն ՚ի խորան Մարտեմեայ . և անդ փեսային և  
 հարսին հատեալ գիտակս ՚ի վարսիցն, եղին ըզ-  
 շիրմաւ յետնոց նուիրակացն Վաբբորէացոց .  
 լծեազենեայն զհետկաւ դաւարոց ածեալ էր, և  
 Սամենեայն զիլով՝ : Մյս ստիօրութիւն յուշ ա-  
 ծէր ամուսնաց զսկիզբն սահմանի ամուսնու-  
 թեան, զաւուրս՝ յորս մին զերկրագործութիւն  
 և միւսն զառանին հոգս նախամեծար առնէր  
 քան զամենայն պարապումն:

1 Պատտեր . հնախօս . յուն .  
 գիրք Դ . գլ . 11 . էջ 610 :

2 Արիստոփ . ՚ի Թեամփ .  
 սոց 982 : Սուիգ . ՚ի Τελεία .

3 Պրոկզ . ՚ի Տիմ . գիրք Ե .  
 էջ 293 :

4 Պողոտեկ . գիրք Գ . գլ . 3 :

5 Սուսգար . մատեն , ՚ի  
 բառն Γαμηλ .

6 Երողոս . գիրք Դ . գլ .

34 : Վալլիմ . ՚ի Գեղոս , սոց  
 296 :

Յայնժամ Փիլիպղեայ առեալ զձեռն (Թէազենեայ եղ յաջ Իսմենեայ, և ասէ. Տամ քեզ զդուստր իմ՝ի կնութիւն, զի ծնջիք քաղաքացիս պետութեան ըստ օրինաց՝: Աւ երդուան միմեանց հարսն և փեսայն հաւատարմութիւն անլուծանելի. և ծնողք նոցա ընկալեալ զերդմունան, զոչ՝ի հաստատութի նոցա մատուցին՝:

Ղգեր ընդ երկինս քօղ զիշերոյ, և մեք մեկնեալք ՚ի մեհենէն գնայաք ՚ի տուն (Թէազենեայ) Բազմութիւն ջահից լուսաւորէին զլուսն, և սարք երաժշտաց և կաքաւչաց էին ուղեկիցք՝. և տունն բորբիւք ծաղկանց և լուսով ծածկեալ էր՝:

Ի մուտս սեմոցն եղան վայրիկ մի՝ի զլուխ փեսային և հարսին կողովք լի պտղով՝, ՚ի նշանակ հանդերձեալ բազմաճնութեան նոյ. և լեղի լինէր ամենուստ անուն Հիմենեայ՝ պատանւոյն արգիացոյ, որ դարձոյց երբեմն ՚ի հայրենիս իւրեանց զօրիորդս աթենացիս յափշտակեալս ՚ի հինից արչաւելոյ, և ընկալաւ ՚ի վարձ զմի ՚ի գերելոյ անտի դատերաց՝ որում տարփացեալն էր, և յայնմ հեռէ յիշի անուն նորա յամենայն

1 Մենանգր առ Կղեմ. ազեքս. յաճախապ. գիրք Բ. էջ 502:

2 Մեօրս. աստիկ. ընթերց. գիրք Գ. ԳԼ. 1:

3 Հոմեր. Եղիակ. գիրք ԺԸ. տող 491: Եսիոգ. ՚ի վահանն հերակղ. տող 275:

4 Հեղիոգ. Եթիոպ. գիրք 2. էջ 278:

5 Սթօշ, արձանագր. պատկ. 70:

6 Հոմեր. անգ: Անակր. տաղերգ. 18: Կալլիմ. ՚ի Դեզոս, տող 296:



Հարսանիս Յունաց՝ Եւ այս բարբառք ձգեցան ընդ մեզ մինչև ՚ի տաճար խնջոցիցն, և տեւցին մինչև ՚ի վախճան ընթրեացն, և ապա քերթողք ոմանք զհետ մեր ՚ի ներքս սարդեալ, նուազեցին երգս առադաստի :

Ընդ պատանեակ սաղարթապատ ՚ի թեղօջ և ՚ի կաղնի՝ երևեալ ՚ի մէջ, բարձեալ կողով հացալից, սկսաւ նուազել երգ՝ որոյ սկիզբն էր .

Օ առաջինն իմ կենցաղ

Փոխեցի ՚ի չքքնաղ՝ :

Օ որ աթենացիք երգեն ՚ի մի ՚ի տօնից ՚ի հռչակել զօրն, յորում նախնիք նյ մինչև ցայնժամ կերակրեալք վայրի ստղովք, սկսան վայելել ՚ի միասին ՚ի պարգևս Վեմետրեայ: Եւ խառնեն զայս ՚ի հանդէս հարսանեաց, վասն զի մարդիկ յանտառաբնակ կենացն ՚ի բաց կացեալ, ապա զբերկրանաց սիրոյ զփորձ առին : Վատերք պարաւորք զգեցեալք բեհեզս՝ մտին անդր, և ՚ի կաքաւս յանդիման արարին զհրճուանս, զնուազումն և զզմայլմունս ախորժագունին ՚ի կիրս :

Ի վախճան պարուն Եւ կիսպէ երոյց զջահն հարսանեկան՝, և աժ զդուստր իւր ՚ի բնակարանն պատրաստեալ նմա : Ղանակք բազումք ՚ի գէմն ածէին Վամենեայ զպարտս, որ երբէմն կցորդք էին ընդ հարսնութեան. զի բերէր նա

1 Յիշատ . բանաս . կաճառ . բառն ΕΨΟΥΣ.

հա . Գ . էջ 307 :

3 Եւրիպիդ . յիփիդ . յԱԷ

2 Հիւսիք . և Սուիդ . ՚ի տող 732 :

անօթ խեցեղէն՝ յորում աղանձէն դարի, և մի  
 'ի հարսնաւիրաց բարձեալ բերէր նբոյր, և 'ի  
 վերայ դրանն կախեալ կայր ծեծիչ ցորենոյ՝: Աւ  
 ետուն ճաշակել փեսային և հարսին պտուղ  
 քաղցր 'ի նշանակ միութեան նոցա՝:

Հայնմ վայրի զեղեալք խնդութեամբ՝ ամբօխ  
 աղաղակի առնէաք առ դրանն, որում 'ի պահ  
 կայր մի 'ի հաւատարիմ բարեկամաց (Թ)էագե-  
 նեայ՝. և հոյք մանկտուոյ պարէին 'ի ձայն նուա-  
 գարանաց բազմաց: Այլ լռեաց ամբօխ աղա-  
 ղակին 'ի հասանել հանդիսի կորնթացոց, ու  
 բոց յանձն էր նուագել զերեկորին երգ հարսա-  
 նեացն: Արք զհետ բերկրական ողջունին ուղեր-  
 ձերոյ առ (Թ)էագենէս, կցորդէին՝:

“Ատիրք 'ի դատերաց Արնթոսի չքնաղագե-  
 ղից ծաղկիմք 'ի գարնան տիոցս՝, ո՛ր Ամենէ. այլ  
 չէր որ 'ի մեզ, որ ոչ տացէ զեղոյ քում տեղի:  
 (Թ)էթւընթաց քան զերիվար թեսաղացի, և որ  
 պէս շուշան զարգ բուրաստանի բարձրացեալ 'ի  
 մէջ ընկերաց իւրոց՝ գործէ Ամենէ շուք Հունա-  
 ստանի: Աէր յաչս նորա բունեալ և ճարտարու-  
 թիւն 'ի մատունս նորա հանգչի: Ա՛ դատրիկ, ո՛ր  
 հարսն չքնաղագեղ. իջցուք 'ի վաղիւ յարօտ,  
 հաւաքել ծաղիկս, յօրինել պսակ, կախել զգե-

1 Պողոտակ. գիրք Գ. ԳԼ. հտ. 2. էջ 138:

3: յօդ. 37:

5 Պողոտակ. անդ:

2 Պլուտ. 'ի Սողոն, հտ.

4 Թէօկր. գեղոն 18:

1. էջ 89: Նոյն, յօր. ամուսն.

5 Անակր. ասղերգ. 32:

ղանուոյն 'ի մերձակայից աստի սօսեաց : Բնդ հո-  
վանեաւ դեռափթիթ սաղարթաց նորա բուրեւ-  
ցութք քեզ անուշունս , և 'ի կեղև նորա քանդա-  
կեսցութք . Սօսի եմ Բամենեայ , մատո ինձ խունկս :  
Խնդա ո՛հ հարսն երջանիկ , խնդա փեսայդ բարե-  
բաստիկ . ձեզ Վատոնէ տացէ որդիս ձեզ նամնիս .  
և միշտ 'ի ձեզ վառ պահեսցի բոց Բստղիան . և  
Բրամազդ մինչ 'ի վերջին թողունս ձեր տացէ  
լինել ձեզ բարեբաստ : Սայելեօջիք 'ի բերկրու-  
թեան . և մի լիցի ինչ յայսմհետէ ձեզ ցանկալի ,  
բաց յանձկաւէտ սիրոյն ըղձից : Բնդ արշաղցսն  
այսրէն դարձցութք երգել զքեզ վերստին , ո՛հ շի-  
մենէ , հարսանեաց իշխեցող . :

Եւ կանխեալ ընդ առաւօտն 'ի տեղի անդր՝  
լուաք , և ահա երգէին դատերք կորնթացւոց ըղ-  
հարսանեկան զերգս զայս՝ .

“ Եւ ազեմք քեզ երգս , ո՛հ Բստղիկ զարդ Ո-  
ղիմպեայ , ո՛վ Սէր՝ ուրախութիւն երկրի , և քեզ  
ո՛հ շիմենէ , աղբիւր կենաց . նուազեմք ձեզ երգս ,  
Սէր , շիմենէ և Բստղիկ : Օարթիր (ժէազե-  
նէս , տէս զցանկալին քո . սիրեցեալդ Բստղիան ,  
երջանիկդ և արժանի փեսայդ Բամենեայ ո՛հ (ժէա-  
զենէս , զարթիր և տէս զհարսն քո շքեղաշութք ,  
տէս զգեղ առոյդ մանկութեան նորա : Սարդ  
դշխոյ ծաղկանց , և Բամենէ դշխոյ գեղաւորաց :  
Բրտեւանունք նորա թերաբացք ահա խոտողին 'ի

ճառագայթից արեգական. զարթիր բարեբաստիկդ և արժանի փեսայդ Խամենեայ ո՛ր (Թ)էազենէս ։

Օայն օր, որ թուէր ամուսնացն առաջին յաւուրս կենաց իւրեանց, անցուցին զրեթէ 'ի բուն՝ յընդունել զսիրայիր ինդակցութիւն բնակչաց կղզւոյն ընդ Հարսանիս իւրեանց, և զընծայաբերութիւն բարեկամաց : Եւ միմեանց իսկ ամուսինքն մատուցին ընծայս, և Փիլոկղէս Հայր (Թ)էազենեայ մատոյց երկաքանչիւրոցն՝ ածեալ զընծայսն Հանդիսիւ : Մանուկ պայծառազգեաց, ջահ 'ի ձեռին, կարապետէր Հանդիսին. զհետ նորա 'գայր օրիորդ, կողով 'ի գլուխ իւր բերելով. և զհետ նոցա գային սպասաւորք բազումք, բարձեալ շիշա 'ի քարէ պատուականէ և տուփս ինկոց և ազգի ազգի օճանելեաց, և խառնս իւղոց անուշից, և որ ինչ ընտիր և կիրթ ախորժակք յաւելին 'ի պէտս կենաց :

Եւ ընդ երեկս ածաւ Խամենէ 'ի տուն Հօր իւրոյ, և 'ի սրտէ անկեղծիկ քան ըստ պատշաճից սովորութեան տրտմեալ կայր ընդ մեկնել իւր 'ի Հայրենի տանէ. և 'ի վաղիւ անդր դարձաւ առ այր իւր, և յայնմ հետէ կացին բարեբաստք 'ի միասին մինչև 'ի սպառ :

1 Հարպոկր. 'ի բուն Անա- զիակ. գիրք ԻՂ. հտ. 2. էջ  
 չձ. Հիւսիք. և Սուիդ. 'ի 1337 :  
 բուն Επαύλ. Եւստաթ. յԵ.

## ԳՎ ՈՒՅՈ ՏՐ:

Դարձեալ 'ի Գեղոս վան երանելի կենաց:

ՓԻԼՈՎՊՆԵՍ ընդ բարեգորով սրտի բերէր միտս  
 հանձարեղս և գիտութիւն բազմահմուտ: Յա-  
 ճախեալ նորա 'ի մանկութենէ առ երեւելագոյնս  
 յիմաստասիրաց Ալլաղայ, և ճոխացեալ գիտու-  
 թեամբք նոցա, և ս առաւել խելամտութեամբքն  
 իւրովք, վարէր կեանս այնպիսի՝ որ զեղոյր խա-  
 զաղութիւն 'ի սիրտ նորա, և ամենեցուն որ  
 շուրջ զնովաւ կային: Հանապազ 'ի զնին կայսք  
 առնն զարմանալոյ, որոյ վայրկեանք իւրաքան-  
 չիւր էին վայրկեանք բարեբաստիկք:

Ի դեգերել մեր երբեմն 'ի կղզւոջն, գտաք  
 զարձանագիրս զայս 'ի մեհենեակ մի Ատոնայ  
 'ի վերայ որմոյն գրուեալ. Չիք ինչ գեղեցիկ  
 քան զարդարութիւն, չիք ինչ լաւագոյն քան  
 զառողջութիւն, և ոչ քաղցրագոյն ինչ քան զսի-  
 րելոյ ժառանգութիւն: Այս ասեմ. Մճաւասիկ  
 զոր երբեմն Մըխատուել հերբէր 'ի լուր մեր, ան-  
 մեկնելի 'ի միմեանց համարեալ զհանգամանս  
 զայսոսիկ, և բարեբաստութեան և եթ կցորդս՝  
 Այս յիրաւի իսկ բարեբաստութիւն սարառու-  
 թի է գեղեցկագունին, լաւագունին և քաղցրա-

1 Արիստոս . յղ . բարոյ . 11 : նոյն . յԵւգեմ . 7իւք Ա .  
 7իւք Ա . 7Լ . 9 . հտ . 2 . էջ 7Լ . 1 . էջ 195 :

գունին . այլ զինչ շահ 'ի նկարագրելոյ զարդա-  
սիան, հարկ էր յաղբիւր անդր նոցին 'ի վեր մատը  
չել : Վիլոկդէս ասէ . 'Վժուարահաս է աղբիւրն ,  
և առ 'ի մատչել անդր այլ զք ընդ այլ ընթա-  
նայ ուղի , և զծայրագոյն բարւոյն պառակտին  
կարծիք : Ս'երթ համարի այն 'ի վայելս ամենայն  
հաճոյից , և մերթ յազատութեան յամ վշտաց ' :  
Լ,դէն որք 'ի սուղ ինչ ձև բանի զնկարագիր նորա  
ջանացան տալ , որպէս զոր այժմդ տեսեր զվճիռդ  
'ի վերայ մեհենին . և որպէս միւսն այն զոր 'ի  
կոչունս յաճախ նուագէն , կացուցանելով զծայր  
բարեբաստութեան 'ի պարառութիւնս առողջու-  
թեան , գեղոյ , արդար մեծութեանց , և մանկու-  
թեան զարգացելոյ 'ի ծոց բարեկամութեան ' :  
Լ,յէք 'ի վերայ ցանկալի հանդամանացս այսո-  
ցիկ յաւելին խնդրել և զկորով մարմնոյ , զարիու-  
թիւնս սրտի , զարդարութիւնս , զխոհեմութիւնս ,  
զժուժկալութիւնս , և համառօտիւ իսկ ասել՝ ըզ-  
ժառանգութիւնս ամենայն բարեաց և ամենայն  
առաքինութեանց \* : Լ,յլ զի զյոյրովս 'ի ցան-  
կալեաց աստի ոչ 'ի մեր կամս է ժառանգել , և  
զի դարձեալ 'ի ժառանգելն իսկ զամենայն՝ մար-

1 Արիստոս . աւագ բարոյ .  
գիրք Բ . գլ . 7 . էջ 180 : Գի-  
մոկր . աս . Գիոգ . լայերտ .  
գիրք Թ . յոգ . 45 :

2 Պլատո . 'ի Գորգ . հո . 1 .  
էջ 451 : Կզեմ . ազեքս . յա .  
ճախապ . գիրք Գ . էջ 574 :

3 Պլատո . յղ . օր . գիրք Բ .

հո . 2 . էջ 661 : Արիստոս .  
յղ . ճարտ . գիրք Ա . գլ . 5 .  
հո . 2 . էջ 522 :

\* Պլուտարքոս զՎկոպայ ու-  
մեմնէ ասէ , զի զծայր բարե-  
բաստութեան գնէր 'ի ժա-  
ռանգութիւնս աւելորդաց : (Ի  
Կատ . հո . 1 . էջ 346 .)

Թի դեռ ևս չատանալ սրտի, յայտ ուրեմն է զի ոչ յայնպիսի ինչ ցանկալիս է իսկապէս բարեբաստութիւն իւրաքանչիւր ուրուք :

Եւստի չհանդուրժեալ ուրուք 'ի մէնջ, գոչեաց և ասէ . Իսկ յինչ ասպա հաստատեալ է բարեբաստութիւն, և որպիսի այն կեանք իցեն մահկանացուաց, եթէ ստիպին գիմել 'ի բարեբաստութիւն անգէտք ուղոյն : Փիլոկղէս ասէ . Արբի իսկ աւաղելի են կեանք մահկանացուաց : Հայեաց շուրջ գբե, և ամենայն ուրեք յամենայն կարգս մարդկան լուիցես հեծութիւն և աշխար . ոչ տեսցես զայլ ոք, բայց կարօտեալս բարեբաստութեան, և տանջեալս 'ի կրից՝ որ խափանեն զայն . տազնապեալս 'ի զբօսանս, և անզօրս 'ի վիշտս . ընկձեալս զբեթէ անխտիր 'ի զրկանաս և 'ի վայելից, տժգոհս հանապազ ընդ բախտ իւրեանց, և անկարողս լքանել զկեանս՝ որ բեռն է նոցա անբերելի :

Սիթէ 'ի ծածկել զերկիր տառապելովք եղև ազգ մարդկան, և զբօսնուցուն զիք 'ի հալածել զհոգիս մեր ապիկարս : Ինձ ոչ բնաւ այս կարծիք, այլ մերոց չարեացս մեք եմք պատճառք : Հարցցուք զանձինս մեր, թէ զինչ համարիցիմք բարեբաստութիւն . և զինչ այլ, բայց զի անդադար ծնանիցին 'ի մեզ իղձք և լցցին, զանազանեալք ըստ հանգամանաց և երկարատեք ըստ հաճոյից՝ :

Ըստ առ 'ի ժառանգել զայս միումումեք 'ի մէնջ, հարկ էր մշտնջենաւոր կարգի տիեզերացս փոփոխել: Օր որ անյեղլի և անտրտմական բարեբաստութեան ցանկայ, անհասից ցանկայ, և անհասութեամբն առաւել գրգռողաց զիղձս 'ի ցանկութիւն. զի չիք ինչ առաւել ցանկալի մարդկան, քան յաղթել խափանաց՝ որ անյաղթելի թուին:

( )ըէնք հաստատունք, և որոց խորութիւն անհետազօտելի է 'ի մէնջ, ընդ կուղս բարեաց հիստեն անդադար զչարիս ընդ համայն տիեզերս. և պարտ է էից, յորոց յօգի բողորս այս մեծակաւոյց՝ զարմանալի 'ի բողորումն, և անհասանելի 'ի մասունան, է զի և զարհուրելի, կրել դժնդակս 'ի խառնուածոց անտի, և յար ընդ փոփոխութիւնք կալ: Սովին պայմանաւ տուեալ են մեզ կեանքս. 'ի վայրկենէ յոր սկսանիմքս կեալ, դատապարտիմք հորովել ընդ անիւս բարեաց և չարեաց, հաճոյից և վշտաց: Եթէ զչարամասնութեանս այսորիկ զվասն էրն հարցանիցես, թերևս այլք տացեն պատասխանի, զի զբարին և եթ պարտ է դից տալ մեզ և ոչ զհաճոյն, և զի զհաճոյն ոչ առ այլ ինչ տան մեզ՝ բայց առ 'ի ստիպել զմեզ յընդունելութիւն բարւոյն. և զի բազմագունից 'ի մարդկանէ յոյժ առաւել գտանելին բարեկրութիւնք քան զչարակրութիւնս, եթէ գոյր նոցա հանձալ համարելոյ ընդ բարիս և զզգայութիւնս ախորժականս, և զվայրկեանս ազատս յազմիէ և 'ի



վշտաց : Մարթէր այտմ՝ ոչ սակաւ ուրեք խափանել զտրտունջ մեր , այլ պատճառք տրանջանացն ոչ բառնային 'ի միջոյ 'ի բաց . զի են խակ վիշտք ճմարտապէս 'ի վերայ երկրի : Վազմաց 'ի մարդկանէ լի են կեանք վշտօք . և թէպէտ մի ոք գտանէր վշտակիր , և նա արժանի վշտացն , և ոչ աւելի քան զվայրկեան մի կենացն վշտանայր , սակայն սուղ ինչ վշտակրու թիւնն այն գտանէր անհասանելի քան զամենայն գաղտնիս՝ զոր ընծայեն մեզ տիեզերք :

Եւ զինչ յայտցանէ մնայ մեզ 'ի միտ առնուլ անկանիցիմք ապա խառն 'ի խուռն յանդգնաբար յուղիս , որ աղիսաղիսելով մղեալ տանին ընդ հոսանան և եղծանեն տակաւ զէքս առհասարակ : Ենձնատուրք առանց ընդդէմ դառնալոյ և ինքնանուէրք լինիցիմք ճակատագրին , կրել զհարուածսն զոր սպառնայ : Եւ հրաժարիցեմք 'ի յուսոյ , որ մեծագոյն և միայն բարին է յոլովագունից 'ի մարդկանէ : Վաւ , և մի լիցի . կամիմ զի իցես բարեբաստ , այլ որչափ մարթ իցէ քեզ բարեբաստու թիւն . ոչ մտացած ինն այն՝ որոյ յուսոյն թշուառանան մարդիկ , այլ որ մերում պայմանիս է անկ , և այնչափ հաստատագոյն՝ որչափ մարդ է մեզ զերծ յարկածից և 'ի չարութենէ մարդկան կացուցանել զայն :

Վնաւորութիւն ոմանց դիւրէ զժառանգութիւն նորա . և 'ի դէպ է խակ ասել , զի են՝ որք 'ի ծնէ ունին զբարեբաստութիւն : Եւ չկա-

րեն ընդդէմ բնաւորութեան իւրեանց և ներ-  
հակացն արտաքնոց միանգամայն մղել պատե-  
րազմ առանց երկար և անդադար ջանից . զի որ-  
պէս ոմն 'ի հնոց իմնատասիրացն ' ասէր , զիք  
զբարեբաստութիւն ընդ վաստակոց վաճառեն  
մեզ : Ըջ ջանքս այս ոչ առաւելագոյն ձգանց  
կարօտին քան զխորհուրդս և զգործս՝ որ հանա-  
պազ յուզեն զմեզ , և որ քաջ կշռեալ՝ ոչ այլ ինչ  
են , բայց իննդիր մտացածին բարեբաստութեան :

Եւ զայս իբրև ասաց Փիլոկղէս , լռեաց . քան-  
զի ասէր՝ թէ զիք ինձ պարապ և ոչ զխուժիւն  
բաւական առ 'ի բովանդակել 'ի կարգ , որ ինչ  
զկարևոր իրացն են իմտեսութիւնք : Յայնժամ  
ասէ ցնա Փիլոտաս . Ըջխատութիւն յանձն ա-  
ռեալ , գէթ խառն 'ի խուռն և առանց կարգա-  
ւորութեան՝ որ ինչ 'ի միտս քո գայցեն՝ ցոյց մեզ .  
և մի դանդաղիր պատմել մեզ , որպէս 'ի խաղաղդ  
յայդ կենցաղ հասեր , զոր ոչ արդեօք առանց բա-  
զում փորձոյ և վրիպակաց ժառանգիցես :

Ընդուստ և ի իւսիս ձայն բարձեալ , ասէ .  
Օ եփիւոք զսօսեալս պարեն , ո՞ Փիլոկղէս . օգբս  
բուրեն անուշահոտութեամբ ծաղկանց՝ որ փու-  
թան 'ի փթիթս . այգիք պատեն զբարունակս իւ-  
րեանց զմրտենեօքս , և ոչ թողցեն զնոսա . հօտքս  
որ խայտան յարօտս , թռչունքս որ երգեն զերգ  
սիրոյ , ձայնք նուագարանացս որ հնչեն ը հովիտս ,

ամենայն՝ զոր տեսանեմն և որ ինչ լսեմ՝ ազդեն յիս հրձուանս և զմայլումն : Սիրեցեալդ իմ Փիլիպոս , 'ի բարեբաասութիւնն ծնեալ եմք . զայս աստէն իսկ 'ի քաղցր և 'ի խորին յոյզս կրկես զգամ . եթէ գիտիցես դու զհնարս մշտնջենաւորելոյ զսա , անիրաւիս 'ի ծածկել զայն 'ի մէնջ :

Փիլիպոս ասէ . Դու զաւուրսն իմ զառաջինս ինձ յուշ ածես . ցանկալի ինձ աւուրքն այնոքիկ , յորս զուարճանայի զմայլեալ 'ի տպաւորութիւնս զգալեաց էկցս : Ինութիւնն , յոր չե ևս սովորեալն էի , նկարէր յաչս իմ 'ի տիպս զօշոտիչս . և սիրտ իմ , նորաբողբոջ և ամենազգայ , մերթ զմերթայր և մերթ բորբոքէր :

Եւ ևս ճանաչէի զմարդիկ . տեսանէի 'ի բանս նոցա և 'ի գործս զանմեղութիւնս և զանկեղծութիւնս սրտի իմոյ . համարէի զամենեւինս արդարս , ճմարտախօսս և արժանիս բարեկամութեան՝ որ պէս պարտն էր նոցա լինել , և որպէս էի իսկ ես . և մանաւանդ մարդասէրս համարէի զնոսա , զի ոչ իսկ է մարթ գիտել առանց փորձոյ՝ թէ չիցեն այնպիսիք :

Ի պատրանօքս այսոքիւք մտի յաշխարհ . բարեձեռութիւնն՝ որ յակումբս աթենացւոց սրայ ծառագոյնս փայլէ , մեծարանաց բանք՝ զորս թելադրեն իղձք հաճոյ լինելոյ՝ , զեղումն սրտի դիւրապատրաստ և ախորժելի , այս ամենայն

խաբուսիկ երևոյթք որսացան զսիրտ իմ անխորձ .  
 դիմեցի 'ի հրապոյրս անդր, և մատուցեալ յախորժ  
 կապանան զիրաւունս և զախորժակս բարեկամու .  
 թեան՝ եղէ անձնատուր 'ի բերկրանս սիրոյ և սի-  
 րելի լինելոյ : Ատորուծիւնք իմ անխորհուրդք ե-  
 ղեն ինձ յաղէտս . առաւելագոյնք 'ի բարեկա-  
 մաց իմոց թողին զիս, կէսք 'ի խնդիր շահու, այլք  
 ըստ մոլենախանձ կամ ըստ յեղ յեղուկ բարուցն .  
 և դէպքն յեղակարծք և կսկիծ քամեցին յա-  
 չաց իմոց արտասուս դառինս : Վարձեալ և ան-  
 իրաւութիւնս դժոխքմբերս և նենգութիւնս  
 չարաչարս կրեալ, ստիպեցայ յետ երկար ընդան-  
 ձին ոգորելոյ՝ հրաժարել 'ի քաղցր վստահութե-  
 նէ իմմէ 'ի մարդիկ՝ : Վժնդակագոյն եղև ինձ  
 հրաժեշտս այս քան զամենայն դժնդակս կենաց  
 իմոց, և տակաւին յիշատակաւ նորս սասանիմ . և  
 այնչափ բուռն եղև ինձ այն, զի 'ի միօջէն 'ի  
 միւսն ծայրայեղ անկայ յանչափութիւն՝ : Վառ-  
 նացուցի զսիրտ իմ, տածէի 'ի նմա մտադիւր ըզ-  
 կասկածանս և զատելութիւն . և գտայ թշուա-  
 րացեալ : Այլա ածի զմտաւ, զի 'ի բազում յայլ  
 և այլ կարծեաց հաւատարմագոյնքն թուեցեալք  
 դնեն զբարեբաստութիւն 'ի հեշտութեան կամ  
 յառաքինութեան և կամ 'ի հրահանգս ուղիղ  
 բանին՝ . այլ ես եղի 'ի մտի գտանել 'ի բեր-

1 Արխատոս . յղ . ճարս . 1 . էջ 89 :

Գիրք Բ . ԳԼ . 12 . էջ 564 :

3 Արխատոս . բարեբաղդ .

2 Պղտոս . 'ի Փեղոն . հտ .

Գիրք Ա . ԳԼ . 1 . հտ . 2 . էջ 105 .

կրանս զբարեբաստու թիւն իմ :

Այ մանրտպատում առնեմ զղառանցանս մանկու թեան իմոյ , այլ մատչիմ 'ի տիս ուր զկայ առ ռին այնորիկ : Ա'ինչ էի ես 'ի Աիկիլիա , չոգայ առ մի ոմն յերևելեաց անտի սիրահուսացոց՝ որ բարեբաստագոյն քան զամենայն ժամանակա կիցս իւր համարէր : Այ սակեայ 'ի տեսիլ երեսաց նորա . զի թէպէտ և տակաւին 'ի տիս զօրութեան էր , այլ թուէր զառամեալ : Շուրջ ակըմբեալ զնովաւ երաժշտաց , աշխատ առնէին զնա հռչակաւ առաքինութեցն . և գեղեցիկ սպար նաժըշտաց 'ի կայթս ոտին վառէր յաչս նորա բոց նսեմ և առկայծեալ : Այ իբրև եղաք առանձինն , ասեմ ցնա . Այնդա ո՛վ դու , որ զբերկրանս անմեկնելի ունիս զքե : Ասկ նա ասէ ցիս դառնացեալ . Այ զոր բերկրանս , անց այն յինէն , մնայ ինձ արդ թախիծ և եթ կորստեան նորա . զայս միայն զգամ , և այս մաշէ 'ի սպառ զմարմին իմ ընկճեալ 'ի ցաւոց և 'ի վշտաց : Աամէի քաջալերել զնա , այլ միտք նորա անբանացեալ էին յիմաստից և վերջացեալ յամենայն հնարից սիտիանաց : Այ ապա 'ի միտ առի՝ զի ոչ ինչ ամօթ համարէր նա զանիրաւութի , և անմիտ շուայլութեամբ օրրստօրէ զօրդիս իւր 'ի չբաւորութիւն հասուցանէր :

Արատեալ յօրինակէ աստի , և 'ի դառնութեանց՝ զորոց տակաւ առնուի զճաշակ , սթափեցայ յարբեցութենէ՝ յոր յամաց հետէ՝ կայի , և հարկ եղև ինձ ինդրել զխաղաղութիւն 'ի

գործս առաքինութեան և 'ի բանականութեան : Պարապեցի յերկաբանչուրն խնամով , այլ և անդ յանչափն ձգտեալ . առաքինութիւն՝ կարի խըստակրօն , ընդդ զիս երբեմն ցասամամբ ընդգէժմամարդկան . և միտք իմ դժնեայք առնէին զիս անխտիր առ ամենայն ինչ : Վ . յլ դէպք փարատեցին զերկասին և ս զառանցանս իմ :

Նանեայ 'ի (ձեբէ զմի յաշակերտացն Սոկրատայ , զորոյ զովութիւնս բազումն լուեալ էր իմ զլաութենէն . և հիացայ ընդ մեծախոհ միտս նորա և ընդ բարեկարգ կենցաղ : Վ . յլ նորայնքան սնապաշտութիւնս և նախանձ զրախնդիր յառաքինութիւն անդր տակաւ յաւելեալ էր , զի թուէր նա անգութ ընդ անձին , և աններող առ այլս . և էր նա դժուարաբարոյ , կասկածոտ , և բազում ուրեք անիրաւ իսկ : Վ . մին իրի մեծարէին ամենեքեան զուղղութիւն սրտի նորա . այլ յերեսաց նորա խոյս տուեալ փախչէին :

Յետ սակաւ միոյ երթեալ 'ի Վեդփիս 'ի տօնս ողիմպիական խաղուց , տեսի 'ի ծառայարդար նսեմաստուեր ուղւոջ այր մի համարեալ ամենիմաստ , այլ թուէր 'ի սուգ համակեալ , և ասէցիս . Յրեցի բանիւ զպատրանս իրաց կենցաղոյս զի էին ինձ 'ի ծնէ ամենայն բարեմասնութիւնք՝ ցանկալիք սնափառութեան , այլ ես փոխանակ սնափառելոյ յայնս՝ 'ի քննութիւն նոցին պարապեցի . և ճոխութիւն , ազնուականութիւն և գեղ թուեցան յաչս իմ պիտակ անուանք ըստ

դիպաց բաշխեալք մարդկան : Աացի 'ի բարձրագոյն աւագութիւն աշխարհի , և տաղտկացայ . զի դժուարին էր ինձ առնել զբարի , իսկ զչար գործել՝ դիւրին յոյժ : Անդրեցի զփառս 'ի սպատերազմունս , միտցի զձեռն յարիւն եղկելէաց , և սոսկացայ 'ի մոլեգնութեանց իմոց : Պարապեցի 'ի գիտութիւն և յարուեստս , իմաստասիրութիւն յաճախեաց ինձ վարանս , ճարտարիտօսութիւն թուեցաւ ինձ արուեստ նենգութեան և խաբերոյ զմարդիկ , իսկ բանաստեղծութիւն , երաժշտութիւն և նկար՝ խաղք տղայականք զբօսացուցիւք նոցին : Այրհէցայ 'ի մեծարանս մարդկան հանդէլ . այլ տեսի առ ինև առաքինիս կեղծաւորս՝ որք յախշտակէին անխտիան զվարկ նոցա , և տաղտկացայ 'ի մարդկանէ և 'ի մեծարանաց նոցա : Այլ չմնաց ինձ այլ , բայց կեանք առանց սիրտիանաց և անխրախոյս , բերելով զնոցին գործոց և զնոցին պիտոյից ծանրատաղտուկ դարձ :

Պարտասեալ այնուհետև 'ի կենաց , ձգեցի զայն 'ի տար աշխարհս : Արդունքն եգիպտականք պակուցին զիս 'ի նախկին տեսիլն . և ապա զամբարտաւանութիւն կանգնողայն զայնոսիկ թագաւորաց համարեցայ հանգոյն մըրջման , որ հատս ինչ աւագոյ կուտիցէ յուղոջ՝ առ 'ի թողուլ զինեաց զհետս անցից իւրոց : Արքայն մեծ Պարսից ետ ինձ 'ի դրան իւրում իշխանութիւն , որ զպարսիկս յոտս իմ խոնարհեցոյց . այլ յառաւելութենէ վատութեան նոցա

գուշակէի զսպաշնորհութեան նոցա զառաւելու-  
թիւնս: Վարձայ 'ի հայրենիս իմ, և ոչ ինչ այ-  
նուհետեւ զարմանալի էր ինձ, և ոչ արգոյ ինչ  
ամենեւին, նմին իրի և ոչ ինչ սիրելի: Վնագան  
յայնժամ 'ի միտ առի զսխալանս իմ, մինչ ոչ ևս  
գոյր հնար ուղղութեան. բայց թէպէտ և չիք  
յիս մարդասիրութիւնս, այլ ցանկամ զի խրատես-  
ցիս դու ինեւ. զի չիք ինձ վտանգ երկիրդի 'ի  
քէն, և չեմ իսկ հասեալ 'ի թշուառութիւն սպա-  
սաւորելոյ քեզ: Տեսի զոք 'ի քրմաց յԱզիպտոս,  
որոյ զամենայն աւուրս կենաց իւրոց սարսափեալ  
էր 'ի ինդիր սկզբման և կատարածի իրաց աշ-  
խարհիս, և նա ասաց ցիս հառաչելով. Վայ  
յանդգնելումն մերկանալ զքոզ բնութեանս: Վե-  
ես քեզ ասեմ. Վայ որ մերկանայ զքոզ միաբա-  
նութեան մարդկանս. վայ որ հրաժարէ 'ի թա-  
տերական սպտրանաց, զորս կանխակալ կարծիք  
և պէտք ածին զզգալեօքս առ հասարակ. թա-  
լուկ և նուաղումն զսրտիւ նորա գայցեն, և 'ի ծոց  
ոչընչի գտցի կենդանի, որքան զամենայն տանջանս  
դժնդակագոյն է: Վա զայս արտասուելով ասա-  
ցեալ, խոյս ետ 'ի մայրիս մերձակայ անտառին:

Վու ինքնին գիտես քանի զգուշութիւնս խու-  
սափեն նաք 'ի ժայռից, որք նաւաբեկութեամբ  
այլոց լեալ իցեն նշանաւորք: Վյսպէս յուղեո-  
րութեանս իմում զտոյժս այլոց յօգուտ ինձ 'ի  
կիր արկանէի: Վորա ուսուցին ինձ որ ինչ դոյզն  
խելամուռութեամբ մարթէր ինձ ուսանել, այլ զի



ուչ ինչ որ ուտանի՝ առանց առնելոյ զփորձ , և զի անչափութի բանին իսկ և առաքինութեան գրեթէ որպէս զըւերկրութեանցն է վտանգաւոր՝ . և զի բնութիւնն ետ մեզ ախորժակս , և է առհասարակ շնասակար խափանել զայնոսիկ ՚ի սպառ և յախրացուցանել . և զի իրաւունք էին մարդկանս սրահանջելոյ յինէն վաստակս , և ինձ ՚ի նոցանէ մեծարանս . և զի դարձեալ առ ՚ի հասանել ՚ի կատարած անգր ցանկալի՝ որ հանապազ յանդիման և անտես լինէր աչաց իմոց , պարտ էր ինձ հանդարտել զանհանգստութիւն հոգւոյ ի մոյ՝ որք յանձնէ ՚ի բաց կացուցանէին զնա :

Էր իմ հետազօտեալ երբէք զանհանգստութեան պստորիկ զկիրս : Ախտացի զի յանբանս ՚ի սրահանութիւն և եթ կենաց իւրեանց և ՚ի սերունդ ազգաց նոց իւրաքանչիւր սահմանի այն . այլ ՚ի մարդիկ , յետ կարեւորագունիցն լրմանս պիտոյից , տակաւին հանդարտէ . և յազգս բարգաւաճեալս զիտութեամբք առաւելագոյն է անհանգստութիւնն այն քան ՚ի տգէտս , և յոյժ դժնդակագոյն և բռնաւորագոյն ՚ի մեծատունս քան յազքատս : Ապա ուրեմն յաճախութի խորհրդոց և ըղձից դառնացուցանէ զկեանս մեր , և յաճախութիւնս այս անյագ տազնապի յանգործութեան , և առ ՚ի կալ աննուազելի՝ ճարակի ախտիւքս մերովք , գրգռէ զայնոսիկ անդադար ,

և կթէ 'ի նոցանէ պատուքս դատինս : Այլ ընդէր իցէ չմատուցանել նմա սնունդ օգտակար , ընդէր զանհանդատութիւնս զայս՝ զոր և 'ի յղիութեան ընչից և հաճոյից կրեմք՝ չհամարիցիմք ազդեցութիւն բնութե տարւորեալ 'ի սիրտս մեր առ 'ի ստիպել զնոսա կցորդել ընդ միմեանս , և 'ի միաբանութեան անդ գտանել զհանդիստ իւրեանց :

Այլ մարդասիրութիւն , իղձ ազնուական և վսեմ , որ 'ի մանկութեանս մերում յայտնիս 'ի գորովս բնականս , յերիտասարդութեան մերում 'ի յանդգնութիւն միառիտ վստահութեան , և յամենայն կեանս մեր 'ի յօժարութիւնս յաճախելոյ զկապս կցորդութեան : Այլ բարբառ բնութեան , որ հնչես ծագաց 'ի ծագս երկրի , և հարկանես զմեզ խղճիւ մտաց՝ 'ի զրկել մեր զայս , և զեղուս 'ի մեզ անասակ բերկրութիւն՝ յօժանդակել մեր այլոց : Այլ սէր , ո՛վ բարեկամութիւն , ո՛վ բարերարութիւն աղբիւրք անսարաք բարեաց և բերկրութեանց . ոչ վասն այլ իրիք թշուառականք են մարդիկ , բայց զի ոչ ունինդիր լինին ձեզ : Այլ դիք , տուիչք մեծամեծ պարգևացս . այն , կարէր բնաւոր բերումն 'ի կցորդել զէակս աղջաւորս և ընկճեալս յաղետից՝ մատուցանել տկարութեան նոցա նեցուկ առժամանակեայ . այլ անասման բարութեան ձերում էր խորհել խայծիւ մտաց կցորդել զմեզ , և ընդ բազմաժողով միաբանութիւնս որ ծածկեն զերկիր՝ սփռել եռանդն , որով կարասցեն յարատեւել մինչև 'ի սպառ :

Մ. յԼ մեք փոխանակ արծարծանելոյ զհօրս զայս, տեղի տամք մնտի հերձուածոց և չարաշահութեան շիջուցանել զայն: Աթէ երկուց ոմանց անծանօթից գէպ լինէր անկանել 'ի կղզի ուրեք անապատ, և անդ 'ի սէր միմեանց գտանել զբերկրութիւն՝ որ սիրտէր զայլ ամենայն կարօտութիւնս նոցա, և թէ գոյր ազգատոհմ՝ որ զկցորդութիւն արեան կապանօք բարեկամութեան հարստէր, և թէ գտանէր յանկեան ուրեք երկրի ազգ՝ որ այլ օրէնս բաց 'ի սիրոյ չճանաչէր, և ոչ այլ անօրէնութիւն բաց յանսիրելութեանէ, ո՞ որ 'ի մէնջ յանդգնէր աւաղել զբախտ երկուց անծանօթիցն, ո՞ ոչ ցանկայր կցորդել յազգատոհմ անդր, և ո՞ ոչ 'ի ծայր անդր երկրի գիմեալ երթայր: Մ մահկանացուք անմիտք և անարժանք բախտին ձերոյ. ոչ է հարկ զծովս հատանել անցանել 'ի գիւտ բարեբաստութեան, յամենայն սրայմանս կենաց է ձեզ գտանել զայն, յամենայն ժամանակս, յամենայն տեղիս, 'ի ձեզ շուրջ զձեօք, և ամենայն ուրեք՝ ուր է սէր:

( ) րէնքս այս բնութեան, անտես լեալ յիմաստասիրաց մերոյ, ոչ ծածկեցան յօրէնսդրէ ազգի միօջ հզօրի: Վսենոփոն զմանկուոյն Պարսից խօսելով երբեմն առ իս, սպատմէր՝ 'ի վարժօցրս հասարակաց ատեան հաստատեալ նոցա, ամբաստանել մանկանց զյանցանս միմեանց. և զի ապերախտութիւն անդ խօտագոյնս պատուհասէր: Այլ զարձեալ, զի առ սրարսիկս յապերախ-

տուժիւն համարին ամենայն որ ընդդէմ զից  
 և ծնողաց և հայրենեաց և բարեկամաց գործին  
 յանցանք՝ ( ) ընք արդարեւ զարմանալի, որ ոչ  
 միայն հրամայեն զամենայն որ ինչ պարտն է,  
 այլ և սիրելի առնեն զամենայն՝ ՚ի սկիզբն անդր  
 նոցա մատուցեալ : ( ) ի եթէ ոչ է մարթ առանց  
 ապերախտուժեան յանցանել յայնոսիկ, ապա  
 պարտ է վասն շնորհակալութեան ընուլ զօրէնսն .  
 և ստոխ յառաջ զայ իմաստն պարզ և բազմաբե-  
 ղուն, զի ՚ի սերտ սրտէ պարտ է գործել զամե-  
 նայն :

Սի զայսպիսեաց ինչ ճառիցես այնոցիկ, որք  
 ՚ի բռնաւոր ախտից վարեալ զնան անսանձ . և ոչ  
 անկարեկիր մարդկան, որ առանձին և եթ պի-  
 տանիք՝ զւրեանցն միայն զզան զաղէտս : Մշա-  
 զելի առաջինքն, զի ՚ի թշուառութիւն այլոց սահ-  
 մանեալ են քան ՚ի բարեբաստութիւն անձանց :  
 Իսկ յեանոցն բախտ ցանկալի իմն թուի . զի ե-  
 թէ մարթէր մեզ ընդ մեծութիւնս և ընդ առող-  
 ջութիւն բերել յանձինս զընաւ անկարեկցու-  
 թիւն առ մարդիկ հանդերձ կերպարանօք կարե-  
 կցութեան, ժառանգէաք բարեբաստութիւն իմն  
 հաստատեալ ՚ի հաճոյս զգայութեանց պատշաճս,  
 և թերևս ապահովագոյն ՚ի դժնդակ արկածից  
 յեղափոխութեան : Մյլ իցէ՞ արդեօք ՚ի կամս  
 մեր լինել անկարեկիցս : Վթէ ծնեալ էաք առ

'ի կեալ ամայի 'ի Վովկաս լերին կամ յանապատս Վերիկեայ , մարթէր բնութեան չտալ մեզ սիրտ կարեկից . այլ զի ետ մեզ զայն , դիւրին է սմա ընդ վագերս ընդերակցիլ և զսարառաժս ածել 'ի կենդանութիւն քան չտրել ինչ :

Վացցուք սպա 'ի մերում պայմանիս . և զի հարկ է սրտիս մերոյ զեղուլ , մի խափանեցուք զայն , այլ մանաւանդ հնարեցուք յաւելուլ յեռանդն և 'ի ժրութիւն՝ ուղղելով զնա անարտուղելի :

Այլ զանձն յօրինակ ընծայեմ . այլ զի ուսանել խնդրես , զկարգ կենաց խնոց , ինձ ոչ այլազգ յաջողեցաւ ընուլ զպարտս պայմանի խնոց և զպէտս հոգւոյ , բայց խոկալով յօրէնս Վարսից , և ևս քան զևս հարստելով զկապանս՝ որով կցորդիմքն ընդ դիս , ընդ ծնօղս , ընդ հայրենիս և ընդ բարեկամս : Սովաւ ուսայ և զայն , զի որչափ առաւել ոք վասն այլոց կեայ , նոյնչափ ևս առաւել կեայ վասն անձին՝ :

Այլ սպա եցոյց Փիլոկղէս երկայն ճառիւք , զի հարկ է կոչել յօգնութիւն բանականիս մերոյ և առաքինութեանց զգօրութի՝ որ պատասպարանն է տկարութեան նոցա . և զի ցօր վայր արիութեան մարթ է ամբառնալ հոգւոյ , որ զպատահարս կենցաղոյս համարելով օրէնս 'ի վեհադունէն և յամենիմաստ օրինադրէն սահմանեալ , ստիպի

մրցել ընդ թշուառութիւն կամ ընդ յաջողութիւն :  
 Եւ յաւելեալ 'ի բանս իւր , ստէ . Պիտանի լիցիս  
 մարդկան , եթէ յորդորմամբ եւթ մտաց բա-  
 րեպաշտիցես . իսկ եթէ յաջողեսցի քեզ բնա-  
 կաւոր ունել զբարեպաշտութիւն , առաւել ևս  
 բերկրեսցիս 'ի բարերարել նոցա , և առաւելա-  
 գոյն գտցես սփոփումն 'ի կրել 'ի նոցանէ չարիս :

Եւ մինչ դեռ յաւելոյր նա պարզաբանել զի-  
 մաստս զայսոսիկ , Վեմոփոն պատանի կրետացի՝  
 բարեկամ մեր , որ 'ի ժամանակաց ինչ կրելով  
 զանուն իմաստասիրի՝ մեծարէր , 'ի վերայ հա-  
 սեալ արգել զբանս նորա , և զգէմ կալեալ այ-  
 նու մոլէնախանձ արհամարհանօք խօսեցաւ ըզ-  
 կրօնից , մինչև Փիլիկղեայ պարտ համարել 'ի ըզ-  
 րաստութիւն ածել զնա : Բայ ևս 'ի յաջորդ  
 գլուխ անգր զվիճաբանութիւնս զայս թողում :

Եւ ապա յաւել Փիլիկղէս , և ստէ . Իմաս-  
 տութիւն ազգաց առաջնոց 'ի հասարակաց պաշ-  
 տամունս գոզցես իմն իսառնակեալ շփոթեաց  
 զարարիչս մեր զգիս , և զծնօղս մեր զկենսատուս :

Օ ի որ ինչ առ երկաքանչիւրս պարտք են մեր ,  
 անլոյծ ընդ միմեանս կցորդին 'ի մատեանս օրէնս  
 դրաց , 'ի գիրս իմաստասիրաց , և 'ի սովորութիւնս  
 ազգաց :

Բարի կալաւ առ պիտիզացիս սրբազան սովո-  
 րութիւնն , զի 'ի բազմեւն 'ի ճաշ՝ հեղուն նուէրս  
 ծնողաց իւրեանց : Բարի պղատոնականն գեղե-

ցիկ խնատ, զի Աթէ ընդունի անձ զխունկս զոր  
 դրօշերոց նորա մատուցանես, որչափ ևս առաւել  
 հաճոյ իցեն յաչս նորա և քեզ պաշտելիք պատ-  
 կերքն՝ որ զնա առանին քեզ յանդիման առնեն,  
 զհայրքո ասեմ և զմայր և զնախածնօղս, որք եր-  
 բեմն իշխանութեան նորա և այժմ բազմագութ  
 խնամակալութենն են տիպք կենդանիք՝ : Աիրէնա  
 զմեծարիչս նոցա, և պատուհասէ զապախտաւորս  
 և զանարգիչս . ընդ այս մի ինչ երկբայեսցիս՝ : Ա-  
 թէ զրկիցիս ՚ի նոցանէ, մինչև բողոքեալ յի-  
 շեա որ ինչ ասացն Պիտտակոս ցպատանին, որ  
 զհայր իւր ածէր ՚ի դատաստան . Աթէ անիրա-  
 ւիս, ասէ, դատապարտեսցիս . իսկ եթէ տացին  
 քեզ իրաւունք, արժանի լիցիս դատապարտելոյ՝ :

Այլ առանց յամելոյ ՚ի մեծարանս զոր պարտ  
 է մեզ մատուցանել ծնողաց, ցուցից քեզ ընդ ա-  
 ղօտ զանդիմանդարձ ձգումն՝ զոր յաւելու բնու-  
 թիւնն ՚ի յօժարութիւնս կարեօրս սու բարե-  
 բաստութիւն մեր :

Ա տղայութեան, յորում ամենայն ինչ պարզ  
 է, զի է ամենայն ինչ ՚ի նմա ճշմարիտ, գութ առ  
 ծնօղս այնպէս կրի ՚ի մարդիկ՝ զի տկարանայ ար-  
 դարե ՚ի սպրդել ՚ի ներքս ախորժակաց հաճոյից  
 և ազատութեան, այլ դժուարաւ լուցիկիք նորա  
 շիջանին : Ա տունս իսկ, յորս յակնածութիւն  
 և եթ ամիտիս այն, յայանի դարձեալ ներելովն

1 Պատմ. յղ. օր. գիրք  
 ի. Լ. հտ. 2. էջ 931 :

2 Ստոր. ճառ. 77. էջ 454 :  
 3 Նոյն անդ, էջ 456 :

և կարեկցու[թեամբ՝ որ պարտ համարի առ նոսա, և ստէպ դարձիւն 'ի սէր՝ յոր և դոյզն ինչ դէպք յորդորեն զնոսա: Այրևի դարձեալ և 'ի տունս, որ 'ի հերձուածս դժնդակս պառակտին. զի ատելու[թիւն անդ ոչ վասն այլ իրիք զայրանայ, բայց վասն մասնու[թեան վստահու[թեանն, և վասն ակնկալու[թեան սիրոյն 'ի դերև ելանելոյ՝: Ասն որոյ ոչ միշտ նկարագրու[թք բուռն և ասկերատան կրից հնարի ողբերգու[թի աղմկել զսիրտս մեր, այլ բազում այն է՝ զի հակառակամարտ կրիք գորովանաց ընդ ազգականս ընկձեալս յաղէտից, յորոց 'ի տեսիլ նկարագրու[թեն չկարէ ժոյժ ունել արտասուաց ազգ աջողակագոյն 'ի լսել և 'ի [թարգմանել զբարբառ բնու[թեան:

Վոհանամ զզից, զի ոչ երբէք քաղցր և յորդորական բարբառոյս գտաւ դատրիկն իմանլուր. գոհանամ զնոցանէ, զի ետուն ինձ միշտ բան 'ի բանալ բերանոյս 'ի խրատել զնա 'ի պարտախւր, և զի միշտ [թուեցայ նան բարեկամ անկեղծ, կարեկից, անաչառ արդարև՝ այլ փու[թաջան քան զինքն 'ի յառաջադիմու[թիւն իւր, և ամենևին արդար: Առ արդարու[թեանս այսորիկ առաւելագոյնք եղեն 'ի սիրտ նորա արգասիք. քանզի տեսանելով նորա զի զխորհուրդս մտաց իմոց յեղանակաւ իմն ներքոյ արկանէի դեռակիր[թ բա-



նին նորա, 'ի միտ էառ զյարգ անձին իւրոյ, և զկարծիս՝ զոր հասակ և հմտութիւն իմ ետուն նմա զառաւելագոյն զիտութենէ իմմէ : Այս պահանջեցի 'ի նմանէ զսէր, այլ ջանացայ սիրելի լինել նմա . զգուշացեալ 'ի նմանութենէ հարց և բարերարաց՝ որք խստիւ պահանջելով ըզնորհակալութիւն՝ զրգուն զապահնորհութիւն :

Օնոյն հնարս և ընդ Ալեկիսպլեայ մօր նորա 'ի կիր արկի : Այլ երբէք այնպէս վստահ եղէ 'ի սիրտ իմ, մինչև ապախտ առնել զցոյցս սիրոյ . այլ դեռ ևս սկսեալ ճանաչել զնա, ջանացայ հաճոյ լինել նմա . և իբրև քաջ ծանեայ զնա, ոչ դադարեցի 'ի ջանից հաճոյ լինելոյ նմա : Այլ ևս այն որ զօգեացն 'ի մեզ զառաջին զօդն, այլ ծայրագոյն մեծարանք և սէր անապակ կցորդեն զմեզ : Ասկզբանէ կենակցութեանս մերոյ չհամարձակեր նա վարել 'ի տան իմում զիշխանութիւն, զոր առանին իրաց հոգք պահանջեն 'ի ժրագլուխ տիկնոջէ՝ . այլ արդ յօժարագոյնս վարէ զիշխանութիւնն, ընկալեալ զայն 'ի ձեռանէ իմմէ : Օ ի յոյժ իսկ քաղցր է լինել ընդ ձեռամբ սիրելոյն, զՏէա երթալ կամաց նորա, և հրաժարել վասն նր յամենայն ախորժակաց : Առէրքս այսօրիկ զորս առնեմք միմեանց, քաղցրացուցանեն զկեանս մեր անպատում բերկրութեամբ . զի յորժամ յայտնի լինին, առնուն զվարձս իւ-

րեանց. իսկ անյայտ լեալ, քաղցրագոյն ևս  
թուին :

Ի պարսպումն օգտակար և յարափոփոխ ան-  
ցանեն աւուրք մեր ըստ հաճոյից մերոց : Այե-  
լեմք ՚ի խաղաղաւէտ բարեբաստութեան, որ յա-  
մենայն կողմանց յորդէ զմեօք. և միայն վիշտ է  
ինձ, զի ոչ ևս որպէս ՚ի մանկութեան իմում  
կարեմ սպասաւորել հայրենեաց իմոց :

Հայրենասիրին անկ է զամենայն ջան ՚ի մէջ  
առնուլ, զի հայրենիք իւր ահարկու իցեն ար-  
տաբոյ և խաղաղ ՚ի ներքս\* : Հաղթութիւնք և  
դաշինք, յօգուտ աշխարհին կռեալք, պատկա-  
ւելի զնա կացուցանեն առաջի ազգաց՝. պահ-  
պանութիւն օրինաց և ուղղութիւն բարուց սոքա  
միայն հաստատեն ՚ինմա զխաղաղութիւնս : Ամն  
որոյ ՚ի կացուցանել ընդդէմ թշնամեաց աշխար-  
հին զօրաւարս և պատգամաւորս քաջս, պարտ է  
ընդդէմ ապերասան համարձակութե և ախտից՝  
որ նկրտին ՚ի կործանել զամենայն, կացուցանել  
զօրէնս և զառաքինութիւնս՝ որ կանգնեն զամե-  
նայն : Այլ աստի քանի բազում պարտք կարեւորք

\* Յոյնք զամենայն գործ  
վական բառս ՚ի կիր արկին առ  
՚ի նշանակել զքաղաքաժողով  
միարանութիւն, որոյ իւրա-  
քանչիւր ոք է մասն : Հայրե-  
նիս կոչելին զայն այլք առ  
հասարակ, իսկ կրե տացիք  
մայրենիս կոչեցին զայն : (Պը-  
լատ. յԷ. հաս. գիրք Թ. հա.

2. էջ 575 : Պլուտ. յԷ. ծերոց  
տնտեսել զհաս. հա. 2. էջ  
792 : ) Երևի ուրեք ուրեք կռ-  
չեցեալ նոցա զայն և գայեակ :  
(Իսոկր. ՚ի ներքող, հա. 1.  
էջ 130 : )

1. Քսենոփ. յԷստ. գիրք  
Դ. էջ 813 :

և անհրաժեշտք յաճախեն կարգաց իւրաքանչիւր քաղաքայնոց , և քաղաքայնոց իւրաքանչիւր առանձինն :

Արդ լուարուք ինձ դուք՝ զորոց բանքս են , և որոց վասն ցանկալի է ինձ բարբառ ազգողական առ ՚ի բացատրել ը վայելուչն արժանեաց զճըմարտութիւնս՝ որոց եմս խելամուտ . դուք՝ յորս կամէի բորբոքել զհուր պատշաճից սիրոյ , որով բարեբաստագոյնք լինէիք : Յիշեցէք զի իրաւունք անպարագրելիք և սրբազանք են հայրենեացդ ՚ի վերայ աջողութեանց ձերոց և առաքինութեց և ըղձից և գործոց առ հասարակ . և զի յոր կարգ կենաց և իցէք , զինուորք նորա էք պահակերք , և պարտ է ձեզ հսկել միշտ նմա , և դիմել յօգնութիւն ՚ի շուկ ինչ վտանգի : Այ է ձեզ բաւական առ ՚ի գոլ վայելուչ ՚ի վեհ վիճակիդ ձերում կատարել և եթ զյանձնեալ ձեզ ՚ի նմանէ գործըս , պաշտպանել օրինաց նորա , խնդրել զօգուտ նորա , և հեղուլ իսկ զարիւն ձեր ՚ի բանակի կամ ՚ի քաղաքամիջի վասն նորա : Եւ է թշնամի փնասակարագոյն նմա քան զնիզակակցութիւնս ազգաց և քան զհերձուածս քաղաքայնոց , պատերազմն յամբ և աներևոյթ՝ այլ սաստիկ և յարատե , զոր մղեն հոյք ախտից ընդդէմ ուղղութեան բարուց . պատերազմ այնչափ առաւել դժնդակագոյն , որչափ զի չիք հնար հայրենեացդ խափանելոյ զայն իւրովի կամ ժուժկալելոյ նմին : Թոյլ տուք ինձ , զի ըստ օրինակին Սոկրատայ

տաց նմա բարբառել՝ որ ինչ անկ է նմա ասել  
առ որդիս իւր՝ 1 :

Յինչն ընկալայք դուք զկեանս , և իմաստուն  
սահմանադրութիւնք հրահանգեցին աստ զմիտս  
ձեր : ( ) րէնք իմ հսկեն յասպահոյութիւն տրուպ  
քաղաքացոյն , և ամենեքին դուք երդուայք  
յայտնի կամ լռելեայն նուիրել զկեանս ձեր ինձ՝ ի  
ծառայութիւն : Մ. յորքիկ են իրաւունք իմ . իսկ  
դուք որով իրաւամբք խախտէք զուղղութիւն բա-  
րուց , որ հաստատագոյն քան զօրէնս հիմունք են  
պետութե իմոյ : Չգիտիցէք զի եղծումն բարուց  
թոյնք են աշխարհաւեր , և միում և եթ օրինակի  
ցոփութեան մարթ է ասականել զազգ մի ողջոյն ,  
և ինել նմա փաստակարագոյն քան զպարտու-  
թիւն պատերազմի : Ա. թէ արիութեան պէտք  
էին առ ՚ի խիզախել ընդդէմ պատշաճից հասա-  
րակաց , մեծարէիք արդեօք զայնոսիկ . չգիտիցէք  
զի սնափառ պերճանքդ , որով հանդէս առնէք ան-  
պատու հաս զեղիտութեանցդ ձերոց , է վատու-  
թիւն գորովելի և ապիրատ :

Մ. յլ դուք խորեալ անձանց զփառս իմ , իշխէք  
ամբարտաւանել առաջի օտարաց 2 , զի էք ծնեալք  
՚ի քաղաքի՝ ուր կացին Սողոն և Մ. թիստիգէս , և  
սերեալք ՚ի դիւցազանց՝ որ յայնչափ ՚ի բազում  
պատերազմունս ետուն զինուց իմոց յաղթանա-  
կել : Մ. յլ զինչ բաժին ընդ իմաստունսն ընդ այ-

1 Պատմ. ՚ի Վրիտ . հտ . 1 . էջ 30 :

2 Թուկեզ . գիրք Դ . գլ . 95 :

նոսիկ և ընդ ձեզ, մանաւանդ թէ զի կայ ձեր և հարցն ձերոց : Վիտիցէք զքեզ ևն հայրենակիցք և որդիք աւագ որերոյն այնորիկ . քաղաքացիք առաքինիք, յորում սպայմանի և յորում ժամանակի և ծնեալք իցեն<sup>1</sup> :

Արանի էր հայրենեաց նոցա, եթէ ընդ առաքինութիւնս իւրեանց ոչ բերէին յանձին զձախողակի ներողամտութիւնն նպաստամտոց ՚ի կործանումն նորա : Առարնք և դուք ձայնի իմում, դուք որք դարուց ՚ի դարս մշտնջենաւորէք զկենցաղօգուտ ազգ մարդկան : Ասմանեցի օրէնս հակառակս անիրաւութեանց, այլ ընդդէմ փոտից ոչ ևս . զի ձեզ և եթ մարթ է լինել իմ վրէժինդիր, և հալածել զնոսա հզօր թշնամութեամբ<sup>2</sup> : Ա՛ի շիջցի զայրոյթ ձեր, այլ բորբոքեսցի ՚ի վերայ ցոխութեան՝ որ խանգարէ ըզբարս, ՚ի վերայ բռնութեանց, անիրաւութեանց և նենգութեանց՝ որք թագչին յերեսաց օրինաց, և ՚ի վերայ կեղծ լաւութեան, վեր ՚ի վերոյ սարկեշտութեան, սուտ բարեկամութեան, և ՚ի վերայ ամենայն անարդ խաբէութեանց՝ որք գողանան զմեծարանս ՚ի մարդկանէ : Ա՛ի ասիցէք՝ թէ փոխեցան ժամանակք, և սարտ է զգուշնալ յերեսաց զօրութեան յանցաւորաց . առաքինութիւն անազգական, է առաքինութիւն անհիմն .

<sup>1</sup> Իփիկր . առ Արիստոս .      <sup>2</sup> Պղատ . յղ . հաս . դիրք  
Տարս . դիրք Բ . ԳԼ . 23 . հա . Ա . հա . 2 . էջ 334 .  
2 . էջ 376 :

զի ուր ոչն մանչէ նա 'ի տեսիլ յառութեանց ,  
չազատի 'ի նոյնս :

Արպիսի հուր ոչ 'ի սիրտս ձեր բորբորէր , եթէ  
յանկարծ հասանէր գութկան՝ թէ զէն առեալ  
թշնամիք 'ի սահմանս այսր 'ի դրունս ձեր հա-  
սեալ են : Իսկ արդ ոչ եթէ 'ի դրունս , այլ 'ի մի-  
ջի ձերում կայ թշնամին , յատեան աւազանուոյդ ,  
'ի ժողովս ազգիդ , 'ի դատաստանարանս և 'ի  
տունս ձեր : Ի՞նչպէս արագ յառաջ խաղայ չարն ,  
զի եթէ ոչ դիր և ջանք առաքինեաց խափանեցեն  
զնա՝ բարձցի ընդ հուպ ամենայն յոյս հնարից  
ուղղութեան բարուց և փրկութեան աշխարհիդ :

Եթէ կշտամբանքս այսոքիկ զորս լուաք՝ աղ-  
ղէին 'ի մեզ , ժողով մարդկան՝ առաւելազանց  
հեզութեամբս մերով լեալ կայեան վաղերց և օ-  
ձից՝ փոխէր յօթեան խաղաղութեան և բարե-  
բաստութեան : Ի՞յլ մի յուսացուք տեսանել  
զփոփոխութիւնս զայս . զի թէպէտ և բազումք  
իցեն 'ի քաղաքայնոց առաքինութեամբք զարդա-  
րեալ , այլ չիք ինչ չքնազազիւտ քան զայր առա-  
քինի . զի ճշմարիտ առաքինին այն է , որ յա-  
մենայն ժամանակի և յամենայն դէպս ընդդէմ  
ամենայն խափանաց և հակառակ ամենայն հրա-  
պուրանաց է առաքինի :

Իսկ եթէ չիշխեն բարեսէրք գումարել ընդ-  
դէմ ստոյ և կամակորաց , գէթ միաբանեցին

յօզնու թի լաւաց, բերելով յանձին զմարդասիրութիւնն ընդակից բնութեան, զոր 'ի դէպ խակէր արդ դարձուցանել 'ի ժողով մարդկան, ուստի հալածեցին զնա մտահաճութիւնք մեր և ախար : Ի նմանէ խրատեաք դադարել 'ի սպաւերազմելոյ ընդ միմեանս, չառնուլ այլ ընդ այլոյ զխօթամտութիւն ընդ չարասրտութեան, ներել թերութեանց, և մերժել յանձանց զկանխակալ կարծիս և զկասկածանս՝ որք են աղբիւրք դժնդակք հերձուածոց և ստերութեանց բազմաց : Ի նմանէ դարձեալ ուսանեաք, զի քան զհզօր պաշտպանութիւն և քան զառատածեռն սարդ և ծմեծ և ս բարերարութիւն այն է՝ կարեկից լինել թշուառաց :

Տեսանես հանապազ զլազու մն 'ի քաղաքայնոց՝ որք հեծեն 'ի թշուառութե, և զայլ՝ որ սփոփանաց և եթ կարօտին բանից և կարեկցութեան այլոց, և հարցանես՝ թէ զխորդ մարթիցէ օգտու կար լինել մարդկան, և թէ բնութիւնն ընդ վիշտս զոր ածէ զմեօք՝ յաւելցէ՞ արդեօք զփոխարէնան : Յանկարծ զխտելի թէ քանի բերկրութիւնս զեղու նա 'ի սիրտս հնազանդելոց ազդեցութեան իւրոյ : Այլ թէ երբէք զոք 'ի լաւաց՝ զերձուցանիցես 'ի կարօտութենէ կամ 'ի մահուանէ և կամ 'ի նախատանաց, վկայեն ինձ կիրք սրտիք՝ զի 'ի միտ առնուցուս, թէ են 'ի կենցաղս յայս վայրկեանք գորովանաց՝ որ զվշտալից ամաց հատուցանեն զփոխարէնս : Այլ յայնժամ

ողորմեացիս 'ի վերայ այնոցիկ՝ որք դժկամակին ընդ առաքինութիւնս քո, կամ որք յետ վայելելոյ յարգասիս նոցա մոռանայցեն զնոսա: Մի լիցի քեզ երկնչել 'ի նախանձոտաց, կրեսցեն նոքա զարժանին պատուհաս յանկարեկիր սիրտս իւրեանց. զի նախանձն է ժանդ, որ ուտէ զերկաթ՝: Մի զանդիտիցես յերեսաց ապաշորհաց. նոքա յերեսաց քոց փախիցեն, կամ մանաւանդ 'ի խրնդիր քո շրջեցին, եթէ ընդ բարերարութեն զոր ընկալան 'ի քէն՝ եղեն կցորդ մեծարանք և շահ՝: Օ ի եթէ պարծանօք բարերարութեանդ եղծանիցիս, յանցաւոր ես, և եղկելի բարերարեալն 'ի քէն: Օ ի, որպէս ոմանք ասացին, պարտ է բարերարին մոռանալ զբարերարութիւն իւր, և ընդունողին յիշել զայն՝. և ես քեզ ասեմ, զի եթէ առաջինն մոռացի զայն, երկրորդն յիշեցէ: Այլ զի փոյթ թէ խաբիցիմ. մի թէ առ շահ ինչ օգտի պարտ իցէ բարերարել:

Օ գոյշ լեր մի ընդ պաշտպանութեամբ լինել այլոց, և մի զոր պաշտպանեան խոնարհեցուցանել: Այլ առ այս գուն գործեսջիր առանց պահանջելոյ փոխարէնս՝ նպաստամատոյց լինել այլոց, յակամայ խակ նոցին, և զանխուլ 'ի նոցանէ՝ որքան է հնար՝, առ ոչ ինչ համարելով զոր առ-

1 Մեն. Կարկին. և Պեր. էջ 517:

առ Ստոր. ճառ 38. էջ 222 3 Խտկր. 'ի Դեմոն. հտ. և 225:

1. էջ 31:

2 Դեմոսթ. յղ. պատկ.



նիցեան նոցա , և մեծ յոյժ որ ինչ ընդունին 'ի նոցանէ ' :

Իմաստասէրք բազմահմուտք յետերկարախորհուրդ քննութեան ետուն վճիռ , զի որովհետև բարեբաստուի ամենեկին ազդումն է և բողոքովին ներգործութիւն , ոչ ուրեք գտանի՝ բայց 'ի հոգւոջ , որոյ շարժմունք ուղղեալք 'ի բանէն և յառաքինութենէ՝ յոգուտ և եթ հասարակաց իցեն նուիրեալ՝ : Եւրդ համաձայն մտաց նոցին յաւելում և ես , զի ոչ այլով իւրք կցորդիմք մեք ը դիս և ընդ ծնօղս մեր և ընդ հայրենիս , բայց բազմապատիկ պարտեօք՝ զորս յօգուտ իսկ մեր է կատարել 'ի սերտ սրտէ , զի բնութիւնն զայնոսիկ ետ մեզ առ 'ի կիր արկանել 'ի նոսա զգօրութիւն հոգւոյս մերոյ և օգնել սմա նոքօք : Եւ 'ի կատարումն այնոցիկ է իմաստութիւնն , որոյ եթէ հոլանի էր գեղ՝ որպէս Պղատոն ասէ , հարկանէաք 'ի սեր նորա՝ : Եւ յորպիսի սէր . 'ի սէր անսպառ : Վիտութեանց և արուեստից և բերկրութեանց ախորժակք սպառին տակաւ . և ո՞րպէս յագեցի հոգի , որ սովորութեամբն 'ի կենցաղօգուտ առաքինութիւնս՝ կարօտի այնոցիկ , և զօրհանապաղ նորանոր բերկրութիւնս 'ի կատարումն նոցին գտանէ :

1 Պղատ . յղ . օր . գիրք 'Նոյն . աւագ . բարոյ . գիրք Ա . Ե . էջ 729 :

ԴԼ . 4 . էջ 150 :

2 Արիստոս . յղ . բարոյ . 3 Պղատ . 'ի Փեղր . հտ . 2 . գիրք Ա . ԳԼ . 6 . հտ . 2 . էջ 9 :

էջ 250 :

Մի կարծիցես եթէ բարեբաստութիւն նորա սահմանիցի ՚ի բերկրութիւնսն՝ զոր առաքինութիւնք զեղուն ՚ի սիրտ նորա . են նմա և այլ աղբիւրք բարեբաստութեան , ոչ ինչ ընդհատ առատագեղք , և ոչ նուազ տեւականք : Արախի ինչ են մեծարանք հասարակաց , այն՝ որ անհրաժեշտ ցանկալին է որոց չիցենն այնմ անարժանք վկայութեամբ իսկ մտաց իւրեանց , և որ առաքինութեան և եթէ անկ , և վաղ կամ անագան հատուցանի նմա , և որ նուիրացն նորա փոխարէն է և զօրավիզն նմա յարկածս թշուառութեան : Արախի ինչ են մեծարանք մտաց իւրաքանչիւր , չքնաղագոյնն ՚ի շնորհաց պարգևելոց աղգի մարդկան , կարիք անախտականք սրտի բարւոյ , կարիք մեծազօր զգայուն սրտի , որ առանց նորա չմարթի բարեկամ գոլ անձին , և նովաւ մարթի շատանալ յանիրաւել այլոց և ՚ի ժխտել զվկայութիւն մտաց իւրեանց : Մ. յսպիսի ինչ է դարձեալ և սէրն այն սահմանեալ ՚ի վայելութիւն կենաց մերոց , զորոյ մնայ ինձ արդ տալ ընդ ազօտ զկերպարանս : Մ. յլ և աստ ոչ ինչ աւելի քան զլայտնի ճմարտութիւնս յաւելից ասել . զի որք չիցենն այնպիսի , և ոչ արդեօք օգտակարք իցեն :

Ի միում ուրեք ՚ի կղզեաց եգէական ծովուն , ՚ի ներքոյ հինաւուրց կաղամախեաց , նուիրեալ կայր երբեմն բազին բարեկամութեան . և բուրէր ՚ի նմա զտիւ և զգիշեր խունկ սուրբ և հա-

ճոյ աստուածուհւոյն : Ար ապա շուրջ պատեալ  
 'ի վարձկան երկրպագուաց , իբրև ոչ այլ ինչ տե-  
 սանէր 'ի սիրտս նոցա՝ բայց չարաշուք կնճիոն  
 զօշաքաղութեան , 'ի միում աւուրց ասէ ցմի 'ի  
 բարեկամաց Արեւեայ . Տար զնուէրսդ 'ի բաց ,  
 զի առ Ռախան և ոչ առ իս ուղերձեալ են : Այս  
 աթենացւոյ ումեմն , որ ուխտս մատուցանէր վասն  
 Սողոմոնի՝ բարեկամ նմա զանձն կոչելով , ետ հրա-  
 ման պատասխանուոյ . Ռաբեկամութեամբ ընդ  
 իմաստնոյն ինդրես փառակից զոչ նմա , և ծած-  
 կել զյոռութիւնս քո : Այս առ կանայս երկու սա-  
 մեցիս , որք առ բազնաւն նորա գիրկս արկանէին  
 միմեանց սիրով , ասէ . Ռաբեկամութեամբ 'ի վերոյ  
 'ի համբոյր եկեալ , սիրտք ձեր կեղեքեալ են  
 նախանձու , և ընդ հուպ կեղեքեսցին ատելու-  
 թեամբ :

Ռայց ապա իբրև Ռամոն և Փինտիաս սիրա-  
 կուսեցիք՝ վարժեալք յուսումն Պիւթագորայ՝  
 եկին երկիր պագանել նմա , ասէ ցնոսա . Ռնդունե-  
 լի է ինձ պաշտօն ձեր , և այսուհետև հրաժա-  
 բեմ 'ի բազնէս՝ զոր կարի ընդ երկար շաղախեցին  
 զոհք թնամանագիրք ինձ . ոչ և ս պէտք են ինձ  
 զոհից , բաց 'ի սրտից ձերոց : Արթայք ցուցէք  
 բնաւորին Սիրակուսայ , և աշխարհի , և յետ-  
 նոց առհասարակ , որչափ ինչ կարէ բարեկամու-  
 թիւն 'ի սիրտս վառեալ զօրութեամբ իմով :

Ի դառնալ նոցա անտի , զէպ եղև Ռիոնիսեայ  
 ամբաստանութեամբ լոկով զատապարտել զՓին-

տիաս 'ի մահ: Իսկ մահապարտն խնդրեաց պա-  
րայ, մինչև երթեալ 'ի քաղաք մի որ մերձ էր  
անդր՝ հրամանն տացէ վասն իրաց իւրոց կարևո-  
րաց. և խոստացեալ դառնալ ըստ ժամադրու-  
թեանն, մեկնեցաւ՝ թողեալ երաշխաւոր իւր  
զ՝) ամոն 'ի վտանգ մահու:

Արկարած գեցան իրք Փինտիասայ, և ժամա-  
նեաց օրհաս սպանու թեանն. ամբոխն խոնեալ,  
կէսք պարսաւէին զ՝) ամոն, և կէսք աւաղէին  
զնա. իսկ նա խաղաղութեամբ երթայր 'ի մահ,  
վտահ 'ի դարձ բարեկամին իւրոց, և յօժա-  
րագոյն ևս 'ի տալ զանձն փոխանակ նորա: Այս  
իբրև եկն եհաս ժամն դառնու թեան, ահա ամ-  
բոխ աղաղակի ազդ առնէր զգալուստ Փինտիայ,  
'Վիմեաց սրացաւ նա 'ի տեղի պատուհասին, մինչ  
չողայր սուսեր զգլխով բարեկամին. և զրկախառն  
արտասուակցորդք վիճէին ընդ միմեանս, յա-  
փըշտակելով յիրերաց զբախտ մեռանելոյ ընդ  
սիրելոյն: Կնդ որ տեսողացն ամենեցուն յար-  
տասուս հարեալ, և նոյն ինքն բռնաւորն վաղեալ  
յաթուոյն՝ խնդրեաց չքնաղ բարեկամութեանն  
նոցա լինել հաղորդ:

Յետ այսր տեսարանի, զոր 'ի տիպս բոցեղէնս  
պարտ էր նկարագրել, աւելորդ ինձ թուի յա-  
մել 'ի բանս գովեսից բարեկամութեան, և նպաս-  
տից՝ զոր կարող է նա մատուցանել յամենայն  
պայմանս և յամենայն դէպս կենաց՝:

1. Քսենոփ. յիշատ. գիրք Բ. էջ 746: Արիստոտ. յը-  
բարոյ. գիրք Ը. դԼ. 1. հա. 2. էջ 101:

Արք միանգամ զսիրոյս զայսմանն է խօսին, գրե-  
թէ ամենեքին այլ ընդ այլոյ առնուն զսա ընդ  
պատահական սիրելու թիւս կցորդեալս առօրին՝ ,  
Յեռանդն դեռահաւակ կցորդութեանցս այսոցիկ  
այնպիսիք թուին բարեկամք՝ որպիսիք ենն ցան-  
կալիք , այլ ապա ընդ հուպ որ ինչ ենն երևին՝ ,  
Վարձեալ և այլ ընտրութիւնք ոչ ինչ առաւել  
յաջողէն , մինչև լուծանել բարեկամութեանն  
'ի սպառ , և կամ որ ոչ ինչ ընդհատն է յայնմա-  
նէ՝ այլ յայլմէ փոխել անդադար՝ : Այս քանզի  
սովորութիւն է մարդկան առհասարակ զառա-  
ւելագոյն մասն կենաց իւրեանց անխորհրդաբար  
կեալ , և զսակաւ զայն մասն յորում խորհինն՝  
յայլս մանաւանդ քան յանձինս իւրեանց խոր-  
հել , չգիտեն իսկ գրեթէ բնաւ որպիսի ինչ սի-  
րելութիւնքն այնոքիկ իցեն՝ որովք կցորդինն ընդ  
միմեանս : Այժմէ արխանային հարցանել զանձինս  
զխուռն բազմութենէ կարծեցելոց բարեկամացն՝  
յորոց երբեմն շուրջ պատին , 'ի միտ առնուին զի  
ոչ այլ ազգ կցորդին նոքա ընդ իւրեանս՝ բայց 'ի  
վերին երեսս : Այս խելամոռութիւն կարելիք  
հարկանէր զնոսա 'ի սիրտ , զի առ ինչ իցէ կեալ  
առանց բարեկամի՝ . այլ խրատէին այնուհետև  
առնել ընտրութիւն , զի մի ևս լինէր նոյն ամաչել :

1 Արխանայ . յղ . բարոյ .

1 . էջ 30 :

Գրեթէ Ը . ԳԼ . 4 . էջ 104 :

4 Արխանայ . յղ . բարոյ .

2 Նոյն անդ , Գրեթէ Թ . ԳԼ .

Գրեթէ Ը . ԳԼ . 1 . հտ . 2 . էջ

3 ի էջ 118 :

101 :

5 Իսակար . առ Դեմոն . հտ .

Հանձար, աջողութիւնք մտաց, ախորժակք արուեստից, և չքնաղ բարեմանութիւնք ախորժելի են յոյժ 'ի կցորդութիւն կենաց. և շուք և կենդանութիւն ընծայեն բարեկամութեան՝ յետ կերպարաներոյ նորա, այլ երկարաձգել զայն ոչ կարեն: Բարեկամութեան չիք ուրեք հաստատութիւն՝ բայց 'ի սէր առաքինութեան՝, 'ի համբոյր բարս, 'ի համախոհութիւն մտաց, և 'ի յօժարութիւն իմն կանխեալ քան զմտածութիւն և հաստատեալ ապա 'ի մտաց: Ամենք զորս մարթէ ինձ տալ քեզ առ այս, ոչ այնչափ օգնեն առ անսխալ ընտրութիւն, որչափ խախտեն զսխալականն:

Վրեժէ անհնարին է բարեկամութեան առնուլ հաստատութիւն 'ի մէջ տարակարգ և անհամեմատ ընդ միմեանս մարդկան: (1) Կազաւորք կարի բարձունք են, և չիք նոցա բարեկամ. իսկ որք զթագաւորօքն կան՝ ոստիս և եթ առ իւրեանս տեսանեն, և փաղաքուշս 'ի վայր քան զիւրեանս: Սովոր են մարդիկ ընտրել իւրեանց բարեկամս 'ի խոնարհագունից, վստահագոյնք արդեօք 'ի զիջումն նոցա, և կամ յուսացեալ՝ առաւելագոյն 'ի նոցանէ գտանել սէր: (2) Բանջի բարեկամութիւն զամենայն ինչ առնէ հասարակաց և

1 Պղտտ. թուղթ 7. հա. էջ 103:  
 6. էջ 332. Բսկնոփ. յիշատ. 2 Արիստոտ. անդ. 4Լ. 9.  
 7Իբք Բ. էջ 731. Արիստոտ. էջ 108:  
 3Լ. Բարոյ. 7Իբք Բ. 7Լ. 4. 5 'Աոյն անդ, 4Լ. 9 և 10:

պահանջէ՛ հաստատութիւն, խնդրեցես զուքեղ բարեկամն ոչ զեր 'ի վերոյս քան զքեզ և ոչ կարի 'ի խոնարհ՛ :

Յաճախեցիր 'ի փորձ մինչև մաերմացեալ ընդ մարդկան, որոց նոյն խնդիր աւագութեան, փառաց և մեծութեանց է՛ : Անհարին ճգանց պէտք են, զի սիրելութիւնք՝ որ միշտ 'ի վտանգ նախանձու կան՝ կարացեն երկարատեւել . և չէ պարտ վտահանալ մեզ յառաքինութիւնս անձանց, և հաստատել զբարեբաստութիւն մեր յանդադար պատերազմունս և 'ի յաղթութիւնս :

Ասկածեսցիր զկարի իմն փութոյ և զյաճախաւոր խոստմանց . զի բոլսն յաղբերէ ստութեան, որ սարսուցանէ զճշմարտաւէր ոգիս : Ազգիւնդ չիցեն այնոքիկ կեղակարծք 'ի յաջողութեան, որք և 'ի թշուառութեան իսկ կասկածելիք են : Օ՛ր բազում այն են, որ 'ի վերին երեսս կարեկից լինին թշուառաց՝ առ 'ի գտանել մուտս առ բարեբաստիկս :

Ասկածեսցիր և ընդ տիպս բարեկամութեան, զոր երբէք երբէք յանձին բերէ սիրտ՝ անարժան այնմ : Անութիւնն խառն 'ի խուռն իմն և ներհակս ընծայէ աչաց վեր 'ի վերոյ . այլ 'ի նո-

1 Պիւթադ . առ Դիոդ . Բ . էջ 76 : Արիստոս . յԷ . լայերտ . գիրք Ը . յօդ . 10 : Ճարտ . գիրք Բ . դԼ . 10 . էջ Պլատ . յԷ . օր . գիրք Զ . հա . 362 :

2 . էջ 757 :

3 Արիստոս . Եւգեմ . գիրք

2 . Քսենոփ . յիշատ . գիրք Է . դԼ . 1 . հա . 2 . էջ 270 :

ցունց յառաջ ածէ օգուտս մեծամեծս : Վ սիրտ  
ընկղմեալ յանիրաւութիւն , տեսցես նշոյլս ար-  
դարութեան փայլեալ , 'ի միտս մասնեալս յա-  
ճախ 'ի ցնորս՝ նշոյլս իմաստութեան , և 'ի բարս  
խիստս և անհամբոյրս՝ նշոյլս մարդասիրութեան :  
Մասունքս այսոքիկ առսքինութեանց , հատեալք  
յարմատոց իւրեանց , և խառնեալք ճարտարու-  
թեամբ ընդ յոռութիւնս , բողոքեն անդադար  
առ կարգն՝ զոր բերեն միշտ ընդ իւրեանս : Վ բա-  
րեկամութեան խնդրի , ոչ եռանդն երեւակայու-  
թեան՝ որ ընդ ծնանեւն ծերանայ՝ , այլ եռանդն  
սրտի յարատե . որպէս զի ուր երկար փորձք՝ ա-  
ռուել ևս արծարծանիցեն զայն և ազդողագոյն  
յարդարեսցեն , անդ յաջողեալ է ընտրութիւնն ,  
և 'ի միւս այլ ինքն սկսանիցի ոք կեալ :

Վ յուհետե նուազեն չարիք՝ զոր կրեմքս , և  
բարիք յոր վայելեմքս՝ յաճախեն<sup>1</sup> : Հայեաց 'ի  
վշտակիր ոք , և տես ժողովեալ զնովաւ սիոփիչս՝  
զորս սպառչաճքն ականայ ձգեն անդր . քանի՛ բըռ-  
նազբօս կերպարանք են նոցա , քանի՛ կեղծաւոր  
բարբառք : Վ յլ արտասուք , և բարբառ կամ  
լուռութիւն կարեկցութեան սիոփեն զվշտակիրն :  
Վ արձեալ և 'ի հակառակէն առ երկուս ոմանս ,  
որ ճմարխտ բարեկամք իցեն , 'ի գաղտագողօնս

<sup>1</sup> Եւրեպիդ. 'ի հերակլ . սող 104 :  
1223 :

<sup>3</sup> Քսենոփ . յշատ . գիրք

<sup>2</sup> Արիստոս . յլ . բարոյ . Բ . էջ 747 :

Գիրք Ը . ԳԼ . 4 . հա . 2 . էջ



Համարի զանխուլ 'ի միմեանց վայելել 'ի բերկրանս . և իբրև Հասանէ նոցա Հարկն այն նախկին բարբառ սրտի նոցա է աւաղել զտարակայու թիւն բարեկամին , որ կցորդու թեամբ բերկրութեան իւրեանց՝ ազգողագոյն ևս և տպաւորագոյն գործէր զայն : Ա՛յսպէս և ոչ աւաղութեանց և ոչ փառաց պարտ է ախորժեղի լինել մեզ , բայց այնու զի զարդարութիւն մեծարանաց բարեկամացն մերոց յայտ առնեն :

Այն նոցա և ազնուականագոյն իմն արգասիք , հրահանգել և պատուել զմեզ առաքինութիւնք իւրեանց : Օ՛րի եթէ արդարև յաճախելով որ ընդ առաքինիս՝ լինի առաքինի՝ , որպիսի նախանձ , որպիսի զօրութիւն ոչ ազգեսցեն 'ի մեզ օրինակքն ցանկալիք . զոր բերկրանս ոչ յանձին բերիցեն 'ի տեսանել զի ընդ շաւիղսնոցա գնամք . և քանի հրճուանս և գորով չյաճախեսցեն 'ի մեզ , յորժամ զարմանալի ամենեցուն վարուքն իւրեանց կացցեն՝ :

Իսկ որք բարեկամութիւն ընդ ամենայն մարդկան կամիցին առնել , ոչ ումք են բարեկամ , այլ սիրելի և եթ ամենեցուն ջանան լինել՝ : Այրանելի լիցիս , եթէ իցեն քեզ սակաւք ոմանք բարեկամք՝ , մանաւանդ թէ և մի որ բարեկամ , ե-

1 Գեոգն . առ Արիստոտ . 3 Արիստոտ . յղ . բարոյ . յղ . բարոյ . Գերբ Թ . ԳԼ . 9 . Գերբ Թ . ԳԼ . 10 . էջ 127 :  
 2 Քսենոփ . յԷրաս . Գերբ Բ . ԳԼ . 16 . էջ 194 :  
 3 Էջ 126 :  
 4 Նոյն աւագ բարոյ . Գերբ Բ . էջ 753 :

Թէ՛ ՚ի գեղեցիկ կցորդու թէնէ՛ անտի խնդրիցես զամենայն բարեմասնու թիւնս՝ որ անկէն նմա՛ :

Եւ թէ՛ զամենայն խնդիրս իմաստասիրաց զւարեկամու թէնէ՛ առաջի առնէր որ ինձ՝, և խնդրէր կանոնս առ ՚ի գիտել զպարտս բարեկամու թէան և առ ՚ի մշտնջենաւորել զայն, ասէ՛ի . Վաջ ընտրեա, և ասպա վտաահ լեր յիղձս քո և յիղձս բարեկամիդ քո . զի արագագոյնք էն և պարզագոյնք վճիւթ սրտի քան զմտաց :

Սաղու ևս արդեօք սպականեալ էին բարբազգին, որ իշխեացն ասել . Սիրեա զբարեկամ քո, որպէս թէ՛ առաջի կայցէ քեզ ատել զնա՛ : Եւ մնատ դժնգակ, ընդ որում ՚ի դէպ է փոխանա կէլ զսփոթելին և թերևս զերիցագոյնն քան զայն . Մտեա զթնամիս քո, որպէս թէ՛ առաջի կայցէ քեզ սիրել զնոսա՛ :

Եւ մի՛ որ համարիցի, թէ՛ բարեկամու թիւն ՚ի սահման անդր ածեալ՝ լիցի ՚ի տանջանս, զի շատ խկէն իւրաքանչիւր վիշտք մեր առանց վշտակից գոլոյ այլոց : Օ՛ի որ յարգասեաց սիրելու թէանն այնորիկ զանգիտէ, տպէտ է այնմ . այլոց ըղձից կցորդ էն տանջանք, խկ բարեկամու .

1 Արիստոս . յԼ . բարոյ . 4երբ Ը . 4Լ . 7 . էջ 106 :

2 Նոյն անդ . 4Լ . 2 . էջ 102 : Նոյն աւագ բարոյ . 4երբ Բ . 4Լ . 11 . էջ 187 :

3 Սոփոկլ . 1 . աս . տող 690 : Կիկեր . յԼ . բարեկամ . 4Լ . 16 :

հա . 3 . էջ 341 : Աւ . Գեւ . 4երբ ԺԵ . 4Լ . 14 :

4 Զեւեւ . առ Գեոդ . 4երբ ԺԲ . էջ 85 : Արիստոս . յԼ . ճորտ . 4երբ Բ . 4Լ . 21 . էջ 572 :

Թեան են վիշաք՝ որ ամրագոյն ևս հարստեն զգօղ նորա : Օ ի եթէ մահ . . . Եւ թողցուք անդր զարտմարիս . մանաւանդ ՚ի ճահ առեալ զայնս , խելամուտ լիցուք ճշմարտութեանցս այսոցիկ կարևորաց . զի պարտ է մեզ ՚ի կենդանութեան բարեկամաց մերոց բերել զկարծիս՝ զոր ՚ի մահուն նոցա մնայ մեզ բերել : Եւ զի դարձեալ , որ առաջնունն զհետ գնայ , պարտ է մեզ յիշել զնոսա ոչ միայն յորժամ ՚ի բացեայ իցեն , այլ և յորժամ մերձ կայցեն :

Սուլաւ զթերահոգութիւն մերժեսցուք ՚ի բաց զծնօղն կասկածանաց և երկիր զի . սուլաւ անցցեն անխռով վայրկեանքն բարբառսք , գեղեցկագոյնք ՚ի կեանս մեր , յորս սիրտք մեր ակներևք գիտեն մեծարգել զխուն ինչ ինսամս , և յորս լուութիւնն իսկ յայտ առնէ՝ զի մարթ է սրտից մերձաւորութեամբ և եթ միմեանց գոլ բարբառստ : Բանդի լուութիւնն այն ոչ անախորժ ինչ . և ոչ զտաղտուկ ածէ . կան անբարբառ , այլ կան ՚ի միասին :

Եւ և այլ զօղք կցորդեալք հանապազօր ՚ի ժողով մարդկան , որոց օգուտ իսկ է յաճախութիւն . որպէս որք ՚ի յարգ և յախորժակս հաստատին : Օ ի թէպէտ և ոչ նոյն առաւելութիւնք բարեկամութեան են սոցա , այլ հզօր զօրաւիզն լինին մեզ ՚ի տանել զլեւն կենացս :

Եւ արինութիւն քո մի զրկեսցէ զքեզ ՚ի պատշաճ բերկրութեանց վայելչականաց հասակի քո

և հանգամանաց կենացդ : Եմաստուածիւն անդ է սիրելի և հաստատուն, ուր բարեխառնի ընդ սփոփանա՝ զոր ներէ անձին, և ընդ սպարտս՝ զոր հրամայէ իւր :

Եթէ 'ի հնարս, զորս ասացի, յաւելցես և զյոյս՝ որ և 'ի վշտակրուածիւնս մեր 'ի ներքս խառնի, 'ի միտ առցես, ո՛վ Ելևսիս, զի բնուածիւնն ոչ այնպէս խօտիւ վարի ընդ մեզ՝ որպէս ամբաստանեմքն զնա : Ել գու մի այլ ինչ զամենայն զբանս իմ զայստիկ համարեցիս, բայց մեկնուածիւն վճռոյն . Երդ 'ի սիրտ իւր սահմանի, և անդ գտցէ զհանգիստ իւր և զբարեբաստուածիւն :

### ԳՒՍՈՒԽ ՏԹԻ .

Դարձեալ 'ի Դեզոս վեճարանուածիւն զերօնից :

ԴԵՄՈՓՈՆ, որպէս ասացի, 'ի վերայ հասեալ խափանեաց զճառս Փիլոկղեայ : Տեսաք մեք զնա 'ի հեռուս, զի խօսէր ընդ իմաստասիրի ումեմն յեղէական աղանդոյն . և 'ի նմանէ տեղեկացեալ վասն որոյ իրաց ճառս արկանէաք, եհաս առ մեզ և ասէ . Ե 'ի այլ ուստեք իւրաքանչիւրոք ակն կայցի բարեբաստուածեան, բայց յանձնէ : Եին և ինձ երբեմն երկբայք, այլ արդ լուսացաւ ինձ ամենայն : Գիտացի, զի ոչ գոն դիք . կամ թէ գուցեն իսկ, զստորայնոցս չէ ինչ նոցա փոյթ :

Պատասխանի ետ Փիլոկղէս և ասէ . Ս'ի որդեակ , տեսի զբազումս 'ի տիս քո զառաժեալ 'ի մոլորութիւնդ յայդ , որք սպա հերբեցին զայդ՝ յորժամ ոչ ևս ցանկալի էր նոցա այդմ այդպէս գոլ՝ : Նայց Վեմոփոն վիճեալ սնդէր չհրաժարել 'ի սպառ 'ի խորհրդոցն , և բանիւք բազմօք զպաշտամունս կրօնից ցուցանէր անտեղի . անգոսնելով արհամարհանօք զտղիտութիւն ժողովրդոց , և ծաղր առնելով զխաբէութի մտաց մերոց՝ : Արբեհնեալ անդրէն Փիլոկղեայ , ասէ . Այս ինձ որդեակչէն ինչ մեզ աստ խնդիրք պարծանաց , և ընդէր յամօթ առնես զմեզ : Աթէ մոլորեալ իցեմք , պարտ է քեզ խելամուտ առնել զմեզ կամ աւաղել . զի ճմարիտ իմաստասիրութիւն հեզ է և գթած , և մանաւանդ ցածուն : Այսուեաց համարձակ , զինչ 'ի բերանոյ նորա ուսուսցես մեզ :

Վեմոփոն ասէ . Օայն իսկ , զի բնութիւն և դէպք կազմեցին զտիեզերս , և քաղաքավարութիւն օրէնսդրաց կացոյց զժողովս մարդկան ընդ օրինօք՝ : Վաղտնիքս այսոքիկ յայտնեցան այժմիկ :

Փիլոկղէս . Թուի թէ պարծանս քեզ զիրսդ համարիցիս :

Վեմոփոն . Այս կարի իսկ քաջ :

Փիլոկղէս . Չհաւատալի ինձ այդ . զի թէպէտ և

1 Պատմ . յղ . օր . գիրք ժ .  
հտ . 2 . էջ 888 :

2 Նոյն անդ . էջ 888 :  
3 Նոյն անդ . էջ 889 :

անօրինացն խիղճ՝ մտաց խաղաղացին դովաւ ,  
այլ առն բարւոյ չիցէ մարթ անվիշտ ընդ իրաց  
լինել :

Վէճո՞քն . Վ. զինչ կորուսանիցէ նովաւ :

Վիւ՞նչէս . Վ. թէ գտանէր ուրեք ազգ աստուած-  
անգէտ , և այլազգւոյ ուրուք մտեալ 'ի ժողով  
անդր նորա , ասէր . Վուք աւագիկ զարմանայք  
ընդ սքանչելիս տիեզերաց , անգէտք արարչին .  
այլ գիտասջիք , զի դոքա արարածք են գերիմաց  
էին՝ որ սաճսանէ զգոսա , և խնամէ զձեզ հայ-  
րաբար : Վուք զառաքինութիւնս անցայտս հա-  
մարիք ընդունայն , և զյանցանս որ անպատիժ  
մնան՝ ներելիս . այլ գիտասջիք , զի գոյ դատա-  
ւոր աներևոյթ և անսեկնելի 'ի մէնջ , և որ ինչ  
անվարձ և անպատու հաս մնան առ մարդիկ՝ ոչ  
անտես լինին 'ի նմանէ : Վուք զգոյութիւն ձեր  
սահմանէք 'ի սակաւ ինչ վայրկեանս՝ որ անցա-  
նեն 'ի վերայ երկրի , և արհաւրօք սրտի զվախ-  
ձան նոցա նկատէք . այլ գիտասջիք , զի օթեանք  
փափկութեան և տանջանաց մնան յետ մահու  
առաքինեաց և չարագործաց : Օխորդ թուի  
քեզ , Վեմոփան , ոչ ապաքէն լաւք 'ի նոցանէ խո-  
նարհեալ առաջի նորաձայն օրէնսդրին՝ ընդու-  
նէին մտադիւրագոյն զվարդապետութիւնս նորա ,  
և դառն թուէր նոցա՝ եթէ սախլէին հրաժա-  
րել 'ի յուսոյ անտի :

Վէճո՞քն . Վ. յնչափ թուէր նոցա դառն , որ-  
չափ զարթուցեցոց երազք ախորժելիք :

Փիլիշէն . Մ. յդպէս իցէ : Մ. յԼ 'ի փարատել  
քո զերազն զայն՝ ոչ ապաքէն ստգտանելի լինելի ,  
բաւնալով 'ի վշտացելոցն զվրիպակ կարծիան՝ ու  
րով սփոփէրն 'ի վիշտս իւր . ոչ և ինքն իսկ բո-  
ղոքէր , անպատասպար մնալով ընդդէմ՝ Հարուածոց  
բախտին և չարութեան մարդկան :

Դ. Ե. Դ. Դ. Դ. Մ. յԼ ամբառնայի զսիրտ նորա , ըզ-  
միտան զօրացուցանելով : Խեղամուտ առնէի զնա ,  
զի ճշմարիտ արիութիւն այն է , մասն և տուր լի-  
նել յանդգնաբար բախտին :

Փիլիշէն . Խ նորանշան սփոփումն , զոչէր նա .  
կաշկանդեալ կամ շղթայիւք 'ի ժայռ Պրովե-  
թեայ , և 'ի կեղեքել անգեղ զընդերս իմ՝ խրա-  
տիմ չհեծել : Բաբէ . եթէ ձեռն որ հարկանէ  
զիս վշտօք՝ չիցէ ինձ սիրելի և պաշտելի , խաղալիկ  
այնուհետև համարեցայց զիս բախտին և այսն  
կատականաց բնութեան . () 'ի գէթ որդն անարգ  
'ի վշտակրելն ոչ կորանայ ընդ յաղթանակաւ  
թնամեայն , և ոչ ընդ ոտնհարութիւն տկարու-  
թեան իւրոյ կրէ զամօթ : Մ. յԼ ինձ զվիշտս՝ զոր  
ընդ նմա կրեմ , անողորմագոյն քան զամենայն  
միտք իմ դառնացուցանեն տեսութեամբ հան-  
դերձելոցն , և համեմատութեամբ կենաց իմոց  
ընդ այլոցն :

Իմաստասիրութիւնն , զոր դու թանձրամու-  
թի՛ համարիս , գիտիցես քանի՛ նուազ առնէ զողբս  
իմ՝ ուսուցանելով զի ոչ ինչ 'ի վերայ երկրի պա-  
տահէ առանց հրամանի կամ ներելոյ գերաբուն

էին՝ Օ ի թէպէտ և ոչ զիտիցեմ թէ ընդէր նշաւակ զիս հարուածոցն իւրոց եղ, այլ զի որ վշտացուցանէն զիս՝ նոյն և արարիչ կենաց իմոց է, յուսալի էինձ զի քաղցրացուցէ զգաւնութիւնս իմ զայս ՚ի կեանս կամ ՚ի մահու՝: Օ ի զի արդ մարթի ընդ իշխանութեամբ արդարագունին ՚ի տերանց լինել յուսապատար և թշուառ: Ընդէ ասա ինձ, սիլ Ղեմուիոն, ոչ անգթութիւն համարիցիս առ բողոքս տառապելոցն ոչ այլ ինչ ՚ի դէմն ածել՝ բայց արհամարհանս թշնամանալիցս և զծաղր անկարեկիր:

Ղեմուիոն. Օ իմաստասիրացն ՚ի դէմն ածից նոցա զօրինակ, որք յանձն առին զատելութիւն մարդկան և զքաւորութիւն և զաքսորանս և զամենայն ազգի ազգի հալածանս, և ոչ մատն եղէն ճմարտութեան:

Փիլիղէս. Երբա ՚ի լոյս տուրնջեան ՚ի թատր մեծ, յանդիման աշխարհի և յետնոց նահատակէին. և քաջ խրախուսէր զնոսա տեսարանն՝: Եւ որ հեծէն ՚ի խաւարի և ողբայ անտես, զնա գործ է քաջալերել:

Ղեմուիոն. Հաւանիմ ներել, զոր կամիադ, վատասրտաց ՚ի քաջալերութիւն:

Փիլիղէս. Երբա կարօտին այնմ և առ ՚ի դիմամարտել ախտից իւրեանց:

1 Թէոգն. ՎՃԻՌ, տող 165: յղ. օր. գիրք Ե. էջ 732: 1

2 Պղատ. յղ. հաս. գիրք 3 նոյն. յղ. հաս. գիրք Ժ. հաս. 2. էջ 613: նոյն. Ժ. էջ 604:



Պէտք է, իցէ և այդ քայց այր քաջասիրտ, առանց երկիւղի դից և գովութեան մարդկան, կարող է համբերել դժնդակաց ճակատագրին, և զխտակրօն առաքինութեան բերել յանձին զվիշտս տաժանակիրս :

Փիլիշէ . Հաւանիս ուրեմն, զի խաբէութիք մտաց մերոց կարևոր են առաւելագունից ՚ի մարդկանէ, և ՚ի մասինդ յայդմիկ գտանիս օրէնսդրաց ամենեցուն համախոհ՝ : Տեսցուք արդ զի ոչ արդեօք կարևոր իցէ և քաջայն բարեմասին հասելոց, որ յառաքինութիւնս և եթ իւրեանց անպարտելի յուսան գտանել զօրութիւն : Այլ դու արդեօք ընդ նոսա ՚ի համարի իցես . և զի պարտ է քեզ քոյոց բանիցդ դալ զՏեա, համեմատեսցուք նախ զվարդապետութիւնս մեր ընդ քոյսդ :

Սեք ասեմք, զի են ՚ի վերայ մարդկան օրէնք երկիցազոյնք քան զամենայն սահմանադրութիւնս մարդկան՝ : Այլ օրէնքս այտօքիկ յառաջ ածեալք ՚ի մտաց, որ հաստեալ և պահպանեն զտիեզերս, են պարտք մեր առ նոյն ինքն և առ նմանիս մեր : Այլ որ անիրաւին՝ լուծանէ զօրէնս զայսոսիկ, և ապստամբէ ՚ի միաբանութենէ և ՚ի հաստողէն զկարգն՝ որ զմիաբանութիւնն զայն պինդ ունի : Իսկ դու զհակառակն այսոցիկ ուսուցանես,

1 Խաղտոգ . յղ . հաս . առ  
Ստոր . գիրք ԽԼ . էջ 250 .  
Երմիայ . առ Պորփիր . յղ .  
ժուժկալ . գիրք Դ . յօդ . 22 :

2 Քսենոփ . յիշատ . գիրք  
Դ . էջ 807 : Արիստոս . բա .  
բոյ . աւագ . գիրք Ա . գլ . 34 :

զի ոչ այլ ինչ զիտու թիւն ապաւորեալ է ՚ի սիրտս մեր ՚ի բնութենէ, բայց յիրաւանց հզօրագունին՝ իսկ զիտիր զանազանութեան արդարոյն յանիրաւէ և լաւին ՚ի չարէ ոչ բնութեան, այլ գրական օրինաց սահմանեալ է: Վործք մեր ոչ բարի և ոչ չարք են ՚ի բնէ, այլ լինին այնպիսիք կամայական գրիւ մարդկան՝:

Ըրդ մատիցուք երկաքանչիւր ըստ հաւատոցս մերոց ՚ի գործ. և համարեսցուք հասեալ մեզ գէսս, յորում առաքինութիւն շուրջ պատեալ ՚ի հրապուրանաց՝ ստիպի զամենայն զօրութիւնս իւր ՚ի կիր արկանել: Եստի փառք, մեծութիւնք, համբաւ և ազգի ազգի պատիւք, և անտի վտանգ կենաց, կարօտութիւն ընտանեաց, և նախատինք յաւերժականք առաջի կան: Ենտրեա արդ, ո՛վ Վեմոփոն. զի գործ մի անիրաւ, և ոչ այլ ինչ ինդրի ՚ի քէն: Եւ զիտեա, զի գիւղեան մատանեաւ սպառազինեսցիս անտեսանելի՝. զի պատճառ և կցորդ անիրաւութեանդ յոյժ առաւել քան ըզքեզ լիցի ՚ի ինդիր ծածկութեան իրացն ՚ի սպառ: Եայց ՚ի յայտնել ևս այնց, ուստի իցէ քեզ երկիւղ. յօրինաց, այլ հարկ լիցի նոցա լուել. ՚ի դատաստանէ՞ հասարակաց, այլ զայն զիմադարձութեամբ մանաւանդ ոսոխ ընդդէմքո ձգեսցես:

1 Ա՛ Պղատ . յղ . օր . հո . բառն Տօպօ .

2 . էջ 890 .

3 Պղատ . յղ . հոս . գիրք

2 Թեոզ . առ լայերա . գիրք ժ . էջ 612 :

Բ . յօդ . 99 : Ա՛ Սուիդ . ՚ի

'ի կապանաց միաբանութեան մարդկան, այլ նոքա ինքնին խզեն զայն 'ի մասնել զքեզ 'ի հալածանա հզօրին . 'ի խզալ մասաց բոց , այլ այն կանխակալ կարծիք տղայութեան փարատեսցին 'ի բաց՝ յածել քո զմտաւ զիմաստ մատենագրացդ ձերոց և զքաղաքավարաց , զի ըստ արդասեայն և եթ օգտակարաց դատելի են արդարն և անիրաւ :

ՎԵՏՆԻՆ . Պատճառք ազնուականագոյնք հրաժարեցուսցեն զիս յանիրաւութենէ . սէր բարեկարգութեան , գեղ առաքինութեան և վարկ անձին :

ՓԻԼԻՂԷՍ . Եթէ պատճառքդ այդոքիկ չիցեն գերաբնաբարկազգութեալ գիտիցեսքանի վտանգ է տկար եղեգանց բեկանելոյ ընդ ձեռամբն՝ որ յենու 'ի նոսա : Ստղ անդր 'ի բաց . կարծիցես անլուծանելի զըթայս՝ զորս քեզէն դարբնեալ , և զբանալին և ս առ քեզ ունիցիս : Փոխանակիցես ընդ ցնորից մտաց և ընդ կամահաճոյ խնայտից զկեանս քո և զամենայն ցանկալիս : Ի նուաստութիւնդ յայդ իջեալ , ստուերդ , և հող և մոխիր , և որդն անարգ , ընդ որոյլ յայդցանէ կերպարանաւ համարիցիս ինչ զառաքինութիւնս քո , կամ պիտոյ զվարկ անձին , և կամ զկարգ տիեզերաց 'ի քո կամն հաստատեալ Խաբիս , զու ոչ կարիցես մեծացուցանել զօջինչն ամբարտաւանութեամբ . չմարթի ճշմարիտ սիրոյ արդարու :

1 իւտանդր , առ Պլուտ . առակ . լակոն . հտ . 2 . էջ 229 :

Թեան փոխանակել ընդ յեղյեղուկ նախան-  
ձայուղուԹեան . և օրէնք մեծասաստ , որ հար-  
կաւորեն զանբանս նախամեծար առնել զպահ-  
պանուԹիւն կենաց իւրեանց քան զտիեզերս առ-  
հասարակ , ոչ խափանեցին և ոչ տեղի երբէք  
տայցեն՝ եԹէ ոչ սաստկագոյն ևս օրինաց :

Իսկ առ մեզ ոչ երբէք արդարացի անկեալն .  
զի պարտք մեր չեն հակառակք ճշմարիտ մերոյ  
օգտիս : ԱԹէ նուաստուԹիւն 'ի խորս երկրի  
ծածկեցէ զմեզ , կամ Թէ զօրուԹի՛ յերկինս 'ի  
վեր ամբարձցէ զմեզ՝ , շուրջ պատիւք յերեսաց  
դատաւորին՝ որ տեսանէ զգործս մեր և զխոր-  
հուրդս՝ , և 'ի նմանէ առնու կարգ զհաստատու-  
Թիւն , առաքինուԹիւն զյանկուցիչ հզօր զօրու-  
Թիւնն , մարդ զիսկապէս փառան , և անձն յար-  
գուԹիւն նորս պատճառս օրինաւորս : Պաշտելի  
ինձ օրէնք դրականք , զի յառաջ բղխեն 'ի բնա-  
կանացն՝ զորս աստուած տպաւորեաց 'ի սիրտ իմ .  
ցանկալի ինձ հաւանուԹիւն մարդկան , զի և նու-  
քա իբրև զիս բերեն 'ի միտս իւրեանց զնոյլ  
լուսոյ նորս , և 'ի սրտի զբողբոջս առաքինուԹեց՝  
զորոց ազգէ նա 'ի նոսին զիղձս . և զարհուրելի  
ինձ խիղճ մտաց , զի մղէ զիս 'ի բարձրուԹենէ՝  
յոր գերակայիմն համակամուԹեամբ ընդ նմա :  
Աւահա ամենայն կշռորդք կամացդ , որ յետս  
ձգեն զքեզ 'ի վախիցն դահավիժուԹենէ , նոյնք

1 Պատմ . յղ . Կր . գիրք Ժ .  
հտ . 2 . էջ 908 :

2 Քսենոփ . յիշատ . գիրք  
Ա . էջ 728 :

և ինձ հասարակաց են . և ՚ի վերայ այնոցիկ է ինձ զօրութիւն գերագոյն, որ ուժգին ևս յաւելու ՚ի նոսա գիմակալութիւն :

Պէ՛տքն . Տեսի ես արս վերջացեալս յամենայն հաւատոց, որ մինչև ՚ի սպառ բերին յանձինս զուղղութիւն կենաց և զլաւութիւն անբաւգտանելի <sup>1</sup> :

Փիլի՛ղի . Եւ ես բազմագոյնս ևս տեսի, որ հանդերձ հաւատովքն՝ եղեն մինչև ՚ի սպառ ապիրատք : Իսկ այն զի՛ առնէ . երկաքանչիւր հակառակ իւրեանց մտացն, մին զբարի և միւսն ըղչար զործեն . և ոչ անտեղութիւնքս այտօրիկ իցեն մեզ կանոնք : Օ՛ ՚ի աստանօր խնդիրք են, եթէ արդեօք առաքինութիւն հաստատեալ յօրէնս՝ զոր միտք յերկնից հաւատայցեն իջեալ չիցէ՛ յստակագոյն և հաստատագոյն, և առաւել յորդորական և զիւրին, քան զառաքինութի հաստատեալ ՚ի յեղյեղուկ կարծիս և եթ մարդկան :

Պէ՛տքն . Եւ ես արդ քեզ հարցանեմ՝ կարիցեն ողջամիտ օրէնք բարոյականին միաբանել երբէք ընդ կրօնս՝ որ յեղծումն բարուց նկրտին . և շեղակոյտ անիրաւ և անողորմ՝ զից չիցեն այլանդակագոյն քան զամենայն ցնորս բանդագուշանաց մարդկան : Մեք ասեմք թէ՛ ոչ գոն զիք, դուք ախտս ամօթապարտս ածէք զնորօք, ամպարշտագոյնք քան զմեզ <sup>2</sup> :

<sup>1</sup> Պղատ . յղ . օր . գիրք ժ . հտ . 2 . էջ 908 :

<sup>2</sup> Պղուտ . յղ . աւելորդապաշտ . հտ . 2 . էջ 169 :

Փիլիշէս . Վիրս այսօրիկ ձեռագործք մեր են ,  
 ընդ ախարք մերովք զբաւեարք . և մեք ծան-  
 րացասումն ևս քան զձեզ զչարիւնք ընդ յուռ-  
 թիւնս ամեալս զնորօք : Վ՝ յԼ եթէ յաջողէր մեզ  
 սրբել զկրօնս 'ի զրահեղեղ սբաշտամանց՝ որ ա-  
 պականեն զայն , սատրաստագոյն գտանելիր 'ի  
 մատուցանել աստուածութե՛զ զսարտական սբաշ-  
 տօնն :

ՎԵՏՈՒՄ . Յից ինձ եթէ գոյ աստուած . և  
 զի խնամ ունի զմէնջ , և երկիր սագից նմա :

Փիլիշէս . Վ՝ եզ անկ է ցուցանել՝ թէ ոչ գոյ  
 աստուած , զի դու հերքես զհաւատս՝ զոր ազգք  
 և ազնւք 'ի սկզբանէ ժամանակաց և այսր կա-  
 լան : Իսկ ես խափանել և եթ կամէի զճաղը և  
 զթշնամանս քո , որովք հասերն 'ի վերայ մեր . և  
 բաղդատեցի զվարդապետութիւն քո ընդ մերս ,  
 որպէս օրէն է զխնաստասիրացն համեմատել զա-  
 ղանդս : Եւ արդ ըստ այսմ՝ համեմատութեան  
 հարկ է ասել , զի որովհետև ըստ ձերոյ ուսմանդ  
 կանոն ամենայնի է մարդն , զամենայն ինչ սարտ  
 է ուղերձել առ նա՝ . իսկ ըստ մեզ՝ քանզի աստուած  
 է կանոն ամենայնի՝ , նովաւ սարտ է մեզ ուղղել  
 զամենայն զխորհուրդս մեր և զգործս՝ :

Հաւաստիս խնդրես գոյութեանն աստուծոյ .  
 ահա աիեզերք , լոյս ակնախափիղ , և մեծաւայե-

1 Պրտտոպ . առ Պղտա . 'ի հտ . 2 . էջ 716 :

Թեկա . հտ 1 . էջ 167 և 170 . 5 'նոյն , թուղթ 3 . հտ . 1 .

2 Պղտա . յգ . օր . զերբ Դ . էջ 334 :

լուչ ընթացք աստեղաց, կազմած մարմնոց գեղեցկակերտեալ, համեմատութիւն ընդ միմեանս անբաւից էիցս, և զի մի մի թուիցեմ, բոլորս այս և մատունք սորա զարմանալիք, յորում ամենայն ինչ զգրուած աստուածային ձեռին բերէ յինքեան, և ամենայն ուրեք 'ի օմն փայլէ մեծութիւն, իմաստութիւն, չափ և յարմարութիւն: Յաւելում յայտոսիկ և զմիաբանութիւն ամենայն ազգաց<sup>1</sup>, ոչ առ 'ի նուաձել զմիտս քօ վկայութիւն, այլ զի խելամոտութիւն նոցա անխոփոխ պահեալ նովին իսկ՝ որով եղենն խելամուտ, է անժխտելի վկայութիւն ազգեցութեն՝ զոր յամենայն ժաւանակի ներգործեաց 'ի սիրտս նոցա բնութեանն գեղ զօշոտիչ<sup>2</sup>:

Կարձեալ և միտք, միաբան ը զգայութիւն իմ: ցուցանեն զգերագոյակ արարիչն յևս մեծագործն յարարածս իւր: Տեսանեմ զմարդ, զի շրջի. և 'ի միտ առնում, զի է ինչ 'ի ներքս 'ի նմա զօրութիւն ազգիչ. ոտք նորա ածեն զնա ուր և կամի, և 'ի միտ առնում՝ զի զօրութիւնն այն պատշաձէ զհնարս առ որ ինչ ուշ ունի: Արդ ըստ ամին օրինակի, ամենայն տիեզերք յար 'ի շարժման կան, ապա է 'ի նոսա առաջին շարժիչ: Շարժումն նոցա ընդ հաստատուն կարգաւ է, ապա

<sup>1</sup> Պղատ. յԷ. օր. Գերք ժ. հտ. 2. էջ 411:

հտ. 2. էջ 886: Արիստոտ.

<sup>2</sup> Պղատ. անդ. Արիստ. առ

յԷ. երկնից, Գերք Ա. ԳԼ. 3.

Կիկեր. յԷ. ԲՆ. ԳԼ. Գ, ԳԼ. Գ

հտ. 1. էջ 434: Կիկեր. յԷ.

Բ. ԳԼ. 37. էջ 464:

ԲՆ. ԳԼ. Գ, ԳԼ. 17.

է ինչ իմացական զօրութիւն գերապոյակ : Այտանօր զկայ առնուն միտք իմ. զի եթէ անդր ևս զնա մղեցից, անկայց ընդ բազումս յիմաստասիրաց յերկբայս զգոյութենէ իմմէ : Արքին իսկ յիմաստասիրաց՝ որք զաշխարհս մշտնջենական ասեն լեալ, խոստովանին զառաջնոց պատճառին՝ ՚ի յախտենից ազգումն ՚ի նիւթն : Օյ չէ իսկ հնար, ասեն, կարգաւոր և յարմարաւոր ներգործել շարժմանց՝ առանց իմացական շարժողի՝ :

ՂԵՏԻՒՆ . Այս ընդէր հակառակ հաւաստեացող այդոցիկ զօրացեալ կալաւ ՚ի միջի մերում անասուածութիւն :

ՓԻԼՈՂԷՍ . Այսան յանդգնութեան և տգիտութեան՝ :

ՂԵՏԻՒՆ . Ղոգջիր մանաւանդ, վասն մատենագրութեանց իմաստասիրացն . զի զիտես իսկ զաղանդս նոցա զգոյութենէ և զէութենէ աստուածութեան\* :

ՓԻԼՈՂԷՍ . Այսկածք և ամբաստանութիւնք անաստուածութեան՝ են զնոցանէ, վասն ոչ պատկառ կալոյ նոցա ՚ի կարծիս ամբոխին, վասն իշխելոյ նոցա տալ վճիռս՝ զօրոց ոչ դուշակելին զհետեանան, և վասն ախտարակաց և եթ օրինօք մեկնելոյ նոցա զլինելութիւն և զկազմած աշ-

1 Արիստոտ . բնազանց . զերբ ժ. Դ . ԳԼ . 7 . էջ 1000 :

2 Պլատո . յԳ . օր . զերբ ժ . հա . 2 . էջ 886 :

\* Յետկոյս մատենիս ՚ի տեղեկութեան . թիւ Բ :

3 Պլատո . անդ . էջ 902 :



խորհիս՝ առանց պատճառս զերբնականս՝ ի ներքս մուծանելոյ : Այլեն և նուազունք ոմանք , որք ուրացան զաստուած ՚ի սպառ . այլ ճառք նոցա անխմանալիք են և անբաւականք ՚ի հաստատել զազանդ նոցա :

Վեճո՞ւն . Այլեն այնչափ անխմանալիք , որչափ զխուժիւնս մեր զաստուածութենէ . էութիւն նորա անծանօթ է ՚ի մէնջ . և զխորդ յոր չգիտեմն հաւատացից :

Փիլի՞ղէս . Սորորական ետուր վճիռ . ոչ ապաքէն գաղտնիս անհասանելիս առաջի առնէ մեզ բնութիւնն հանապազ : Վու հաւատաս՝ եթէ գոյ նիւթ , այլ էութիւն նորա անհաս է ՚ի քէն . դու գիտես՝ զի ձեռնքո հնազանդի կամացդ , թէպէտ և զեղանակ ազդեցութեան շարժողնն ՚ի գործն չգիտիցես :

Վեճո՞ւն . Սերթ զմիտջէ և մերթ զբազում աստուածոց լեւմ ճառս , և թերութիւնս ոչ ինչ նուազ քան ներհակս ՚ի ստորոգելիս աստուածութեանն գտանեմ : Հարկ է իմաստութեան նորա պահել զկարգ ՚ի վերայ երկրի , և անկարգութիւն բարձր ՚ի գլուխ ՚ի սմա յաղթանակէ . արդար է , և տարապարտուց կրեմ վիշտս :

Փիլի՞ղէս . Ի սկզբանէ ՚ի ժողովել մարդկան առ միմեանս , եղեն առ նոսա կարծիք՝ թէ իցեն իմանալիք յաստեղս տեսուչք տիեզերաց : Աւ վասն հզօր զօրութեանցն ՚ի նոսա երեւեցելոյ , պաշտեցան ՚ի մահկանացուաց . և յաճախու-

[Թեամբ պաշտամանն սպասաւորացն, [Թաղաւորին գրեթէ 'ի սպառ անտես եղև պաշտօն :

[Նայց յիշատակ նորա եկաց առ ամենայն ազգրս<sup>1</sup>. գտցես դու զՏէտս նորա 'ի վաղնջուց աւանդս, ուր առաւել և ուր նուազ երևեալ. և յայտնագոյն ևս վկայութիւնս 'ի դիրս արդի իմաստասիրաց : Տէս զի Հովերոս գահերէց 'ի դիւզմի որ կացուցանէ, զԱրամազդ Հայր աստուածոց և մարդկան : Անց ընդ Ալլադա, և տեսցես երկրպագեալ յարկադացւոց զմիակ էն<sup>2</sup> աստուած բարի ըստ առաւելազանցութեան 'ի նոցանէ յորջորջեալ<sup>3</sup>, և յայլս 'ի քաղաքաց՝ ուրեք բարձրեալ<sup>4</sup>, և ուրեք ամենամեծ<sup>5</sup> զնոյն կոչեցեալ :

[Եւ ապա ընդ Տիմէի, Անաքսագորայ, և Պղատոնի, զի ասէն. [Ըր էն միայն աստուած, զնիւթն 'ի յարդ ածեալ՝ ստեղծ զաշխարհ<sup>6</sup> : [Ուր Անտիսթենեայ աշակերտին Սոկրատայ. [Նազումք երկրպագին աստուածք, այլ զմի աստուած ցուցանէ մեզ բնութիւնն<sup>7</sup> : [Ուր դարձեալ և աշակերտացն Պիւթագորայ, որք բանակ իմն զօրաց

<sup>1</sup> Գործք առաքելոց, ԳԼ. 10, 17: Թուղթ Պողոտի առաք. առ հռոմ. ԳԼ. 1: Պրոսէքք. պատմ. իմաստաս. հո. 1. էջ 469:

<sup>2</sup> Պաւսան. գիրք Ա. ԳԼ. 36: Մակրոբ. յանուրջն Սկիւ. գիրք Ա. ԳԼ. 2:

<sup>3</sup> Պաւսան. գիրք Ա. ԳԼ. 26. էջ 62:

<sup>4</sup> Նոյն. գիրք Ժ. ԳԼ. 37. էջ 893:

<sup>5</sup> Տիմ. յԳ. հոգւոյ սիեղեր: Պղատ. 'ի Տիմ. Անաքսագ. առ Պլուտ. յԳ. խաղաղ. իմաստաս. գիրք Ա. ԳԼ. 7:

<sup>6</sup> Կիկեր. յԳ. բն. ԳԼ. 3, գիրք Ա. ԳԼ. 13. էջ 407: Լակասան. կարգադր. աստուածային. գիրք Ա. ԳԼ. 5:

զարեզերս համարին վարեալ 'ի հրամանէ զօրավարի, և որպէս տէրութիւն լայնածաւալ 'ի միա հեծան իշխեցողէ<sup>1</sup> :

Մ. յԼ ընդէր իցէ զիմանալիս զարբանեակս նորանհազորդական անուամբն նորին յօրջորջել : 'Կժպառէհս այս 'ի բազում ժամանակաց յամենայն բարբառս լեալ սովորութիւն, սաստիկ և սաստիկայն բազում ուրեք ոչ այլ ինչ ցուցանեն՝ բայց զգերակայութիւն և զառաւելութիւն վաստակոց, և ընծային պիտակաբար թագաւորաց՝ որք զիշխանութիւն նորա բերեն յանձինս, իմանալեաց՝ որք առ 'ի նմանէ լուսոյն ճառագայթեն, և արարածոց նորա և մերոց իսկ ձեռագործաց : 'Բանզի այնքան է նորա մեծութիւն, զի համեմատութեամբ և եթ ընդ նմա մարդկայինքս փառաւորին մեծութիւնք, և դարձեալ դժուարահաս թուի՝ կարել կամ հաճել այնքանոց մեծութեանն խոնարհեցուցանել զաչս իւր մինչև 'ի նուաստութիւնս մեր :

Ս'վ դու, որ զանբաւութիւն նորին ժխտես, խորհիցին երբէք քանի բազմութիւն իրաց միտքքո և զգայութիւնք գրաւեն : Մ'ըէ, տեսութիւնքո ձգի անաշխատ ընդ բազում ասպարէզս, և

<sup>1</sup> Աբբիտ . յգ բարոյ . վար . զապետ . առ Ստոր . ճառ 1 . էջ 15 : Սնատ . առ Ստոր . ծաղկաբազ բնարան . գիրք Ա . ԳԼ . 3 :

<sup>2</sup> Մենանդ . առ Ստոր .

ճառ 32 . էջ 513 : Կղերիկ . արուեստ բնարան . յօդ . 1 . գլ . 3 . հտ . 1 . էջ 2 : Մօշեմ . առ Քուսովորթ , գլ . 4 . յօդ . 5 . էջ 271 :

նորայն ոչ կարիցէ ձգիլ ընդ անբաւս : Սուքո 'ի միում գողցես վայրկենի անցանէ ընդ Ալլադա , ը Սիկիլիա և ընդ Ադիպոսս , և նորայն ոչ ընդ տիեզերս առ հասարակ կարիցէ ընդարձակել' :

Այս դու որ բարութեան նորա դնես սահման , իբր այն թէ մեծութիւն առանց բարութեան մարտիցի 'ի նմա , կարծիցես թէ ամաչեսցէ նա երբէք ընդ գործս ձեռաց իւրոց , և որդն իսկ անարդ կամ ծիլ մի խոտոյ արհամարհ թուիցի յաչս նորա , և չքնաղ բարեմասնութեամբք ճոխացուցեալ զմարդ' և 'ի սիրտ նորա եղեալ զիդձս , զպէտս և զյոյս ճանաչելոյ զինքն , մերժիցէ՞ զնա յերեսաց իւրոց : Քան լիցի ինձ կասկածել' թէ հայր մոռանայցէ զորդիս իւր , և անխնամութե' որ ոչ 'ի ձահ պատահէ կատարելութեանցն իւրոց' չհսկիցէ կարգաց , զորս եղ յիւրում պետութեանն :

Վեճո՞րն . Աթէ 'ի նմանէ կարդ ընդ տիեզերս սահմանեցաւ , ընդէր եղերունք և չարիք այսքան պատահեն 'ի սմա . զի' կայ զօրութիւն նորա , եթէ խափանել զնոսա կարէ . զի' արդարութիւն նորա , եթէ չհաճի ընդ նոսա :

Փիլո՞ղէս . Սոյի հինիցդ այգոցիկ յարձակման . միշտ իսկ մղեցաւ մարտդ այդ , և մղեսցի մինչև 'ի սպառ . և այդ միայն ձգնէ զմեր կողմն : Աթէ ամենայն մարդիկ բարեբաստք էին , ոչ որ

1 Քսենոփ . յիւստ . գիրք 2 Նոյն անդ . գիրք Ժ . էջ  
Ա . էջ 728 :

ընդդէմ արարչին իւրոյ ապստամբէր. այլ բազումք տուայտին 'ի վիշտս, և նա տեսանէ, և թուի անխոյթ առնել: Աստանօր միտք իմ վարանեալ, հարցանեն զաւանդութիւնս հինս, և աւանդութիւնք զինամահարութիւն հաստատեն: Հարցանեն զիմաստունս<sup>1</sup>, և իմաստունք գրեթէ առ հասարակ միաբանեն զկարևոր մասանց նորա, այլ 'ի մեկնել և եթ զայն՝ երկբային և սխալատինս: Ազգմաց 'ի նոցանէ խելամուտ լեալ, զի որ սահման դնէ արդարութեան կամ բարութեանն աստուծոյ՝ բառնայ զայն 'ի սպառ, լաւագոյն համարեցան կարողութեան նորա դնել չափ: Ահաք ասեն. Ամենայն զոր ինչ և գործէ աստուած՝ բարի են. այլ նիւթն ընդակից յոութեանքն իւրով՝ ի ներքս մուծանէ զչար, անաստեալ կամաց գերաբուն էին<sup>2</sup>: Այլ այլք, թէ ազգեցութիւն աստուածային հասանէ ընտ զսարունակ լուսնի. այլ 'ի լուսնոյ և 'ի վայր նուազ ներգործէ<sup>3</sup>: Այլ այլք դարձեալ, թէ զկարևորաց ինամ կալեալ՝ անտես առնէ զզուգնաբեայս<sup>4</sup>: Իսկ այլք աղօտ ինչ նշոյլ 'ի խաւար մտաց իմոց ծագեն. Օ գոչ լեր, ասէ, մահկանացուդ տկար, և մի իսկապէս համարիր չարիս զազբատութիւն,

1 Կիկեր. յԷ. բն. գից, Գերբ. Ա. ԴԼ. 2. հտ. 2. էջ 398:

2 Պղատ. 'ի Տիմ. հտ. 3.

և այլուր:

3 Ակեղ. Ղուկան. ԳԼ. 2:

Արիստոտ. յԷ. երկնից. Գերբ. Բ. ԴԼ. 1. էջ 453:

4 Առ Պղատ. յԷ. Գր. Գերբ.

Ժ. հտ. 2. էջ 901: Առ Ա.

րիստոտ. յԷ. երկնից, ԳԼ. 6.

հտ. 1. էջ 611:

զհիւանդութիւն և զաղէտս եկամուտս 'ի քեզ. զի պատահարքդ այդոքիկ, զորս համբերութիւն քո փոխէ 'ի բարիս, արգասիք են օրինաց կարեւորաց 'ի սրահայանութիւն տիեզերաց: Առ 'ի կարգ էիցս առհասարակ դասեալ, մասն ևեթ ես նորին. դու 'ի կազմած բոլորին սահմանեցար, և ոչ բոլորն վասն քո՝:

Ս անս որոյ բարի է ամ ինչ առ հասարակ ընդ տիեզերս, այլ էից իւրաքանչիւր մարթեր լինել լաւագոյն: Անկենդանք անդիմանդարձ հնազանդին տպաւորելոյ 'ի նոսա շարժմանցն: Անդանիք անբանք բերին անխիղճ՝ յազգմունս, որ ձգեն զնոսա: Արդիկ ևեթ զանազանին ըստ ախտիցն և ըստ իմացականութեան: Հնազանդիցին արդեօք և նոքա հարկին, որպէս զայլս յէից, և ընդէր կարեն հակառակ յօժարութեանցն կալ. առ ինչ իցեն 'ի նոսա նշոյլքն՝ որովք մոլորին, հիմցանկութիւն ճանաչելոյ զարարին, առիմէ գիտութիւն բարւոյն, ընդէր արտասուքն պանծալիք՝ զոր առաքինութիւն քամէ յաչաց նոցա, և էր վասն սարգեն այն դժնդակ, կամ մանաւանդ քան զընաւս գեղեցիկ, սարգեն ասեմ կարեկից լինելոյ յաղէտս նմանեաց մերոց: Ատեսիլ այսքանեաց յառաջամասնութեանց, որ են կարեւոր տիպք նկարագրին նոցա, չիցէ՞ սարտ 'ի միտ առնուլ՝ զի աստուած անհետագօտելի խորհրդովք

կամի 'ի հանդէս մատուցանել զխոհականն նոցա  
 և զընտրողական զօրութիւն : Մ. յո , եթէ գոյ  
 յերկրի առաքինութիւն , գոյ յերկինս արդա-  
 րութիւն . որ ոչն մատուցանէ զհարկ կարգին ,  
 հատուցէ նմին զսակն ' : Սկսանի նա կեալ յաշ-  
 խարհիս յայսմիկ , և ոչ դադարեսցէ 'ի կենաց  
 անդ՝ ուր անմեղութի ընդունի զվարձս վշտացն ,  
 և մեղապարտն տացէ զվրէժ մինչև քաւեսցին  
 մեղքն :

Մհաւասիկ , ս՛վ Ղեմոսին , այսպէս խնա-  
 տունքն մեր արդարացուցանեն զինամակալու-  
 թիւն : Ղիք ինչ ըստ նոցա չար բաց 'ի յոռու-  
 թենէ , և ոչ այլ ինչ առ 'ի նմանէ արգասեացն  
 ելք՝ բայց հանդերձեալքն , ուր ամենայն ինչ  
 կաջի զիւր կարգ : Մ. յսուհեաւ որ հարցանէն՝  
 թէ ընդէր ոչ արդել աստուած 'ի սկզբանէ զյո-  
 ոութիւն , ոչ այլ ինչ հարցանէ՝ բայց թէ ընդէր  
 աստուած ըստ խորհրդոց իւրոց և ոչ ըստ մերոցս  
 արար զաշխարհ :

Ղեմոսին . Օ ինչ են կրօնք , բայց հիւսք սնտաի  
 խորհրդոց և ճղճիմ պաշտամանց : Արպէս թէ  
 չիցեն որ յերկրի բռնաւորք բաւական , ընդք և  
 զերկինս բռնաւորք . շուրջ կացուցանէք ինձ տե-  
 սուչս , նախանձորդս միմեանց , պահանջողս յի-  
 նէն նուիրաց . որոց զհարկ և եթ ծառայական  
 երկիւղի մարթ է ինձ մատուցանել : Մ. և տուր

ամօթապարտ է պաշտօնն , զոր պահանջեն . զի մեծութիւնս տան , և առնուն զոհս ' : Ըյր ան զգայեալ սնապաշտութեամբ անարգագոյն քան զամենայն ստրուկս գտանի . և իմաստասէրքդ իսկ ոչ հարկ համարեցան բերել յանձին առաքինութիւնս նախ քան զլինելն յանդիման ատուածութեան , և ոչ խնդրել զայն 'ի նմանէ ' :

Փիլիպի . Ըսացի իսկ , զի թանձրամտութե խանգարեալ է զպաշտօն հասարակաց . և ես ոչ զնոցայն , այլ զիմաստասիրացն յառաջ բերեմ զկարծիս՝ որք խելամուտ եղեն պարտեաց մերոց առ աստուած : Արկրայեսցիր զայնցանէ , եթէ իցես կոյր և չտեսանիցես զնոսս . այլ մի ասիցես՝ թէ իցէ նուաստութիւն հոգւոց մերոց բաժանել 'ի խռանէ համագոյից , և ունել պայծառագոյն սկիզբն և վիճակ , և ընդ գերաբուն էին հազորդ զո՛ր ընդունելով բարիս և մատուցանելով շնորհակալութիւն :

Ամիցիս օրէնս անապակ և երկնակրօն բարուց , որ զմիտս քո և զզգայութիւնս 'ի վեր ամ բառնայցեն . ուսիր զվարդապետութիւն և զվարս Սոկրատայ , որ ոչ այլ ինչ 'ի դատապարտելն իւրում և 'ի մասնել 'ի բանտ և 'ի մահ տեսանէր բայց զվճիռս անսահման իմաստութեան . և ոչ յանձն էառ բողոքել զանիրաւութենէ ոսոխացն :

Կարձեալ և ը Պիւթագորի նկատելով զօրէնս

1 Պղատ . յԵւթիփր . հտ . 1 . էջ 14 :

2 Պայլ , խորհրդած . հասարակաց , հտ . 3 . յօդ . 31 :



տիեզերական ներդաշնակութեան<sup>1</sup>, զիր զպատկերս զայս առաջի աչաց քոց : Կարգ դասաւորութեան աշխարհաց, և կարգ դասաւորութեան երկնային մարմնոց . միաբանութիւն ամենեցուն կամաց յիմաստուն հասարակապետութիւն, և միաբանութիւն ամենայն շարժմանց յառաքինի հոգւոջ . էից առ հասարակ ճիգն 'ի պահել զկարգ, և կարգին պահել զտիեզերս և զմասունս նորա իւրաքանչիւր զմանունս . աստուած արարիչ յօրինուածոյն մեծի, և մարդիկ սահմանեալք առ 'ի լինել առաքինութեամբքն արբանեալք նորա և զործակիցք : Մի վարդապետութիւն զերահանձար քան զամենայն վարդապետութիւնս, և որ բարձրագոյն ընծայէ իմաստ զմեծութենէ և զարժանապատուութենէ մարդոց :

Անսա ինձ վայրիկ մի ևս . և քանզի դու պատերազմ 'ի վերայ իմաստասիրացս մերոց յարուցանես, սարտ է ինձ պաշտպան կալ նոցա : Ի իւսիս պատանեակ հմուտ է վարդապետութեան նոցա, վարժեալ 'ի մանկութենէ առ ոստ քաջաց վարժապետաց : Հարցից մի ըստ միջէ զամենայն՝ զորոց եղեն մեզ բանք, և դու լուիցես 'ի նմանէ զպատասխանիսն . և համօրէն տեսեալ զբովանդակութիւն կարծեացս մերոց, 'ի միտ առցես՝ թէ բանականին իւրով և եթ զօրու-

<sup>1</sup> Թեագ . առ Ստոր . ճառ 1 . էջ 11 : Կրետոն , անդ , ճառ 3 . էջ 43 : Ոկեզ . անդ , ծագկաբաղ բնաբան . գիրք Ա . էջ 32 :

Թեամբն շմարթէր իմանալ իմաստս պատշա-  
 ճազոյնս աստուծոյ և օգտակարս մարդկան՝ :

Փէլիղէս . Լսա ինձ | իւսիս , ո՞ ստեղծ զաշ-  
 խարհս :

| Էստիս . Լստուած՝ :

Փէլիղէս . Լս իմէ ստեղծ :

| Էստիս . | ՚ բարութենէ իւրմէ՝ :

Փէլիղէս . Օ ինչ է աստուած :

| Էստիս . || րոյ չիք սկիզբն և ոչ վախճան՝ . որ  
 էն 'ի յաւիտենից՝ , հարկաւոր , անխոփոխելի , և  
 իմացական՝ :

Փէլիղէս . | ՚ արթիւն նորա իցէ՞ մտաց մերոց  
 հասանելի :

| Էստիս . Լսհասանելի է և անձառ՝ , այլ 'ի  
 գործս իւր բարբառի յայտնապէս . և բարբառս  
 այս զմեծամեծ ճշմարտութեանց բերէ զախպս  
 յինքեան , ամենեցուն զօրով զիւրահաս : Պայ-  
 ծառազոյն գիտութիւն աւելորդ էր մեզ , և ոչ  
 արդեօք 'ի ձահ , ոչ խորհրդոց իւրոց և ոչ տկա-  
 րութեանս մերոց : || զիտէ զի և ցանկութիւնս  
 մեր հասանելոյ առ նա չիցէ նշանակ ինչ բախ-

* Եկեղոյս մատենիս 'ի տե. զեկութիւնսն . Թիւ . 9 :	3 Թաշ առ Դիող . լայերա- գիրք Ա . յօդ . 36 :
1 Տիմ . 1 յկր . յղ . հոգւոյ տիեզեր . առ Պղատ . հա . 3 .	4 Տիմ . 1 յկր . անդ . էջ 36 :
էջ 94 : Պղատ . 'ի Տիմ . անդ , էջ 30 : Կեկեր . յղ . բն . գից ,	5 Արիստոս . յղ . բն . լսե- լեաց . գիրք Ը . գլ . 6 . հա . 1 . էջ 416 : Նոյն . բնագանց . գիրք
գիրք Ա . գլ . 8 . հա . 2 :	ԺԴ . գլ . 7 . էջ 1001 :
2 Պղատ . 'ի Տիմ . հա . 3 . էջ 29 :	6 Պղատ . 'ի Տիմ . հա . 3 . էջ 28 :

տին՝ որ մնայ մեզ, զի եթէ արդարեւ երանելի է նա, որպէս ասեն, տեսուածեամբ եւ եթէ կատարելու թեանցն խրոց՝, ապա որ ցանկայն հասու լինել այնոցիկ՝ երանուածեան նորա ցանկաց հաղորդ լինել:

Փետիղէս. Ինձամակալու թիւն նորա հասանէ առ ամենեւին:

Իտսիս. Ըմենեին իսկ մինչև ՚ի արուստ յէրց՝:

Փետիղէս. Կարիցեմբ ծածկել ինչ յերեսացնը:

Իտսիս. Եւ ոչ զխորհուրդս մեր՝:

Փետիղէս. Իցէ արարիչ չարեաց աստուած:

Իտսիս. Ըր էն բարի, բարեաց եւ եթէ աւրարիչ՝:

Փետիղէս. Օ ինչ բաժին է քո ընդ նմա:

Իտսիս. Ի նմանէ ստեղծեալ եւ նորին իսկ եմ, եւ նա խնամէ զիս՝:

Փետիղէս. Ըրպիսի վայելէ նմա պաշտօն:

Իտսիս. Ըր ինչ ՚ի հայրենեաց սահմանեալ, զի չէ խնաստուածեան մարդոյ զխտել ինչ զայսմանն հաւաստեալ՝:

1 Արիստոս. յղ. բարոյ. զիրք ժ. զԼ. 8. հո. 2. էջ 139: Նշմ. յղ. հաս. զիրք է. զԼ. 1:

2 Պղատ. յղ. որ. զիրք ժ. հո. 2. էջ 900:

3 Եպիքարմ. առ Կղեմ. Ազեքս. յաճախապ. զիրք է. էջ 708: Եպիգ. առ Թէոփիլ:

առ Աւստլիկ. զիրք Ա. յօդ. 54:

4 Պղատ. ՚ի Տիմ. հո. 3.

էջ 30: Նշմ. յղ. հաս. զիրք Բ. հո. 2. էջ 379:

5 Պղատ ՚ի Փեղոն. հո. 1. էջ 62:

6 Պղատ. յԵպիքարմ. հո. 2. էջ 985:

Փիլիպիքս . Չիցէ՛ բաւական պաշտել զնա պատարագօք և շքեղ հանդիսիւք :

Ի իսիս . Այ :

Փիլիպիքս . Օհնչ ևս պիտոյ է :

Ի իսիս . Արբու՛թիւն սրտի՛, զի ընդունելի է նմա առաքինութիւն քան զնուէրս զոհից՝ . և քանզի չիք և ոչ մի ինչ հազորդութիւն անիրաւութեան ընդ նմա՝, պարտ իսկ համարին ոմանք յափշտակել ՚ի բազնացնորա զչարագործս ապաւինեալս անդր՝ :

Փիլիպիքս . Արդապետութիւնդ այդ, զոր ի մաստասէրք ուսուցանեն, իցէ՛ ընդունելի քրմաց :

Ի իսիս . Վրոյմեալ իսկ է նոցա ՚ի վերայ դրան մեհենին յԱպիղարոս . Այ՛ ոք, Բայց Բայն սորբէք սրտիւ ճոյղեն այսր՝ : Օնայն և ՚ի պաշտամունս կրօնից հռչակաւ քարոզեն . զի իբրև պաշտօնեայն բազնին ձայնէ, Այ՛ էն աստ . ամենեքին որ շուրջն կան՝ միաբան աղաղակեն . Իստ աս Կասարակ՝ :

Փիլիպիքս . Ինդրիցես զբարիս երկրաւորս յաղօթս քո :

Ի իսիս . Այ, զի գուցէ մնասակարք իցեն ինձ,

- |   |   |
|---|---|
| 1 Չալեք . առ Ստոր . էջ 279 :  | Ճառ 42 . էջ 289 :   |
| 2 Չալեք . յԱզիկեր . 2 . հա . 2 . էջ 149 : Խոսկր . առ 44 . էջ 307 :          | 4 Եւրիպ . առ Ստոր . Ճառ . 5 կզեմ . աղերս . յաճախայ . գիւրք Ե . էջ 652 : |
| Նիկիոկ . հա . 1 . էջ 61 :   | 6 Արիստոփ . ՚ի խաղաղ . սող 435 և 967 :                                  |
| 2 Չալեք . առ Դիոզ . գիւրք ԺԲ . էջ 34 : Բսենոփ . յԷլաստ . գիւրք Ա . էջ 722 : |   |
| 5 Բարոնգ . առ Ստոր .  |   |

և բարկացի աստուած ընդ տարապարտ հայ-  
ցուածս իմ, և ոչ լուիցէ ինձ<sup>1</sup> :

Փիլիպի . Իսկ զինչ խնդրիցես :

Ի Խ-սիս . Փրկել զիս յախտաւոր կրից<sup>2</sup>, պար-  
գեւել ինձ զճշմարտան գեղ զհոգւոյ<sup>3</sup>, զգիտու-  
թիւնս և զառաքինութիւնս որոց կարօտիմ<sup>4</sup>,  
զզօրութիւն առ 'ի չգործելոյ զանիրաւութիւն,  
և մանաւանդ զարիութիւն համբերելոյ<sup>5</sup> եթէ  
հասանիցէ ինձ կրել զայն յայլոց<sup>6</sup> :

Փիլիպի . Օ ինչ պարտ է գործել առ 'ի լի-  
նել աստուածահաճոյ :

Ի Խ-սիս . Ունել միշտ զաստուած առաջի ա-  
չաց<sup>7</sup>, մի 'ի գործ ինչ ձեռնարկել<sup>8</sup> մինչև խնդրեալ  
զօգնութիւն 'ի նմանէ<sup>9</sup>. բերել զնորայն ընդ  
ազօտ ինչ զնմանութիւն<sup>10</sup> արդարութեամբ և  
սրբութեամբ<sup>11</sup>. զամենայն զգործս ուղերձել  
առնա<sup>12</sup>, կատարել հաւատարմութեամբ զպարտս  
խրաքանչիւր պաշտաման, կարեւորագոյն 'ի նոսա  
համարեալ զլինելն պիտանի մարդկան : Օ ի որ-  
չափ առաւելագոյն որ գործէ բարիս, այնչափ ևս

<sup>1</sup> Պղատ . յԱղկիր . 2 . հա .  
2 . էջ 138 :

<sup>2</sup> Չալեւք . առ Ստոր .  
ճառ 42 . էջ 279 :

<sup>3</sup> Պղատ . 'ի Փեղր . հա . 3 .  
էջ 279 : Նոյն . յԱղկիր . 2 .  
հա . 2 . էջ 148 :

<sup>4</sup> Նոյն . 'ի Մեն . հա . 2 .  
էջ 100 :

<sup>5</sup> Պղատ . կարգագր . լա-  
կան . հա . 2 . էջ 239 :

<sup>6</sup> Քսենոփ . յԼատ . գիրք  
ԺԴ . էջ 728 :

<sup>7</sup> Քարոնդ . առ Ստոր .  
ճառ 42 . էջ 289 : Պղատ . 'ի  
Տիմ . հա . 3 . էջ 27 :

<sup>8</sup> Պղատ . 'ի Թէեա . հա . 1 .  
էջ 176 :

<sup>9</sup> Բիաս, առ Դիոդ . լայերա-  
գիրք Ա . յօդ . 88 : Պրուքք .  
պատմ . իմաստաս . հա . 1 .  
էջ 1072 :

առաւել գտանի արժանաւոր դասերոյ ընդ սրղիս նորա և ընդ սիրելիս<sup>1</sup> :

Փիլիշէ . Ս' արթ իցէ պահպանութեամբ պատուիրանացս այսոցիկ լինել երանելի :

Լէ-սի . Ս' բո ոչ . զի երանութիւն իմաստութեամբ յաջողի , և իմաստութիւն աստուած . զիտութեամբ<sup>2</sup> :

Փիլիշէ . Ս' յլ թերի է յոյժ գիտութիւնդ այդ :

Լէ-սի . Ս' ստ նմին օրինակի և երանութիւնս մեր լիցի թերի , մինչև յայլ կեանս զկատարեալն լիցի ժառանգել մեզ<sup>3</sup> :

Փիլիշէ . Ս' ել թէ հոգիք մեր յատեան ճշմարտութեան ելցեն 'ի մահուն , և տայեն համարս զկենաց իւրեանց անողորելի դատաւորաց , և սպա կէսք 'ի դաշտս զուարճալիս ածեալ՝ կեցցեն խաղաղութեամբ 'ի տօնս և 'ի զեղասարութիւնս , և կէսք մղեալ 'ի Աստազեաց հոսեցին 'ի դժոխս՝ մատնել 'ի բոց հրոց և 'ի կեղեքումն ամեհի գազանաց :

Լէ-սի . Ս' զիտեմ զայդ :

Փիլիշէ . Ս' զէս իցէ կարծել , զի երկարանչիւր կացեալ զամս աւելի քան զհազար 'ի տանջանս կամ 'ի բերկրութիւնս՝ զգեցցին դարձեալ

<sup>1</sup> Պղատ . յլ . հաս . գիրք հա . 1 . էջ 176 :

Ժ . հա . 2 . էջ 612 : 'նոյն .

յլ . օր . գիրք Գ . էջ 714 :

<sup>2</sup> Թեազ . առ Ստոր . ճառ

1 . էջ 11 : Պղատ . 'ի Թեեա .

<sup>3</sup> Պղատ . յԱպրիմ . հա .

2 . էջ 992 :

<sup>4</sup> Աբսիդ . առ Պղատ . հա .

3 . էջ 371 :

մարմին մահկանացու զմարդկան կամ զկենդանեաց, և վերկենցաղեսցեն<sup>1</sup>. և զի յանցանաց ինչ անտխսճան իցեն պատիժք<sup>2</sup>:

Եւսիս . Չգիտեմ և զայդ . զի չիք աստուծոյ յայտնեալ թէ որպիսի ինչ պատիժք և վարձք մնան մեզ յետ մահու : Եւ չաւաստի զայս ինչ գիտեմ, որում երաշխաւորեն կարգ և արդարութիւն, և կարծիք կալեալ առ ամենայն ազգս յամենայն ժամանակի<sup>3</sup>, զի իւրաքանչիւր որ ընկալցի հասուցումն ըստ գործոց իւրոց<sup>4</sup>, և զի արդարք ՚ի խաւարէ կենացս<sup>5</sup> փոխեալք ՚ի լոյս անասպական և անստուեր նորոյ կենաց, ժառանգեսցեն զերանութիւն անփոփոխելի՝ որոյ ստուերք և եթ աղօտք գտանին ՚ի կենցաղումն<sup>6</sup>:

Փիլիպէս . Օ ինչ պարտք իցեն մեզ առ անձինս :

Եւսիս . Յետ աստուծոյ մեծարել զանձինս մեր . մի վարակել զայն ախտիւք և խղճիւ չարեաց, մի վաճառել զայն ընդ ոսկւոյ, մի մատնել ՚ի հրապոյրս գրգանաց . և մի երբէք ուրեք նախամեծար առնել զմարմին երկրաւոր և եղծական քան զգոյացութիւն, որոյ սկիզբն երկնաւոր

1 վերգիւ . Ենեակ . գիւրք հա . 2 . էջ 120 :  
 2 . սող . 748 : 4 Պղատ . յղ . օր . գիւրք ժ .  
 3 Պղատ . յԵպիմ . հա . 3 . հա . 2 . էջ 905 :  
 էջ 615 : Նոյն . ՚ի Գորգ . հա . 5 Նոյն . յղ . հաս . գիւրք է .  
 1 . էջ 525 : հա . 2 . էջ 521 :  
 5 Նոյն . ՚ի Գորգ . հա . 1 . 6 Նոյն . յԵպիմոմ . հա . 2 .  
 էջ 523 : Պղատ . յղ . միթի . էջ 973 և 992 :

է, և վախճանն նմա չիք<sup>1</sup> :

Փիլիպոս . Այլ զինչ առ այլ իցեն մեզ պարտք :  
 Աբստիս . Ամենայն 'ի վճիռս յոյս բովանդա-  
 կի . Ա'ի, զոր չկամիմքն թէ արասցեն մեզ մար-  
 դիկ, առնել այլում<sup>2</sup> :

Փիլիպոս . Այլ չիցես զու աւաղելի՝ եթէ այդ  
 ամենայն վարդապետութիւնք պատրանք իցեն,  
 և ոչ երկարակեաց քան զմարմինդ լիցի հոգիդ :

Աբստիս . Այլ ինչ աւելի պահանջեն կրօնք քան  
 զիմաստասիրութիւնս : Այլ միայն չհրամայեն ա-  
 ռարինսոյն հրաժարել ինչ յիմեքէ՝ ընդ որ առա-  
 ջի կայցէ նմա զեղջ, այլ և բերկրանս իմն զաղտ-  
 նիս ընդ պարտս նորա խառնեն, և երկուս պատ-  
 րաստեն նմա օգուտս անկշռելիս, խորին խա-  
 զաղութիւն 'ի կեանս, և յոյս քաղցր 'ի մահու<sup>3</sup> :

## ԳՎ ՈՒՄ Զ .

Ի նոյն մատենագարանն Եւկղիզեայ, յաղագս քերթողութե՛,

Այլ ԱԾԻ ես զմանուկն Ալուսիս զորդի Այո-  
 ղողորայ առ Ալկղիզէս, և մտաք 'ի կողմն մի  
 մատենագարանին՝ ուր էին քերթողական և եթ  
 և բարոյական մատեանք, քերթողականքն բա-

<sup>1</sup> Պղատ . յղ . օր . էջ 727 :      <sup>3</sup> Պղատ . 'ի Փեղոն , հտ .

<sup>2</sup> Խաղր . 'ի 'նիկոկղ . հտ . 4 . էջ 91 և 114 :

1 . էջ 116 :



զումք յոյժ , իսկ բարոյականքն սակաւք : Այլ 'ի զարմանալ Ա իւտեայ ընդ կարի անհաւասարութիւնն , սակցնա Ալկիդիդէս . Սակաւուց կարօտի մարդ գրեանց յուսումն , այլ բազմազունից յոյժ առ 'ի զբօսանս : Սահմանաւ են պարտք մեր , այլ բերկրութիւնք մտաց և սրտի անասմանք . երևակայութիւն՝ որ տածէ զնոսս , առատաձեռն է և բազմաբեզուն : } որչափ բանականութիւնս մեր աղքատ և ամուլ՝ աղօտ և եթ ընծայէ լոյս կարօտութեանս մերում , և ըստ զգայութեք քան ըստ խորհրդոց մտաց բերիմք 'ի գործ , աջողութիւնք երևակայութեան հզօրագոյն ձգեսցեն զմեզ յիւրեանս քան զխրատս բանականին՝ որ ոստին է նորին :

Օ որութիւնս այս մտաց գեղախայլ առաւել քան յիրականն պարապէ 'ի կարելին՝ որոյ ընդարձակագոյն են սահմանք քան զիրականին . և քան զկարելին ևս նախամեծար առնէ յաճախ զկեղծիս , որոց չիք սահման : Նարբատ նորա բնակեցուցանէ զանապատս , կենդանացուցանէ զանզգայագոյնս յէից , փոփոխէ այլ յայլմէ զհանգամանս և զգոյնս՝ որովք զանազանին , և կուռ զհեա միմեանց այլակերպութեամբք՝ ձգէ զմեզ 'ի կայս կախարդանաց յաշխարհն մտացածին , ուր քերթողք մոռացեալ զերկիր մոռացեալ զանձինս՝ ընդ իմանալիս և եթ գերակայս հաւորդք գտանին :

Անդ զտաղս իւրեանց 'ի բուրաստանաց Սու-

սայիցն ծաղկաբաղ առնեն<sup>1</sup>, և վտակք խաղաղա-  
ւէտք մատուցանեն նոցա ալիս կաթին և մեղու<sup>2</sup>,  
և Վարդոն իջանէ յերկնից՝ աւանդել նոցա զքնար  
իւր<sup>3</sup>, և յանկարծակի շունչ աստուածային շի-  
ջուցեալ զլոյս մտաց նոցա՝ արկանէ զնոսա ՚ի  
ցնորս սաստիկս, և բռնադատէ խօսել ՚ի բար-  
բառ զիւցական՝ որոյ այնուհետև զործարան  
և եթ գտանին ինքեանք<sup>4</sup>:

Այլ յաւելեալ Այլ կղիղեայ ՚ի բանս իւր, ասէ.  
Օպղատոնականն, որպէս տեսանես, երկրոր-  
դեմ զբանս: Օ ի այսպէս ծաղր առնէր նա  
ստէպ զքերթողս, որք ցրտագին բանիւք բողոք  
ունին զբողբոքելոյ յիւրեանս հրոյ: Վալ են ՚ի  
նոսա և վարեալք ՚ի խանդից, որ աստուածա-  
բուծիւնն կոչի կամ աւիւն քերթողական<sup>5</sup>: Այ-  
քիղ, Պինդար և այլք առ հասարակ ՚ի քերթո-  
ղաց մերոց երևելիք այնու հրոջի վառէին, որ և  
՚ի գիրս նոցա փայլէ արդ: Այլ զի՞ զնոցանէ ասեմ.  
Ղեմոսթենէս ՚ի բեմի, և աննշանաւորք ոմանք  
յակումքս ցուցանեն զայն հանապաղ: Այլ դու  
ինքն եթէ նկարագրել կամիցիս զբռնութիւն և  
զաղէտս, որք ՚ի ծայրագոյն սաստիութեան ոչ ևս  
բերեն յիւրեանս զնշմարանս ազատութեան,  
բոց ՚ի շրթանց և յաչաց քոց հատանիցի. և ցոլք

1 Պղատ . ՚ի Յոմն, հտ . 1 . էջ 534:

էջ 534:

5 Պղատ . ՚ի Փեղբ . հտ . 3 .

2 Նոյն անդ:

էջ 245: Նոյն . ՚ի Գեմոսթեն .

3 Պինդ . սիւլթ . 1 . տող 1:

առ Վիկեր . յղ . ճարտ . զԼ .

4 Պղատ . անդ:

46 . հտ . 1 . էջ 237:

բանից քոյ զկատարութեան և զլառանցանայ  
բերցեն զնմանութիւն : Ը՛յլ զու ոչ ինչ աւելի  
բան զբնութեանն բերես բարբառ :

Հուրս այս , որում պարտն է կենդանացուցա-  
նել զամենայն արգասիս մտաց , արծարծանի 'ի  
բանաստեղծութեան' առաւել կամ 'նուազ սաստ-  
կութեամբ ըստ պահանջելոյ իմաստիցն առաւել  
կամ 'նուազ շարժումն , և ըստ առաւել կամ  
'նուազ վսեմութեան հանձարոյ քերթողին' որ  
բնաւորութեան կրիցն պատշաճիցի , և տալաւ  
լսողոյն զգացման' որ յանկարծ 'ի սիրտ 'նորա  
զարթուցեալ , և անդէն 'ի մերս ազգիցի' :  
Ը՛յլ ոչ միշտ երկօքին բարեմասնութիւնքս այսու  
քիկ . պատահեն 'ի միասին : Տեսի ես քերթող  
զոմն սիրակուսացի , զի ոչ երբէք տաղս այնպիսի  
դեղեցիկս յօրինէր , որպէս յորժամ խանդք  
սաստիկք զառանցուցանէին զնա' :

Եւ ապա հարցուածս ինչ մատոյց Վիւսիս Վալ-  
զիդեայ , զորս 'ի պատասխանելոյ բանիցն 'ի միա-  
տոցես : Բանաստեղծութեան , առ Վալզիդէս ,  
զնացք և բարբառ առանձինն է . 'ի դիւցազներ-  
զութեան և յողբերգութեան յանդիմանն առնե-  
նա արութիւն ինչ քաջայաղթ , կապակցելով ըստ  
հաճոյից զմասունս 'նորա , փոփոխելով զծանօթ  
հանգամանն և յաւելլով առաւել հոգեշարժս ,

<sup>1</sup> Կիկեր . տուսիու . Գերք ԳԼ . 17 . հտ . 2 . էջ 665 :

Ս . ԳԼ . 26 . հտ . 2 . էջ 234 :      <sup>3</sup> Կոյն , տաջարկ . հտ .

<sup>2</sup> Արիստոս . յղ . քերթ . 2 . էջ 817 :

և սայժառայուցանելով զայնոսիկ մերթ գրուա-  
գօք զարմանալեօք, և մերթ բազմայեղանակ ա-  
սացուածոյն վայելչութեամբ, կամ գեղով իմաս-  
տիցն և ազդեցութեանց: Մազում այն է, զի  
վէպքն՝ այս ինքն է եղանակ յօրինուածոյ գործո-  
ղութեանն՝ առաւել աշխատ առնէ զքերթողն,  
և յաճախէ նմա փառս քան զյօրինուած տա-  
ղիցն<sup>1</sup>:

Այլոց ազգի ազգի բանաստեղծութեանց  
կազմութիւնն ոչ այնչափ տաժանելի է քերթո-  
ղին. սակայն պարտ է նմա գիւտս իմն ամենայն  
ուրեք. յանդիման առնել, և նորանոր կեղծեօք  
կենդանացուցանել զամենայն՝ զորմէ բուռն հար-  
կանէ, զջերմութիւն բոցոյ իւրոյ ազդել՝ ի մեզ,  
և յուշի ունել հանապազ՝ զի որպէս Միմոնի-  
դէս ասէ<sup>2</sup>, քերթութիւն է նկար խօսուն, և  
նկար է քերթութիւն համր:

Այա ուրեմն ոչ զք տաղաչափութեամբ և եթ է  
բանաստեղծ. զի Արողոտեայ պատմութիւն թէ  
պէտ և տաղաչափիցի, ոչ ինչ աւելի է քան  
զպատմութիւն<sup>3</sup>, զի ոչ վէպք պաճուճեալք և  
ոչ կեղծիք ՚ի նմա գտանին<sup>4</sup>: Այա ուրեմն և ոչ  
վճիռք (Վեոգնեայ և Փոկիղիդեայ և այլոց, և ոչ

1 Արիստոտ. յղ. քերթ. սիոս, յղ. արհեստի քերթ.  
դԼ. 6. էջ 656: էջ 6:

2 Նոյն անդ, դԼ. 9. հա. 4 Արիստոտ. անդ:

2. էջ 659: 5 Պլատ. ՚ի Փեդոն, հա.

3 Պլատ. յղ. ունկնդր. 1. էջ 61:

քերթ. հա. 2. էջ 17: վոս.

Պարմենիդէայ և Վանկեղոկղի վարդապետութիւնք զտիեզերաց ընդ քերթութիւնս համարելի են<sup>1</sup>, թէպէտ և Պարմենիդէս և Վանկեղոկղ ուրեք ուրեք ՚ի զիրս իւրեանց յեռուն նկարագրութիւն զեղեցիկս<sup>2</sup> և հանճարեղ այլաբանութիւնս<sup>3</sup> :

Վանաստեղծութեան, որպէս ասացի, է լեզու առանձինն : Վ բաժանել քերթութեան և շարագրածոյ յիւրեանս զբարբառ, բաժին ել նմա երևել միշտ ՚ի ճոխ կամ յընտիր սաճունանս, և աւանդեցան նմա ամենայն երփն երփն երանգոց էից, հարկ ՚ի վերայ եղեալ վարել նոքօք անխափան, և ՚ի զեղծանելն նոքօք՝ զուանասգիւտ :

Ղրկնա ընդ իշխանութեամբ իւրով զբազմութի յոյժ բառից, որ արգելեալ են շարագրածոյ և զյուրվս ևս ՚ի բառից ելբեմն ձգտէ իբրև զերկարս և երբեմն զսպէ իբրև զսուղս՝ յաւելմամբ կամ բարձմամբ տառից կամ վանկից : Նշխանութի է նմա և նորս ստեղծանելոյ, և ազատութի պահեալ նմա ՚ի կիր արկանելոյ զխափանեալս կամ որ յօտար գաւառս ուրեք վարին<sup>4</sup>, համանշանակս զբազումն գործելոյ, և նորաձև իմն դասակարգելոյ զնոսա<sup>5</sup>, և վարելոյ ամենայն համարձա-

<sup>1</sup> Արխտոս . յղ . քերթ . զԼ . 1 . էջ 653 :

<sup>2</sup> Նոյն, առ Դիող . լայերտ . գիրք Ը . յօդ . 58 : Եմակեղոկղ, առ Պլուտ . յղ . զգ . 2 : յօտարին ընցից . հտ . 2 . էջ 830 :

<sup>3</sup> Սեբոս . Եմակեղ . ընդդ . արամաբան . գիրք Է . էջ 392 :

<sup>4</sup> Արխտոս . յղ . քերթ . զԼ . 21 . հտ . 2 . էջ 669 :

<sup>5</sup> Նոյն անդ, զԼ . 20 . էջ 668 :

կութեամբ՝ որովք քերթողականն պերճախօսու-  
թութիւն զանազանի՝ ի հասարակաց բարբառոյ :

Վիւրութեցն շնորհելոց հանձարոյ հաղոր-  
դին և նուագարանք առ հասարակ, որ օգնեն  
նմա : Ըստի տաղիցն այլաչափութիւնք ազգի ազ-  
գի, զանազանեալք ՚ի բնէ ՚ի տիպս կերպարա-  
նացն : Վանդի դիւցազնականն չափ ստին ահա-  
ւոր իմն ձեռով և մեծաւայելուչ ձեմի, և սահ-  
մանեցաւ այն յերգս վիպասանականս . մեծա-  
վերջն ՚ի ձահ պատահէ խօսից, և թատերա-  
կանն քերթութիւն յաջողի նովաւ : Իսկ այլք  
՚ի չափուց պատշաճին ՚ի պարերգութիւնս\* . և  
վարին անաչխատ ՚ի տաղս և յօրհնութիւնս :  
Ըստ օրինակաւ յաճախեցին քերթողք զհը-  
նարս ախորժելի առնելոյ զերգան :

Եւ վախճանն առնելով բանիցն, եցոյց մեզ  
Եւկղիզէս զգիրս յօրինեալս յայլեայլ ժամա-  
նակս, զԱրփեսոսի, զԴուսեայ, զԹամիրեայ<sup>1</sup>,  
զԼինոսի, զԿնթեայ<sup>2</sup>, զՊամիրեայ, զՈղենի<sup>3</sup>,  
զԲարեայ, զԿալիմենիդեայ<sup>4</sup>, և զայլոց : Յօ-  
րոց կէսք օրհնութիւնք են դից և եղերերգու-  
թիւք, այլք զգոհից, զպատգամաց, զբառութեց և  
զհմայից երգք : Եւ ոմանք, մանաւանդ պարունակն

\* Զազգի ազգի սագաչա-  
փութեանցն Յունաց գոցեն  
ինգրողք ՚ի Իւ գլուխ գրոցս  
սասցիալ :

<sup>1</sup> Պղատ . յղ . հաս . գիրք  
Ի . հա . 2 . էջ 364 . նոյն . յղ .

օր . գիրք Բ . հա . 2 . էջ 829 :

<sup>2</sup> Հերակղ . առ Պղտա .  
յղ . երաժշտ . հա . 2 . էջ 1132 :

<sup>3</sup> Երոգոս . գիրք Գ . գլ . 35 :

<sup>4</sup> Գիտգ . լայերտ . գիրք Ը .  
յօգ . 111 :

վիպասանական՝ որ է խմբագիր առասպելապատում աւանդութեանց, ուստի բազումք յողբերգակ քերթողաց առին զպատճառս քերթութեցն իւրեանց՝, վիպէն զծննդաբանութիւն զից, զճակատամարտն հսկայից, զարշաւանս արգիական նաւորդացն, և զպատերազմունս թերացւոց և տրովացւոց՝ : Յայտոսիկ առաւել եղև բանասիրաց սարապումն ընդ դարս բազումս : Ը. Ե. քանզի բազմագոյնք՝ ի գրոց աստի ոչ յորոց համարինն զրեալ են\* , Աւելղիղեայ խառն ի խուռն զնոսա զետեղեալ էր :

Օ հետ այնոցիկ Ասիողեայն և հոմերի գային զիրք . բայց ընդ հոմերական զիրսն էր յոգնախուռն բազմութիւն թարգմանաց և մեկնաց՝ : Բնութերցեալ իսկ էր իմ՝ ճանճրութեամբ զմեկնութիւնս Ստեսիմբերոտեայ և Գլաւկոնի՝ , և ծիծաղեալ ընդ վաստակս Ստորոգորայ լամիսակեցւոյ՝ որ զՂիլիական և զՂիսական զիրս համարի այլաբանութիւն ծայր ի ծայր՝ :

Բազումք ի քերթողաց ըստ օրինակին հոմերի ձեռն արկին երգել զպատերազմն Տրովագայ . ընդ որս և Ըրկտինոս , Ստեսիքոր՝ , Սա

1 Կասաւք . ԵԱԹԵՆ . էջ 301 :

2 Փարբիկ . մատենագ . Յուն . գիրք Ա . գլ . 17 :

\* Յեակոյս մատենիս ի տեղեկութիւնսն . թիւ Դ :

3 Փարբիկ . անդ :

4 Պղատ . ի Յոմէր . հտ . 1 . էջ 530 :

5 Պղատ . անդ . Տասիան . ընդդ . հեթ . յօդ . 37 . էջ 80 :

6 Փարբիկ . անդ . էջ 9 և 597 :

կազատ<sup>1</sup>, և լեւորէս<sup>2</sup>, որ կոկողարանելով իմն այսպէս զգիրսն սկսանի. (Պրեհմո-երգիւմ շքախարչն, և զդասերազնն հուշակատար . . . : Սա ինքն լեւորէս յԱղիականն փոքրիկ<sup>3</sup>, և Վիկէոզեն<sup>4</sup> ի Արարիականն իւր<sup>5</sup>, նկարագրեցին զամենայն զէպս սատերազմին այնորիկ : Աւ ի Հերակղեան և ի Սեւեան քերթածս ամենայն արութիւնք երկոցունցն ևս զիւցազանց բովանդակին<sup>6</sup> : Բայց քերթողքս այսորիկ չեղէն հասու իսկութեան վիպասանականին երգոց, և դասակարգեալ զհետ Հովերի<sup>7</sup> խաւարէին ի ճառագայթից նորա որպէս աստեղք յարեզակնայիցն :

Այլ զիդեայ պէտ արարեալ ի հաւաքումն ամենայն ողբերգական, կատակերգական և սատիրական քերթութեանց՝ որք յամաց իբր երկերիւրոց և այսր ի տեսարանս Ալլազայ<sup>8</sup> և Վիկիլիոյ ի տեսիլ ածեալ էին, ժողովեալ էր իբր երկս հազարս<sup>9</sup> . այլ չև ևս էին ջանք նորա կատարեալ : Քանի բարձր կարծիս զմատենագրու-

1 Աթեն. զիբք ժԳ. զԼ. 9. էջ 610 : Մեօրս. մատենագ. Յուն. զԼ. 1 :	10 Աթեն. զիբք ժԵ. զԼ. 8. էջ 682 :
2 Պաւսան. զիբք ժ. զԼ. 25. էջ 860 :	6 Արխատոս. յԼ. քերթ. զԼ. 8. հտ. 2. էջ 658 :
3 Ովորոս. յԼ. արհ. քերթ. տող 137 :	7 Եղբին. յԼ. վրէպ հրէշտ. զԼ. 8. հտ. 2. էջ 398 :
4 Փարբիկ. մատենագ. Յուն. զիբք Ա. էջ 280 :	8 Մեօրս. մատենագ. յուն. և սատիրկ. Փարբիկ. մատենագ. Յուն. :
5 Երոզոս. զիբք Բ. զԼ. 117 : Արխատոս. յԼ. քերթ. զԼ. 16. հտ. 2. էջ 664 : Ա.	9 Եկեղոյս մատենին ի տեղեկութիւնն. Թիւ. Ե :



Թե՛նէ : Յունաց և զբեղնաւորութե՛նէ : Հանձա-  
րոյ նոցա ոչ ընծայէր հաւաքումն այն : Ի Թիւ  
արկեալ զվաստակս միոյ միոյ 'ի քերթողաց ,  
գտանէ՛ի բազմաց 'ի նոցանէ աւելի քան զհարիւր  
յօրինեալ քերթուածս : Այցոյց մեզ Աւկղիղէս  
ընդ զարմանալիս և զՉիացուն կոչեցեալ զողբ-  
երգութի՛ յորում Քերեմանի յառաջ քան զժա-  
մանակս ոչ բազումն ընդդէմ հասարակաց սովո-  
րութե՛ մուծեալ էր զամենայն ազգի ազգի չափս  
տաղից՝ . որ չեղև ընդունելի նորաձևութի՛ն այն :

Սնջկատակք 'ի սկզբանէ ծաղրածութիւնս  
խենէչս կամ՝ երգիծականս լուկեայն յանդի-  
ման առնէին 'ի տեսարանս : Յանուն նոցա կո-  
չեցան ապա քերթուածք համառօտք , որ զդէպս  
ինչ աննչանս 'ի տեսիլ ածեն՝ : Օ ի Թէպէտ և  
լատ առաջարկութեանն նմանք են կատակեր-  
գութեան , այլ պակասէ 'ի նոսա կնձիոն վիպաց ,  
և կէսք ծայրայեղ համարձակութեամբն զանա-  
զանին : Ան ևս , յորս յաղթանակէ ընտիր և  
վայելուչ զուարճախօսութիւն : Բնդ մնջկատակ  
քերթութիւնս , զորս հաւաքեալ էր Աւկղիղէայ ,  
գտի զՔսենարքեայն և զորս Սոփրոնի սիրակու-  
սեցւոյ է յօրինեալ՝ , յորս զուարճանայր յոյժ

1 Արիստոս . յղ . քերթ .  
հտ . 2 . գլ . 1 . էջ 653 :

2 Վոսս . յղ . կարգաւոր .  
քերթ . գիրք Բ . գլ . 30 . էջ  
150 :

3 Պլուտ . իրախճ . գիրք

է . խնդիր 8 . հտ . 2 . էջ  
712 : Դիոմեդ . յղ . ճարտ .  
գիրք Գ . էջ 488 :

4 Արիստոս . յղ . քերթ .  
գլ . 1 . հտ . 1 . էջ 653 :

Պղատոն, և ածեալ զայնոսիկ 'ի Սիկիլիոյ՝ եմոյժ առ աթենացիս. և 'ի մահուն նորա գտան այնոքիկ 'ի սնարս մահճաց նորա՝<sup>1</sup> :

Եւ յաւելասել մեզ Եւկղիդէս. Եսիս քան զթատրերգական արուեստին հնարս, քերթողք՝ որոց շնորհեալ էր 'ի բնէ սիրտ զիւրագորով և արգելեալ 'ի նոցանէ հանճար վիպասանական տաղից, մերթ գծադրէին 'ի նկարս իւրեանց զարկածս ուրուք յազգաց կամ զթշուառութիւն ուրուք 'ի նախնի արանց աւագաց, և մերթ ողբային զմահ ազգականաց իւրեանց կամ զըարեկամնց, և սիտիէին զսուգ իւրեանց ողբովքն : Երգք նոցա ողբականք, որոց գրեթէ միշտ կցորդէր սրինգ, կոչէին եղերերգութիւնք՝ :

Եւ յապգ քերթութեան կարգաւոր իմն անկարգութեամբ յառաջ խաղայ, փոխառութեամբ վէցոտնեան և հնգոտնեան տողից՝ : Աերպարան բանից նորա պարզ է, զի սիրտ խկասկէս վշտացեալ ոչ ինչ աւելի խնդրէ. պարտ է ասացուածոց նորա գոլ ուրեք ուրեք ջերմ որպէս զգազաղ՝ բնգ որով ծածկի հուր ծախողական, այլ չէ պարտ նոցա 'ի վէպս անդ բրդիլ յանէծս կամ 'ի

<sup>1</sup> Գիտգ. լայերտ. գիրք Գ. յօդ. 18 : Վոսս. յգ. կարգաւոր. քերթ. գիրք Բ. գլ. 33. էջ 161 :

<sup>2</sup> Ի գէոյ է կարծել զի ոմանք 'ի քերթութեանց տասի՝ որ մնջկատակքն կոչէին՝ էին հանգոյն իմն վիպասանուէցն

Ֆոնթենի :

<sup>2</sup> Պրոկղ. ծաղկաբազ առ Փոսայ մասենագ. էջ 384 : Վոսս. անդ, գիրք Գ. գլ. 11. էջ 49 :

<sup>3</sup> Ովրատ. յգ. արհ. քերթ. տող 75 :

դասնութիւն : Չիք ինչ գորովական քան զճայ-  
րագոյն հեղութիւն կցորդեալ ընդ ծայրագոյն  
վշտակրութեան . կամիցիս տեսանել զօրինակ  
սուղ ինչ և խանդաղատելի եղերերգութեան .  
գացես զայն ՚ի տաղս Աւրիպիդեայ : Անդրո-  
մուքէ ածեալ յԱլլադա , անկանի յոտս պատկե-  
րին (վ)եռեայ մօր Աքիլլեայ , և ոչ ինչ բողոքէ  
զգիւցազնէն . այլ յիշատակաւ դժնդակ աւուրն ,  
յորում ետես զԱկիտոր ընդ քարչ ածեալ շուրջ  
զարովական օբարսագօքն , աչք նորա խուն արտա-  
սուօք . զհեղինէ և եթ ամբաստանէ ամենայն  
ազեօիցն պատճառ , և ՚ի մէջ բերէ զանգթու-  
թիւնս՝ զորս Ալքմիոն արար ընդ նա . և միւս ան-  
գամ զանուն առն իւրոյ յիշատակեալ , յորդա-  
գոյն և ս իջուցանէ յաչացն վտակս արտասուաց՝ :

Մարթ է եղերերգութեան ախօփել զմեզ  
յաղէտս . և յորժամ մերձ եմք յանկանել ՚ի  
նայնս , պարտ է նմա քաջալերել զմեզ : Ազգողա-  
գոյն աւնու նա յայնժամ բարբառ , և հզօրա-  
գոյնս ՚ի կիր արկեալ օրինակս ամուչեցուցանէ  
զմեզ ընդ վատութիւն մեր , և յորդորէ ՚ի նա-  
խանձ արտասուաց ցօղելոյ ընդ մահ՝ զիւցազանց՝  
որոյ ՚ի վերայ հայրենեաց զկեանս փոխանա-  
կեալ իցէ :

Այսպէս Տիրատես արժարձեաց զեռանդն  
սպարտացւոյ շիջեալ՝ , և Վալլինոս զեփեսա-

1 Աւրիպ . Անդրոմ . սուղ 103 :

2 Ստոր . Տառ 49 . էջ 353 :

ցւոյն<sup>1</sup>. ահաւասիկ եղերերգութիւն նոցա : Ահա  
և Սաղաթին, զոր արար Սողոմ առ ՚ի խրախոյս  
աթենացւոց նուաձեւոյ զկղ զին Սաղամինա<sup>2</sup> :

Այլերերգութիւն պարտասեալ ապա ՚ի հե-  
ծութեանցն ընդ աղէտս մարդկան իրականս,  
զսիրոյն էառ ողբալ զանձկութիւնս<sup>3</sup> : Այլաւ  
բազմաց ՚ի քերթողաց պայծառացան տարիա-  
ւորք : Սիմներմ կողտիոնացի, մի յերևելազու-  
նից քերթողացն մերոց, զՎաննուլայ հռչակեաց  
զգեղ<sup>4</sup>. զՆատեայն հռչակէ հանապազ Փիղե-  
տաս կովացի՝ աստտին ՚ի մանկութենէ ստա-  
ցեալ իրաւապէս զհամբաւ : Արուս՝ այնպիսի  
նիհար և հողմաւար ասէն ունել մարմին, զի առ  
՚ի կալ ընգդէմ բռնութեան հողմոց՝ հարկ է նմա  
առնել զներբանս կօշկացն կապարեայս, և կամ  
գնտակս կապարեայս ածել զնորօք<sup>5</sup> : Այլացիք  
պանծացեալ ընդ յաղթութիւնս նորա, կանգնե-  
ցին նմա ընդ սօսեաւ պատկեր պղնձի<sup>6</sup> :

Այլ ՚ի բուռն հարկանելն իմ զմիոջէ ՚ի գրեանցն,  
որ մակազրէրն ի իզգական, ասէ ցիս Ալիլի-  
զէս. Անտիմաքեայ կողտիոնացւոյ է զիրդ, որ  
յառաջքան զգարս զայս եկաց<sup>7</sup>, նոյն ինքն որ և

<sup>1</sup> Սաղմ. ճառ 49. էջ 355 :

<sup>2</sup> Պլուտ. ՚ի Սող. հա. 1. էջ 82 :

<sup>3</sup> Ովրաս. յղ. արհ. քերթ. տող 76 :

<sup>4</sup> Քամէլ. առ Աթեն. գիրք ժ. Գ. ԳԼ. 3. էջ 620 : Սուրբ. ՚ի բառն Միմքեր.

<sup>5</sup> Աթեն. գիրք ժ. Բ. ԳԼ. 13. էջ 552 : Սուրբ. ՚ի բառն Փիլոթ.

<sup>6</sup> Հերմեսիան. առ Աթեն. գիրք ժ. Գ. ԳԼ. 8. էջ 598 :

<sup>7</sup> Պարասպ. Պինգ. պիւթ. 4. տող 398 :

զ[ժ]եբայիդն յօրինեաց : Հարեալ էր նա 'ի սէր չքնաղագեղին Վրիսեայ, և չոգաւ զհետ նորա 'ի Վիւզիա . ուր ծնեալ էր Վրիսէիս, ուր և մեռաւ 'ի մէջ բաղկաց նորա : Այլ իբրև դարձաւ նա 'ի գաւառ իւր, չեզիտ այլ սփոխումն վշտացն՝ բայց զեղուլ զայն 'ի զիրա, և կոչել զեղերերգութիւնն յանուն սիրուհոյն՝ :

Բսեմ . Այն անձանօթ է ինձ թեբայիդն . որ թէպէտ և չէ ինչ բարւոք կարգաւորեալ, և սողք հոմերականք ուրեք ուրեք 'ի նմա գտանին յար և նման գրեթէ ըստ վանկիցն 'ի կիր առեալ՝, այլ թուի ինձ զի ըստ բաղում մասանց արժանի է քերթողն գովութեան : Բայց կուտական 'ի նմա բանք՝ և կարի սաստկութիւն, և եթէ ոչ որ զչարեսցի՝ ասեմ թէ և հիւծութիւն ոճոյ՝, տան կարծել՝ զի ոչ գեղ հանձարոյ և ոչ սիրտ գորովական էր նմա առ 'ի կարեկից առնել զայլս ընդ մահ Վրիսեայ : Բայլ արդերկբայք իմ լուծցին : Այլ մինչ Ալիզիդէս ցուցանէր Վիսեայ զեղերերգութիւն Վրբիդդեայ, զՎիմնիդեայ, զՎրոնասայ, զՎրոնեայ և զայլոց, ընթերցայ ևս զՎիւզականն : Այլ յաւարտեն

1 Հերմասիան . առ Աթեն . Գիբք ժ. Գ . ԳԼ . 8 . էջ 598 : Պլուտ . յԳ . մտիթ . հաս . 2 . էջ 106 :

2 Պորֆիր, առ Եւսեբ . պատրաստ . աւետ . Գիբք ժ . էջ 467 :

3 Կատուղ . յԳ . Կիննայ և Վոլուս . երգ 87 :

4 Դիոնես . աղիկ . յԳ . շաբադր . բառից . հաս . 3 . էջ 160 : Նոյն . յԳ . քնն . նախնի մատենագր . ԳԼ . 2 . էջ 419 :

զայն, ասեմ. Չգտանիմ խաբեալ. զի ահա Մնդրունքէ հանդէս առնէ վշտաց իւրոց, և ոչ ածեալ զմտաւ զի որ խնդրէն օրինակս առ 'ի սփոփումն՝ սփոփեալ իսկ է, համեմատէ զվիշտս իւր ընդ վիշտս նախնի զիւցազանցն Ալլադայ՝, և նկարագրէ երկայն բանիւք զտաժանաւոր ճգունս՝ զոր արգիական նաւաստիքն կրեցին յարչաւանս իւրեանց՝ :

Աւ իւսիս ասէ. Մըքիղորքոս պատշաճագոյն ևս ելա վշտաց իւրոց հնարի առնել զինեաւ. Քանզի քեռայր նորա ծովահէղձ լեալ էր, և քերթողին յօրինելով յայնժամ տաղս ինչ, ողբայ վայրիկ մի զմահ նորա, և փութայ հանդարտել զսուգն՝ ասելով. Օի ոչ դարձուսցեն զնա արտասուք մեր 'ի կեանս, և ոչ խաղք և զիներբուք յաւելցեն զդառնութիւն բախտի նորա՝ :

Աւ եցոյց մեզ Աւկղիղէս, զի խառնումն վեց ոտնեան տողից ընդ հինգոտնեանս բնոյն և եթեղերերգութեան էր երբեմն պահեալ, այլ ասոս յազգի ազգի քերթութիւնս 'ի կիր արկաւ : Աւ մինչդեռ օրինակս 'ի վերայ բերէր՝, ածառ նմանատեան մի՝ որում 'ի բազմաց հետէ ակնկալեալ մնայր. և էր այն Վղիականն փոխեալ 'ի չափ եղերերգական, զհետ համերական տողիցն իւրա

1 Պլուտ. յղ. միթիթ. հա.

2. էջ 160 :

2 Պարսպ. Պինդ. սիւթ.

4. տող 398 :

3 Պլուտ. յղ. ունկնդր.

քերթ. հա. 2. էջ 33 :

4 Յիշատ. բանաս. կաճառ.

հա. 7. էջ 383 :

քանչիւր յանդգնեալ քերթողին յաւելուլ մէն մի տող սղագոյն ըստ իւրոց ախորժակացն : Աւ քերթողն էր Պիկրէս եղբայր Աբտեմիսեայ , որ մեռան , գշխոյին Վարիոյ տիկնոջն Սաւտղեայ<sup>1</sup> . և ոչ ինչ խափան եղև նմա ազնուականութիւն ազգատոհմին չածել 'ի լոյս զայլանդակ գիրան , և թերևս գլոտեգոյն քան զամենայն գիրս :

Աւ էին դարանք մատենից բազումք , յորս էին օրհներգութիւնք դից , տաղք զուպարայաղթ նահատակաց Ալլաղայ , գեղծք հովուականք , զանձք , և բազմութիւն հատուկտիր նուագաց : Աւ ասէ Աւելիդէս . հովուերգութեան սարտ է զհովուական կենաց նկարագրել զբերկրութիւնս , խաշնարածս բազմեալ 'ի դալարւոջ յեզր վտակի 'ի զառ 'ի վայր բլրի ընդ հովանեաւ վաղեմի ծառոյ , մերթ զհնչմունս եղեգանց խառնելով ընդ մրմունջ ջուրց և Օ եփիւռոյ , և մերթ զսէր երգելով կամ զհակառակութիւնս իւրեանց անակղս կամ զհօտս և կամ որ ինչ զնորօք տեսիլ զուարճալիք :

Այս ազգ քերթութեան ոչ ինչ զարգացաւ առ մեզ , և սկիզբն իսկ 'ի Սիկիլիա էառ<sup>2</sup> : Օ ի անդ , որպէս պատմեն , 'ի մէջ լերանց պսալելոց կահնեօք ձգի հովիտ մեծ՝ ուր զգանձս իւր շռայլեալ զեղու բնութիւնն . անդ ծնաւ հովիւն Վափնիա յանտառի ուրեք սարդենեաց<sup>3</sup> , և զիք

<sup>1</sup> Սուխ . 'ի բառն Սոյր .

<sup>3</sup> Նոյն անդ :

<sup>2</sup> Ի տղ . գիրք Դ . էջ 283 :

փութացան ընդ հակառակս միմեանց ըսուլ զնա պարզեօք: Յաւերժահարսունք վայրացն դայեկեցին նմա. շնորհս և զեղ Մտողիկն ետ նմա, և հերմէս զբարբառ համողիչ շրթանց նորա. Պան զմատունս նորա կրթեաց 'ի սրինգ եօթնփող, և Սուսայք զորրակս խանդաղատելի ձայնին: Եւ հովիւք վայրացն ժողովեալ անդէն զնովաւ, ուսան երանելի զբախտ իւրեանց համարել. և սուրակք եղեգանց փոխեցան 'ի նուազարանս քաղցրաձայնս: Եւ զուպար ևս եղ Ղափնիս, ուր զոյգ պատանեաց ոտիւք միմեանց կացեալ՝ վիճէին վասն մրցանակի երդոց և զործիական երաժշտութեան: Մրձադանգք կենդանացեալք 'ի ձայնէ նոցա, հնչէին այնուհետե զաւետիս խաղաղաւէտ և յարատե բարեկենդանութեան: Բայց Ղափնիս ոչ ընդերկար վայելեաց 'ի տեսիլ բարերարութեանցն իւրոց. քանզի մատնեալ 'ի վրէժինդրութիւն սիրոյ, մեռաւ 'ի ծաղկի հասակին՝. այլ սանք նորա ոչ զազարեն ցարգ՝ 'ի հռչակելոյ զանուն նորա, և յողբալոյ զչարատանջ մահ նորա՝: Օ հովուերգութիւն, որոյ նա ինքն համարի հաւակ, զարգացուցին ապա քերթողք երկու սիկիլացիք, Ստեսիքոր հիմերացի և Ղիումն սիրակուսեցի՝:

1 Վոսս. յղ. կարգադր.

քերթ. գիրք Դ. գլ. 8: Յի-

շատ. բանաս. կաճառ. հոս.

հ. էջ 85:

2 Դիոգ. գիրք Դ. էջ 283:

3 Եղիան. զան. պատմ.

գիրք ժ. գլ. 18: Թէոկր. գե-

ղօն, 1:

4 Նոյն անգ. Աթեն. գիրք

ժ. Դ. գլ. 3. էջ 619:



Ի իւսիս ասէ . Վիտեմ՝ զի արուեստս այս տե-  
սիւք չքնաղս զզուարձալի վայրաց յանդիման  
առնէ , այլ տգեղացուցանեն զնոսա յոյժ որ  
անդր՝ ՚ի ներքս ածեալ անշուք դէմքն : Օ ի զինչ  
զուարձութիւն իցէ տեսանել անդէ, որդս բիրտս  
սարապեալս ՚ի գործ անարդ : Աւելիդէս ասէ .  
Աչ էր երբեմն օրէն ստրկաց արածել զխաչինս .  
այլ տեարք հօտից իւրովի հովուէին զնոսա ,  
զի բաց ՚ի նոցանէ ոչ գոյին մեծութիւնք :  
Այսմ՝ վկայէ աւանդութիւն , որ հովիւ նախ  
և ապա երկրագործ ասէ զմարդն լեալ . վը-  
կայեն և քերթողացն զրոյցք , որ բազում այն  
է՝ զի և յառասպելն անդ բերեն զյիշատակ  
նախնեացն բարուց՝ : Հովուին Անդիմիոնի տար  
վացաւ Աքտեմիս . ՚ի լերին Վդա զհօտս Պրիա  
մու հօր իւրոյ արածէր Պարիս . և Ապողոն զԱք-  
մետայ արքային հովուէր զխաչինս :

Այս ուրեմն մարթ է քերթողի առանց եղ-  
ծանելոյ զկարգս սատշաճից ՚ի վաղնջուց դարս  
անդր ՚ի վեր ընթանալ , և ածել զմեզ յանա-  
սատս՝ ուր կէին զերծք ՚ի խղճէ չարեաց , որք ՚ի  
լիութիւն բաւականի պիտոյիցն իւրեանց ժառան-  
գէին ինչա՝ ՚ի հարցն , սարապեալք յանդորրու  
՚ի խաղս , մշանջենաւորելով իմն մինչև ՚ի վախ-  
ձան կենաց զմանկութիւն :

Սարթ է նմա յաւելուլ ՚ի դիւցազունս իւր

զնախանձ նմանութեան, որ յարժման կաղցի զսիրտս նոցա. և տացէ նոցա զգալ առաւել քան խորհել: Կօսք նոցա լիցին միշտ սարգ, բնական, այլասացիկ և առաւել կամ նուազ պերճ՝ ըստ իւրաքանչիւր պայմանի, որով ՚ի հովուական կենցաղն ըստ չափոյ ստացուածոցն զանազանէին: Օ ՚ի վեհազոյնք ՚ի մեծութիւնս համարէին յայնժամ արջառք, և յետ նոցա խաչինք և այծք և խոզեան՝: Բայլքանզի սարտ է քերթողին տալ հովուացն իւրոց կիրս մեղմն և ախտս թէթեւ, սակաւ ինչ տեսարանս մարթ է նմա յանդիման առնել մեղ. որոց միօրինակ և ծանրատաղտուկ տեսիլ ձանձրալի թուի, որպէս զծով միշտ անշարժ, և զերկին անամպ միշտ:

Բն ՚ի չոյէ փոփոխութեան և այլակերպութեան ոչ երբէք հովուերպութիւն լիցի ախորժեղի որպէս զքերթութիւնս, յորս ընդարձակի սիրտ ՚ի կրից բերկրութեան և վշտաց: Օ տաղիցն ասեմ, զորոց զիտես զայլևայլ տեսակս. այլ իմ յերկուս դասս բաժանեալ է զնոսս. յերգս բաժակի, և որ ընդ գործս ինչ կցորդին նուազք, որպէս ընդ հունձս և ընդ կուծս, ՚ի հոսել զցորեան և յաղալ, ՚ի կտուրս խաշանց, և օստայնանկացն և դայեկաց երգք, այլովքն հանդերձ<sup>2</sup>:

Բռաջնոյն նկարագիր՝ զմայլումն գինւոյ,

1 Յիշատ. բանաս. կաճառ.  
հտ. 4. էջ 534:

2 Նոյն անդ, հտ. 9. էջ  
347:

սիրոյ, բարեկամութեան, ուրախութեան, և  
 Հայրենասիրութեան: Ը որս խնդրի Հանձար  
 պատկանաւոր, և որ ունին զայն 'ի բնութենէ՝  
 ոչ կարօտի կանոնաց, իսկ որոց չունին՝ կա-  
 նոնք ինչ ոչ օգնեն: Ան և Պինդարայ երգք  
 բաժակաց՝, այլ Կնակրէնին և Կլեայ նուա-  
 դեացին միշտ: Յերկրորդ ազգ նուագայն ակոր-  
 ժելի գործեն զսրատմութիւն վաստակոյն յիշա-  
 տակք Հանդամանաց ինչ նորա կամ օգտոյն՝ զոր  
 ածեն: Վէպ եղև ինձ լսել զգինուորի ուրումն  
 զմայլելոյ գինուլ զերգ պատերազմական, զորոյ  
 ածից այսր զիմաստս քան թէ զյօրինուած .  
 “ Վիզակ սուսեր և ասպար, ահա ամենայն  
 դանձք իմ՝ նիզակաւ, սուսերաւ և ասպարաւ  
 ժառանգեմ զանդաստանս, զհունձս և զգինի:  
 Տեսի խոնարհեալ առ ոտս իմ զազգս, թաղա-  
 ւոր զիս կուէլով և տէր . զի ոչ զոյր նոցա նիզակ,  
 սուսեր և ասպար ”<sup>1</sup>:

Վանի սիրելի իցէ բանաստեղծութեան բնա-  
 կել ուր բնութիւնն և սահմանադրութիւնք յորդո-  
 րեն անդադար զցնորս մտաց աշխոյժս և զուարթս  
 զէղուլ յորդառատ: Օ ի ոչ միայն 'ի վիպասա-  
 նական և 'ի թատերական քերթութիւնս նշա-  
 նաւորացն սահմանեալ է մրցանակ՝ անդրի, կամ  
 ցանկալի ևս քան զայն վարկ քննողաց, այլ և սը-  
 սակք գերապանծք ամենայն ազգի ազգի քնարա-

<sup>1</sup> Աթեն . գիրք ժ . ԴԼ . 7 .  
 էջ 427 : Սուիդ . ՚ի Ունծ .

<sup>2</sup> Աթեն . գիրք ժԵ . ԴԼ .  
 15 . էջ 695 :

կան քերթութեանց սրահին մրցանակք: Չիք քաղաք՝ յորում ընդ ամն բովանդակ չիցեն տօնք յաճախաւորք զից, և չիք տօն՝ զոր նուազք նորանորք չզարդարեցեն, և չիք նուազ՝ որ ոչ ՚ի լուր ամենայն բնակչաց ՚ի սարուց տոհմիկ մանկըտւոյն երգեսցի: Արդ տէս ինձ քանի եռանդն ածիցէ այս քերթողին, և քանի յաճախեսցեն նմա փառք ՚ի շնորհակալութենէ համազգեսաց զուարայաղթ նահատակացն՝ զորս երգէ: Աճցուք զնա ՚ի գեղեցիկ ևս տեսարան, ուր առաջիկայցէ նմա վախճան առնել երգովքն իւրովք ողիմպիական տօնից և կամ այլոց բազմահանդէս տօնախմբութեանց Այլադայ. որպիսի ինչ թուիցի նմա ժամն այն, յորում երկուց կամ երից բիւրուց հանդիսականաց՝ ՚ի լուր ներդաշնակութեան տաղից նորա զմայլելոց՝ ամբառնայ մինչև յերկինս աղաղակ ցնծութեան և զարմանաց: Այլ և չէ հնար ևս մեծազօր պետութեանց երկրի տալ հանձարոց այսքան մեծարգի մրցանակ:

Ամին իրի մեծարին յոյժ առ մեզ քերթողք՝ պայծառացուցիչք տօնիցս մերոց, մանաւանդ որք ՚ի քերթութիւնս իւրեանց սրահեն զնկարագիրս սեփականս գիցն՝ զորս նուագեն: Օյլ ամենայն ազգի ազգի նուագաց պարտ է ըստ պատշաճի նուագելոց իրացն այլևայլ բերել ազգս եղանակի և երաժշտութեան: Աթէ զվեհագոյնն զից երգես, կալ զաստիճան ծանր և մեծաստտ. իսկ

էթէ զ]] ուսայս, քաղցր և ներդաշնակաւոր յօրինեսցիլը նուազս : Նախնիք զգուշութեամբ զպատշաճ՝ համեմատութիւնս զայս սրահէինս . այլ բազմազոյնք յարդեաց, զանձինս առ իմաստնազոյնս ունելով այնու՝ զի են զխոնազոյնք, արհամարհէն զայն անպատկառ՝ :

Իսկ ես յաւելի . Օ պատշաճսդ զայդոսիկ և ՚ի դուզնաբեայ սովորութիւնս ձեր գտանեմ, սուղ ինչ ՚ի վեր յառաջին ժամանակս մատուցեալ . և զարմանամ ընդ նախնի օրէնսդիրս ձեր, որք անդստին կանխաւ ՚ի միտ առին՝ զի լաւ էր կապել զազատութիւն ձեր արարողութեամբք ինչ քան բռնադատութեամբ : Օ նոյն և ՚ի հետազօտել զսկիզբն ազգաց՝ տեսի, զիշխանութիւնս սովորութեանց կանխեալ քան զօրինացն : Օ ՚ի սովորութիւնք հանգոյն առաջնորդի կալեալ զձեռանէ ածեն զմեզ ընդ ուղիս, ընդ որս բազում անգամ երթևեկեալ է նոցա . իսկ օրէնք զտեղացոյց պատկերաց բերեն զնամուտութիւն, ուր ուղղագիծ ձգին ուղիք առանց աղամողութեցն :

Եւ սպա յաւել Եւկղիղէս . Ոչ ընթեռնում ձեզ ՚ի տաղտկութիւն զցուցակ քերթողաց, որք յաջողեցան ՚ի քնարական բանաստեղծութեան . բայց երևելիք ՚ի նոսա են յարանց՝ Ստեսիքոր, Իբիկոս, Իշկէոս, Իցկման, Սիմոնիդէս, Իսաբիղիդէս, Ինակրէոն և Պինդար . և ՚ի կա-

1 Պրատ . յղ . օր . գիրք Գ . հտ . 2 . էջ 700 : Պրոտ . յղ . երաժշտ . հտ . 2 . էջ 1133 :

նանց, քանզի և 'ի նոցանէ յաջողեցան բազումք 'ի քերթուածիւնս յոյս գիւրընկալ գեղոյ, եղևն երևեալք Սախիսալ, Լըրիննա, Տելեսիլա, Պարս սիլա, Սիրտիս և Կորիննա<sup>1</sup> :

Ըստանօր, մինչև յառաջ ևս անցեալ, 'ի դէպ համարիմ յիշատակել միւս ևս ազգ քերթուածեան՝ յորում յաղթանակէ աւիւն բանաստեղծական : Օրհնութիւնն ասեմ Սպան զարամեաին<sup>2</sup> Վիոնիսեայ, որ կոչին երկդոնենին երգք : Պարտ է ցնորել իմն քերթողին՝ որ յօրինէ զայնս, և երգեցողացն առ հասարակ<sup>3</sup> . զի նորօր ուղղին կաքաւք հրճուողականք, բազմամբոխք, որ շրջադարձք ըն յաճախ սովորութե յօրինին<sup>4</sup> :

Տաղքս այսորիկ 'ի տիպս առանձին կերտարանացն զիւրաւ ընտրին յայլոց<sup>5</sup> : Ըն 'ի նկարագրել զհանգամանս և զհամեմատութիւնս իրաց ընդ միմեանս, օրէն է ասա քերթողին կցորդել ստեպ զբազում բառս 'ի մի, որով կազմին երբեմն բառք այնպիսիք երկայնաձիգք՝ որ սարտասեցուցանեն զսելիս, և բազմաձայնք սասանեցուցիչք երևակայութեան<sup>6</sup> : Ըլ յլարանութիւք,

<sup>1</sup> Վաս . յղ . կարգագր . տող 25 : Պարսպ . Արիստոփ . քերթ . գերք Գ . ԳԼ . 15 . 'ի հաւան , տող 1403 :  
Էջ 80 :

<sup>2</sup> Պղատ . 'ի Յոնե , հտ . 1 . հտ . 10 . էջ 307 :  
Էջ 534 : 'նոյն , յղ . օր . գերք <sup>3</sup> Արիստոփ . 'ի խաղաղ . Գ . հտ . 2 . էջ 700 : տող 831 : Արիստոս . ճարտ .

<sup>4</sup> Պրոկղ . ծաղիտարալ , առ մատենագ . Փոտայ , էջ 985 : գերք Գ . ԳԼ . 3 . հտ . 2 . էջ 587 :  
<sup>5</sup> Պարսպ . Պինգ . յոյնոյ . 13 .

որ թուին անպատկանաւորք ընդ իրեարս , կուռ զհետ միմեանց յաջորդեն 'ի նոսա . այլ քերթողն սաստկապէս վազիւք յառաջ խաղացեալ , նշմարէ զկապակցութիւն իմաստիցն , այլ անտես առնէ :  
 Սերթ 'ի կանոնաց արուեստին ապստամբէ , և մերթ զազգի ազգի չափս տաղից 'ի կիր արկանէ և զբազմայեղանակ ներդաշնակութիւն ' :

Բայց ուր քերթողական հանձարոյն ունակ , օգնականութեամբ աղատութեանցս սլարդէ առաջի աչաց մերոց զբանաստեղծութեանն բազմափարթամ ճոխութիւնս , նմանողքնորին ապիւհարք սնտիառ պերճութեանց հանդէս առնեն : Յուրտք և անախորժք և նսեմք վասն խորիմնցք երևելոց , զգուհիկ իմաստիւք գուհիկադոյն ածեն երանգս : Աւ բազումք այնորիկ են՝ որ 'ի սկզբանէ տաղիցն իւրեանց հնարին շլացուցանել զմեզ ճառանչիւք նմանութեց , զորս յորտընդոստ ամբաւ հարութեց և յարկայնոց երևութեանց առնուն 'ի կիր : Ի սոյն Արիստոփանեայ ակնարկեն կատականք . զի 'ի միում ուրեք 'ի կատակերգութեանցն իջուցանէ յերկնից այր մի : Հարցանենցնս այլք . Օհնչ 'ի բարձունս անդ տեսեր : Անաս առէ . Վերթողս երկու կամ երկու երկզրունենին տաղից , որ ընդ ամպս և ընդ հողմն ընթանային թողովել զողորջիս և մրրիկս՝ առ 'ի կազմել յայնցանէ զնախերգանս տաղից իւրեանց ' :

1 Դիոնես . աղիկ . յղ . 2 Արիստոփ . 'ի հաւսն ,  
 շարագր . բառ . յօդ . 13 . հո . տող 1383 .  
 5 . էջ 131 :

Եւ այլուր զերգս քերթողացս այսոցիկ նմանեցուցանէ պղպջակաց օդոյ, որ ցնդին՝ հերձեալ շառամամբ զպարունակ իւրեանց՝ 1 :

Ի սմա և ցարդ իսկ է տեսանել զպատկանաւոր ազգի ազգի իրաց զաւիւն : Օ ի քերթող, որ ՚ի նուագել զԱպողոն՝ հանդարտէ զմիտս իւր, նոյն ինքն ՚ի սկսանել զներբող Վիոնիսեայ յուզի սաստկապէս, և ՚ի յասպղել երեակայութեանն վառմանն՝ արծարծանէ զնա զինէհարութեամբ՝ 2 : Հարեալ անապակաւս \* որպէս որոտընդոստ շանթիւ, ասէ Լըբիղըբոս, մտանեմ յասպարէզ՝ 3 :

Եւ կղիղեայ ժողովեալ էր ոչ միայն զսորատաղս սպանդարամետականս՝, այլ և զԱրիոնին՝, զԱսոսի՞, զՎինդարայ՝, զԵլանիպպիղեայ, զՓիլըքսենեայ, զՏիմնթեայ, զՏելեստեայ, զՊոզիւիտեայ, զՅոնեայ, և զայլոց բազմաց՝ յորոց առաւելագոյնք կացին յաւուրս մեր : Օ ի այս ազգ քերթութեան, որով ՚ի վսեմն բերի, բըռնագոյնս ձգէ յինքն զքերթողս աննշանս : Օ ի

1 Արիստոփ. ՚ի Գորաս, ատղ 251 : Վոսս. յլ. կարգադր. քերթ. գիրք Դ. ԴԼ. 16. էջ 88 :

2 Փիլըք. և Եպիբարմ. առ Աթեն. գիրք ԺԴ. ԴԼ. 6. էջ 628 :

\* Բնագիրն ասէ. Ամպա. հարեալ ՚ի գինւոյ :

3 Երբիւ. առ Աթեն. գիրք

ԺԴ. ԴԼ. 6. էջ 628 :

4 Աթեն. անգ :

5 Երոգոս. գիրք Ա. ԴԼ. 23 : Սուիգ. ՚ի բառն Արլոն.

6 Կլեմ. աղեքս. ծագկաբաղ. գիրք Ա. էջ 365 : Եղիան. զան. պատմ. կենդան. գիրք Է. ԴԼ. 47 :

7 Սարաբ. գիրք Թ. էջ 404 :



որպէս ամենայն որ 'ի ժամանակիս յայսմիկ 'ի վեր քան զիւրն նկրտի սրայման, այսպէս և քերթողք ձգտին 'ի գեր 'ի վերոյս քան զիւրեանցն հանձար :

Տեսի ապա խմբազիր մի՛, յորում էին տողք ափ յափոյ յօրինեալք, և որ 'ի սկզբնատառս տողիցն յօդէին անուանա, և առակք և առեղծուածք աղգի աղգի՞\* : Այլ յետիոյս մատենին նկարեալ էր ձու, բազին, տասպար երկսայրի, և թւէք Սիրոյ : Օ որս մօտ ևս մատուցեալ, տեսի զի էին քերթուածք՝ որոյ տողք այլաչափք յան զիման առնէին զիրն առաջարկեալս առ 'ի խաղ : Օ որ օրինակ 'ի ձուն՝ երկու առաջին տողք էին եռալանկք, իսկ 'ի յաջորդն յաւելլով վանկիցն տակաւ՝ ապա ըստ նմին համեմատութեան նուազէին, աւարտեալ 'ի կրկին տողս եռալանկս հանգոյն առաջնոցն : Սիմիլիաս հոդացի յաւել 'ի բանասիրութիւն զարգասիս զայսոսիկ մտաց մանկականս և տաժանաւորս :

Բայց Վիւսիս, քանզի սիրէր յոյժ զբանաստեղծութիւն, երկնէր միշտ զի մի գուցէ ընդ սնտափ զըօսանս համարեսցի այն . և 'ի կրկնել և յերեքկնել Ալկիդիդեայ, զի անմարթ է յաջողել քերթողի՝ որում չիցէ հանձար հաճոյ լինելոյ, ոչ ևս համբերեալ 'ի վերայ էած և ստէ . Բանա-

1 Սիմեն . առ Աթեն . դերք յ . 41 . 20 . էջ 453 :  
 Գ . 41 . 35 . էջ 125 : \* Յետիոյս մատենիս 'ի տե .  
 2 Կալլ . առ Աթեն . գերք զեկութիւնն . թիւ 2 :

ստեղծութիւն զմարդիկ էած ՚ի քաղաքականութիւնս զմանկութիւնս իմ՝ հրահանգեաց, նա զխրատութիւնս խրատուց ամօքէ, նա սիրելի առնէ զառաքինութիւնս՝ հաղորդեալ նմա զչորհոյս իւր, նա զմիտս իմ կրթէ ՚ի վիսպասանականն, գորովէ ՚ի թատերականն, ըստ երկիրդածութեամբ ՚ի պաշտամունս կրօնից, յորդորէ յուրախութիւնս, ՚ի ճաշս, և ազգէ ՚ի նա եռանդն ազնուական ընդդէմ թշնամեաց: Այլ թէպէտ ոչ այլ ինչ արգասիք էին կեղծեաց նորա՝ բայց խաղաղել զտազնապս երեւակայութեան մերոյ, ոչ ապաքէն օգուտ մեծ էր հայթայթել զբօսանս ինչ անխառ սակարս ՚ի մէջ այնքան թշուառութեանց՝ զորոց լսեմ անդադար խօսելոյ բազմաց:

Եւստեցաւ Աւիղիդէս ընդ աշխոյժս նորա, և առ ՚ի զրգուել զայն և ևս՝ ասէ. Վիտեմ զի առ ոտս Պղատոնի աշակերտեցար. արդ մոռացեալ իցես զի նա զկեղծիս զայտոսիկ քերթողականս համարէր պատկերս խաբուսիկս և փաստակարս, որք նուաստացուցանեն զգիս և զգիւցազունս, և խուճապս և եթ առաքինութեան առաջի առնեն մեզ ՚ի նմանութիւնս՝:

Արկնեալ անդրէն Ալեսեայ, ասէ. Աթէ մարթէր ինձ մոռանալ զայն, մտտեանք նորա վերջստին զայն ինձ յուշ ածէին. այլ խոստովանիմ, զի ուր ուրեք թուի ինձ զօրութեան փաստից նորա յախշտակել զիս, գտանիմ ՚ի քերթողա

1 Պղատ. յղ. հաս. զերբ Դ. հտ. 2. էջ 387:

կան կերպարանաց բանից նորա ձգեալ . և ՚ի դարձուցանել նորա ընդդէմ երեւոյցութեան զզէնսն հօրս ընկալեալս առ ՚ի նմանէ , ամբաստանեն զնա միտք իմ՝ յապերախտութիւն և ՚ի դրժանս : Այս ասոյա դարձեալ ասէ ցիս . Օ խորհրդութի քեզ , ոչ առաջին և կարևոր գործ է քերթողի ուսուցանել մեզ զպարտս մեր խայծիւ զբօսանաց : Եւսեմ . Յորմէհետէ ընդ գիտունս կալով ՚ի միտ առի զգնացս հետամտելոցն համբառոյ , ոչ ևս զառաջին պատճառս գործոց նոցա՝ այլ զերկրորդն հետազօտեմ . զի առաջինն զքերթէ միշտ շահու կամ փառաց է խնդիր : Այլ առանց ՚ի քնին այսոցիկ զեզերելոյ , ասացից քեզ որ ինչ ինձ թուի . (Թ)Վէսէտ և քերթողք հաճոյ և եթ խնդրեն լինել , այլ քերթութեան մարթ է օգտակար լինել :

## ԳԼՈՒԽ ԶԲ :

Ի նոյն մատենագարանն Եւկղիզեայ յազագս բարոյականին գիտութեան :

ՊԱՐԶԵԱԼ խօսեցաւ ընդ մեզ Աւիղիզէս , և ասէ . Բարոյականին գիտութիւն ՚ի հիւսս իմն վճնոց երբեմն սահմանէր : Պիւթագոր և առաջինք յաշակերտաց նորա , փոյթք յամենայնի ՚ի

1 Արիստոս . յղ . քերթ . գլ . 9 . հտ . 2 . էջ 659 : Վրոսս . յղ . արհ . քերթ . գլ . 8 . էջ 42 :

սկզբնապատճառս իրաց մատչել, կապեցին զայն ընդ իմաստս բարձունս գեր 'ի վերոյս քան զմիտս հասարակաց մարդկան՝, դասեալ զայն ընդ գիտութիւնս. և մարդ այնուհետև, գէթ որչափ մարթէրն, ծանուցաւ: Ըստ ասպա դարձեալ գտաւ նա անճանօթ, 'ի սիւռել իմաստակաց զերկբայս իւրեանց 'ի վերայ օգտակարագոյն իսկ ճշմարտութեանց: Սոկրատայ ածեալ զմտաւ՝ զի 'ի գործել սահմանեալ եմք քան 'ի խորհել, առաւել 'ի հրահանգս քան 'ի տեսական գիտութիւն բարոյականին սարսապեաց: Ընտես արար զիմա նալի տեսութիւնս, և ըստ այսմ 'ի դէպ է ասել՝ զի իջոյց զիմաստասիրութիւն յերկնէ՝ 'ի յերկիր՝: Ըշակերտք նորա բացատրեցին զվարդապետութիւն նորա. բայց կիսոց 'ի նոցանէ այնպէս այլայլեալ զայն վսեմ՝ իմաստիւք՝ մինչև անդրէն յերկինս վերամբառնալ զբարոյականին գիտութիւն: Իսկ պիւթագորեանք սարտ համարեցան ուրեք ուրեք 'ի բաց դնել զառակաւոր բարբառ իւրեանց, առ 'ի տալ մեզ 'ի միտ առնուլ զկիրս մեր և զպարտս. որպէս (Սէնագէս, Սեոսպոս և Ըբքիտաս արարին և յաջողեցան՝:

Ղստք 'ի նոցանէ շարագրեալ ոչ սակաւք էին մատենադարանին Ալկիդիդեայ, զետեղեալք նախ քան զբարոյական գիրս Ըբխատտելի: Օտորա

1 Արխտոտ. բարոյ. աւագ. 4. հտ. 2. էջ 362:

2 Կիկեր. տուսկուլ. 74. 3 Ստոր. 'ի բազում ուրեք:

2 Կիկեր. տուսկուլ. 74.

վարդապետութիւնն 'ի ճառս դաստիարակութեան  
աթենացւոց բացատրեցի, և ցուցի զայն յար  
և նման առաջնոցն վարդապետութեան: Սնայ  
ինձ արդ յաւելուլ զտեսութիւնս ինչ Աւիզի-  
գեայ, զորս վերծանութեամբ յորով մատենիցն  
ժողովելոց առեալ էր 'ի միտ:

Մաքիմութիւնն 'ի սկզբանէ ոչ այլ ինչ նշա-  
նակէր, բայց միայն զզօրութիւն և զկորով մար-  
մնոյ<sup>1</sup>: Ստ այսմ Հովերոս առաքիմութիւն կոչէ  
զզօրութիւն ձիոյ<sup>2</sup>. և այլուր առաքիմութիւն  
երկրի դարձեալ փոխանակ զօրութեան գտանի  
ասացեալ<sup>3</sup>: Մյլ ապա որ ինչ յիրս իւրաքանչիւր  
սրատուականագոյն էր, առաքիմութիւն կոչէր:  
Իսկ այժմ բարեմասնութիւնք մտաց, և մանա-  
ւանդ սրտի, կոչին առաքիմութիւնք<sup>4</sup>:

Սարգոյ մենաւորի չիք այլ զգացումն բաց 'ի  
բաղձանաց և յերկիւղէ, և ոչ այլ շարժումն  
բաց 'ի դիմելոյ և 'ի խորշելոյ<sup>5</sup>: Սայց 'ի ժողով  
մարդկան զգացմունքս այսօրիկ երկու 'ի բազում  
իրս սփռեալ՝ բաժանին յայլեայլ տեսակս, 'ի  
փառասիրութի, յատելութիւն, այլովքն հան-  
դերձ, օրովք շարժեալ յուզի հոգին: Աւ քանզի  
բաղձանք և երկիւղ 'ի սրահարանութիւն և եթ-  
անձին տուան նմա, սրարտ է զի ամենայն իղձք

<sup>1</sup> Հովեր. Եղեակ. զիրք  
Եւ. սող 642:

<sup>2</sup> Նոյն անգ. զիրք Եւ.  
սող 374:

<sup>3</sup> Թուկիդ. զիրք Ա. 74. 2:

<sup>4</sup> Արիստոտ. բարեբաղդ.  
զիրք Բ. 44. 1. հա. 2. էջ 202:

<sup>5</sup> Նոյն. յղ. հոգւոյ. զիրք  
Գ. 44. 10. հա. 1. էջ 657:

նորա արդ միաբանեցեն ՚ի պահպանութիւն իւր  
և այլոց: Արդ ուր սոքա վարեալք յուղիղ բանէն  
զգեղեցիկ արգասիքս յառաջ բերեն, առաքի-  
նութիւնք են:

Չորք ՚ի նոցանէ գլխաւորք ճանաչին. արիու-  
թիւն, արդարութի, խոհականութի և ժուժկա-  
լութի: Այս զանազանութի՝ որ անցն է յայտ,  
խորազնին իմաստութիւն ՚ի զանազանօղն ցու-  
ցանէ լեալ: Արկու առաջինքն, պատուականա-  
գոյնք առաւել կենցաղօգտութեանքն, բերին ՚ի  
պահպանութիւն մարդկան. արիութիւն ՚ի պա-  
տերազմի, և արդարութիւն ՚ի խողաղութեան:  
Իսկ վերջինքն բերին յօգուտ մեր առանձինն.  
՚ի նահանգի՝ ուր վառ են երևակայութիւնք, և  
կիրք բորբոք, առաջին կարևոր մտաց է խոհա-  
կանութիւն, և սրտի՝ ժուժկալութիւն:

Ի իւսիս ասէ. Առ տարածայնիցին իմաստասէրք  
ի մասունս ինչ բարոյականին: Առ կղիղէս ասէ.  
Իւրեք ուրեք. զոր օրինակ սահմանեցաւ ՚ի նախ-  
նեաց, զի չիք առաքինութիւն կամ՝ յորութիւն  
առանց կամաւորութեան. և արդ խնդիր է՝ թէ  
արդեօք գործիցեմք ինչ անբռնադատ: Առ են  
դարձեալ՝ որք զյանցանս սիրոյ և զբարիութեան  
անբառիր առնեն, համարելով զկիրս զայստօխկ  
հզօրագոյնս քան զմեզ: Արթիւնը նոցա պատրս-

1 Արքիա. առ Ստոր. ճառ. 2. էջ 14: Պղատ. յղ. օր. Ե. 42. 9. հա. 2. էջ 531:  
7 կրք ժ. Բ. հա. 2. էջ 964:

պարան կարծեաց իւրեանց ածել զնորանշան վճիռն տուեալ 'ի միում ուրեք յատենից մերոց : Օ ի որդի հարկանող հօր իւրոյ ձգեալ 'ի դատաստան , էած 'ի ջատագովութիւն իւր զայն՝ զի և հօր իւրոյ զհաւ իւր հարեալ էր : Այ դատաւորացն զբռնութիւն բարուց համարեալ հայրենի ժառանգութիւն ազգատոհմին , ոչ իշխեցին դատապարտել զյանցաւորն՝ : Բայց խոհականագոյնք յիմաստասիրաց ընդդէմ դառնան վճռոյս , ասեն՝ թէ չիք ախտ բռնադատիչ կամաց մերոց , այլ ամենայն բռնադատութիւն արտաքոյ մեր է և օտար՝ :

( ) րէն իցէ ինդրել վրէժս 'ի թշնամեաց : Աէսք պատասխանեն . Այո ամենեւին , զի է ըստ արդարութեան թշնամանս ընդ թշնամանաց հատուցանել՝ : Բայց անասակ առաքինութիւն մեծախոհագոյն ևս զանյիշաչարութիւն համարի : Աորին են թելադրութիւնք և վճիռքն , զորս բազումք 'ի մատենագրաց աւանդեն . Մի չարախօսեր զթշնամոյ՝ , այլ փոխանակ նիւթելոյ նմա չար՝ ջանա փոխել զատելութիւն նորա 'ի բարեկամութիւն՝ : Ասաց ցոմն՝ Վիտգենէս . Աամիմ՝

1 Արիտոտ . աւագ . բարոյ . գիրք Բ . գլ . 6 . հտ . 2 . էջ 178 :

2 Նոյն , յլ . բարոյ . գիրք Գ . գլ . 3 . հտ . 2 . էջ 30 :

3 Նոյն , ճարտ . գիրք Ա .

գլ . 9 . հտ . 2 . էջ 531 :

4 Պիտոսակ՝ . առ Դիոդ . լայերտ . գիրք Ա . յօդ . 78 :

5 Կզերուզ . առ նմին , գիրք Ա . յօդ . 91 : Պլուտ . առակ .

Լակոն . հտ . 2 . էջ 218 :

խնդրեւ զվրէժ , ուսո ինձ հնարս : Այս նա ասէ .  
 1 Եր առաքինագոյն <sup>1</sup> :

Օխրատս զայս փոխեաց Սոկրատ 'ի պա-  
 տուիրան խիստ . զի 'ի բարձուէ , քան զոր 'ի վեր  
 ևս հասանել իմաստութեան մարդոյ ոչ է կար ,  
 աղաղակէր . 2 Է ումեք երբէք օրէն չար ընդ  
 չարի հատուցանել <sup>3</sup> :

Ըն ոմանս յաղգաց օրէն համարի անճնա-  
 սպանութիւն . բայց Պիւթագոր և Սոկրատ , որոց  
 դատաստան վեհագոյն է քան զաղգացն այնոցիկ ,  
 ասեն՝ թէ չէ ումեք օրէն լքանել զկայս , յոր  
 կացուցին զնա դիք 'ի կեանս յայս <sup>4</sup> :

Բնակիչք վաճառական քաղաքաց զարծաթ 'ի  
 վաշիտ տան , այլ 'ի հասարակապետութիւն հի-  
 մնեալ յառաքինութեան օրինադրէ Պլատոն  
 փոխատուին մի պահանջել տոկոսիս <sup>5</sup> :

Յամենայն ժամանակի գովելի եղեն լաւութի ,  
 ամբժուութի բարուց և բարերարութիւն . և յա-  
 մենայն ժամանակի պարսաւելի գտան մարդա-  
 սպանութիւն , չնութիւն , երդմնազանցութիւն ,  
 և ամենայն ազգի ազգի յոռութիւնք : Այս կարի  
 իսկ եղծաբարոյք 'ի մատենագրաց ստիպեցան  
 յողջամիտ վարդապետութիւն , և յանդգնա-  
 գոյնք 'ի նոցանէ 'ի մերժել զհետեւանս թիւր

1 Պլուտ . յղ . ունկնդր . 1 . էջ 62 : Վիկեր . յղ . ծե-  
 բերթ . հա . 2 . էջ 21 : բութեան , գլ . 20 . հա . 3 .

2 Պլատ . 'ի Վրիտ . հա . 1 . էջ 318 :

էջ 49 :

4 Պլատ . յղ . օր . գիլք Ե .

5 Նոյն , 'ի փեգան , հա . հա . 2 . էջ 742 :



սահմանաց իւրեանց : Այլ ումեք 'ի նոցանէ իշխեալի եղև ասել, թէ լաւ իցէ անիրաւել քան կրել զանիրաւութիւն ' :

Օ՛ի օրէնք և մատենագիրք մեր առաջի առնեն մեզ զսարտս մեր , ոչ ինչ են զարմանք . այլ զարմասցիս դու ընդ դիտաւորութիւն սահմանագրութեանցս մերոց : Տօնախմբութիւնք , տեսարանք և արուեստք առ մեզ 'ի սկզբանէ սահմանեցան առ բարոյական կենցաղօգտութիւն , որում դիւրին իսկ է հասու լինել :

Սովորութիւնք որ վայրասպար ինչ թուին , է ուրեք՝ զի ազգողագոյն ընծայեն խրատ : Վ վայրս երևելիս կանգնին մեհեանք Շնորհաց , զի ոչ իսկ է մարթ շնորհակալութեան աւելի քան զարժանն յայտնի գոլ՝ : Այլ 'ի կազմած իսկ բարբառոյս մերոց ազգումն բնութեան կամ բանին թելազրութիւն եմոյժ ճշմարտութիւնս պաշտելիս : Վնդ հին կարգս բարեձևութեան , որովք 'ի սկիզբն նամականոց և յայլ և այլ դէպս վարիմք , են ինչ ինչ արժանի տեսութե : Օ՛ի փոխանակ ասելոյ Խնդալ , ասեմք Բարեբարել \* 3 . և չիք մեծ ևս քան զայն օրհնութիւն : Վովին միով ահուամբ \*\* կոչեմք զզօրաւորն և զառաքինի , զի եր-

1 Արխտոս . պերճախօս .  
Դիրք Ա . ԳԼ . 9 . հտ . 1 . էջ  
275 :

2 'Նոյն , յգ . բարոյ . Դիրք  
Ե . ԳԼ . 8 . հտ . 2 . էջ 64 :

\* Εὐ πράττειν .

3 'Նոյն , բարոյ . աւագ .  
Դիրք Ա . ԳԼ . 4 . հտ . 2 . էջ  
149 :

\*\* Ἀριστος . բաջ . ազնիւ :

կարանչիւր արիութեամբ յաջողին: Այս առ 'ի ցուցանել զկատարեալ առաքինին, ընծայեմք նմա զգեղեցկութիւն և զլաութիւն՝\*, զի երկօքին բարեմասնութիւնքս այսօրիկ առաւելապէս ձգեն յիւրեանս զզարմացումն և զխտասուութիւն:

Այնչ չե աւարտեալ զճառս, մնայ ինձ ասել և զայն՝ յոր 'ի ժամանակաց ինչ հետէ սարապէն մատենագիրք մեր. ասեմ իսկ զնկարագիրս բարուց՝: Տես ինձ որպիսի երանգովք նկարագրէ՝ Արիստոտէլ զմեծութիւն հոգւոյ՝:

Ա՛նձանձն կոչեմք կամ մեծահոգի, որոյ միտք մեծախոհ՝ի բնէ՝ ոչ 'ի յաջողութեանց շլանան, և ոչ ընկձին յարկածից՝: Ա՛րհամարհէ նա զամենայն արտաքին բարիս, բաց 'ի մեծարանաց՝ որ 'ի լուաց ընծայի և լաութեամբ տոացանի: Այլ թուին ինչ յաչս նորա սրտիւք մեծամեծք, զի անկ իսկ են նմա. և յօժարէ հրաժարել յայնցանէ քան ընդունել զայնոսիկ առ դոյզն իրաց, և 'ի մարդկանէ՝ զորս առ ոչ ինչ համարի՝:

Այս քանզի աներկիւղ է, ատելութիւն նորա և բարեկամութիւն և ամենայն գործք և բանք

1 Արիստոտ. բարոյ. աւագ. գիրք Բ. գլ. 9. հա. 2. էջ 186:

\* Καλός καγαθός գեղեցիկ և բարի:

2 Արիստոտ. Թէոփր. և այլք:

3 Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Դ. գլ. 7. հա. 2. էջ 49:

4 Նոյն անգ, էջ 50:

5 Նոյն, բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 26. հա. 2. էջ

162:

ակներև են : Մայց ատելութիւն նորա ոչ է երկարատև . զի գիտելով թէ թշնամանք չկարեն ինչ ստնանել նմա , սուրբ է անտես առնել զայնսիկ , և 'ի մուացօնս արկանել<sup>1</sup> :

Մխորժէ առնել իրս , որ մնան յետ իւր . այլ ոչ պարծի ամենեւին , զի չսիրէ զգովութիւնս : Հանկայ բարերարել քան ընդունել բարիս . և դուզնաքեայ խի գործք նորա բերեն զպրօշմ մեծութեան : Այլ թէ ստանայ ինչ , և թէ զախորժակս ինչ իւր ընու , գեղեցկութիւնս առաւել քան օգուտ ձգէ զնա յինքն<sup>2</sup> :

Խիկ իմ ընդմիջեալ զբանս Աւելիդեայ , ասեմ . Հաւել և զայն , զի յանձին բերելով զհոգ պետութեան մեծի՝ յանդիմանս առնէ նա 'ի պատերազմունս և 'ի դաշինս զազնուականութիւնս հոգւոյն . և զի առ 'ի պահել աննուազելի զիստս աղղին՝ ոչ զհնարս դուզնաքեայս 'ի կիր արկանէ , այլ արիութիւնս , համարձակութիւնս և միտս գերասանձար . և ասա զծաղրեացես զկենդանս զիր Մըշամայ , ընդ որում զբարեբաստիկ աւուրնս կեցի 'ի Պարսս , և որ 'ի բնիկ պարսկաց նա միայն չորամեցաւ ընդ արկածս իւր :

Վծաղրեցի ապա Աւելիդեայ և միւս ևս կենդանագիր՝ զոր տեսեալ էր իմ անդ 'ի Պարսս , և զտիպս և եթ զայստսիկ յուշի կալեալ : Օ՛ի պարս է ինձ մատուցանել տիկնոջն Մըշամայ զհարկ

<sup>1</sup> Երիտտոս . բարոյ . Գիլգ

<sup>2</sup> Նոյն անդ :

մեծարանաց , զոր ճշմարտութիւն պարտի առաքինութեան : Ան 'ի յանդիման առնել բանիւ զհանձար նորա , պէտք են հանգոյն նմին հանձարոյ . իսկ առ 'ի յանդիման առնել զսիրտ նորա , և ոչ նորայն բաւեսցէ հանձար , այլ զհոգի նորա պարտ է յանձին բերել :

Վեղիման 'ի քթթեղ ահան 'ի միտ առնու զամենայն այլևայլ հանգամանս իրաց , և 'ի մի բարբառ բացատրէ զայնս . և է ուրեք՝ զի թուի յիշատակել իրս , զոր ուսեալ նորա չիք : Վիւրին է նմա սուղ ինչ փորձիւ առնել ճառս զզառանցանաց մտաց , այլ զզառանցանաց սրտի ոչ ևս , թէ պէտ և յաճախ զփորձ առեալ . զի սիրտ նորա կարի պարզ է և ուղիղ , և ոչ բաւական 'ի միտ առնելոյ զայնս :

Սարթ է նմա զմտաւ ածել առանց ամաչելոյ զամենայն զխորհուրդս և զկիրս , որ յամենայն կեանս իւր լեալ 'ի նմա : Աեանք նորա վկայեն զի առաքինութիւնք 'ի կցորդելն ընդ միմեանս , ոչ ևս այլ և այլ՝ այլ մի ինչ են . և զի պարառութիւն առաքինութեանց առաւել քան զամենայն հնարս յինքն ձգէ զմեծարանս ամենեցուն , և ոչ զոք զրգուէ 'ի նախանձ :

Ինդ անվեհեր արիութեան՝ որ բնաւորական զօրութեանն է , յանձին բերէ զբարութիւն ժիր և անխոնջ . հոգի նորա յաւէժ կենդանի ոչ առ այլ ինչ թուի կրել զկենդանութիւն , բայց 'ի բարեբատութիւն այլոյ :

Չիք նորա այլ ցանկութիւն, բայց հաճոյ լինելոյ առն իւրում. եթէ 'ի մանկութեան նորա գուկէր որ զգեղ կերպարանաց նորա, և զբարեմասնութիւնսն՝ զորոյ համառօտագիծ ետու զպատկեր, ոչ այնպէս հաճոյ թուէր նմա որպէս որ զԱրշամայ խօսէր ինչ :

## ԳԼՈՒԽ ԶԲ .

Վասն վերտին յարձակմանցն Փիլիպոսեայ, և առ Քերոնեա ճակատամարտին . և նկարագիր Ազեքսանդրի :

ԵՂԼԱԴԱ 'ի ծայր բարձրութեան փառաց էր հասեալ, նմին իրի և հարկ էր նմա 'ի խորս կորանաց իջանել՝ բախտին անդադար փոփոխելով զկշիռ պետութեանց : Օ առաճումն նորա 'ի բազմաց հետէ գուշակելի, յայտնագոյն ևս յաուրս դեղերելոյ ինոյ 'ի Պարսս երեւէր, և ամօք ինչ յետոյ սաստկագոյն ևս գլորմամբ վայրաբերեալ : Օ յեղափոխութիւնս զայս մեծ առաջի կայ ինձ յանդիման առնել . այլ համառօտեցից զպատմութիւն իրացն, ուրեք ուրեք ծաղկաբաղ և եթառնելով յորագրութենէ ուղևորութեանս ինոյ :

Ընդամենը 109 ողբերգություններ

Յերեսներորդ օրէ յունիսի 341 ամին, մինչև ցիննետանե-  
րորդ օր յունիսի 340 ամին Ն. Ք.:

ՓԻԼԻՊՊԵԱՅ վերստին խորհուրդ կալեալ է նուաձել ՂԱԵԲԻԱ կղզի խորամանկուք, և ՂԱԵԳԱՐԱ քաղաք զինուք նիզակակցացն իւրոց բիւլտացւոց: Եւ եթէ նուաձէր զայնօրիկ, հասանէր ընդ հուսյ յԱթէնս: Փոկիոն միւսանգամ դիմեալ ՂԱԵԲԻԱ, հալածեաց անտի զբռնաւորս կացուցեալս ՚ի Փիլիպպեայ. և ապա եհաս յօգնութիւն մեզարացւոց, և ՚ի դերե եհան զխորհուրդս բիւլտացւոց, և կացոյց ՂԱԵԳԱՐԱ յահաստանի<sup>1</sup>:

Եթէ հնազանդեցուցանէր Փիլիպպոս զքաղաքս Յունաց սահմանակիցս աշխարհին իւրոց ըկողմն Ելլեսպոնտեայ և Պրոպոնտեայ, կարէր խտրանել զցորեան՝ զոր աթենացիք ածեն յեւրսինեանն Պոնտոսէ, և առանց այնորիկ ոչ է մարթ գտանել նոցա պաշար<sup>2</sup>. նմին իրի յարձակեցաւ նա ՚ի վերայ ամուր քաղաքին Պերինթեայ: Բաղաքացիք զդէմ կալան քաջութեամբ,

<sup>1</sup> Դիոդ. գիրք ԺԶ. էջ 446: Պլուտ. ՚ի Փոկ. հա. 1. էջ 487.  
<sup>2</sup> էջ 748:

արժանի ամենայն գոլութեան . սպասեալ մնային նորա օգնականութեան յարքայէն Պարսից , և ընկալան 'ի բիւզանդացոց անտի ' : Նորա ծանրացասումն լեալ Փիլիպպեայ , երոյժ զպաշարումն Պերինթեայ , և երթեալ բանակեցաւ առ սարիսար Նիւզանդեայ : Այս պնդադեսպանս արարեալ քաղաքացոցն յԱթէնս , Վալէս նաւատորմաւ և զօրօք եհաս 'ի Նիւզանդիոն ' :

Ընդ իշխանութեամբ (Թ)էոֆրաստեայ յառաջնութեան ամի 110 ողիմպիադէն :

Յիննետասներորդ օրէ յուլիսի 340 ամին մինչև յութեւորդ օր յուլիսի 339 ամին Ն . Վ . :

ՅԵԼԼԱԴԱ յաւուրս իմ բազումարք երևելիք կացին , որ յաճախեն նմա սարծանս . և մանաւանդ երէք ոմանք , յորս մարթ է նմա խրոխտադոյնս սանձալ . Ապամինոնդաս , Տիմոլէոն , և Փոկիոն : Օ առաջինսն զերկոսին հազիւ եղևինձ տեսանել , այլ երրորդն ծանօթագոյն է ինձ : Տեսանէի զնա ստէպ յանձուկ ուրեք տան , յորում բնակէր 'ի թաղն Սելիտա ' . և թուէր ինձ միշտ աննման այլոց և նման իւր միշտ : Ի տրամեւ

1 Դիոդ . գիրք ժԶ . էջ 3 Պլուտ . 'ի Փոկ . հտ . 1 . 446 : էջ 750 :

2 Նոյն անդ . էջ 468 :

խնամ՝ ՚ի տեսիլ անիրաւութեանց բազմաց և պղծութեանց՝ որ անարդէն զազգ մարդկան, զնայի տիրօրէլ առ նմա վայրիկ մի, և դառնայի ՚ի նմանէ յաւելեալ ՚ի խաղաղութիւն և յառաքինութիւն :

Յատար 13 անլեարբիոնի աժառն \* . Արէկ մինչ դեռ ՚ի զնին կայի նորոյ ողբերգութեան ՚ի տեսարանի՝, և ահա յանկարծ խափանեցաւ այն : Օր որ ՚ի զշնոյ կերպարանեալն էր, չառնոյր յանձն ելանել ՚ի տեսարան՝ զի ոչ գոյր նմա հանդէս նաժշտաց : Աւ իբրև կարճամտէին ժողովեալքն ՚ի զնին, Ս՝ ելանտիտ հանդիսադիր տեսարանին ՚ի մէջ անդր եկեալ՝ ասէ բարձրաձայն . Ղու նաժիշտս խնդրես բազումս, տիկնոջն Փոկիոնի միով և եթ երևեալ նաժշտաւ ՚ի քաղաքամիջի աստ՝ : Աւ զոյգ ընդ բանին որ ամենեցուն եղև լսելի՝ այնպիսի կայթք եղէն ծափաձայն դրուատեաց, զի ոչ ևս մնալով իմ վախձանի տեսարանին՝ հասի փութապէս առ Փոկիոն : Աւ հանէր նա ջուր ՚ի ջրհորոյ, և կին նորա թրէր հաց ՚ի պէտս առանին՝ : Յնծացայ ՚ի տեսանել զայն, և առաւելազոյն ևս եռանդեամբ պատմեցի նմա որ ինչ անցք անցին ՚ի տեսարանին : Արցա ոչ ինչ փոյթ եղև ընդ բանս իմ՝ որ-

\* Ի 23 փեարուարի 339 ամին . Ն . Բ :

1 Յիշատ . բանաս . կաճատ . հտ . 39 . էջ 176 :

2 Պլուտ . ՚ի Փոկ . հտ . 1 . էջ 750 :

3 Նոյն անդ, էջ 749 :



պէս պարտ իսկ էր ինձ գուշակել յառաջագոյն . քանզի Փոկիոնի ոչինչ ցանկալի էին զովութիւնք աթենացւոց, իսկ կնոջ նորա առաւել հաճոյ էին առաքինութիւնք առնն քան զհասուցումն՝ որ անկ էր նոցա՝ :

Փոկիոն դժկամակեալ էր յայնժամ ընդ յեղ-  
յեղուկ բարս ժողովրդեանն, և առաւել ևս  
զայրացեալ ընդ վատութիւն ճարտարախօսաց  
աշխարհին : Այս մինչ դեռ խօսէր նա ընդ իս զը-  
շաքաղութենէ նոցա և զժողովրդեանն սնտիա-  
ռութենէ, եմուտ անդր Ղեմոսթենէս, և խօ-  
սեցան ընդ միմեանս զառժամայն իրացն Ալլա-  
դայ : Ղեմոսթենէս կամէր՝ զի համարձակեսցի  
ընդդէմ՝ Փիլիպպեայ պատերազմ . իսկ Փոկիոն  
կամէր ընդ խաղաղութիւն, ածեալ զմտաւ՝ զի  
պարտութիւն ճակատամարտին զկորուստ Ղթե-  
նայ զհետ իւր ձգէր, իսկ յաղթութիւն երկա-  
րաձգէր զպատերազմն՝ որում ոչ կարէին ժուժ-  
կալել աթենացիք, զի ապականեալք էին : Այսն  
որոյ փոխանակ զրդուելոյ զՓիլիպպոս և տալոյ  
նմա պատճառս մտից յԱտտիկէ՝ պարտ համա-  
րէր սպասել պարտասելոյ նորա ՚ի տարաշխար-  
հական պատերազմունս, և հանապազորդելոյ ՚ի  
վտանգս կենացն՝ որոյ վախճան փրկութիւն էր  
աշխարհին իւրեանց :

Իայց Ղեմոսթենէս չկարէր հրաժարել ՚ի

1 Պլուտ . ՚ի Փոկ . հա . 1 . էջ 750 : նոյն . յը . երաժշտ .  
հա . 2 . էջ 1131 :

պայծառ պաշտամանէն, որով փառաւորի: Յաւուրց վերջին խաղաղութեանն արքերկու զանազանեալք հանձարով, այլ յամառք հաւատարապէս, մաքառին ընդ միմեանս՝ զամենայն Այլադայ յիւրեանս ձգելով զտեսանելիս: Աստի թագաւոր ոմն հէտամուտ տիրելոյ աղգաց ամենեցուն, որ զկէսս զօրութեամբ զինուց նուաճէ, զայլ ՚ի ձեռն պատգամաւորաց ահաբեկէ, և պարածածկեալ սպեօք դիմէ անդադար ՚ի վտանգս, մատնեալ բախտին զոր ՚ի մասանց մարմնոյն և կամիցի՝ առ ՚ի կեալ մնացելովքն ՚ի պատիւ և ՚ի փառս: Իսկ աստի այր մի սոսկական՝ որ մենամարտի զօրութեամբ ընդդէմ՝ յուրութեան ամենացոց, ընդդէմ կուրութեան նիզակակցաց նոցա, և ընդդէմ նախանձայուզութեան ճարտարախօսաց նոցա, զգուշութիւն հակառակ դաւոյ ՚ի կիր արկեալ, զճարտարխօսութիւն հակառակ ճամբարաց, հնչեցուցանելով զԱյլադա ՚ի բարբառ իւր, և ազգ առնելով դէտ կալ խլրամանց թագաւորին<sup>1</sup>, արձակելով ամենայն ուրեք հրեշտակս և զօրս և նաւատորմն ընդդէմ հնարից նոցա, մինչև լինել ահարկու ահաւորագունին քան զամենայն աշխարհակարս<sup>2</sup>:

Իայց Ղեմսութենէս զփառասիրութիւնն, զոր ոչն կարէր ծածկել ՚ի Վոկիոնէ, պատրուակէր

1 Դեմոսթ. յղ. պատկ. էջ 483:

3 Ղուկիան. ՚ի Դեմոսթ. էջ 37. հտ. 3. էջ 518:

2 Նոյն անդ, էջ 480:

պատճառանօք՝ որ յորդորէին զաթենացիս ՚ի զէն, որպէս ցուցի խակ ուրեք ուրեք զայնոսիկ: Օրս և դարձեալ վերստին առին ՚ի քննութիւն ճարտարախօսքն երկօրէին ՚ի ժողովի ուրեք, յորում և ևս գտայ: Իյօսեցան երկաքանչիւր սաստկապէս. Վեմոսթենէս մեծարանօք միշտ, խակ Փոկիոն ուրեք ուրեք դառնութեամբ: Եւ իբրև չեղև նոցա հնար միաբանել, Վեմոսթենէս ՚ի մեկնէն իւրում ասէ. Բթենացիք ՚ի ցնորել յանկարծ մտաց իւրեանց՝ զքեզ ՚ի մահ մասնեցեան: Եւ Փոկիոն ասէ. Եւ զքեզ ՚ի դառնալ յանկարծ մտաց իւրեանց ՚ի զգաստութիւն՝:

Յատր 16 անիւտերիոնի ամոն՝: Պատգամաօրք չորք ընտրեցան այսօր գնալ յամիթիտիոնեան աշխարհաժողովն, որ յառաջիկայս գարնայնի գումարեցի ՚ի Վեղփիս՝:

Յատր . . . \*\* : Յայսմ վայրի աշխարհաժողով գումարեցաւ . աթենացիք խռովեալք ՚ի սաշարմանէ Վիզանդեայ, և թուղթ և ս այն ինչ ՚ի Փիլիպպեայ էր առեալ նոյ, յորում բողոքէր նա զլուծանելոյ պայմանաց բազմաց ուխտին խաղաղութեան, և դաշանց նիզակակցութեանն՝ զոր յառաջ քան զամս եօթն եղեալ էր նոցա ընդ միմեանս՝: Իյօսել կալաւ Վեմոսթենէս . և ա

<sup>1</sup> Պրուտ . ՚ի Փոկ . հտ . 1 . 446 : Վեմոսթ . ՚ի Կտես . էջ էջ 745 :

<sup>\*</sup> Ի 26 փեարուարի 339

ամին Կ . Բ :

<sup>2</sup> Եսրին . ՚ի Կտես . էջ

498 :

\*\* Ընդ այն ժամանակս :

5 Գիոնես . ազիկ . թուղթ

առ Բեմ . հտ . 6 . էջ 740 :

Թէնացիք ըստ խրատու նորա, որում ՚ի զուր ընդդէմ դարձաւ Փոկիոն, պատուէր ետուն խորտակել զսիւնն՝ յորում արձանագրեալ կային դաշինքն, սպառազինել նաւս, և կազմել ՚ի սպատերազմ՝:

Աւուրբք յառաջ ազդ լեալ յԱթէնս՝ զի բիւզանդացիք ըստ համարելին անօգնական լինել, քան զօրս ընդ Վարեայ այնպիսում ատելոյ զօրավարի ՚ի սրբիսպս իւրեանց մուծանել, կացոյց ժողովուրդն փոխանակ նորա զՓոկիոն:

Յառաջ 30 ելաքէքոշիոնի աճառն\* : Ի վերջին աշխարհաժողով Ամփիկտիոնաց մի ոմն յԱմփիսայ մայրաքաղաքէ լոկրիսացոց Ողոլաց, որ է վաթսուն ասպարիզաւ հեռի ՚ի Վեղփեայ, զգայուէր Թնամանս դժնդակս ընդդէմ աթենացոց, և ցուցանէր զնոսա արժանի դատապարտութեան ՚ի տուգանս յիսուն քանքարաց վասն կախելոյ նոցա երբեմն ՚ի մեհենին ասպարս ոսկեզօծս ՚ի յիշատակ յաղթութեանց իւրեանց ՚ի վերայ մարաց և Թերացոց : Աբինէս առ ՚ի ցրել զամբաստանութին, եցոյց զի ամփիսացիք յառնուլ զնաւահանդիստն Վիուայ և զմերձակայ դաւառն՝ որ նուիրեալն էր երբեմն մեհենին՝ արժանի լեալ էին սխալոց սեղանակապտու Թեան :

1 Դեմոսթ. Թուղթ ՚ի Փիլ. Կ. Բ. :

էջ 117 : Փիլոք. առ Իխմեւս.

ազիկ. հա. 6. էջ 741 :

\* Ի 10 սպրիլէ 339 ամին

2 Եպին. ՚ի Կտես. էջ

446 : Պաւսան. զիլք ժ. ԴԸ.

19. էջ 843 :

Եւ 'ի վաղիւ անդր հրեշտակք ամփիկտիոնեան նիզակակցութեանն բազմութեամբ գեղջիացւոց իջին 'ի դաշտն , հուր հարին զտանց , և լցին զմասն ինչ նաւահանգստին : Եւ ամփիխացիք 'ի զէն ընթացեալ , հարածեցին գյարձակեալնն մինչև 'ի դրունս Գեղջիեայ :

Եւ Եւփիկտիոնացն զայրացեալ , խորհուրդ կալան 'ի վրէժխնդրութիւն մեծ , որ յայտնեսցի 'ի ժողովն (Ուերմոսպիլեայ : Յաշնայնի սուլորութիւն է զուամբել ժողովոցս , այլ զայս ամ կանխեսցէ : Եւ նախնկալ էր սպատերազմն այս , կասկած է ձեռին Փիլիպպեայ գոլոյ 'ի նմա . կէսք և զԱսքինէս համախոհ ընդ նմա ամբաստանեն :

Յառաջ . . . \* : Փոկիոն երթեալ բանակեցաւ առ սարսալօքն Բիւզանդեայ , և աւագորեար քաղաքին վասն համբաւոյ առաքինութեան նորամուծին զգօրսն 'ի քաղաքն : Հրահանգք նոցա և քաջութիւն յապահովեցին զբնակիչս քաղաքին , և ստիպեցին զՓիլիպպոս 'ի լուծանել զպաշարումն : Եւ առ 'ի ծածկել զամօթ փախըստեանն , համբաւեաց զի փառք իւր կոչէին զնա 'ի վրէժխնդրութիւն թշնամանաց՝ զոր միոյ ուրուք յազգացն սկիւթացւոց արարեալ էր նմա : Եւ յնախ քան զմեկնելն անտի՝ նորոգեաց զուխտ խաղաղութեանն ընդ աթենացիս , որք իսկոյն մո-

1 Եսքին . 'ի կտես . էջ 447 :

\* Ի մայիսի կամ 'ի յունիսի

2 Դեմոսթ . յԷ . ստակ . էջ 497 :

339 ամին 'ն . Բ :

3 Դիոդ . գիրք ժ. 2 . էջ 468 :

ուսոյան զհրովարտական և զսպառազինութիւնս՝ զոր արարեալ էին ընդդէմ՝ նորա :

Յառաջ... \* : Հրովարտակէ կրկին ընթերցան 'ի համնխումբ ժողովի, մին բիւզանդացոց, և միւսն քաղաքաց ոմանց Ալլեսպոնտեայ : Առջինք ընդ պերինթացիս 'ի Հնորհակալութիւն օգնականութեանն զոր ընկալան յաթենացոց, սահմանեն առնել նոցա 'ի քաղաքս իւրեանց զիրաւունս քաղաքացոց, առնել խնամութի, ստանալ անդ երկիր և տունս, 'ի զնին կալ տեսարանաց, և այլ ազատութիւն բազումս : Այլ զարձեալ կանգնել 'ի Առաջոր անդրիս երիս վեշտասան կանգնաչտիս իւրաքանչիւր, յանդիման առնելով զԱթենս ստակեալ 'ի բիւզանդացոց անտի և 'ի պերինթացոց : Ասկ երկրորդի հրովարտակին այս խնաստք էին . չորք 'ի քաղաքաց թրակեանն Վերսոնի, պաշտպանեալք ընդդէմ Վիլիպպեայ բարերարութեամբն աթենացոց, սահմանեն նոցա ստակ վաթսուն քանքարաց \*\* և բազինս երկու, զմին Շնորհակալութեան, և զմիւսն ժողովրդեանն աթենացոց :

\* Ի նոյն աւուրս :

1 Դեմոսթ . յղ . ստակ . էջ 487 :

\*\* Վարի բողոճութուն ինձ

զինքս, և կասկածեմ թէ վերստակ 'ի բնագիրն իցէ սղբրդեալ :

2 Դեմոսթ . անդ . էջ 488 :

Լ. Իշխանա-Լեւոնի Լ Իսթիմարիդեայ յերկրորդում  
ամի 110 ողիմարիին :

Յութերորդ օրէ յուլիսի 339 ամին մինչև Իքսաննութե  
րորդ օր յունիսի 338 ամին Կ . Բ :

Յառար . . . \* : Ի ժողովուն գումարեալ Ի  
ձեռնուպիլէ սահմանեցին Լ միխիտիոնք խաղալ  
Ի վերայ ամիխասացոց , և կացուցին զՎստտիփոս  
զօրավար նիզակակցութեն : Բայց աթենացոց  
և թեբացոց , որք ոչ կամին ընդ պատերազմն ,  
չէր առաքեալ հրեշտակս Ի ժողովն : Փիլիպպոս  
դեռ ևս Ի Սկիւթս է , և ոչ վազվազեացէ Ի  
դարձ . այլ ստեն Ի տար աշխարհաց անտի ուղ-  
ղեալ նորա զսահմանս ժողովոյն :

Յառար . . . \* : Իսկ ամիխոացիք հէքք և  
թշուառականք պարտեալք յառաջնուն ճակա-  
տամարտի , յանձն առին պայմանս լի կորանօք .  
բայց ոչ միայն դրժեալ պայմանացն , այլ և միւսն  
գամ ճակատամարտիւ վանեցին զբանակ նիզա-  
կակից ազգացն , և զզօրավար նոցա վերաւորեցին :  
Լ յս անցք սուղ ինչ յառաջ քան զվերջին աշ-  
խարհաժողովն Լ միխիտիոնաց անցին , որ գու-  
մարեցաւն Ի Ղեղփիս : ձեւաղացիք կաշա-

\* Յամնեան Օգոստոսի 339  
ամին Կ . Բ :

\*\* Ի դարնայնի 338 ամին  
Կ . Բ :

1 Եզրին . Ի կտես . էջ 448 :

ուեալք 'ի Վիլիպեայ՝ այնու ճարտարութեամբ վարեցան 'ի ժողովի անդ<sup>1</sup>, զի նոցա յանձն եղև հոգ վրէժխնդրութեան թշնամանացն գործեցելոց մեհենին Ղեղփեայ<sup>2</sup> : Ի ձեռն առաջնոյ մեհենական պատերազմին յաջողեցաւ նմա մտանել 'ի դաս Լմիիկտիոնաց . և արդ երկրորդս այս կացուցէ զնա մշտնջենաւոր զօրավար նիզակակցութեանն՝ որում ընդդէմ դառնալ ամաբաշտութի է : Եւ ևս օրէն է թեբացւոց արգելուլ առաջի նր զմուտս լուրմովիլեայ . սակայն սկսանին նորա հասու լինել խորհրդոց նորա : Եւ քանզի կասկածէ նա զնոցանէ, հրաման ետ ազգաց պեղոպոնեսացւոց՝ ժողովակցաց ամիիկտիոնեան ժողովոյն՝ գումարել 'ի բոյեղրոմիոնի\* ամեան զզօրս իւրեանց, պաշարապինդք քառասնօրեայ պարէնիւք<sup>3</sup> :

Ի ըթմնջիւն է ընդ ամենայն Ելլադա . Եւ պարտա կայ 'ի խոր լուութեան . Եւ թէնք 'ի վարանս և 'ի դողումն սրտի . կամի սա ընդ համարեալ սեղանակապուտսն գումարել, և ոչ իշխէ : Ի միում ուրեք 'ի ժողովոց նորա եղև խորհուրդ խնդրելոյ հրաման պատասխանոյ 'ի դեղփական հարցկէն, և 'ի գուլել անդ Ղեմոսթեանեայ՝ թէ հարցուին Վիլիպեայ<sup>4</sup>, արգելաւ խորհուրդն :

1 Գեմոսթ . յղ . պսակ . Ն . Ք :  
 էջ 498 : 3 Գեմոսթ . անդ :  
 2 Նոյն անդ , էջ 499 : 4 Եսթին . ի Կաես . էջ 449 :  
 \* Սկիզբն ամսոյս հանգիպի Պլուտ . ի Գեմոսթ . հա . 1 .  
 ի 26 սղոստոսի 338 ամին էջ 854 :



Եւ յայլում ուրեք ժողովի պատմեցաւ , զի 'ի հարցանել նոցա զբրմուհին՝ զայս արարեալ էր նորա պատասխանի , զի աթենացիք առ հասարակ համախոհք են բաց 'ի միոջէ : Վանդի կուսակիցք Փիլիսպեայ թելադրեալ էին նմա զպատգամն , առ 'ի դժպհի առնել ժողովրդեանն զՂեմոս թենէս . բայց Ղեմոս թենէս 'ի վերայ Եսթի- նեայ շրջէր զայն : Իսկ Փոկիոն առ 'ի խափանել զնոտի վէճն , ասէ . Սին այն զոր խնդրէք՝ ես եմ , որ հաւանիմ ընդ գործս ձեր :

Հատար 25 ելաթեբողիոնի ամոյն \* : ( ) Ըրստօրէ զայրանայ վտանգն , և յաճախեն տակաւ ար- հաւիրք : Եթենացիք որք 'ի հերուն խորհուրդ կարան լուծանել զգաշն խաղաղութեան՝ զոր ե- դեալ էր նոցա ընդ Փիլիսպեայ , յղէն արդ առ նա հրեշտակս՝ աղերսելով յերկարաձգել զայն մինչև ցթարգեղիոն \*\* :

Հատար 26 հատար հռնիսիոնի \*\*\* : Եւ իս- հրեշտակք 'ի նոյն խնդիր արձակեալք առ թա- դաւորն , ածին պատասխանի : Եւ զրէր 'ի թղթին այսպէս . « Այ ինչ զանխուլ է յինէն , զի աթե- նացիք ջանայք սարտուցանել յինէն զթեսաղա- ցիս , զբիովտացիս և զթեբացիս . սակայն յանձն առնում զաղերս ձեր՝ դուլ առնել մարտի , բայց

1 Պրուտ . 'ի Փոկ . հտ . 1 . էջ 500 :

էջ 745 :

\* Ի 27 մարտի 338 ամին

Ն . Բ :

2 Ղեմոս թ . յղ . պսակ .

\*\* Սկիզբն ամոյն հանդիպի

յ 30 ապրիլի 338 ամին Ն . Բ :

\*\*\* Ի մարտի 31 :

միայն զի մի ևս լուիցէք դժնդակ խրատուց ձարտարախօսացն ձերոց ,<sup>1</sup> :

Յառաջ 15 սկիբոփորինի տճեան \* : Փիլիսպեայ անցեալ ընդ թերմոպիլէ , և մուտ 'ի փովկիս . և շուրջանակի զարհուրեցան ազգք : Եւ քանզի 'ի լիբրիսացուոց և եթ ասէր խնդրել զվրէժ , ոգի առեալ քաջալերեցան : Եւ եհաս նա յանկարծակի 'ի վերայ Եղատեայ<sup>2</sup> , միոյ 'ի քաղաքաց՝ յոր խնայեաց յառաջագոյն 'ի զբաւ առնել պատերազմին ընդ փովկիսացիս : Խորհի նա տիրել անդ և ամրանալ . թերևս և այսր իսկ յառաջ խաղայ : Եթէ թերացիք նիզակակիցք նորա ոչ խափանեցեն զնա , տեսցուք զնա յետ երկուց աւուրց առ պարսպօք Եթենայ<sup>3</sup> :

Եւր առմանն Եղատեայ եհաս այսօր , մինչ դեռ նահապետք \*\* յընթրիս բազմեալ կային . և յարեան վաղվաղակի : Խորհին ժողով կոչել առ վաղիւ . կէսք ազգ առնեն զօրագլխաց և փողարաց , այլք 'ի հրապարակ անդր դիմեալ 'ի բաց վարեն զվաճառօղս , և հրձիգ առնեն զկրպակս<sup>4</sup> : Կորդի քաղաքն ամենայն , և արհաւիրք մահու ունին զտիրաս ամենեցուն :

1 Դեմոթ . յլ . պսակ . էջ 501 :

\* Յերկոտասաներորդ աւուր յունիսի 338 ամին՝ Ն . Ք :

2 Դեմոթ . անդ . էջ 498 :

3 Դիոդ . գիրք ժ. 2 . էջ 474 :

\*\* Մոքա էին դատաւորք

յիսուն , բնակեալք 'ի նահապետանոցն , տեսուչք կարնօր իրաց աշխարհին , որք և դամարէին ժողով համախաւսք լի պետոյից :

4 Դեմոթ . անդ . էջ 501 :

Դիոդ . գիրք ժ. 2 . էջ 474 :

Գառար 16 սկիբոփորիոնի ամսեան\* : Հասին զի-  
 շերայն զօրավարք յամենայն կողմանց , և փողք  
 ընդ փողոցս առհասարակ հնչեցին : Ի ծագել ա-  
 ռաւօտու ժողովեցաւ աւաղանին ամենայն , և ինչ  
 ոչ սահմանեցաւ 'ի խորհրդեանն : Ետղովուրդն  
 դէտակն կալեալ սպասէր նոցա 'ի հրասպարակի .  
 նահապետք ազդ արարին զլուրն , և սուրհանդակն  
 հաստատեաց զայն լու 'ի լու զօրավարաց և ճար-  
 տարախօսաց : Եւ քարոզ 'ի մէջ անցեալ , հարցա-  
 նէր՝ Թէ իցէ որ ելանել կամիցի 'ի բեմ . և եղև  
 լուծիւն ահեղ : Արկնէր քարոզն և երեքկնէր ,  
 և զնոյն հրաւէր կարդայր անդադար . բայց ա-  
 մենեքին 'ի լուծեան , դարձուցանէին զաչս իւ-  
 բեանց ստէպ 'ի ԱեմոսԹեանէս : Հայնժամ 'Աե-  
 մոսԹեանեայ յօտն կացեալ , ասէ . Եթէ Թեբա-  
 ցիք համախոհք էին Փիլիպպեայ , նա արդ ևս 'ի  
 սահմանս Բտտիկեայ գտանէր : Ալ վասն այլ իրիք  
 կալաւ նա զքաղաքն մերձ 'ի սահմանս նոցա , բայց  
 առ 'ի միաբանել ընդ իւր զերկոսին խումբս՝ յորս  
 երկպառակեալ են նոքա , քաջալերելով զկուսա-  
 կիցս իւր և ահացուցանելով զհակառակորդս : Աս  
 'ի խափանել զմիաբանուծիւնս զայս , պարտ է  
 Եթեանայ մոռանալ զամենայն պատճառս քինու՝  
 զոր 'ի բազում ժամանակաց և այսր մԹերեալ  
 պահէ ընդդէմ ոսոխին իւրոյ Թեբայ , ցուցանել  
 նմա զվտանգն եկեալ հասեալ , ցուցանել նմա

\* Յերեքոսաներորդ աւուր : Դիող . գիրք ԺԶ . էջ  
 յունիսի 338 ամին Ն . Բ : 474 :

բանակ սպառազէն յօգնականութիւն, և միաբանել ընդ նմա՝ թէ է հնար՝ երդմամբք ՚ի նիզակակցութիւն, որ յապահովեցէ զփրկութիւն երկաքանչիւր պետութեանց և Ղլլադայ առհասարակ:

Եւ ասա խրատ ետնոցա առնել հրովարտակ, որոյ գլխաւոր պայմանք այսօրիկ են. Յետ կարդալոյ զօգնականութիւն դից իննամակալաց Մտտիկեայ, սպառազինել նաւս երկերիւր. ածել զօրագլխաց զզօրս Ղլլեւսիս. արձակել հրեշտակս յամենայն քաղաքս Ղլլադայ, և վաղագոյն ՚ի (ժ)եբէ, առ ՚ի յօրդորել զամենեսին ՚ի պահ ազատութեան. տալ նոցա զէն, զօր և արծաթ, և յայտ առնել նոյ, զի Մթէնք՝ որ ցարդ փառս իւր համարէր վիճել ընդ նոսա զգահերիցութենէ՝ համարի արդ նախատինս իւր և (ժ)եբայ և բողորումն իսկ Ղլլադայ մտանել ընդ լծովօտար պետութեան:

Հաճոյ թուեցաւ ամենեցուն հրովարտակս այս, առանց ուրուք ընդդէմ դառնալոյ. և ընտրեցան հրեշտակք հինգ, ընդ որս Վեմոսթենէս և Վպերիդէս ճարտարախօս. և փութապէս անկցին յուղի՝:

Յետոյ... հրեշտակք մեր պատահեն ՚ի (ժ)եբէ պատգամաւորաց ազգացն նիզակակցաց նորա. որոց լցեալ զ(Փ)իլիպպոս գովութեամբք, և զաթե-

Նայիս պարսաւանօք, խրատ տան թերացւոց՝ ՚ի շնորհակալութիւն բարերարութեանց թաղաւորին տալ նման անցս ընդ աշխարհ իւրեանց՝, և գումարեալ իսկ ընդ նման դիմել յԱտտիկէ՝ Յաւելուն ևս ազդ առնել նոցա, զի կամ Վթէնք լիցին յաւար թերացւոց, և կամ Թեբէ լիցի բաժին մակեդոնացւոց՝ : Օայս ամենայն յորդորակս և սպառնալիս հզօր բանիւք խօսեցաւ Պիւթոն բիւզանդացի, մի յերևելի ճարտարախօսաց ժամանակին, ՚ի դիմաց Փիլիպպեայ՝ : Բայց Վեմոսթենէս այնչափ հզօրագոյն ետ զպատասխանին, զի թերացիք առանց ընդ բանս ինչ ածելոյ ընկալան ՚ի ներքս զզօրս աթենացւոց, որոց զօրավարք են Վարէս և Սորատոկղէս՝\* : Խորհուրդ միաբանելոյ զՎթէնս ընդ Թեբէ համարեցաւ քաջութիւն հանձարոյ, և յաջողութիւն իրացն յաղթանակ ճարտարխօսութեան :

Յաւար . . . : Փիլիպպեայ պատեհագոյն մնալով ժամանակի, խորհուրդ կալեալ էր առ ժամն կատարել զվճիռ Վմիկտիոնաց, և դիմել ՚ի վերայ քաղաքին ամիխացւոց : Վյլ առ ՚ի մատ-

1 Արիստոտ. Ճարտ. գիրք Ա. գլ. 23. հտ. 2. էջ 575 :  
 2 Վեմոսթ . յղ. պսակ . էջ 509 :  
 3 Դիոգ. գիրք Ժ. 2. էջ 475 :  
 4 Նոյն անդ .  
 \* Դիոգոր կոչէ զնա Վիսիկէս, բայց Եպիֆնէս ( յղ.

վեկայ հրեշտ . էջ 451 .) և Պոզիկնոս ( ՚ի մարթանսն, գիրք Դ. գլ. 2. յօդ. 2 .) անուանեն զնա Սորատոկղէս : Վ կայութիւն Եպիֆնեայ գլխոխնս զայս ընթերցուած ընտրելե առնէ :

չեւ անդր, հարկ էր նմա անցանել ընդ կիրճ՝ մի որում պահ ունէին Վարէս և Պրորսէն. առաջինն գնդաւ թերացոց և աթենացոց, իսկ երկրորդն օգնական գնդաւ՝ զոր ամբիսացոց ՚ի վարձու կալեալ էր՝ Փիլիսպոս ընդունայն ՚ի վերայ պահակին զուն զործեալ, ապա հասոյց ՚ի ձեռս թշնամեաց նամականի՝ յորում գրէր Պարմենեայ, զի աղմուկք յանկարծակի յարուցեալք ՚ի Թրակիա կոչէին զնա անդր, և հարկ էր յապաղել զպաշարումն Վամբիսայ: Հնարք նորա յաջողեցան, և Վարէս և Պրորսէն թողին ըզպահակն և մեկնեցան. իսկ թաղաւորն կալաւ զայն անդէն, և հարեալ զամբիսացիս՝ տիրեաց քաղաքին նոցա՝:

Ընդ իշխանութեամբն Վարանդայ յերբորդում ա  
 Բ 110 ողիմպիսային:

Ի բան և ութերորդ օրէ յունիսի 338 ամին մինչև  
 յեօթն և տասներորդ օր յունիսի 337 ամին Ն. Վ.:

Յառաջ . . . : ԹՈՒԻ Թէ զբաւ առնել պատերազմին կամիցի Փիլիսպոս, զի պատրաստի առաքել պատգամաւորս: Օջրազուխք թերացոց սկսան խօսել ընդ նմա ՚ի խաղաղութիւն,

1 Կարին. ՚ի կտես. էջ 454: Գերբ Դ. ԳԼ. 2. Եօդ. 8:  
 Դեմոսթ. յղ. պատկ. էջ 509: \* Յառաջին աւուրս յունիսի 338 ամին Ն. Վ.:

և մերձ են 'ի հաստատել զայն : 'Նորա ծա-  
նուցին մեզ զառաջարկեալ 'ի նմանէ պայմանա ,  
և յորդորեն յանձն առնուլ զայնտսիկ<sup>1</sup> : Քաղ-  
մաց աստ բարւոք թուի ըել խրատուց նոցա .  
բայց 'Վեմոսթենեայ համարելով զթագաւորն  
կորացեալ , կամի զգեանել զնա և խորտակել :

'Սերկեան ժողովի խօսեցաւ համարձակ , և  
խրատ ետ յառաջ վարել զպատերազմն : 'Իսկ  
Փոկիոն հակառակ կայր . եհարց զնա 'Կերիդէս  
ճարտարախօս , և ասէ : 'Երբ ապա կամիցիս ընդ  
պատերազմ : 'Եւ նա ասէ . 'Յորժամ մանկաին  
զգոյշ կացցէ հրահանգաց , ճոխք ձեռնտու լիցին  
արծաթով , և ճարտարախօսք դադարեցեն 'ի  
սպառելոյ զգանձս<sup>2</sup> : 'Ս'ի ոմն 'ի փաստաբանից ,  
որք զամենայն կեանս իւրեանց պարապեն 'ի դա-  
տախազել յատեանս , աղաղակեաց և ասէ . 'Կա-  
միցիս աղէ Փոկիոն , մինչ աթենացիք զէն 'ի ձե-  
ռին կան , զէնընկէց առնել զնոսա : 'Եւ Փոկիոն  
ասէ . 'Ս'ո , կամիմ . զի է ինձ իշխանութիւն 'ի  
վերայ ձեր 'ի սպատերազմի , որպէս ձեզ 'ի վերայ  
իմ 'ի խաղաղութեան<sup>3</sup> :

'Խօսեցաւ ապա Պողիկտոս ճարտարախօս . և  
զի յոյր է նա մարմնով , և տօթ իսկ սաստիկ էր  
քրտունք ոլոռն ոլոռն հօսէին 'ի նմէ , և ոչ կարէր  
զճառն յառաջ բերել՝ առանց ըմպելոյ ստէպ  
ջուր , ասէ Փոկիոն . 'Երբ աթենացիք , բարւոք ըէք

<sup>1</sup> Երբին . 'ի Ատեա . էջ 451 : էջ 752 :

<sup>2</sup> Պլուտ . 'ի Փոկ . հտ . 1 :

<sup>3</sup> Նոյն անդ , էջ 748 :

ճարտարախօսացայդպիսեաց. զի որ բարբառս ինչ  
 հազիւ առաջի ձեր յօդէ առանց հեղձամղձուկ  
 լինելոյ, զարմանալիս արդարև գործեսցէ զբահա-  
 ւոր և ասպար 'ի ձեռին կացեալ առաջի թշնա-  
 մեաց<sup>1</sup>: Այլ 'ի վիճել 'Վեմոսթենեայ' օգտա-  
 կարագոյն ցուցանելով փոխել զպատերազմն 'ի  
 Տիտովտիա հեռի յԱ՝ տաիկեայ, ասէ Վոկիտոն. Սի  
 ուր պարան իցէ տալ պատերազմ՝ զայն խորհես-  
 ցուք, այլ թէ ուր մարթ իցէ մեզ կանգնել զյաղ-  
 թութիւն<sup>2</sup>: Այլ յաղթեաց խորհուրդն 'Վեմոս-  
 թենեայ. և 'ի լուծանել ժողովոյն, մեկնեցաւ նա  
 զնալ 'ի Տիտովտիա:

{ } \* \* \* : 'Վեմոսթենէս հարկեցոյց զթե-  
 բացիս և զբիւլտացիս վախճան առնել քանից հաշ-  
 տութեան ընդ Վիլիպպեայ. և չիք այսուհետև  
 յոյս խաղաղութեան<sup>3</sup>:

{ } \* \* \* : Վիլիպպոս յառաջ խաղայ երիւք  
 բիւրուք հետևակօք, և աւելի քան զերիս հա-  
 զարս հեծելովք<sup>4</sup>. և հասեալ կոյ 'ի Վերոնէա  
 քաղաք Տիտովտոյ, հեռի յԱ՝ թենայ ասպարէզս  
 աւելի քան զեօթն հարիւր<sup>5</sup>:

'Վեմոսթենէս հասանէ ամենայն ուրեք, զա-  
 մենայն ինչ գործէ. վաղվաղէ նա զժողովս բիւլ-  
 տացոց և զխորհուրդս զօրավարաց<sup>6</sup>: Ոչ ուրեք

<sup>1</sup> Պլուտ. 'ի Փոկ. էջ 746: 475:

<sup>2</sup> Նոյն անդ, էջ 748:

<sup>3</sup> Ի նոյն աւուրս:

<sup>4</sup> Եւսթին. 'ի Վտես. էջ 451:

<sup>5</sup> Վիտոզ. գերք ԺԶ. էջ

<sup>5</sup> Վեմոսթ. պատկ. էջ 511:

<sup>6</sup> Եւսթին. անդ, էջ 452:

Պլուտ. 'ի Վեմոսթ. հտ. 1.

էջ 854:



Ճարտարխօսութիւն մեծամեծս որպէս աստ գործեաց. աշխոյժս՝ ի սիրտս ամենեցուն վառեալ բորբոքէ, և եռանդն պատերազմի։ Ի ձայն մեծասաստ բարբառոյնորա դիմեն՝ ի Վիտլտիա գունդք յաճախաւորք արայեցւոց, կորնթացւոց, լեկադացւոց և այլոց ազգաց բազմաց։ Ալլադայ հիացեալ, գողցես իմն յոտին կայ՝ ակնկաւոյց ի Վիտլտիա, դէտակն ունելով գողութեամբ ելից իրացն՝ որ զբախտ նորա սահմանեցեն։ Մթէնք երերեալ տատանի, ընդ ամենայն կիրս յուսոյ և երկիւղի անցեալ։ Վոկիոն կայ անխուով. աւաղ, զի ես չկարեմ կալ. Վիլտասս ի բանակի անդ է։ Հորագոյն զբանակ մեր քան զՎիլիպպեայն սսեն գոլ՝։

Պարտեցաւ ճակատամարտն, անկաւ Վիլտասս, չիք ինձ այսուհետև բարեկամ, չիք Ալլադայ, դառնամ ի Սկիւթս։

Մտանօր սպառի օրագիրն իմ, զի ոչ ևս գոյր յիս գորութիւն շարայարելոյ զայն։ Կորհէի մեկնել վաղվաղապի, այլ չկարացի մերժել զթախանձանս քեռն Վիլտայ և զառն նորա Մպողդորայ. և կացի անդ ամ մի ևս, ողբակից լինել նոցա։

Մոդ այժմ յաւելից որ ինչ յիշեմս յիրաց ճակատամարտին. յեօթներորդում աւուր մետազխանիոնի ամսոյն մղեցաւ այն<sup>2</sup>։

1 Պլուտ. ի Դեմոսթ. հտ. ծննդ. աւուր Պղաստ. հտ. 6. 1. էջ. 854. էջ 95.

2 Պլուտ. ի Կամիլլ. հտ. \* ԅերրորդում աւուր Օ. 1. էջ 138. Քորսիկի. յղ. գոստոսի 338 Ն. Ք.

Առբերեք աթենացիք և թերացիք արիութիւնս որպէս ՚ի տեղւոջ անդ ցուցին : Ընաջինք և ըզփաղանդն իսկ մակեդոնական բեկին , այլ զօրավարքնոցա ոչ գիտացին յօգուտ ՚ի կիր արկանել զյաղթութիւնն : Օ որ լուեալ Փիլիպպեայ , աւել անխուով . Ըզիտեն յաղթել աթենացիք : Այլ յարդարեաց անդրէն զկարգ բանակին : Ինքն յաջում թևի անդ զօրավարէր , և ըզբասանոր որդի նորա ՚ի ձախում , երկոքին ևս քաջութեամբ մեծաւ պատերազմեալք : Գեմոսթենէս ընդ առաջինս ՚ի փախստէից եղև դասալիք : Այլ անկան յաթենացւոց անտի փառօք արք աւելի քան զհազար , և աւելի քան զերկուս հազարս ՚ի գերութիւն վարեցան : Այլ թերացւոց ոչ ինչ ընդհատ ՚ի նոյանէ եղև կորուստ :

Թագաւորն ՚ի սկզբան անդ ետ զանձն յանձահ ինդութի : Արչունս արարեալ բարեկամաց իւրոց որք հանգոյն նմին զեղիւեցան , ել ՚ի տեղի ձախատամարտին . և ռանհար լեալ անպատկառ քաջաց պատերազմողացն՝ որ առ ոտս իւր տապաստ անկեալ կային , արտասանէր ՚ի նուազաւոր բաղխիւն ռաին զհրովարտակն՝ զոր Գեմոսթենէս ետ հանել ՚ի իրախոյս ազգացն : Յունաց ընդդէմ նորա : Ընդ Գեմադէս ձարտարախօս , թէ-

1 Պոպեկն . ՚ի մարթանան ,  
 71րք Դ . 71 . 2 :

2 Պլուտ . ՚ի Գեմոսթ . հա .  
 1 . էջ 855 :

3 Գիոգ . զերբ ժ . 2 . էջ  
 476 :

4 Եոյն անդ :

5 Պլուտ . անդ :

պէտ և գերի 'ի կապանս , ասաց . Օ լեւրսի-  
տեայ բերես զգէմն Վիլիսպէ , դու որ կարողդ ես  
բերել զ՝ քամեմնեայն <sup>1</sup> : Օ քաստացաւ թաղա-  
ւորն 'ի բանից անտի . և առեալ ընկէց 'ի զլիսյ  
իւրմէ զբողորս ծաղկանցն՝ որովք սոսակեալն էր ,  
և զ՝ Եմագէս արձակեալ յաղատութիւն , խոս-  
տովան եղև զքաջութիւն սարտելոցն <sup>2</sup> :

Եստագոյն ևս դատեցաւ զլեւրէ վասն ապա-  
շնորհութեանն . նստոյց պահակապանս 'ի միջնա-  
բերդին , զկէսս 'ի զլիսաւորաց քաղաքայնոցն սք-  
սորեաց , և զայլս 'ի մահ մատնեաց <sup>3</sup> : Եւ խստու-  
թիւնքս այսոքիկ , զորս կարևոր համարեցաւ ,  
չիջուցին 'ի սպառ զվրէժինդութիւն նորա . և  
յայնմհետէ քաղցրութիւն առնէր ընդ սար-  
տեալն : Արոց խրատէինն զնա նուաձել զքաղաքս  
Ելլաղայ ամուրս , ասէր . Եւ համարիմ՝ զհամ-  
բաւ զթութեան երկարատե , քան զվաղանցուկ  
փառս տիրապետութեան <sup>4</sup> : Եւ որոց հրասլուրէինն  
զնա չինայել յաթենացիս որ զայնչափ աղմուկսն  
յարուցին 'ի վերայ նորա , ասէր . Բաւ լիցի ինձ  
կործանել զտեսարանն փառաց , ինձ որ վասն փա-  
ռաց վաստակեմն <sup>5</sup> : Եւ թոյլ ետ աթենացոց  
բառնալ զգիակունս անկելոց իւրեանց , և զգե-  
րին դարձոյց 'ի նոսա : Բայց գերին համարձա-

<sup>1</sup> Գիող . Գիող Ժ. Զ. էջ 477 :

<sup>4</sup> Պլուտ . առակ . հտ . 2 .

<sup>2</sup> Պլուտ . ի Պեղոսպիգ . հտ .  
էջ 287 :

էջ 177 :

<sup>5</sup> Կոյն սնդ . էջ 178 :

<sup>3</sup> Յուստին . Գիող Թ . ԳԼ 4 :

կեալ 'ի մարդասիրութենէ նորա, զառաժա-  
յանչափութիւն և 'ի ծանծաղամտութիւն, որ  
բնաւորութեան ազգին է ստգիւտ, և ժպրհեցաւ  
զկարասին ևս խնդրել, և զսպայիցն մակեդոնա-  
ցւոց բողոք ունել: Փիլիսպոս զիջաւ 'ի կամն նո-  
ցա, այլ ծիծաղելով ասէ. Իբր այն թէ ոչ 'ի  
պատերազմի, այլ 'ի լիցս յաղթեալ իցեմք  
դոցա:

Յետ ոչ բազում ժամանակի, մինչ աթենա-  
ցիք պատրաստէին ժուժկալել պաշարման, եկն  
եհաս Մղեքսանդր Մնտիպատրեաւ հանդերձ,  
հրաւիրել զնոսա յուխտ խաղաղութե և նիզա-  
կակցութեան: Մնդ տեսի զՄղեքսանդր, զայն  
որ ապա ելից զերկիր զարմացմամբ և սգով: Մին  
նր ամբ ութևտասն, և անդստին 'ի բազում պա-  
տերազմունս պայծառացեալ էր. և 'ի Վերոնեայ  
ճակատամարտին բեկեալ և 'ի փախուտ դար-  
ձուցեալ էր զաջոց թև բանակին թնամեաց. որ  
ի գեղ դիմաց նորա շուք մեծ յաւելոյր յաղթու-  
թիւնն այն: Տիպք կերպարանաց նորա համե-  
մատք, գոյն երեսացն պայծառ և կարմիր, ար-  
ծուունգն, աչեղ և հրաչեայ, հերք նորա խար-  
տեալ և գանգուր, բարձրապարանոց, և փոքր ինչ  
յահեակ կոյս գլուխ նորա հակեալ, հասակ  
միջասահման՝ նրբաւարտ և ուղղորդ, մարմին

1 Պլուտ. առակ. լակոն. մտթ. յղ. պտակ. էջ 614:  
էջ 177:

3 Յուստին. գիրք Թ. գԷ4:

2 Իկուրդ. էջ 153: ԴԿ

բարեյօղ և 'ի հանապազօր հրահանգս կազդուրեալ<sup>1</sup> . այլ և [Թեթևընթաց զնա ստեն գոլ, և կազմիկ յոյժ 'ի հանդերձս : Այլ եմուտ նա յԱթէնս հեծեալ 'ի ձի ահաբարանոց , որ ցլազլուխն կոչէր, ոչ ուրուք յառաջ քան զնա նուաձեւ կարացեալ զերիվարն զայն<sup>2</sup> , և որոյ երեք տասան քանքար էին զինք :

Ամենայն ուրեք այնուհետև զԱջէքսանդրէ ճառս արկեալ խօսէին . տրտմութիւն չեթողինձ անձամբ հետազօտել զնա , այլ հարցի զնմանէ զոմն աթենացի՝ որոյ բազում ժամանակս լեալ էր 'ի Սակեդոնիա , և ասաց ցիս .

Անդ բազում հանձարոյ և աջողութեան մտաց բերէ նա յանձին ուսումնասիրութիւն անյագ<sup>3</sup> , և ախորժակս արուեստից՝ որոց նպաստէ անծանօթ իրացն : Սիրելի է կենակցութիւն նորա, հեղ և հաւատարիմ բարեկամութիւն<sup>4</sup> , և իղձք նորա և խորհուրդք ազնուականք : Անութիւն տնկեալ 'ի նմա զբողբոջս ամենայն առաքինութեանց, Արիստոտէլ ուռձացոյց զնոսա իմաստիւք : Այլ ընդ այս ամենայն բարեմասնութիւնս բռնանայ 'ի նմա ախտ աղիտաբեր նմին , զուցէ թէ և բոլոր ազգի մարդկան . զփառամոլ իշխանասիրութիւնն ա-

1 Արրիան . յԷ . արշաւ . Ե . ԳԼ . 2 :  
 Աղէքս . զերք Ե . էջ 309 : 3 Իսկիւր . Թուղթ առ Ա  
 Պլուտ . յԱղէքս . հտ . 1 . էջ զէքս . հտ . 1 . էջ 466 :  
 666 : 4 Պլուտ . յԱղէքս . հտ .

2 Պլուտ . յԱղէքս . հտ . 1 . էջ 667 : ԱԷԼ . ԳԵԱ . զերք

սեմ, որ տազնապէ զնա զցայգ և զցերեկ: Այսպէս  
 ակններև 'ի հայեցուածս նորա, 'ի շարժուածս,  
 'ի խօսս և 'ի վարկարարազի իսկ գործս երևեալ,  
 զի զմատուցելոցն առ նա պատկառանք և երկիւղ  
 գրաւեն զոգիս<sup>1</sup>: Յանկայ նա միահեծան իշխել  
 ընդ տիեզերս<sup>2</sup>, և զգիտութեանց մարդկայնոց  
 յինքն և եթ բովանդակել զգանձս<sup>3</sup>: Տենչ փա-  
 ռաց, և բնաւ ամենայն պայծառ բարեմասնութիւք  
 հօրն զարմանալիք, երևին յորդին . այլ այս և եթ  
 ընտրութիւն կայ 'ի միջի, զի 'ի մին բարեխառնին  
 այլովք բնաւորութիւքն, իսկ 'ի միւսն հաստատու-  
 թիւն զառածանի 'ի յամառութիւն, փառասիրու-  
 թիւն 'ի խելայեղութիւն, և արիութիւն 'ի կա-  
 տաղութիւն: ( ) 'ի ամենայն կամք նորա անդարձք  
 իբրև զճակատադրին սահման, խուժեն ընդդէմ  
 խախտանաց՝ հանդոյն ուղիսից յարուցելոց ահազին  
 խոխոջիւք զժայռիւ՝ որ ընդդէմ հոսանաց նոցա  
 կայցէ:

Փիլիսոսոս այլևայլ հնարս 'ի կիր արկանէ  
 առ 'ի հասանել յուշ նպատակին, իսկ Աղէքսանդր  
 զսուսեր միայն . Փիլիսոսոս ոչ ամօթ համարի  
 'ի խաղս ողիմսլիականս յաղթել սինլքոր ոսո-  
 խաց, իսկ Աղէքսանդր ընդ թագաւորս և եթ կա-  
 մի անդ ոսոխել<sup>4</sup>: (Թուի բնութեանն իսկ ազդել

<sup>1</sup> Եղիան . զան . պատմ . Արիստոտ . ճարտ . յԱղէքս .  
 գիրք ժԲ . գԼ . 14 :

<sup>2</sup> Պլուտ . յԱղէքս . հտ . 1 . և Պլուտ . անդ . էջ 680 :

<sup>3</sup> Եջ 680 : 5 Նոյն անդ . էջ 666 : Նոյն .  
<sup>4</sup> Նոյն անդ . էջ 668 : Առ առակ . հտ . 2 . էջ 179 :

առաջնումն՝ զի ճգամբք յայն բարձրութիւնն հասեալ է, իսկ երկրորդին՝ զի ՚ի ծոց մեծութեան է ծնեալ \* :

Վախանձաւոր հօրն, ցանկայ գերազանցել զնովաւ . և ՚ի նմանութի Մքիլէայ նկրտեալ, ջանայ հաւասարել նմա՝ : Օ Աքիլէս համարի վեհ ՚ի զիւցազունս, և զհոմերոս վեհ ՚ի քերթողս՝ այնու զի անմահացոյց զզիւցազնն : Օ նախատպին զոր ընտրեաց իւր, զբազում ինչ տիպս նմանութեբերէ նա յանձին . զնոյն բռնութիւնն բարուց, ըզնոյն սաստկութիւնն ՚ի մարտս պատերազմի, և նոյն զգացումն սրտի : Արանէր նա ուրեք զՄքիլէս քան զամենայն մարդիկ զի բարեկամ՝ այնպիսի եղև նմա Պատրոկղ, և զովասան այնպիսի հոմերոս՝ :

Այ յերկարաձգեցան պատգամաւորութիւնք Մղեքսանդրի . աթենացիք յանձն առին զխաղաղութիւնն, և պայմանք խաղաղութեանն չէին ինչ խիտք : Փիլիպպոս եթող ՚ի նոսա և զՍամոս՝, զոր յառաջագոյն կալեալ էր . բայց միայն պահանջեալ յանդիման լինել հրեշտակաց նոցա ՚ի ժողովի, զոր գումարէրն ՚ի Վորնթոս՝ խորհել վասն հասարակաց օգտի աշխարհին Ալլադայ՝ :

\* Տես ՚ի զուղակչիւնն Փիլիպպեայ ընդ Աղեքսանդրի ՚ի հրաշազան պատմութեանն, զոր Օլիւիէ մատիլիպպի ՚ի լոյս էած զՓիլիպպեայ, յամին 1740 . հտ . 2 . էջ 425 :

1 Պլուտ . յԱղեքս . էջ 667 :  
2 Նոյն , յԷ . զօրութեան

Աղեքս . ճառ . 1 . հտ . 2 . էջ 327 :  
3 Պլուտ . անդ , էջ 672 :  
4 Նոյն , յԱղեքս . հտ . 1 . էջ 681 :  
5 Պլուտ . ՚ի Փոկ . հտ . 1 . էջ 748 :

Ընդունանուխեամբն Փրինիբեայ 'ի շորբորդոմ  
ամի 110 ողբի մարտին :

Յեօթնևտասներորդ օրէ յուլիսի 337 ամին մինչև ցեօթն  
յուլիսի 336 ամին Ն. Ք. :

ԲԱՅՅ սպարտացիք չառին յանձն գալ 'ի Ժո-  
ղովն 'ի Արնթոս : Այլ 'ի բողոքել Փիլիպպեայ  
խրոխտանօք, ետուն պատասխանի. Աթէ մեծա-  
ցեալ յաղթուածքդ կարծիցես զանձն, չափեա  
զստուերքո, և ոչ գծաչափ մի գտցես յաւելեալ  
յայն : Բնդ որ ծանրացասումն լեալ Փիլիպպեայ,  
գրեաց առ նոսա՝ զի եթէ մտից 'ի Ակոնիա,  
հալածեցից անտի զձեզ առ հասարակ : Այլ նորա  
ետուն պատասխանի. Աթէ<sup>3</sup> :

Բայց կարևորագոյն ինչ արգել զկատարումն  
ստառնալեաց նորա : Հրեշտակք գրեթէ յամե-  
նայն Ալլադայ Ժողովեցան. և նախ յորդորեաց  
զնոսա 'ի բաց դնել զամենայն հերձուածս՝ որովք  
մինչև ցայնժամ պառակտեալ էին, և հաստատել  
ատեան մշտնջենաւոր 'ի պահպանութիւն հասա-  
րակաց խաղաղութեան : Այլ ապա առաջի արար  
նոցա, զի ժամանակ էր խնդրելոյ զվրէժ թշնա-  
մանացն՝ զոր կրեաց Ալլադա 'ի Պարսից, և ա-

1 Պրոտ. առակ. լակոն.  
հտ. 2. էջ 218 :

2 Նոյն, յղ. շաղկապի.  
հտ. 2. էջ 511 :



Ծել պատերազմ՝ ի սահմանս արքայից արքային՝ :  
 Հաճոյ Թուեցան երկոքին ևս առաջարկու թիքն .  
 և ծախաձայն դրուատեօք ամենայն ժողովն միա-  
 բարբառ ընտրեցին զՎիլիսլապոս սպարապետ ա-  
 մենայն բանակին : Յունաց լիով իշխանութեամբ :  
 Սահմանեցին և զզորապահանջ ըստ ազգաց իւ-  
 բաքանչիւր , որոց միահամուռ թիւ զօրացն զու-  
 մարէր քսան բիւր հետեակաց , և հնգետասան  
 հազար հեծելոց . թող զզօրս մակեդոնացւոց , և  
 զայլոց խուժադուժ ազգաց՝ որ ընդ ձեռամբ նո-  
 ցա են : Այլ յետ այսորիկ դարձաւ նա յաշխարհ  
 իւր , պատրաստել ՚ի պատերազմն պանծալի :

Յայնժամ վախճան եղև ազատուէ Ալլադայ՝ .  
 և երկիրն բերրի աւագորերոյ՝ ծառայեսցէ այսու  
 հետև ժամանակս բազումն Թագաւորացն մակե-  
 դոնացւոց : Յայնժամ և ես ելի յԱթենայ , թէ-  
 պէտ և դարձեալ խափանէին զիս : Այլ դարձայ  
 այսրէն ՚ի Սկիւթիա , զերծեալ ՚ի պատրանացն՝  
 որով ատելի էր ինձ կալ ՚ի բնիկ աշխարհիս :  
 Ուր պատսպարեալ առ ազգն բնակեալ յեզր  
 Բորիսթենեայ , մշակեմ զփոքրիկ անդաստանն  
 իմ՝ որ երբեմն վիճակնախնոյն իմոյ Մնաքարսեայ ,  
 և վայելեմ աստ ՚ի խաղաղութիւն միայնու-  
 թեան : Ո՛ր տայր ինձ յաւելուլ , թէ և ՚ի բեր-  
 կրութիւնս բարեկամութեան , այլ չիք ինձ հնար

1 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 44. 5. Արոս. գիրք Գ. 44. 14՝  
 478 :

3 Արոս . անգ. 44. 13 :

2 Յուստինոս , գիրք Թ .

ամոփել 'ի վերայ հրաժարելոցն : Ի մանկութեան  
 ինդրէի զբարօրութի առ ազգս բարգաւաճեալս ,  
 այլ յաւազոյթ տիոցս գտի զհանգիստ յազգի՝  
 որ այլ ինչ բաց 'ի բարեաց բնութեան չգիտէ  
 բարի :



Գրութիւնք ի Գրաւորաց Գրութիւնք Գրութիւնք  
 Գրութիւնք Գրութիւնք Գրութիւնք Գրութիւնք  
 Գրութիւնք Գրութիւնք Գրութիւնք Գրութիւնք  
 Գրութիւնք Գրութիւնք Գրութիւնք Գրութիւնք

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻՔ

Ա. Յուզեպիէ Էնի Դէղանէան Գօնան պատմաւոր :  
(Էջ 65):

Յամին 1739 Սէնտուիչ երէր յԱթենայ 'ի Ղանդինոն վէմ մի, յորում գրոշմեալ կայ արձանագիր երկայն՝ բերելով զհամար գանձուն, զոր իւրաքանչիւր ոք կամ քաղաքք առ հասարակ պարտասպանք էին մեհենին Դեղոսի: Կշանակեալ կան 'ի նմա մանրամասնաբար հատուցեալքն և չև ևս հատուցեալ պարտք. դարձեալ և ծախք հանդիսին կամ նուիրակութեանն աթենացւոց, այս ինքն են գինք պսակին ոսկւոյ զոր նուիրեցին գինն, հանդերձ ծախք գործածոյն, հազար և հինգ հարիւր գրամակչիս. գինք եռոտանեացն որ ընծայեցան յաղթողաց, դարձեալ ընդ ծախս գործածոյն, հազար գրամակչիս. վարձք նուիրակասպետացն քանքար մի, և նաւապետին որ էած զնուիրական՝ եօթն հազար գրամակչիս. գինք հարիւր և ինն եզանց 'ի զենուամն՝ ութհազար չորեքարիւր և հնգեասան գրամակչիս, այլովքն հանդերձ: Չքացատրութիւն արձանագրիս այսորիկ արարին Թէյլըր 1 և Քորսինի 2. և կանխէ թուաբերութիւն նորա 373 կամ 372 ամօք քան զթուականութիւն փրկչին, ոչ ինչ աւելի քան զամս երեսուն և երկու յառաջ քան զուղևորութիւն Անաքարսեայ 'ի Դեղոս:

Բ. Յուզեպիէ Էնոյ Իմաստաբարոյն Յուանոյ Էնի Հասարակի Գրքի:  
'ի Քասարսի: (Էջ 132):

Կախնի ջատադուլք բրիտոնեական կրօնից, և բազումք յարդի մատենագրաց ըստ օրինակի նոցա վիճեալ պնդին թէ զմի աստուած դաւանելին նախնի իմաստասերք: Իսկ այլք

1 Մասհեմ. 'ի Քուսովորթ, 2 Արիստոտ. ընազանց.  
ԴԼ. 4. յօդ. 26, հա. 1. էջ Գիրք Ա. ԴԼ. 4. հա. 2. էջ  
684: 844:

յարդեաց զամենայն վկայութիւնս նպատամատոյցս այնմ հարծեաց համարելով ասացեալ զբնութեանն, զհոգւոյ փեղերացս, և զարեգակնէ, զխմաստասէրսն զայնոսիկ զրեթէ առ հասարակ դասն ընդ սպինոսեանս և ընդ անաստուածս : Ապա 'ի յեփն ժամանակս կացին հանձարեզ քննողք, որք յեաբազում գիշերաջան տքնութեանց 'ի քննութիւն նախնեացն իմաստասիրութեան՝ կշիռ 'ի միջասահմանին երկոցունց կարծեացն զկայ առին . ընդ որս և Պրուքքէր և Մոսհեմ, որոց ատեութիւնք եղեն ինձ յոյժ պիտանի :

Բազում ինչ իբք զինդիրս զայս կարևոր դժուարացուցանեն՝ յորոց զամանս ցուցից : Այլ կանխեմ զեկուցանել . զի աստանօր առաւելապէս զխմաստասիրաց երիցագունից քան զԱրիստոտէլ և զՊլատոն է խնդիրս . զի զուցանէ և եթ են 'ի բնագրիս բանք :

Ա . Բազմագոյնք 'ի նոցանէ զլինելութիւն և զպահպանութիւն փեղերացս մեկնելին որակութեամբք և եթ նիւթոյ . և այնպէս հանրական էր կարգս այս, զի Անաբազոր մերթ պարսաւի՝ զի ոչ յամենայնի զնոյն կարգ կալաւ, և մերթ զի ոչ ամենեկն եթող զայն 'ի բաց : Զի վասն սպաստանելոյ նորս մերթ 'ի բնական սպառնաւս՝ 'ի մեկնել զգործս իւրաբանչիւր, և մերթ յիմացութիւնն՝ զոր համարի փեղերաց յօրինիչ . Արիստոտէլ էպերէր զնա՝ զի ըստ պիտոյից աստուած զմն իջուցանէ 'ի թատրնս, և Պլատոն՝ զի ոչ յամենայն արգասիս բնութեան ցուցանէ նա զհնարս աստուածային իմաստութեանն : Ապա ուրեմն ոչ է օրէն 'ի լուծենէ առաջնոց բնաբանից գուշակել թէ չգաւանիցեն զմի աստուած, և ոչ 'ի բանից ինչ նոցա իմաստասիրել թէ զամենայն կատարելութիւնս աստուծոյ տայցեն նիւթոյն :

Բ . Յամենայն իմաստասիրական գրեանց, որ էին յաւուրս Արիստոտէլի, չէհաս ինչ առ մեզ ամբողջ բաց 'ի գրոց ինչ նորս և Պլատոնի . և 'ի համառօտ ճառէն Տիմէի Լոկրեցւոյ պիւթագորականի զփեղերական հոգւոյ, և 'ի ճառէն Ոկեղեայ լուկանացւոյ զփեղերաց, որ և սա աշակերտ էր Պիւթագորայ : Ոկեղոս 'ի համառօտ յայտ ճառի կամելով առաւել ցուցանել զյաւիտենականութիւն աշխարհիս քան զլինելութեան նորս յեղանակ, չհարկաւորի զաստուածութիւն 'ի ներքս մուծանել : Բայց այլուր 'ի միում ուրեք գրոց իւրոց, յորմէ Ստրէոս հաստուած ինչ աւանդեաց մեզ,

1 Պլատոն . 'ի Փեղոն, հտ .

1 . էջ 98 :

2 Պրուքք . հտ . 1 . էջ 469

և 1174 :

ներդաշնակութեամբ ասէ կալ աշխարհիս, և ներդաշնակութեանն զաստուած զնէ արարիչ<sup>1</sup> : Այլ էս ոչ 'ի վկայութիւն նորա յենում. զի Տիմէոս, Պղատոն և Արիստոտէլ յայննապէս իսկ հաստատեն զթիութիւն աստուծոյ, ոչ 'ի հարեանցի ինչ ճառեալ՝ այլ 'ի ճառս երկայնս, և 'ի բացատրել զազանդ իւրեանց հաստատեալ 'ի վարդապետութիւնս յայս :

Իսկ զիբբ այլոց իմաստասիրաց չեն 'ի միջի, այլ հաստուածք և եթ 'ի նոցանէ պահին. յորոց կէսք հաստատեն յայննապէս զվարդապետութիւնս զայս, և սակաւք ոմանք թուին եղծանել. ևն՝ զորս մարթէ յայլեայլ միտս առնուլ, և ևն՝ զորս մատենագիրք այլազանգք համառօտեալ այլայլեն. որպէս վեբլէոս, զոր Վիկերոն 'ի գիրսն որ յազադս բնութեան գից մուծանէ, ամբաստանի զբազմաց 'ի հնոց մատենագրաց այլայլեալ զկարծիս<sup>2</sup> : Արդ որ ըստ այսոցիկ անզոր վկայութեանց կամիցի որ գուշակել զկարծիս նախնի իմաստասիրաց, անկցի 'ի վստանգ վիտայնացն՝ յոր անկաւ Հայրն Հարտուէն, ըստ հատուկտիր և կամակորեալ վկայութեանց ինչ ամբաստանելով յանաստուածութիւն զՎարդէտիոս, զՄալէսորանչ և զԱրնոյ, այլովքն հանդերձ :

Գ. Նախնի իմաստասէրք համարելին օրէնս անյեղ լի, զի 'ի չգոյէ ոչ ամի ինչ 'ի գոյ<sup>3</sup>. ուստի իմաստասիրեցին՝ զի աշխարհս կամ էր միշտ որպէս էն, և կամ գէթ նիւթն էր մըշտակաց<sup>4</sup> : Դարձեալ և հին աւանդութիւն էր, կիցս առ հասարակ 'ի գերբարուն էէն 'ի կարգ ամեալ<sup>5</sup> : Վասն որոյ բազմաց 'ի նոցանէ ոչ կամելով՝ ոչ յօրինաց անտի 'ի բաց կալ և ոչ յաւանդութենէն, Զանացան միաբանել զերկոսեան : Վէսք, ընդ որս և Արիստոտէլ, ասեն՝ թէ էն այն 'ի յաւիտենից կազմեաց զաշխարհս<sup>6</sup>. և այլք, ընդ որս և Պղատոն, ասեն՝ 'ի ժամանակի կազմեալ զայն 'ի յառաջակաց յանկերպարան նիւթոյ, որ թափուրն էր յամենայն կատարելութեանց պա-

1 Ստոր. ծաղկաբաղ բնաբան. գիրք Ա. ԳԼ. 16. էջ 32 :

2 Պրուքք. հա. 1. էջ 738 : Մոշեմ. 'ի Քուսովորթ, ԳԼ. 1. յօդ. 7 :

3 Արիստոտ. յղ. բն. լսելեաց, գիրք Ա. ԳԼ. 5. հա. 1. էջ 316 : Դեմոկր. առ Դիոգ. լայերտ. գիրք Թ.

յօդ. 44 :

4 Մոսհեմ. 'ի Քուսովորթ, ԳԼ. 1. յօդ. 31. էջ 64 :

5 Յղ. օրիգեն. առ Արիստոտ. ԳԼ. 6. հա. 1. էջ 610 :

6 Արիստոտ. յղ. երկնից, գիրք Բ. ԳԼ. 1. հա. 1. էջ 452 : Նոյն, բնազանց. գիրք ԺԴ. ԳԼ. 7. էջ 1001 :

հեղոյ գերաբուն էին 1: Եւ երկարանցիւք այնչափ 'ի բացեաց էին յերկեանաց անասուածութեան, զի Արիստոտէլ ոչ ինչ երկրայի սկզբնապատճառ շարժման գնել զասուած 2, և Պլատոն զնոյն ինքն միայն անօրէն տիեզերաց 3: Վասն որոյ բազմահմուտ քննիչք ասեն՝ թէ չէ օրէն ընդ անասուածս գասել զնախնի խնաստասերս այնու, զի ոչ ծանեան զլինելութիւն աշխարհիս տիրապէս ստեղծմամբ 4:

Դ. Նախնիք գրեթէ առհասարակ յայլ միտս առնուն զբառքս անբռն, անխի-բ, պարզ 5: Ապաքէն թուի ոմանց 'ի նոցանէ համարել զասուած գոյացութիւն անբաժանելի անքանակ և անխառն 6, այլ հողեղէն գոյացութիւն բազմագոյնք ոչ այլ ինչ իմանային՝ բայց նիւթ ամենանուրբ 7: Վրիպակս այս կարծիք տեսաց ընդ գարս բազումս 8, և առ մատենագիրս իսկ՝ զորս մեծարէ եկեղեցի, և ըստ տեսութեան գիտնոց ոմանց, մարթ է զկարծիս զայս բերել առանց անասուածութեան:

Ե. Բաց 'ի կորսանէն գրեանց, զորոց վերագոյն ասացի, աւաղելի է և գերութիւնն՝ յոր անկեալ կային նախնի իմաստասերք: Զի թէպէտ և ծաղր ասներ ժողովուրդն զգիս, այլ չառնոյր յանձն հրաժարել 'ի նոցանէ: Անաբաղորդարեգակն համարեալ վէճ՝ կամ թիթեղն շանթացեալ, արժանի էր դատապարտութեան որպէս մոլար բնարան, այլ նա ամբաստանեցաւ յամպարչտութիւն: Եւ այլովք ևս հանդոյն ամին օրինակիք 'ի բազում ժամանակաց հեռէ խրատեալ էին իմաստասերք 'ի զգուշութիւն: Այս պատճառք էին դաղանի վարդապետութեան նոցա, զոր ոչ էր օրէն յայանել արտաբնոց: Դժուարին է յոյժ, ասէ Պլատոն 9, 'ի միտ առնուլ զհաւաստի կերպարան հասացին տիեզերաց. և եթէ մարթէր իսկ, սակայն ոչ էր պարտ պատմել զայն համարձակ: Աստի յառաջ

1 Պլատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 31: Կիկեր. յղ. բն. զից, զիբբ Ա. գլ. 8. էջ 403:

2 Արիստոտ. բնազանց. զիբբ ԺԴ. գլ. 7. հտ. 2. էջ 1000:

3 Պլատ. 'ի Տիմ:

4 Պրուքք. պատմ. իմաստաս. հտ. 1. էջ 508:

5 Նոյն անդ, էջ 690: Մաշեմ. 'ի Քուտլորթ, գլ. 4.

յօդ. 24. էջ 630:

6 Անաբաղոր. առ Արիստոտ. բնազանց. զիբբ Ա. գլ. 7. էջ 851:

7 Պողոսոր, պատմ. Մանիք. զիբբ Գ. գլ. 1. էջ 474:

8 Մոսհեմ. անդ, գլ. 5. յօդ. 26. էջ 434:

9 Պլատ. 'ի Տիմ. հտ. 3. էջ 28:

էկին այն ամենայն երկրիմի բանք, որք զմուրբութիւն ընդ ճշմարտութեան յեղանակաւ իմն միարանեն. որպէս և անուանն իսկ աստուծոյ երկրիմութիւն: Զի ՚ի վաղնջուց ժամանակաց զեղծմամբ ընդարձակեալ նշանակութեան նորա, ցուցանէ զամենայն որ ինչ ընդ տիեզերս են զարմանալիք, և որ ՚ի մարդիկ գերազանցութեամբ վաստակոց և իշխանութեան երևելիք: Որպէս և առ բարեպաշտադոյնս իսկ ՚ի մատենագրաց գասանի, ուրեք եղակի և ուրեք յողմակի վարեալ 1: Արդ երկրիմութիւնս այս մերթ ընդ միով և մերթ ընդ միւսով կերպարանաւ երևեալ, հաճոյ թուէր առ հասարակ ուսմիկն և գիտնոց. վասն որոյ ՚ի կոչել ուրուք ՚ի մատենագրաց աստուած զբնութիւնն կամ զհողի տիեզերացս և կամ զաստեղս, օրէն է քննել թէ յինչ միաս կոչիցէ այնպէս, կամ թէ ՚ի վերքան զայնոսիկ չգնիցէ զմի աստուած արարիչ ամենայնի:

Զ. Ըստ այսմ տեսութեան իմանալի է մանաւանդ զերկուս կարծիս յաճախեալս առ հին ազգս: Առաջին զայն, թէ իցեն ՚ի վերոյ քան զմեզ իմանալիք, ուղղիչք շարժմանց տիեզերացս: Եթէ կարծիքս այս չիցեն հին և սրբազան աւանդութեան հետք, աներկբայապէս առեալ իցեն սկիզբն յաշխարհի՝ ուր թագաւոր զհողս տերութեանն յանձնէ ՚ի տեսութիւն պաշտօնից իւրոց: Զի որպէս թուի, ընկալան զայն Յոյնք յազգաց՝ որք ընդ միահեծան պետութիւն կային 2. և դարձեալ զի ՚ի գիրս ուրեք որ թէպէտ և վրիպակաւ համարի Արիստոտելի՝ բայց հնադիր է յոյժ, յաւելու մատենագիրն. Եթէ ոչ է արժան թագաւորին Պարսից պարսպել ՚ի հոգ գուշնաքից իրաց աշխարհին, որչափ ևս առաւել չիցէ արժան հոգս այս գերաբուն էին 3:

Իսկ երկրորդ կարծիքն են զանգագար առ ՚ի միմեանս ազգեցութենէ էիցս առ հասարակ: Քանզի համարեցան հոգի ՚ի խանդումանդն 4, և յամենայն իսկ մարմինս՝ յորս շարժումն ինչ կամ կայծակն կենաց նշմարէր: Համարեցան հոգի ՚ի տիեզերս համապիւռ ընդ մասունս մեծի բոլորիս: Այս կարծիք չէին ինչ հակառակ ողջմտութեան. զի ոչ ինչ արդէլոյր նոցա ասել էրեալ աստուծոյ ՚ի նիւթն շարժիչ աներևոյթ կամ կենդանական ինչ զորութիւն, որ ուղղիցէ զնա 5: Բայց զեղծմամբն,

1 Քսենոփ. Պղատ:  
2 Պլուտ. յղ. թեբութեց  
պատգամ. հտ. 2. էջ 415:  
3 Յղ. աշխարհի, առ Արիստոս. զլ. 6. հտ. 1. էջ 611:

4 Թաղէս, առ Արիստոս.  
յղ. հոգւոյ. գիրք Ա. գլ. 2.  
հտ. 1. էջ 620:  
5 Քուսովորթ, գլ. 3. յոյ.  
2. հտ. 1. էջ 99:

զորմէ ասացի . խմանալի զօրութիւնքս այսորիկ և հոգի տիեզերաց աստուածք կոչեցան . և աստի յաճախեցին ամբաստանութիւնք զբազմաց յիմաստասիրացն , մանաւանդ զՊղատոնէ և զՊիւթագորայ :

Զի որովհետև Պղատոն , որպէս ասացի , մերթ եզակի 'ի կիրարկանէ զանունն աստուծոյ և մերթ յոգնակի<sup>1</sup> , ամբաստանեցաւ ինքն իւրոց բանիցն հակառակել<sup>2</sup> : Այլ զիւրին էր առայս պատասխանի . զի 'ի Տիմէի տրամախօսութեանն բացատրելով նորա կարգաւ զմիտս իւր , ասէ՝ թէ աստուած կազմեաց զտիեզերս , և թէ ուղղիչս նմին կացոյց զաստուածս 'ի ձեռանէ կամ խմանալի զօրութիւնս , ստեղծուածս ձեռաց իւրոց , աւանդապահս իշխանութեան իւրոց և հնազանդս հրամանաց իւրոց : Ուր զանազանութիւն միայնոյն աստուծոյ յայլոցն այնպէս յայանի է , զի անմարթ է չտեսանել զայն . և մարթէր Պղատոնի նովին զիտաւորութեամբ զնոյն շնորհս հայցել 'ի թագաւորէն և 'ի պաշտօնէից նորա : Ապա յայտ է՝ զի ուր ուրեք աստուած կոչէ զտիեզերս կամ զերկինս կամ զատտեղս կամ զերկիր այլովքն հանգերձ , ոչ այլ ինչ խմանայ՝ բայց զիմանալի զօրութիւնս և զհոգիս սփռեալս յաստուծոյ յայլևայլ մասունս տիեզերաց , ուղղել զարժմունս նոցա : Ընդ ամենայն գիրս նորա անցեալ , չգտի ինչ հակառակ վարդապետութեանս այսմիկ :

Վերաստանութիւնքն զՊիւթագորայ՝ ոչ ինչ ընդհատ ծանունք , չերևին աւելի ինչ ունել հաստատութիւնս : Դներ , ասեն , հոգի համասփիւռ ընդ տիեզերս , և կարևոր կցորդեալ ընդ էիցս առ հասարակ՝ զորս շարժէ , պահպանէ և նորոգէ անգագար , էակ անսկիզբն՝ յորմէ հոգիք մեր գոյացան . և զհոգին զայն անուանէր աստուած<sup>3</sup> : Եւ յաւելուն , թէ զի այլ աստուած բաց 'ի սմանէ նա ոչ ճանաչէր . ապա ընդ անաստուածս գասելի է :

Բայց հանճարեղ քննիչք զգեմ կալան այսմ ամբաստանութեան , որ հաստատի 'ի սակաւ ինչ վկայութիւնս նպատամատոյցս կարծեաց նոցա երկրայտկանս : Գժուարաւ ոք 'ի մատանս ամբողջս բովանդակել կարացէ որ ինչ 'ի ջատագովութիւն և հակառակ իմաստասիրիս այսորիկ են ճառք . այլ ես շատ համարիմ տալ զնմանէ անստութիւնս ինչ :

<sup>1</sup> Պղատ . 'ի Տիմ . հա . 3 .

էջ 27 : Եւն . յղ . օր . դիւք  
Դ . հա . 2 . էջ 716 :

<sup>2</sup> Վիկեր . յղ . բն . զից ,  
գիւք Ա . զլ . 12 . էջ 406 :

3 Եոյն անդ . զլ . 11 . էջ  
405 : Վղեմ . աղեքս . յորդօր  
առ հեթ . էջ 62 :

<sup>4</sup> Պողոսար , պատմ . Մանեք .  
գիւք Ե . զլ . 2 . էջ 172 :



Ոչ է մարթ ցուցանել, թէ Պիւթագորայ զաստուած ընդ փեղերական հոգւոյ շփոթեալ իցէ, այլ ամենայն ինչ միաբանին 'ի ցուցանել՝ զանազանեալ նորա զնոսա 'ի միմեանց : Եւ վասն զի չէ մարթ գատել մեզ զկարծիս նորա, բայց միայն 'ի կարծեաց աշակերտաց նորա, տեսցուք թէ զինչ ոմանք 'ի նոցանէ ասիցեն 'ի հատուկաբր բանն՝ որ պահին 'ի գրոց նոցա :

Աստուած ոչ միայն ստեղծ զամենայն՝ որ ինչ ենն, այլ և պահէ և ուղղէ զամենայն<sup>1</sup> : Զօրավար հրամայէ բանակի, նաւուղիղ նաւաստեաց, և աստուած աշխարհի<sup>2</sup> : Իշխէ նա փեղերաց, որպէս թագաւոր իւրում տէրութեան<sup>3</sup> : Ոչ էր մարթ փեղերաց կալ, եթէ ոչ ուղղէր 'ի ներդաշնակութէ և 'ի խնամակալութենէ<sup>4</sup> : Աճ բարի է և իմաստուն և երանելի իւրե<sup>5</sup> . համարի նա հայր աստուածոց և մարդկան, զի զպարգևս տփռէ 'ի վերայ ամենայն հնազանդեւոց իւրոց : Օրէնսգիր արդար և հրամանատու իմաստուն, ոչ երբէք անփոյթ առնէ զհոգս պետութեան իւրոյ : Պարտ է մեզ առաքինութեանցն մերոց զնորայն առնուլ նախատիպ, որ անապակքն են և անխառն յամենայն աղցաւոր ըզձից :

Թագաւոր որ ընու զպարտս իւր օրինակ է աստուծոյ<sup>6</sup>, որ ինչ կցորդութիւն է ընդ նա՝ և ընդ հպատակս իւր, նոյն է ընդ աստուած և ընդ փեղերս<sup>7</sup> :

Աստուած մեծ, բարձրեալ, և ուղղիչ ամենայն փեղերաց, նա միայն է աստուած . զի թէպէտ և իցեն և այլք՝ որոց այլևայլ կարգք իշխանութեանց են, այլ ամենեքին հնազանդին հրամանաց նորա . որպէս պար ընդ պարագլխաւ, և զօրք ընդ զօրագլխաւ, այսպէս և նորա ընդ նովաւ են<sup>8</sup> :

Արգ հատուածքս այտղբիկ այնպէս հակառակք են ամբաստանութեանցն զՊիւթագորայ, մինչև ոմանց 'ի քննաբանից<sup>9</sup> զհարազատութիւն նոցա արկանել յերկբայս . այլ այս ոչ կարկեցոյց զգիտունս հանգոյն նոցին կիրթս 'ի դատողական

1 Սթենէիգ. առ Ստոր .

Ճառ 46 . էջ 332 :

2 Արքիտ. անդ, Ճառ 1 .

էջ 15 :

3 Դիոտոգ. անդ, Ճառ 46 .

էջ 330 :

4 Իսպոսգ. անդ, Ճառ 101 .

էջ 555 :

5 Սթենէիգ. անդ, էջ 332 :

6 Նոյն անդ :

7 Դիոտոգ. անդ, Ճառ 46 .

էջ 330 :

8 Ոնատաս, առ Ստոր .

Ճաղկաբաղ բնաբան . գիրք Ա .

դւ . 3 . էջ 4 :

9 Կոնրինդ . և Թոմաս առ

Պրոբք . հա . 1 . էջ 1040 :

քննութիւն 1 : Զի վարդապետութիւնս այս աւանդեալ 'ի հաստատածս բանիցս յար և նման է վարդապետութեն Տիմէի, որ զանազանէ յայնմպէս զգերաբուն էն 'ի փեղեբակիան հոգւոյ՝ զոր 'ի նմանէ համարի ստեղծեալ 2 : Արդ և թէ 'ի դատապարտութիւն Պիւծագորայ բաւականք իցեն վկայութիւնք ինչ մատենագրաց հնգօք և վեցհարիւրովք ամբ կրտսերագունից քան զնա, որոց մարթիսկ է թէ չիցեն հասու լեալ խնաստից նորա, իսկ առ 'ի ջատագովութիւն նորա չիցեն բաւական հոյք վկայութեանցս՝ որ աւանդին 'ի նպատա նորա . մանաւանդ վկայութիւն միոյ յաշակերտաց նորա՝ որ գրեթէ ժամանակակից նմին եկաց, և 'ի միում ուրեք 'ի գրոցն՝ որ պահի ամբողջ՝ աւանդէ զվարդապետութիւն նորա կապակցեալ ամենայն մասամբք :

Բայց սակայն մարթի և ըստ քննարանից բազմաց միարանել զվկայութիւն Տիմէի ընդ հակառակսն : Պիւծագոր ճանաչէր զստատած գերաբուն, արարիչ և պահպանիչ փեղեբաց, էակ ամենարարի և ամենխնաստ, որոյ խնամակալութիւն հասանէ ամենայն ուրեք . զայս այսպէս վկայեն Տիմէոս և այլք 'ի պիւծագորեանց, զորոց զհատուկաբ բանսն ամի : Պիւծագոր համարէր եզեալ յաստուծոյ 'ի փեղեբոս հոգի կենդանութեան անմեկնելի կցորդեալ ընդ նիւթոյ : Արդ զհոգիս զայս մարթ է համարել հուր նուրբ և կամ բոց յստակ . և ոմանք 'ի պիւծագորեանց կոչէին զայն աստուած, զի և ամենայն արարածոց գերաբուն էին տային զկոչումն զայն : Այսու եւեթ օրինակաւ, թէ ոչ սխալեմ, մարթ է մեկնել զվկայութիւն՝ որք զողջմտութիւն Պիւծագորայ յերկբայս արկանեն :

Գարձեալ և զայն մարթ է ասել, զի ոմանց 'ի պիւծագորեանց կամելով աալ պատկեր զգալի սոցեցութեանն աստուծոյ 'ի փեղեբոս՝ համարեցան զնա ամենայն ուրեք բովանդակ ներգոյ, կենդանացուցանելով զփեղեբոս՝ որպէս հոգիս մեր զմարմին : Զայս կարծիս թուի քրմապետին Գեմետրեայ վարդապետել նոցա յերեսներորդ գլուխ բնագրիս : Անդ զայն 'ի կիր արկի առ 'ի չտոտորելոյ 'ի բանից ներքնագրոյմ՝ մատենագրացն, և առ 'ի չտալոյ վճիռ զինգրոց՝ զորս դժուարին է և անօգուտ իսկ քննել : Զի ոչ է թէ ըստ երկգլխի բանից ինչ, և 'ի հանգէս առաջարկութեանց և հետևանաց զմիմասմբք կուտակելոց պարտ է գուշակել զկարծիս Պիւծագորայ, այլ ըստ բարոյականին նորա՝ զոր յանձին երեր, և մա-

1 Փաբրիկ . մատենագար . 2 Պրուբք . հտ . 1 . էջ 1093 :  
Յուն . հտ . 1 . էջ 529 :

նաւանգ ըստ ազանգոյն՝ զոր սահմանադրեաց, որոյ մի ՚ի կարևորագոյն պարտուցն էր պարտալել յաստուածային տեսութիւնս 1, ունել միշտ առաջի աչաց զաստուած, և հաճոյ լինել նմա պահովք և աղօթիւք և խոկմամբք և սրբութեամբ սրտի 2: Որ այս հրահանգք երկիւղածութեան ոչ ՚ի ճահ պատահեն սպինոսեանց:

Է. Լուիցուք արգ որ ինչ մատենագիրն տեսութեանց զվարսամէն ասիցէ. « ԅորժամ զմիութենէն աստուծոյ խնամտասիրել զքեզ կամիցի՝ զինչ խնդիր առաջի կայցէ նմա, բայց գիտել թէ գոյ խնացուցիւն ամենապարզ, փարատ ամենեկն ՚ի նիւթոյ և ՚ի ձեռոյ աշխարհիս, և գոյացուցիւ ամենայն իրաց: Եթէ հաստատիցէ զայս խոստովանի թէ մի է աստուած, և չիք այլ զքեզ իսկ եթէ ոչ, թէպէտ և ծաղր առնիցէ զամենայն գիտ հեթանոսաց, և գարշիցի ՚ի բազմաստուածեան մոլորութենէ, սակայն արդեամբք զբազմաստուածութիւն ՚ի ներքս մուծանէ »: Եւ յաւելլու Պայլ, զի գժուարին է գտանել զոր ՚ի նախնեաց՝ որ մի աստուած խոստովանիցի, և չխնայցէ զայն գոյացուցիւն խառն: « Արդ գոյացուցիւն այսպիսի ոչ արտապէս կոչի մի, այլ պիտակաբար ըստ կամի տեսութեամբ իբր բոլոր մի կամ էակ հաւարական » 3:

Եթէ առ ՚ի գասել ընդ բարմաստուածս բաւական էր չունել հաւաստի գիտութիւն զբնութենէ հոգւոյ, հարկ էր ըստ նմին մատենագիրն զատասպարտել ոչ միայն զՊլուծագոր, զՊլատոն, զՍոկրատ և զնախնիս առ հասարակ 4, այլ և գրեթէ զամենեկին՝ որք մինչև ցաւուրս մեր գրեցին զայսցանէ. զի այսպէս նոյն ինքն ՚ի բռնագիրս իւր ասէ. « Մինչև ցարդեւիտս ամենայն վարդապետք մեր աստուածաբանք և բնաբանք համարեցան ունել տարածութիւն հոգւոյ, աստուծոյ անսահման, իսկ հրեշտակաց և բանաւոր հոգւոյ սահմանաւոր: Բայց աննիւթական և անմասն զտարածութիւնն զայն համարէին, և ամբողջ յամենայն իսկ մասունս տեղոյն՝ զոր գրուեն: Աստի զանազանեցան երբակի տեղակալութիւնք. առաջին՝ մարմնոց, երկրորդ՝ ստեղծական հոգւոյ, և երրորդ՝ աստուծոյ: Իսկ կարգեսեանք զայս ամենայն վարդապետութիւնս

1 Պլուտ. ՚ի Կում. հտ. էջ 245:  
 1. էջ 69: Վրեմ. աղեքս. 3 Պայլ, խորհրդած. յղ. յաճախասպ. գիրք Ե. էջ 586: հասարակաց, հտ. 3. յոգ. 66:  
 2 ԅամբղիկ. գլ. 16. էջ 57: 4 Մոսէմ. ՚ի Քուտլորթ. Մնոնիմ. առ Փոտայ, էջ 1313: գլ. 4. յոգ. 27:  
 Գիտք. ծագկաբաղ Վիտղես.

վեր 'ի վայր շրջեցին . զի ասնն չունել ինչ հողուոց ամենեին ասարածութիւն կամ տեղակալութիւն , այլ կարծիք նոցա հերքին իբր անտեղիք : Ապա մնայ ասել զի և արդ ամենայն իմաստասէրք մեր և աստուածարանք առ հասարակ ուսուցանեն ըստ մտաց ամբոխին զգոյացութիւնն աստուծոյ տարածեալ ընդ վայրս անսահմանս : Արդ այս ոչ այլ ինչ է , բայց կործանել զկանգնեալն , և դառնալ առնել զաստուած նիւթական՝ աննիւթ զնա դաւանեալն :

Ապա ուրեմն ոչ այն ինչ ինզիր առաջի կայ , զոր Պայլն 'ի ներքս ած է , այլ ինզրի՛ թէ Պլատոն և որ յառաջ քան զնա իմաստասէրք , ծանեան զէն ինքնէակ և անսկիզբն , իմացութիւն անսահման , ամենիմաստ և ամենաբարի , որ արար զտիեզերս 'ի յախտնից կամ 'ի ժամանակի , որ պահպանէ զայն և ուզէ իւրովի կամ արբանեկութեամբ պաշտանից , և որ յաշխարհի աստ կամ 'ի հանդերձելու մն վարձարէ զառաքինութիւն և պատուհասէ զանօրէնութիւն : Արդ այս ամենայն վարդապետութիւնք յայտնապէս աւանդին 'ի գիրս գրեթէ ամ նախնի իմաստասիրաց . իսկ զի խառն ընդ նոսա գտանին և մոլորութիւնք թանձունք զաստուծոյ էութենէն , առ այս ասելի է՝ զի անգիտելի էին մատենագրացն մոլորութիւնք իւրեանց , և կամ զի ոչ կարծէին՝ թէ միութիւն գերաբուն էին բառնի նորք : Եւ դարձեալ ասելի է , զի ոչ է օրէն ամբառանել զմատենագրաց՝ որ չեն 'ի միջի՛ մոլորութիւնս յառաջ ածեալս 'ի բանից նոցա , զորս նոքա հերքէին արդեօք՝ եթէ 'ի վերայ կային հեռանանցն 2 : Յաւելում և ևս . զի ինձ ոչ են կամք յուցանել թէ իմաստասէրքս , զորոց են բանքս , զնոյն ողջամիտ կարծիս բերելին զաստուծոյ զոր և մերս , այլ զի գրեթէ առ հասարակ յանաստուածութենէ և 'ի բազմաստուածութենէ 'ի բացեայ էին :

Գ . Յաւելում Բարդուղիմէոս աստուածաբանութեան Կաթողիկոսի Յուսէպոսի : (Էջ 142 :)

Առաջինք յեկեղեցական մատենագրաց որք պէտ արարեալ ժողովեցին զվկայութիւնս քերթողաց և զիմաստասիրացն Յունաց՝ նպաստամտոյցս վարդապետութեան միութեանն աստուծոյ և ինամակալութեան , և այլոց սոցին սակի կարևոր մասանց 3 , նորին դարձեալ մերձ գնելով բարոյա-

1 Մոսհեմ . ճառ . յգ . արար . 2 Նոյն , 'ի Քուսովորթ , գլ . չազործ . առ Քուսովորթ , հտ . 4 . հա . 1 . էջ 685 :  
2 . էջ 315 : 3 Վղիմ . արեքս . յաճա .

կանխ մերոյ զնախնի իմաստասիրացն սահմանադրութիւնս ,  
'ի միտ առին զի նոցայն թէպէտ և թերի , պատրաստեաց  
զմիտս յընդունելութիւն մերոյս կարի առաւել յստակա-  
դունի 1 :

Մատենաբ. բազումք 'ի ժամանակս մեր 'ի լոյս աման զվար-  
դապետութենէ կրօնիցն հեթանոսաց 2 , և բազմահմուտ քնն-  
նարանք խորաքնին լեալ հասու եղեն՝ զի 'ի մասունս ինչ ար-  
ժանաւոր մեծագունից գտանի դովութեանց : Տես ինձ որ  
ինչ ֆրերէ ասէ զկարևորագունէն 'ի մասունս կրօնից . « Ապա  
ուրեմն եղիպտացիք և Յոյնք ծանեան և պաշտեցին զաս-  
տուածն գերագոյն , զաստուած ճշմարիտ ; թէպէտ և ոչ ար-  
ժանաւոր նմին պաշտամամք » : Իսկ զբարոյական վարդապե-  
տութենէ նոցա այսպէս գերահռչակն Հուեափոս եպիսկո-  
պոս Աբբինկայ ասէ . « Այլ ինձ բազում անգամ , յնթեռ-  
նուլ որ ինչ Պղատոն , Արիստոտէլ , Կիկերոն և Եպիկտետոս  
զուղղութենէ և զլաութենէ կենաց աւանդեն , թուի թէ 'ի  
գրոց ինչ քրիստոնէից զկարգս բարեպաշտութեան ուսա-  
նիցիմ՝ 3 » :

Խրախոյս առեալ 'ի մեծամեծ օրինակաց աստի , և ստիպեալ  
յառաջարկութենէ գրոցս՝ տալ համառօտիւ զկերպարանս  
բարոյական աստուածաբանութեան Յունաց , քաւ լիցի ինձ  
'ի հաւասարութիւն ամեւ զայն ընդ մերումս՝ որ առանց հա-  
մեմատութեան գեր 'ի վերոյ բերէ կարգ : Առանց ցուցանե-  
լոյ աստանօր զգերագանցութիւնս՝ որովք սահմանադրութիւն  
աստուածային իմաստութեանն զանազանի , զայս և և թ ազգ-  
առնեմ . զի օրէնսդիրք Ելլադայ շատ համարեցան ասել ,  
Պատռնէս շքիս . իսկ աւետարանն ասէ . Սիբոնիս շքիս Ատռնած  
սոյմնէնս շքիս սոմնէն , և շքիսիս իբիս շքիսս 4 : Այս օրէնք ,  
որ զամենայն օրէնս յինքն բովանդակէ և շունչ իմն և հոգի  
է նոցա , ըստ մասին ինչ ծանօթ էր Պղատոնի . ասէ սուրբն  
Օգոստինոս 5 . այլ որ ինչ Պղատոն ուսոյցն զայսմանէ , կցոր-

խապ . գիրք Ե և Զ : Լակ-  
տանտ . կարգադր . գիրք Ա .  
դԼ . 5 : Օգոստ . յԼ . քաղա-  
քին աստուծոյ , գիրք Ը . դԼ .  
9 : Եւսեբ . պատրաստ . աւետ .  
գիրք ԺԱ : Մինուկիոս փելիքս ,  
և այլք :

1 Կղեմ . աղէքս . յաճախապ .  
գիրք Ա . էջ 331 , 366 , 376 :

2 Պիւրիկնի , յԼ . գիցարան .  
Մուրկիոս , տեսութիւն Պիւ-  
թագոր . անճարանութեան :

3 Հուեա . Ալեքսան . իըն-  
դիրք , գիրք Բ . էջ 92 :

4 Ղուկ . դԼ . 22 . համար 37 :

5 Օգոստ . յԼ . քաղաքին  
աստուծոյ , գիրք Ը . դԼ . 9 :

գեալ էր ընդ կատարածի բարւոյն զոր գնէր, նմին իրի և չօգնեաց ինչ յուզումիւն բարուցն Յունաց, մինչև Արիստոտելի անտեղի համարել զպատուէր սիրելոյ զԱրամազդ 1 :

Դ. ԶԱյոյ-մեռոյ ինչ-ծելոյ ՚ի գիր-յոյ : (Էջ 155 :

Ի ժամանակին, զոր ընտրեցի յուզեորումիւն Անաբարսեայ, յածեին ընդ Ելլադա օրհնումիւնք և այլ տաղք յանուն վաղնջուց քերթողաց. բայց գիտնոց յայանի էին կեղծիքն, մինչև Արիստոտելի երկբայել զՌոփէոսէ՝ թէ իցէ կացեալ 2 : Ապա յեա ժամանակի անուանք ականաւորք մահագրեցան ՚ի վերայ բազում գրոց, որոց անյայտ էին մատենագիրք : Այսպիսի են Ճառք ինչ, որ արդ ՚ի տպագիրս Պրատանի և Արիստոտելի կան. զորս և ես ուրեք ուրեք յանուն արանցն աւագաց նշանակեցի վասն համառօտումեան, և զի ՚ի գիրս նոցա յեռեալ են :

Ե. Թէ +մէ ինչ-բարեւոյն +եւթ-ծ+ իոյն +- Յոյն ՚ի թէլ իոյն ւրբ-րբ րբ-ն. Բ. (Էջ 156 :

Ըստ վկայութեան Սուրբասայ, Աթենէոսի և այլոց մատենագրաց, զորոց փարբիկիոս ժողովեաց զվկայութիւնն 3, ամի զթիւ քերթումեանցս յերիս հազարս : Զի թէպէտ և ոչ ամենայն թուարեբումիւնք մատենագրացս հաւատարիմք են, այլ աստանօր բազում յոյժ քերթողս թատրերգակս յիշատակեն կացեալ յառաջ քան զժամանակ ուզեորումեան Անագարսեայ և յաւուրս նորա, առանց մանրապատում առնելոյ զթիւ քերթումեանց նոցա : Արդ եթէ իցէ ևս աւելւրանումիւն ՚ի միում մասին, իցեն ևս բազում ինչ ըստ այլում մասին ՚ի բաց թողեալ. որպէս զի յիրացն Ճամարտումենէ զնոտորէ կողմն թուոյս : Եռապատիկ և քառապատիկ գտանէր աւելի, եթէ առանց սահմանելոյ ՚ի ժամանակ ինչ կամէի զհէքէն անսարանին բովանդակ տալ զպատումիւն. զի ՚ի սակաւ ինչ ևեթ յիշատակարանս, որ զիրացն տան տեղեկութիւն, յիշատակին քերթողք իբր երեքարիւր և յիսուն՝ յօրինիչք ողբերգութեանց և կատակերգութեանց 4 :

Այլ արդ եօթանեքին ևեթ ողբերգութիւնք Եսթիղեայ

1 Արիստոտ. բարոյ. աւագ. 3 Փարբիկ. մատենագրար. 7երբ Բ. ԴԼ. 11. հա. 2. էջ 30ւն. հա. 1. էջ 736 : 187 : 4 Կոյն անդ, էջ 62 և 2 Կիկեր. յղ. բն. Գից, 736 : 7երբ Ա. ԴԼ. 38. հա. 2 :

պահին ամբողջ, և եօթն Ստփոկզի, իննևտասն Եւրիպիդէայ՝  
և մետասան կատակերգութիւնք Արիստոփանէայ, միաճամուռ  
քառասուննչորք: Մարթ է յաւելուէլ ՚ի նոսա և զիննևտասն  
կատակերգութիւնս Պղաւտեայ և զլէց Տերենտեայ, որ ՚ի կա-  
տակերգութեանցն Յունաց օրինակեալ են, կամ ՚ի նմանու-  
թիւն նոցին յօրինեալ:

Եւ ոչ ՚ի մի ՚ի ստեղանց հէլլէն գրականութեան խնայեաց  
ժամանակն. զիբք պատմութեանց, մատեանք չափական գի-  
տութեանց, վարդապետութիւնք խմաստատիրաց, ճառք քա-  
ղաքականք՝ բարոյականք և բժշկականք, այլովքն հանդերձ,  
գրեթէ առ հասարակ կորեան: Կմին վիճակեցան բախտի և  
մատենագրութիւնք հռոմայեցւոց. իսկ եղիպտացւոցն և  
փիւնիկեցւոց և այլոց ազգաց զխնաւորաց ընկուղան սպառ-  
սպուռ նաւարեկեալք:

Առ յոյժ գժուարութեան բազմանալոյ օրինակաց գրենոյն,  
և առ կարօտութեան դանձուց բազմաց ՚ի կազմել մատենա-  
գարան ինչ փոքրիկ, յոյժ գժուարաւ տարածանէին գիտու-  
թիւնք. և ՚ի նմին իսկ տեղւոջ գժուարին էր նոցա յարակայ-  
ել: Այսն այսորիկ պարտ է մեզ զգոյշ լինել ՚ի համարելոյ  
զնախնիս տեղեակս կամ անտեղեակս գիտութեանց ինչ:

Կարօտութիւն առաջնորդաց, որով մուրեկիննորա յաճախ  
՚ի խնդիրս, ոչ ևս կատեցուցանէ զարդիս: Տպագրութիւնն,  
գիպաց բարեպատեհ արգասիք, և կարևորագոյն թերևս քան  
զամենայն գիւտս, կցորդէ և պահէ անկորուտ զճմտութիւնս  
ամենայն ժամանակաց և ազգաց: Ոչ թողցէ նա երբէք չիջա-  
նել ջահից գիտութեան. և թերևս այնչափ ևս առաւել բո-  
ցածաւալ զնոսա արժարժանիցէ, զի գիտութիւնք յետնոց գեր  
՚ի վերոյ քան զմերս դատնիցին որչափ մերքս քան զնախնեացն:  
Ճառս գեղեցիկս մարթէր յօրինել զօգտիցն՝ զոր տպագրու-  
թիւն մինչև ցայժմ՝ մատոյց մտաց, և զոր յայտմհետէ մա-  
տուցէ:

Ձ. Ձառեւծառծոյ և զտ՝ յտ՝ զտ՝ զտ՝: (էջ 173):

Կստանօր յայնն γπίθος հրէֆոս ասէ, որ է ձուր՝ որով նը-  
շանակի ազգ ինչ առեղծուածոց, որ արկանէին ընդ խաղ  
յլնթրիս, և էր ուրեք զի տաղնապէին բազմականք յառեղ-  
ծանել զնոսա: և որ ոչն կարէր առեղծուէլ, տուժէր:

Այլևայլ ազգ առեղծուածոց էին. կէսք ոչ ինչ ընդհաս

1 Սուիգ. ՚ի բառն Γριφ. Պարսպ. Արիստոփ. յիժան,  
տող 20:

յառակաւոր բանից . որպէս այն , « Մեծ 'ի ծննդեան , մեծ 'ի ծերութեան , և յառոյդ հասակին փոքրիկ » 1 . ոչ էն « փռաչ » : Որպէս միւսն այն . « Քորք երկու . 'ի միմեանց անդադար ծննեալք » . ոչ էն « Ինքէր » , զի 'ի հելէն բարբառ իղա կանք են ըստ սեռս բառից :

Այլք յառեղծուածոց 'ի հոմանունաց կազմէին բառից . զոր օրինակ . « Ո՛յք իցեն , որ 'ի ծովու և 'ի ցամաքի և յերկինս կան » 2 . շնն և օյ և աբէ , զի յաստեղատունս են և անուանք նոցա :

Այլք 'ի խազս տառից և վանկից և բառից ակնարկէին . զոր օրինակ զտող ինչ ծանօթ խնդրել սկզբնատառիւն , կամ տառիւն որ չգոյր 'ի նմա , կամ որով վանկիւ սկսանէրն կամ յանդեր 3 , և կամ որոյ ոտք 'ի հաւասարածիւ տառից կաղմէին , և կամ փոխանակեալք ընդ միմեանս՝ ոչ զմաստսն և ոչ զներդաշնակու թիւն տողին եղծանէին 4 :

Քերթողք , և մանաւանդ կատակերգութեամբ , զառեղծուածս զայտօսիկ յաճախ 'ի կիր արկանէին . և թուի թէ խմբադիր ևս սոցին գոյր , զոր և 'ի գրեանն Նւկզիդեայ մատենագարանին 'ի ներքս ածի :

Յաւելի անդ , զի եին 'ի նմին մատենագարանի և տաղք ամի յափոյ յօրինեալք . նշանակելով 'ի ներքոյ զվկայութիւն Աթենէոսի՝ որ ածէ տօղս վեց 'ի Սիմոնիդեայ ամի յափոյ յօրինեալս : Աստանօր 'ի գէպ է խնդրել թէ արդեօք սովորութիւն բանաստեղծելոյ յանպատրաստից չէր ինչ ծանօթ առ Յոյնս , որոց երևակայութեան ոչ ինչ նուազ էր եռանդն քան զխտալացւոցն , և բարբառ նոցա առաւել ևս քան զխտալականն ձեռնառու էր քերթողին : Երկու ինչ հաւաստիս յաւելում առ այս . յորոց մին երկերիւր ամօք կանխեալքան զուղևորութիւն Անաբարսեայ , և միւսն երեքարիւր ամօք յետոյ :

Ա . 'Կախկին փորձք ողբերգութեան յանպատրաստից աբարան . և որպէս Արիստոսեղ ակնարկէ , էին 'ի չափ տաղի 5 :

Բ . Ստրաբոնս պատմէ զքերթողէ ումեմնէ Ճամանակակցէ իւրմէ , որ էր 'ի Տարսոնէ կիլիկեցւոց , զի զոր ինչ իրաց ոք և առաջարկէր նմա նուազել , բանաստեղծէր 'ի չափ տաղի այնու ճարտարութեամբ զի թուէր աղղեալ յԱպոլոնէ , և յա-

1	Թէողեկա . առ . Աթեն .	448 :
7	Իրք ժ . ԴՀ . 18 . էջ 451 :	4
2	Նոյն անդ , ԴՀ . 20 . էջ 455 :	
453 :		5
	Արիստոս . յղ . քերթ .	
3	Նոյն անդ , ԴՀ . 16 . էջ 44 . 4 . հո . 2 . էջ 654 :	



ջողագոյն ևս էր յողբերգել<sup>1</sup> : Եւ վկայէ Ստրաբոն զի բազմաց ՚ի տարսնացւոց անտի էր անջողութիւնս այս մտաց<sup>2</sup> . և աստի արդեօք սովորութիւն էզև կոչել Տարսնեանս Ղբերթողս , որք ասի յսփոյ յանպատրաստից արտասանելին հատուածս ողբերգութեան ըստ հաճոյից խնդրողացն<sup>3</sup> :

<sup>1</sup> Ստրաբ. գիրք ԺԴ . էջ 676 :

<sup>2</sup> Նոյն անդ , էջ 674 :

<sup>3</sup> Դիոգ . լայերտ . գիրք Դ . յօդ . 58 :





1870

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1870

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

# ՅԸՆԿ

## Ա Ղ Ի Ի Ս Ա Կ Ա Յ Ս

- Ա. Ժամանակագրութիւն երևելի անցից պատմութեան Յունաց 'ի հիմնարկութենէ արդիական պետութեան, մինչև ցվախճան թագաւորութեան Աղէքսանդրի:
- Բ. Ամիսք ատօիկեցոց:
- Գ. Ատեանք և աւագանին աթենացոց:
- Դ. Անուանք որոց 'ի գպրութիւնս կամ՝ յարուեստս կացին երևելք 'ի գաղթելոյ փիւնիկեցոց յԵլլադա, մինչև 'ի կառուցումն ուսումնարանին յԱղէքսանդրիա:
- Ե. Նոցին անուանք այբենաւոր կարգաւ:

Յուցակ բովանդակելոց առ հասարակ իրաց 'ի գիրս յայս:  
Յուցակ աշխարհագրական հին և նոր անուանց վայրացն որ 'ի գիրս յայս յիշատակին:

## ՋԵԿՈՒՑՈՒՄԿ

ՋԱՂԻՒՍԱԿԱՅՍ ՈՐ ԱՌԱՋԻ ԿԱՆ :

ՋԱՂԻՒՍԱԿՔՍ զայսոսիկ պիտանի վարկայ ոչ միայն ընթեր-  
ցողաց զգիրս ուղևորութեան Անաքարսեայ, այլ և որոց ոչն  
կամիցին ընթեռնուլ զայն :

Առաջինն ունի տալ զգլխաւոր թուականութիւնս պատ-  
մութեանն Յունաց, մինչև ցվախճան թագաւորութեան Ա  
ղեքսանդրի : Բազումքննութեամբ ժամանակագրեցի զսոս-  
և թէպէտ էին ինձ առաջնորդք բազմաձմուտք, ոչ վայրապար  
զճետ գնացի նոցա, այլ բազդատեալ զկարծիս նոցա ընդ այ-  
լոց ժամանակագրացն :

Կարգաբանութեան քննութիւնն	125
Քրիստոսի մասին	126
Յունացի քրիստոսի մասին	127
Քրիստոսի մասին ընդհանրապէս	128
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	129
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	130
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	131
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	132
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	133
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	134
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	135
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	136
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	137
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	138
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	139
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	140
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	141
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	142
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	143
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	144
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	145
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	146
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	147
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	148
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	149
Քրիստոսի մասին ընդհանրապէս ընդհանրապէս	150



## ԱՂԻԻՍԱԿ Ա.

ժամանակագրութիւն էրեւելի անդից պատմութեան Եւանայ  
'ի հինարիւնիկէն արգիտիւն պէտմութեան Բնիկ ցլտիճան Բագաւո-  
րութեան Աղէքսանդրի :

ԿԱՐՆԻՈՐ համարիմ ազգ առնել, զի 'ի ժամանակագրութի  
իրաց որ նախ քան զսկիզբն ողիմպիագից՝ գրեթէ ոչ ուրեք խո-  
տորեցայ 'ի թուականութեանցն Ֆրեքեայ հանդուցելոյն ,  
որպէս նա 'ի գիրսն ջատագովութեան, ժամանակագրութե կ  
'ի բազում ճառս իւր յեռեալս 'ի գիրս յիշատակաց կաճա-  
ռոյն բանասիրաց բերէ զհաշիւս : Իսկ 'ի սկզբանէ ողիմպիա-  
գից և այսր առաջնորդ ինձ գրեթէ ամենայն ուրեք կալայ  
զատտիկեան տարեգիրսն Քորսինեայ :

Այլ 'ի վերջին տպագրութեան գրոցս և ևս ճշգրտեցան  
թուականութիւնք բազումք, և յաւելան այլք ըստ վաղնջուց  
յիշատակարանաց և ըստ գրոց ներհուն ժամանակագրաց, և  
մանաւանդ որ ինչ բազմահմուտն Լարչէ զժամանակագրու-  
թեանն Երոզոտեայ գրեաց :

	ԱՄՔ Ն. Ք.
Գաղթականն ածեալ յԻնաբոսէ յԱրգոս . . . . .	1970 .
Փորոնէ որդի նորա . . . . .	1945 .
Ովգիդեայ ջրհեղեղն 'ի Բիտվաիա . . . . .	1796 .
Գաղթականն ածեալ 'ի Կեկրոպայ յԱթէնս . . . . .	1657 .
Գաղթականն ածեալ 'ի Կազմեայ 'ի Թերէ . . . . .	1594 .
Գաղթականն ածեալ 'ի Գանաւոսէ յԱրգոս . . . . .	1586 .
Դեկալիոնեան ջրհեղեղն շուրջ զՊարնասեաւ, կամ 'ի հարաւային կողմն Թեսաղիոյ . . . . .	1580 .
Սկիզբն արուեստից յԵլլագաս . . . . .	1547 .
Թագաւորել Պերսեայ յԱրգոս . . . . .	1458 .
Հիմնարկութիւնն քաղաքին արովացուց . . . . .	1425 .
Ծնունդ Հերակլեայ . . . . .	1384 .

Հասանել Պեղոսայ յԵլլադա . . . . .	1362 .
Արշաւանք Երզնայ նաւորդացն, զոր աստ ՚ի զէպէ ժամանակագրել, յամին իբր . . . . .	1360 .
Ծնունդ Թեւեայ . . . . .	1346 .
Առաջին պատերազմն թերացւոց, որ ընդ Ե- տէսիզ և ընդ Պողինիկէ որդի Եզիպեայ . . . . .	1317 .
Թագաւորել Արեւոսի որդւոյ Պեղոսայ յԱրգոս . . . . .	1310 .
Երկրորդ պատերազմն թերայ, որ և Եպիգոնայ պատերազմն . . . . .	1307 .
Առումն քաղաքին տրովացւոց եօթնևտասն ա- ւուրքք յառաջ քան զամառնային յեղլէզակն . . . . .	1270 .
Հերակղեանց ատրել ՚ի Պեղոսպոնես . . . . .	1190 .
Մեռանել Կողրոսի, որ վերջին թագաւոր եկաց յԱթէնս . և սահմանել անդ ի խսանաց մինչև ցկեանս . . . . .	1132 .
Անցանել յոնիացւոց ՚ի փոքրն Ասիա, և կանդ- նել անդ զԵփեսոս, զՄիլետոս, զԿողոփոն և զայլ քաղաքս . . . . .	1130 .
Զայսու ժամանակաւ եկաց Հոմերոս, յամին իբր . . . . .	900 .
Իփիտեայ զողիմպիական խաղսն սահմանել . . . . .	884 .
Լիկուրգեայ օրէնսգրու թիւնն . . . . .	845 .
Մահ նորա . . . . .	841 .
Նիկանդրոս որդի Քարիլաւեայ թագաւորէ ըս- պարտացւոց . . . . .	824 .

— 000 —

0701 . . . . .

0702 . . . . .

0703 . . . . .

0704 . . . . .

0705 . . . . .

0706 . . . . .

0707 . . . . .

0708 . . . . .

0709 . . . . .

0710 . . . . .

0711 . . . . .

0712 . . . . .

0713 . . . . .

0714 . . . . .

0715 . . . . .



ՈՒԹԵՐՈՐԴ ԳԱՐ Ն Ք

Յ-էն 800 Դէն 700



ՈՂԻՄ ԳԻՆԴԻՔ	ԱՄԲ.	ԱՄԲ Ն.Ք.
Ա.	Ողիմպիական խաղքն, յորում Կո- ռինոս յաղթեաց յասպարիզին, ուստի սկիզբն կալաւ գլխաւոր Թուականութի ժամանակագրուէ .	776 .
Բ.	Գ. Թէոպոմպ Թոռն Քարիլաւայ, քեռորդի լիկուրդեայ Թագաւո- րէ ՚ի Սպարտա . . . . .	770 .
Ե.	Գ. Քաղկիսացւոց դաղթականն յԵւ- բիոյ ՚ի Նաքսոս քաղաք ՚ի Սիկիլիա .	758 .
	Դ. Հիմնարկութիւն Կրոտոնայ քաղաքի .	
	Կուսա . . . . .	757 .
Զ.	Գ. Հիմնարկութի Սիրարեայ քաղաքի .	
Է.	Ա. Կեկրոպայ առաջին իշխան տասնա- մեայ կալ յԱթէնս . . . . .	754 .
Թ.	Բ. Բնակչաց Նաքսոս քաղաքի որ ՚ի Սիկիլիա, արձակել Հատուած ՚ի Կատանա . . . . .	752 .
ԺԴ.	Բ. Սկիզբն առաջնոյ պատերազմին մե- սենիացոց . . . . .	743 .
ԺԵ.	Ա. Վախճան առաջնոյ պատերազմին մեսենիացոց . . . . .	724 .
ԺԶ.	Ա. Սահման գօտեկուոցն և Հնդամար- տին յողիմպիական խաղսն . . .	708 .

ԺԹ. Բ. Փաղանտեայ սպարտացւոց ածել  
գաղթականն 'ի Տարենտոն . . . . . 703.



ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՐ Ն.Ք.

Յ-Քէ 700 Դէւ Դ-Ք 600 :



ԻԴ. Ա. Կրէոնի առաջին իշխան տարևոր  
կալ յԱթէնս . . . . . 684.

Գ. Սկիզբն երկրորդի պատերազմին մե-  
սենիացւոց . . . . . 682.  
Չայսու ժամանակաւ Ազկէոս քեր-  
թող պայծառանայր :

ԻԵ. Ա. Կառարչաւացն քառաձիոց յողիմ-  
պիական խաղսն սահմանել յամին  
կրք . . . . . 680.

ԻԶ. Ա. Կարնէական խաղուցն 'ի Սպարտա  
հաստատութիւն . . . . . 676.

ԻԸ. Ա. Վախճան երկրորդի պատերազմին  
մեսենիացւոց առամբ ամբողջին Ի-  
րայ . . . . . 668.  
Հատուած 'ի մեսենիացւոց 'ի պի-  
ղացւոց և 'ի մոթոնացւոց գաղ-  
թեալ 'ի Չանկէէ քաղաք 'ի Սիկի-  
լիա . ուստի սպաքաղաքն այն կո-  
չեցաւ Մէսսանս . . . . . 667.

ԻԹ. Բ. Կիպսեղեայ գահակալել 'ի Կորըն-  
թոս , որ իշխեաց զամս երեսուն .  
Մեգարացւոց հիմնարկել զԲիւ-  
զանդիոն :

ԼԳ. Ա. Ամենախումբ մարտին յողիմպիա-  
կան խաղսն յաւելուած . . . . . 648.

ԼԴ. Ա. Տերսանդր լեսբացի քերթող և ե-  
րաժիշտ ճանաչէր . . . . . 644.

ԼԵ. Ա. Ծնունդ Թաղեսի , որ յոնիական  
աղանդոյն եկաց առաջնորդ . . . . . 640.

Գ. Ծնունդ Սողոնի . . . . . 638.

ԼԿ.	Ա.	Մանկուոյ ընթացք և դասեկութիւ յողմնակախան խաղան սահմանին .	632 .
ԼԸ.	Ա.	Մահ Վիգիսեղեայ բռնաւորին կո- րընթացւոց , և որդւոյ նորա Պե- րիանդրի յաջորդել նմա . . . . .	628 .
ԼԹ.	Ա.	Դրակոնի իշխան և օրէնագիր կալ յԱթէնս . . . . .	624 .
ԽԱ.	Ա.	Մանկուոյ բռնամարտին յողմ- ակախան խաղան յաւելուած . . . . .	616 .
ԽԲ.	Ա.	Սպանութիւն համախոհիցն Վիզոնի յԱթէնս . . . . .	612 .
	Բ.	Աղկեսու և Սափիփոլ քերթողք պայ- ծառանան . . . . .	611 .
	Գ.	Ծնունդ Անաքսիմանարեայ իմաս- տասիրի . . . . .	610 .
ԽԳ.	Ա.	Ծնունդ Պիւթագորայ . . . . . Որ մեռաւ ամաց իննսունեութից :	608 .



ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՐ Ն Բ.

Յ-Է՛ 600 Դ՛-Է՛ 7-Է՛ 500 :



ԽԵ.	Բ.	Հիմնարկութի Մասսիլեայ քաղաքի .	599 .
	Գ.	Նուաղումն արեգական գուշակեալ 'ի Թաղեսէ , որ դիպաւ 'ի պատե- րաղմին Վիաքսարայ արքային Մա- րաց Ը Աղիատեայ արքային Վիւ- գացւոց 'ի 21 յուլիսի 'ի 5 յի ժամ առաւօտին . . . . .	597 .
		Եպիմենիդէս կրեաացի սրբէ զԱ- թէնս շաղախեալ արեամբ համա- խոհիցն Վիզոնի :	
ԽԶ.	Ա.	Յամփիկափոնեան աշխարհաժողովն հաստատութի խորհրդոյն Սողոմի, դիմել 'ի վերայ Վիւռացւոց՝ որ սե- ղանակապուտք մեհէնին Դեղիեայ ամբաստանէին . . . . .	596 .

	Գ.	Սողոմնի իշխան և օրէնագիր կալ . . .	594 .
ԽԷ.	Ա.	Խմատոնոյն Անաքարսեայ գնալ յԱ թէնս . . . . .	592 .
	Գ.	Պիտտակեայ թագաւորել 'ի Միախի լինէ . . . . .	590 .
		Որ զամս տասն կալաւ զթագաւոր բուծիւն :	
		Առումն և կործանումն Վիւռայ :	
ԽԸ.	Գ.	Երաժշտաց պայքար 'ի սլուծեան խաղոն սահմանեալ, որ կատարէին գարնայնի 'ի Դեղփիս . . . . .	585 .
ԽԹ.	Գ.	Սկիզբն թուականութե Պիւծիա գից 'ի հաչիւ ամաց, յորս կատա րէին տոնք խաղուց 'ի Դեղփիս . . . . .	581 .
Ծ.	Ա.	Առաջին փորձ կատակերգութեան 'ի Սովսարիոնէ . . . . .	580 .
		Պիտտակոսի հրաժարել 'ի բռնակա լութեանն Միախիլինեայ :	
		Աժօք ինչ յետոյ թեոսպիս զնախն ծայողքերգութիւնն ամէ 'ի հանդէս :	
ԾԱ.	Բ.	Անաքսիմանգրոս 'ի յոնիական ա ղանդոյն խմատասեր ճանաչէր . . . . .	575 .
	Գ.	Ետովայ պայծառանալ . . . . .	574 .
	Դ.	Սողոմնի գնալ յԵգիպտոս և 'ի Սար գիս . . . . .	573 .
ԾԵ.	Բ.	Մեռանել Պերիանգրի թագաւոր ելալ զամս եօթանասուն, և Վորըն թացուց դառնալ յազատութիւն . . . . .	563 .
ԾԵ.	Ա.	Վիւրոսի թագաւորել սկիզբն ինք նակալութեան Պարսից . . . . .	560 .
		Պիտտարատեայ բռնակալել յԱ թէնս :	
	Բ.	Հալածել նորա 'ի քաղաքէն . . . . .	559 .
		Մեռանել Սողոմնի, կեցեալ զամս ութսուն :	
	Գ.	Սիմոնիդեայ կէացուոյ ծնունդ . . . . .	558 .
	Դ.	Վերափն բռնակալել Պիտտարա տեայ . . . . .	557 .
ԾԷ.	Գ.	Թէոգնիս քերթող ճանաչէր . . . . .	550 .
ԾԸ.	Ա.	Այրումն դեղփիական մեհէնին, և արկմէննեանց վերափն շինել զայն . . . . .	548 .

ԾԹ.	Ա.	Առ թխմբրեաւ ճակատամարտն , և Կրեւեայ արքային լիւդացւոց սար- տուածն , և առնուլ Կիւրոսի զՍար- գիս . . . . .	544 .
ԿԱ.	Ա.	Մահ թաղեալի խնատասիրի : Թեապեայ զԱղկեստեայն ողբեր- գուածիւն ածել 'ի հանդէս . և սահ- ման մրցանակի ողբերգուաց . . . . .	536 .
ԿԲ.	Ա.	Անակրեոնի պայծառանալ . . . . .	532 .
	Դ.	Մահ Կիւրոսի , և Կամբիսեայ որ- դւոյ նորա պայազատել զնա . . . . .	529 .
ԿԳ.	Բ.	Մեռանել Պիսիստրատեայ , որ բռ- նաւորերն յԱթէնս , և որդւոց նր Իպսիլասայ և Իպսարքեայ յաջոր- դել նմա . . . . .	527 .
	Դ.	Էպիդեայ քերթողի ծնունդ . . . . .	525 .
ԿԴ.	Ա.	Քերիզոս ողբերգու ճանաչէր . . . . .	524 .
	Գ.	Մեռանել Պողիկրատայ բռնաւորին սամեցւոց , թաղաւորեալ զամս- մեասան . . . . .	522 .
	Դ.	Դարեհի որդւոյ Աշտասպեայ գա- հակալել 'ի Պարսս . . . . .	521 .
ԿԵ.	Բ.	Ծնունդ Պինդարեայ . . . . .	519 .
ԿԶ.	Դ.	Արմոզեայ և Արիստոգիտոնի ապա- նանել զԻպսարքոս , որ բռնաւո- րերն յԱթէնս . . . . .	513 .
ԿԷ.	Ա.	Դարեհի առնուլ գիւրբիլոն , և ար- կանել զնա ք իշխանութի Պարսից . . . . .	512 .
	Դ.	Հալաձեւ աթենացւոց զԻպսիլաս : Կլիսթենեայ իշխան կացեալ յԱ- թէնս , որոչել տասն ցեղս փոխանակ քառիցն՝ որ էին յառաջ . . . . .	509 .
	Ա.	Ազմուկ 'ի Կրոտոն ընդդէմ պիւթա- գորականաց , և հալածել նոցա 'ի սահմանաց մեծին Ելլազայ : . . . . .	
ԿԸ.	Ա.	Դիմումն Դարեհի 'ի Սկիւթս . . . . .	508 .
ԿԹ.	Ա.	Ապստամբել Յոնիոյ 'ի Դարեհէ , և հրդեհ 'ի Սարգիս . . . . .	504 .

ՀԵՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ Կ. Ք.

Յ-Ք 500 Գ-Ք 400 :

Հ.	Ա.	Ի կառարչաւս ողիմպիական խաղոց յաւելուն կառք լծեալք 'ի զոյգ ջորոց . . . . .	500 .
		Անադատգորայ իմաստասիրի ծընունդ :	
		Եսքիղեայ 'ի հանգէս մարտի ողբերգութեան ընդ Պրատինեայ և ընդ Քերիղեայ պայքարել 'ի հասակի քսաննհինգ ամաց :	
	Գ.	Ծնունդ Սոփոկղի . . . . .	498 .
	Դ.	Տիրել սամեցւոց 'ի Սիկիլիա և 'ի Զանկէ . . . . .	497 .
ՀԱ.	Ա.	Անուշ և կործանել Պարսից զՄիւլեոս . և Փրինիքեայ աշակերտին Թեսպեայ ողբերգութիւնն զայնմանէ, և մուծանել նորա զգէմս կնոջ 'ի տեսարան . . . . .	496 .
		Ծնունդ Դեմոկրիտեայ, որ եկեաց զամս իննսուն :	
	Բ.	Ելլանիկեայ վիպագրի ծնունդ . . . . .	495 .
ՀԲ.	Բ.	Գեղոնի առնուշ զԳեղա . . . . .	491 .
	Գ.	Ճակատամարտն 'ի Մարաթոն, յորում յաղթեաց Միլաթիա 'ի վեցերորդի աւուր ամսեան բոյեգրոմոնի, որ հանդիպի յերեքասան ներորդ օր սեպտեմբերի . . . . .	490 .
	Դ.	Միլաթադ, վասն ձախողութեան 'ի պաշարումն Պարոսի, դատափետեայ մեռանի 'ի բանախ . . . . .	489 .
ՀԳ.	Ա.	Քիոնիղեայ 'ի հանգէս ածել զկատակերգութիւն յԱթէնս . . . . .	488 .
	Բ.	Մեռանել Գարեհի արքային Պարսից, և Քսերքսեայ որդւոյ նորա Ճառանգել զաթոռ նորա . . . . .	487 .
	Դ.	Ծնունդ Եւրիպիղեայ . . . . .	485 .

		Գեղոնի նուաձեղ զՍերակուսա :	
		Ծնունդ Երոզոսեայ :	
ՀԴ	Դ	Քսերքսեայ ձմերեղ 'ի Սարգիս . . .	481 .
		Անցանեւ նորա գարնայնոյն ընդ Եւ	
		լեսպոնա , և կալ անդ ամսօրեայ մի	
		ժամանակ :	
ՀԵ	Ա	Պատերազմն 'ի Թերմոպիլէ 'ի 6 Ե-	
		կատմբէոնի , (որ է 7 օգոստոսի) . և	
		Քսերքսեայ հասանեւ յԱթէնս 'ի	
		վերջ կոյս ամսոյն . . . . .	480 .
		Պատերազմն 'ի Սաղամիս 'ի 20 բոյե-	
		զրոմիոնի (որ է 13 հոկտեմբերի) .	
		և 'ի նմին աւուր կարբեղոնացւոց	
		պարտուին 'ի Գեղոնէ առ Հիմերա :	
		Անտիփոնի ճարտարախօսին ծը-	
		նունդ :	
ՀԵ	Բ	Ի Պղատիէս և 'ի Միկաղէս ճակա-	
		տամարոցն 'ի 4 բոյեզրոմիոնի , (որ	
		է 22 սեպտեմբերի) . . . . .	479 .
		Առումն Սեստեայ :	
		Ասա Երոզոս հանգուցանէ զպատ-	
		մութիւնն :	
ՀԶ	Գ	Մահ Գեղոնի , և Հերոնի եղբոր	
		նորա յաջորդել նմա . և աթէնա-	
		ցւոց քաղաքին պարսպացն վերստին	
		կանգնումն . . . . .	474 .
ՀԷ	Ա	Վեստվայ լերին հուր ժայթքել . . .	472 .
	Բ	Թեմիստոկղեայ խեցեկոյս վճառվ	
		աբար . . . . .	471 .
	Գ	Յաղթութիւն Վիմնի լքէմ Պար-	
		սից մերձ յԵւրիսեդոն . . . . .	470 .
		Ծնունդ Թուկիդիդեայ :	
	Դ	Եպիդեայ ընդ Սոփոկղե վիճել 'ի	
		մարա ողբերգութեան , և երկրոր-	
		դին առնուլ զմրցանակն . . . . .	469 .
		Ծնունդ Սոկրատայ 'ի վեցերորդ ա-	
		ւուր ժարդեղիոնի , (որ է 5 յունիսի) :	
		Վիմնի փոխել զոսկերտաին Թե-	
		սեայ յԱթէնս :	
ՀԸ	Ա	Մեռանի Սիմոնիդէս ամաց հարիւ-	
		րոց . . . . .	468 .

	Բ.	Մահ Արիստիդէայ . . . . .	467 .
	Դ.	Մեռանել Քսերքսէայ, և Երկայնա ձեռինն Արտաշէսի յաջորդեալնմա, Թագաւորել զամս քառասուն . . .	465 .
ՀԹ.	Ա.	Սասանու թիւն երկրի 'ի Սպարաա . Երրորդ պատերազմն մեսենիացւոց, որ տևեաց զամս տասն . . . . .	464 . 464 .
	Դ.	Հերակղիդէս եփեսացի պայծառա- նայր : Վիմոնի ածել զաթենացիս յօգնուի սպարաացւոց, և սոցա կասկածա- նօք նենդու թեան յետս զնոսա ար- ձակել, ուստի դժտու թի չ երկուս ազգան դրդեալ Վիմոն աքսորեցաւ .	461 .
2.	Ա.	Ծնունդ Իպոկրատայ . . . . . Եփիաղտէայ ամփոփել զիշխանու- թիւն Արիսպագին :	460 .
	Բ.	Լիւսիայ ճարտարախօսի Ծնունդ .	459 .
2Ա.	Ա.	Մահ Եսթիդէայ . . . . . Աթենացիք առաջնորդութիւն Տոլ- մի թեայ և սպա Պերիկղէայ, աւար առնուն զժողովէրս Լակոնիոյ :	456 .
	Բ.	Վրատինոս և Պղատոն քերթողք նախ- նոյն կատակերգութե ճանաչէին .	455 .
2Բ.	Ա.	Յոնէայ քերթողի զողբերգութիւն ածել 'ի Հանդէս . . . . .	452 .
	Գ.	Մահ Պինդարէայ : Վիմոնի դառնալ յաքսորանացն և չ պէղտարնեսացիս և չ աթենացիս առ- նել դուլ զինուց զամս Հինգ, և յետ սակաւ միոյ դիմել զորօք 'ի Վիպրոս .	450 .
	Դ.	Մեռանել Թեմիստոկղէայ ամաց վաթսուն և Հնգից :	
	Դ.	Վիմոնի ստիպել զարքայն Պարսից յուխա խաղաղութեան չ Յոյնս, 'ի կորանս Թագաւորին . . . . .	449 .
2Գ.	Գ.	Մահ Վիմոնի : Եւրիացւոց և մեգարացւոց 'ի բաց կալ 'ի միաբանութե աթենացւոց, և սոցա զորս վարու թեամբն Պերիկ- ղէայ նուաճել զնոսա . . . . .	446 .



Վախճան հնդամեայ ենթադրութե  
մարտին չ սպարտացիս և չ ակե  
նացիս , և վերստին դուլ զինուց  
զամս երեսուն :

27.

Ա.

Մեզիսոս , Պրոտագորաս և Եմպե  
դոկղ խմաստասէրք ճանաչէին . .  
Երոզոտեայ յողիմպիական խազս  
ընթեռնուլ զգիրս պատմութեն :  
Պերիկղեայ գեր 'ի վերոյ ամենեցուն  
անցանել կալ . որ 'ի քսանեհինդ ա  
մաց և այսր 'ի յանձանձանս իրաց  
աչխարհին լեալ , և յայսմհեաէ  
զամս հնգետասան վարէ զաչխարհն  
գրեթէ ինքնիչնան :

444.

Գ.

Եւրիպիղեայ նախկին զմրցանակողք  
երգուէն ունել 'ի քառասնամենի .

442.

28.

Գ.

Աթենացւոց գաղթականս Սմիթի  
սոլիս արձակել . . . . .  
Կառուցումն նախադրանցն 'ի միջ  
նարերդ քաղաքին աթենացւոց .  
Նաւակատիք պատկերին աթենա  
սայ , զոր արար Փիղիաս . և մահ  
ճարտարին :

438.

438.

Անախիոն ճարտարախօս ճանաչէր :  
Կտակերգութեան վերստին դարձ,  
յեա զերեամ խափանածոյն :

29.

Ա.

Սկիզբն պատերազմին կորնթացւոց  
ընդ կորկիւրացիս . . . . .  
Ծնունդ Իսոկրատայ :

436.

Ի նմին ժամանակի Դեմոկրիտոս ,  
Եմպեդոկղ , Իպսոկրատ , Գորգիաս ,  
Իպսիաս , Պրոտիկոս , Չենոն Ե  
ղէացի , Պարմենիդէս և Սոկրատ ի  
մաստասէրք ճանաչէին :

30.

Ա.

Ի 27 աւուր յունիսի Մետոն զժա  
մադիտակ կէա ամառնամտին դի  
տեալ , հնարեցաւ զնոր շրջանն՝  
սկզբնակից ծննդեան լուսնին զհեա  
յեղյեղակին յառաջնում աւուր  
ամսեան Եկատոմբէոնի , որ հան  
դիպէր յայն ամ 'ի 16 յուլիսի .

432.

Ամն քաղաքական, որ սկսանէր յառաջ ընդ ծննդեան լուսնի զհետ ձմերայնոյ յեղլեղակին, յետ այնորիկ սկսաւ ընդ լուսնի զհետ ամառայնոյ յեղլեղակին: Եւ յայնժամ հինեքին իշխանք ակեհնացոց Արքոնք առին զիշխանութիւնն . . .

432 .

Բ. Սկիզբն պեղոպոնեսական մարտին ՚ի դարնայնի ամին . . . . .

431 .

Գ. Սրածութեան ճարակել յԱթէնս. Եւ պողեայ սկիզբն կատակերգութեանցն ՚ի հանդէս ամելոյ :

430 .

Դ. Ծնունդ Պղատոնի յեօթներորդում աւուր ամսեան Թարգելիոնի, (որ է 6 յունիսի) . . . . .

429 .

Մահ Պերիկղեայ յամսեան Բոյեգրոմիոնի, որ կըռի մերումս հոկտեմբերի :

2Ը.

Ա. Մահ Անաքսագորայ . . . . .

428 .

Բ. Աթենացոց նուաճել զՄիտիլինէ, և շարաբաժին առնել զԼեսբոս յիւրեանս . . . . .

427 .

Գորգեայ ճարտարախօսի յորգորել զաթենացիս հասանել յօգնականութիւն լեոնտացոց ՚ի Սիկիլիա :

Գ. Եանայ լերինն խանձողս հանդերձ հրով վերաբերել . . . . .

426 .

Դ. Աթենացոց սրբել զԴեզոս կղզի : Նուաճել նց զՊիզոս ՚ի Պեղոպոնես. Երկայնաձեռինն Արտաշեսի մահ, և Քսերքսեայ երկրորդի ունել զաթոռ նորա :

425 .

2Թ.

Ա. Ճակատամարտն, զոր ետուն ՚ի Դեզոնն աթենացիք ընդ բիովտացիս, և բիովտացոց կանգնել զյաղթութիւն. և անդ Սոկրատայ զմանուկն Քսենոփոնն ապրեցուցանել Մահ Քսերքսեայ երկրորդի Պարսից արքայի . և Սոգդիանոսի կալեալ զաթոռ նորա, Թադաւորել զամիսս եօթն :

424 .

Բ.	Անկոչն Արիստոփանէայ նախկին ձեացումթիւն 'ի տեսարանի . . .	423.
	Այրեցումն մեհնինն Հերայ յԱր- գոս յամին յիսներորդի վեցերոր- դի քրմութեանն Բրիսեայ : Դարեհի երկրորդի հարձորդայ յա- ջորդել զՍոդդիանոս :	
Գ.	Ճակատամարտն յԱնիխուրիս, յո- րում անկան Բրասիդաս զորավար սպարտացւոց, և Վղէսն ամենա- ցւոց . . . . .	422.
	Յիսնամեայ դաշն խաղաղութեան Ը ամենացիս և ընդ սպարտացիս :	
Գ.	Ամենացւոց հնարել պատճառանօք լուծանել զգաշն խաղաղութեանն, և միարանել Ը արգիացիս, ընդ Է- ղէացիս և ընդ մանտինէացիս . . .	421.
Ղ.	Ա. Ամենացւոց բնակեցուցանել ան- դրէն զԴեղոս . . . . .	420.
	Գ. Կարբեգոնացւոց առնուլ զՀիմերա- 418.	
ՂԱ.	Ա. Ալկիբիադէայ յողիմպիական խաղ- արն յաղթանակ . . . . .	416.
	Ամենացւոց նուաճել զՄեղոս :	
	Բ. Դիմել նոցա պատերազմաւ 'ի Սի- կիլիա . . . . .	415.
	Գ. Ուխտին յիսնամեայ խաղաղութեն, որ էր ընդ սպարտացիսն և ընդ ա- մենացիս, լուծումն 'ի սպառ յեա վեց ամաց և տասն ամաց . . .	414.
	Դ. Առնուլ սպարտացւոց զԴեկեղիա, և ամրացուցանել զայն . . . . .	413.
	Ամենացւոց բանակին սպառսպուռ բեկումն 'ի Սիկիլիա . և Նիկիասայ և Դեմոսթենէայ սպանութիւն յամ- սեան Մետագիանիոնի, որ սկսա- նէր 'ի 15 օգոստոսսի : Խպերրողէայ պսօր, և խեցեկոյտ վճռոյն վախճան :	
ՂԲ.	Ա. Ալկիբիադէայ 'ի բաց կալ 'ի միա- բանութենէ սպարտացւոց . . .	412.
	Դիոկղէս օրէնսդիր սիրակուսացւոց :	

ՂԳ.

ՂԴ.

Բ. Չորեքարիւր այր 'ի քաղաքայնոց  
կան 'ի տեսչութիւն իրաց աշխար-  
հին 'ի սկիզբն Ելափեթողոնի տա-  
սեան , որ սկսանէր 'ի 27 փեա-  
րուարի . . . . .

411 .

Գ. Յետ չորից ամսոց անկանին յիշա-  
նութէ չորեքարիւր օրեարն . . .  
Ատանօր սպառի Թուկիդիդեայ  
սպատմութին յամին քսաներորդի  
առաջնում պեղտպոնեասական մար-  
տին :

410 .

Բ. Մահ Եւրփիդեայ . . . . .

407 .

Գ. Դիոնիսեայ երիցոյն թագաւորէլ 'ի  
Սիրակուսա . . . . .  
Մահ Սոփոկղի 'ի հասակի իննսուն և  
երկուց ամաց :  
Ծովամարտն առ Արգինուսա ,  
ուր նաւատորմն աթենացւոց հա-  
րաւ ընդ սպարտականին :

406 .

Դ. Լիւսանդրի պայծառ յաղթութին  
ընդդէմ աթենացւոց առ Եդոս  
դեառլ . . . . .  
Մեռանէլ Դարեհի հարձորդւոյ .  
և Ուշեղն Արտաշեսի յաջորդէլ  
նմա :

405 .

Առումն քաղաքին աթենացւոց 'ի  
վէշտասաներորդի աւուր Մունի-  
քիոնի , (որ է 24 ապրիլի) :

Ա. Լիւսանդրի կացուցանէլ յԱթենս  
երեսուն այր 'ի տեսչութիւն , որ  
բռնաւորքն կոչեցան . . . . .  
Յետ ութից ամսոց բառնալ զոնա-  
ւորութեան նոցա :

404 .

Բ. Ընկերհաշտութեան վերտին հաս-  
տատութի յԱթենս : Եւկղիդեայ  
իշխան կալ , և մութհակաւն մոռա-  
ցութե դառնալ միարանէլ աթե-  
նացւոց առ հասարակ ը միմեանս .  
Յոնիական արխաբետացն ընդունե-  
լի լինէլ :

403 .

Արշաւանք կրտսերոյն Կիւրոսի :

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ Ե . Բ .

Յ-ժէ 400 Դէւ 7-ժ 300 :

ՂԵ .	Ա .	Մահ Սոկրատայ 'ի վերջկոյս ամսեանն թարգեղաննի, (որ է մայիս) .	400 .
	Գ .	Աստ կատարի կատեսեայ պատմութեն .	398 .
ՂԶ .	Ա .	Դիոնիսեայ սիրականացւոյ յաղթութիւն 'ի վերայ սպարտացւոց .	396 .
	Գ .	Կոնոնի յաղթութիւն 'ի վերայ ըստ սպարտացւոց առ կնիդեա . . . . .	394 .
	Դ .	Ագեսիդայսի արքային սպարտացւոց սպարտութիւն առ կորոնեա 'ի թերացւոց . . . . .	393 .
		Կոնոնի կանգնել վերստին զպարիսպս Պիրէոնի :	
ՂԵ .	Ա .	Զորավարութեն թրասիրուղեայ ամբել ամենացւոց 'ի կողմն մի Աեսրեայ . . . . .	392 .
	Բ .	Թուկիդիդեայ դարձ յարտորանացն և մահ . . . . .	391 .
ՂԸ .	Բ .	Անտաղիկոյ խաղաղութիւն ընդ Պարսս և ընդ Յոյնս . . . . .	387 .
		Կալլիսթենեայ պատմագրութեն սկիզբն :	
	Գ .	Ծնունդ Դեմոսթենեայ . . . . .	385 .
ՂԹ .	Ա .	Ծնունդ Արիստոտելի . . . . .	384 .
Ճ .	Ա .	Փիլոքսենեայ երկդոննիին տաղից քերթողի մահ . . . . .	380 .
	Գ .	Պեղոպիդեայ և այլոց փախստականաց թերացւոց չու յԱթենայ, և առնուլ զմիջնաբերդն թերայ, զոր սպարտացւոց այն ինչ նուանեալ էր . . . . .	378 .
	Դ .	Նաւամարան մերձ 'ի Նաքսոս, ուր Բարբիաս զորավար ամենացւոց սպարտեաց զսպարտացիս . . . . .	377 .
ՃԱ .	Ա .	Եւրուզոս ամենացի քերթող կատակերգութիւնց բազմաց ճանաչեր .	376 .

ՃԲ.

ՃԳ.

Բ. Տխնթեայ զօրավարին աթենացոց  
անուէլ զԿորկիրա, և զսպարտա-  
ցիս առ Լեւկադեաւ 'ի պարտու-  
թիւն մասնել . . . . .

375.

Գ. Ուշեղն Արտաշիսի խաղաղութիւն  
անուէլ Ելլագայ, սպարտացոց տի-  
րելով որպէս յառաջն ը ցամաք,  
և աթենացոց ընդ ծով. . . . .

374.

Մահ Եւագորայ արքային կիպրա-  
ցոց :

Դ. Թեբացոց կործանել զՊլաթիս  
քաղաք . . . . .  
Երկրաշարժն 'ի Պեղոպոնեսս, յոր-  
մէ Եղիքս և Բուրա քաղաքք կոր-  
ծանեցան :

373.

Երևումն վարսամին 'ի ձմերայնի,  
որ ընդ 373 և 372 ամս Ն. Ք. :

Ա. Ճակատամարտն 'ի Լեւկորա 'ի հին-  
դերորդիաւուր Եկատամբէոնի, (որ  
է 8 յուլիսի) . և Թեբացոց զօրա-  
վարութիւն Եպամոնոնդայ սպարտէլ  
զսպարտացիս, և զզօրավար նոցա  
զԿղէտմբրոս սպանանել . . . . .  
Հիմնարկուի Մեգաղուպոլսի յԱր-  
կադիա :

372.

Բ. Արշաւանք Եպամոնոնդայ 'ի Լա-  
կոնիա, և հիմնարկութիւն Մեսսե-  
նեայ քաղաքի . . . . .

371.

Գ. Յասոնի բռնաւորին փերեսացոց  
մահ . . . . .

370.

Աթենացիք զօրավարութեամբն Ի-  
փիկրատայ հասանեն 'ի Թիկունս  
սպարտացոց . . . . .

369.

Ափարեոս որդեգիր Իսոկրատայ ա-  
ծէ ողբերգութիւնս 'ի հանգէս :

Եւգոբսեայ կնիդացոց սլայծառա-  
նալ . . . . .  
Երէջն Դիոնեսիոս արքայ սիրա-  
կուսացոց վախճանի, և որդի նր  
համանուն յաջորդէ նմա 'ի գար-  
նայնի ամին :

368.

	Բ.	Արխատուելի գալ բնակել յԱթենս 'ի հասակի ութնասան ամաց . . .	367 .
ՃԴ.	Ա.	Պեղողիդայ դիմել 'ի վերայ Աղեքսանդրի բռնաւորին փերեսացւոց, և պարտել զնա . և անկանել 'ի պատերազմն . . . . .	364 .
	Բ.	Ճակատամարան 'ի Մանաինէա . և մահ էպամինոնդայ յերկատասաներորդի աւուր սկիբոփորինի ամսեան, (որ հանդիպի 'ի 4 յուլիսի) .	363 .
	Պ.	Մահ Ագեոփղայոսի արքային սպարտացւոց : Մեռանի Ուշեզն Արտաշէս, և թագաւորէ Ովքոս որդի նորա ընդ նորա . . . . .	362 .
		Աստ գազարէ Քսենոփոնի պատմութիւնն : Երրորդ անգամ ուղևորել Պղատոնի 'ի Սիկիլիա . . . . .	361 .
		Որ եկաց անգ զամիսս իբր վեշտասան : Փիլիպպեայ թագաւորել մակեդոնացւոց . . . . .	360 .
ՃԵ.	Ա.	Սկիզբն պատմագրութեանն Թէոպոմպայ : Դաշնաւորաց պատերազմն, յորում Քիոս և Հոսդոս և Կով կըզղէք և քաղաքն Բիւզանդիոն քակին 'ի միարանութենէ աթենացւոց . . . . .	358 .
	Դ.	Դիմել Դիոնի զորօք 'ի Սիկիլիա . և յամսեանն մետաղիտնիտնի, (որ ըսկըսանի 'ի 26 յուլիսի,) մտանել 'ի նաւ 'ի Չակինթոս . . . . .	357 .
		Խաւարումն լուսնի յիննևասաներորդ աւուր սեպտեմբերի 'ի 11 յի Ժամառաւօտին : Ծնունդ Աղեքսանդրի 'ի վեցերորդի աւուր Եկատոմբեոնի, որ հանդիպի 'ի 22 յուլիսի, յաւուր յորում այրեցաւ մեհեանն Արտեմիայ յԵփեսոս . . . . .	356 .

Փիլիսպպեայ հօր նր յողիմպիական  
խաղան 'ի նոյն աւուրս յաղթանակ:  
Վախճան պատմութեանն Եփորոս  
սի, զոր որդի նորա Դեմոփիլոս  
չարայարէ:

Բ. Սկիզբն երրորդի մեհնական պա-  
տերազմին . և առնուլ փովկիսա-  
ցւոց զԴեղփիս, և զմեհնանն Ա-  
պողոնի աւար հարկանել . . . . . 355.

Գ. ԶԻփիկրատայ և զՏիմոթեայ շարա-  
խօսութիւնքն, և անկանել նոցա  
'ի զօրավարութենէ . . . . . 354.

Դ. Մեռանել Մաւսոլեայ արքային կա-  
րիոյ, և Արտեմիսեայ կնոջ և քեռ-  
նորա յաջորդել նմա, և զերկեամ  
թագաւորել . . . . . 353.

ՃԷ. Ա. Դեմոսթենեայ նախկին ատենախօ-  
սութին ընդդէմ Փիլիսպպեայ մա-  
կեդոնացւոց . . . . . 352.

Դ. Ողինթացիք, պաշարեալք 'ի Փիլիս-  
պպեայ, կարգան զաթենացիս յօգ-  
նութիւն . . . . . 349.

ՃԸ. Ա. Մահ Պլատոնի . . . . . 348.  
Վախճան երրորդի մեհնական պա-  
տերազմին:

Բ. Ուխտ խաղաղութե և նիզակակցու-  
թեան Փիլիսպպեայ ըւթենացիս .  
հրեշտակացն Փիլիսպպեայ յամփիկ-  
տիոնեան աշխարհաժողովն ունել  
աեղի . . . . . 347.

Գ. Փիլիսպպեայ առնուլ զքաղաքս փով-  
կիսացւոց, և կործանել. և զքնա-  
կիւս նոցա ցրուել 'ի գիւղս . . . . . 346.

ՃԹ. Բ. Տիմոէոնի հալածել 'ի Սիրակու-  
սայ զկրասերն Դիոնեսիոս 'ի կո-  
րնթոս . . . . . 343.

Գ. Ծնունդ Եպիկուրեայ յեօթներորդ  
աւուր Գամելիոնի, (որ է 12 յու-  
նուարի) . . . . . 342.  
Ծնունդ Մենանդրի 'ի նոյն ժամա-  
նակս:



	Դ.	Երևումն վարսամին զհասարակա- ծիւ . . . . .	341 .
ՃԺ.	Գ.	Ճակատամարտն առ Քերոնեաւ յեօթներորդում աւուր Մեաւ- դիանիոնի, (որ է 2 օգոստոսի) . Մեռաննէլ Խտկրատայ կեցեալ զամս հարիւր և երկու :	338 .
ՃԺԱ.	Դ.	Մահ Տիմոէոնի 'ի Սիրակուսա .	337 .
	Ա.	Մահ Փիլիպպեայ արքային մահե- ղանացւոց . . . . . Աւարառութիւն քաղաքին թերա- ցւոց . . . . . Անցաննէլ Աղէքսանդրի յԱսիա : Պատերազմն Գրանիկեայ :	336 . 335 .
ՃԺԲ.	Դ.	Ճակատամարտն առ Իսեաւ . . .	333 .
	Ա.	Առումն քաղաքին տիւրացւոց . .	332 .
	Բ.	Հիմնարկութիւն Աղէքսանդրիոյ : Խաւարումն լուսնի բոլորովն 'ի քսաներորդ աւուր սեպտեմբերի 'ի Տամ 7 172 երեկոյին . . . . . Ճակատամարտն 'ի Գաւգամել կամ յԱրբեղա 'ի քսաներորդի վեցե- րորդի աւուր բոյեգրոմիոնի, (որ է 3 հոկտեմբերի) :	331 .
	Գ.	Մահ Դարեհի Կողոմանեայ, որ վերջին թագաւոր եկաց Պարսից . Սկիզբն Կալիպպեան շրջանին 'ի քսաներորդի հինգերորդի աւուր Պոսիդէոնի, (որ հանդիպի 'ի 20 դեկտեմբերի) :	330 .
ՃԺԳ.	Ա.	Փիլիմոնի զկատակերդութիւնս իւր ածել 'ի հանգէս . . . . .	328 .
	Բ.	Աղէքսանդրի պարտել զՊորոս . .	327 .
ՃԺԴ.	Ա.	Մեռաննէլ Աղէքսանդրի 'ի Բաբի- լոն, կեցեալ զամս երեսուն և երես, և զամիս ութ, 'ի քսաներորդի ին- ներորդի աւուր թարգեղիոնի, (որ հանդիպի 'ի սկիզբն յունիսի) . Ի նմին աւուր և Դիոգինեայ շնա- կանի մեռաննէլ 'ի Կորնթոս ամաց իննանից :	324 .

Ի Լամիա պատերազմն, ուր Անտի-  
պատրոս բեկաւ . . . . .


323.

Արիատտուէլ զամս երեքտասան վար  
ժապեաեալ 'ի Լիկեոն, խոյս ասյ  
'ի Քաղկիս, և մեռանի անդ:

Վախճան պատերազմն 'ի Լամիա,  
և յաղթականին հնազանդեցուցա-  
նէլ զաթենացիս . . . . .

322.

Գեմսթմենէս ասլաստանեալ 'ի Վա-  
լաւրիա կղզի, երթայ զԵւրովն 'ի  
վեշտասաներորդիա ուր պիանեփ-  
սիոնի, որ հանդիպի յերկոտասա-  
նէրորդ օր նոյեմբերի ըն Վալլիպ-  
պեան շրջանին, և ըստ կարգի ա-  
տիկեան ամսոց:



ԱՂԻՒՍԱԿ Բ.

Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՏՏԻԿԵԱՆ ԱՄՍՈՅ ԸՆԴ Հ ՌՈՄԷԱԿԱՆՍ.

Յառաջանալով ՁԱՂԻՒՍԱԿԻ 448 սեռերի.

ԱՄԻՍ- ՉԱՄԵՐԱՅՆՈՑ.	1 Գամեղիննի . . . . .	6 փեարուարի :
	1 Անթեասերիննի . . . . .	8 մարտի :
	1 Ելափեբողիննի . . . . .	6 ապրիլի :
ԱՄԻՍ- ԳԱՐՆԱՅՆՈՑ.	1 Մունիքիննի . . . . .	6 մայիսի :
	1 Թարգեղիննի . . . . .	4 յունիսի :
	1 Սկիռոփորիննի . . . . .	4 յուլիսի :
ԱՄԻՍ- ԱՄԵՐԱՅՆՈՑ.	1 Եկատմբէննի . . . . .	2 օգոստոսի :
	1 Մեասագիտիննի . . . . .	1 սեպտեմբերի :
	1 Բոյեղբոսիննի . . . . .	30 սեպտեմբերի :
ԱՄԻՍ- ԱՇՆԱՅՆՈՑ.	1 Պիանեմսիննի . . . . .	30 հոկտեմբերի :
	1 Մեմակտերիննի . . . . .	28 նոյեմբերի :
	1 Պոսիգէննի . . . . .	28 դեկտեմբերի :

Աղիւսակս այս յանդիման առնէ զկարգ ամաց ըստ Արպաղեան շրջանին, իսկ յաջորդգ ըստ մետոնականին : Յերկաքանցիւր շրջանսգ յաւելոյր միւս ևս ամիս՝ կոչեցեալ Պոսիգէնն երկրորդ, առ ՚ի հաւասարութիւն լուանական կամ քաղաքական ամաց ընդ ընթացս արեգական ՚ի լուսին շրջանին :

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

ԱՏՏԻԿԵԱՆ ԱՄՍՈՅ ԸՆԴ ՀՌՈՄԷԱԿԱՆՍ .

Յ-----ը-----ն-----ը----- ԴԽ -----ը-----ը-----ը-----  $\frac{413}{412}$  -----ը-----ն-----ը----- .

ԱՄԻՍ-Գ ԱՄԵՐԱՅՆՈՅ .	}	1 Եկատամբէննի . . . . .	6 յուլիսի :
		1 Մեապղանիոնի . . . . .	4 օգոստոսի :
		1 Բոյեղբորոմիոնի . . . . .	5 սեպտեմբերի :
ԱՄԻՍ-Գ ԱՆՇԱՅՆՈՅ .	}	1 Պիանեփոնի . . . . .	2 հոկտեմբերի :
		1 Մեմակտերիոնի . . . . .	1 նոյեմբերի :
		1 Պոսիդէոնի . . . . .	30 նոյեմբերի :
ԱՄԻՍ-Գ ՉՄԵՐԱՅՆՈՅ .	}	1 Գամեղիոնի . . . . .	30 դեկտեմբերի :
		1 Անթեստերիոնի . . . . .	28 յունուարի :
		1 Ելափեքողիոնի . . . . .	27 փետրուարի :
ԱՄԻՍ-Գ ՊԱՐԱՅՆՈՅ .	}	1 Մունիքիոնի . . . . .	28 մարտի :
		1 Թարգեղիոնի . . . . .	27 ապրիլի :
		1 Սկիւոփորիոնի . . . . .	27 մայիսի :

ԱՂԻՒՍԱԿ Գ.

ԱՏԵԱՆՔ ԵՒ ԱՒԱԳԱՆՐԵ ԱԹԵՆԱՑԻՈՑ

Արէւելք :

- Ա. Ժողով համախումբ :
- Բ. Աւագ որեարն, կամ Ժողով հինգ հարիւրոցն :
- Գ. Ատեան Արիստագին, կամ բլղոյն Արիսի :
- Դ. Ատեան Իղիեոյ, բաժանեալ յերկուս կամ յերիս Ժողովս ըստ իրացն դատելեաց :
- Ե. Ատեան 'ի վերայ կամաւոր մարդասպանութեան :
- Զ. Ատեան 'ի վերայ ակամայ մարդասպանութեան :
- Է. Ատեան 'ի վերայ սպանութեան արտրելոց :
- Ը. Ատեան 'ի վերայ սպանելոց յանկենդան իրաց :
- Թ. Ատեան 'ի վերայ եղեռանց գործեցելոց ընդ ծով, որոյ գազարէր իշխանութիւն ընդ խարխիս արկանել նաւուն :
- Ճ. Ատեան երկցագունին յինունց իշխանաց՝ որ կոչէր Մականունն. որոյ ատենակալք էին նա ինքն, և երկուք ամանք աթոռակիցք, և գպիր մի : Սմա անկ էին ինաւք որոց, և դատել զվեճա 'ի մեջ ազգականաց :
- ՃԱ. Ատեան երկրորդին յինունց իշխանաց՝ որ կոչէր Արքայ, որոյ նոյնչափ ատենակալք էին. և անկ էր նմա դատել զամպարչտութիւնս, և որ ինչ իրք կրօնից :
- ՃԲ. Ատեան մարտապետին՝ որ էր երրորդ յինունց իշխանացն. գարձեալ և 'ի սմա նոյնչափ ատենակալք էին, և ամենայն իրք եկաց և բնակաց յատեան անգր ամէկին :
- ՃԳ. Ատեան սահմանադրացն, որ ունէին զհող վաճառականութեան և զբարեկարգութեան առ հասարակ. և նախ յատեան անգր ամէկին գատ քաղաքական :
- ՃԴ. Ատեան մետասանիցն հանդերձ գպրան. սմա անկ էր պատուհասել զանկարգութիւնս քաղաքականս, և

հսկել ՚ի պահ կարգաց : Գումարէր ատեանս այս ՚ի Պարտրիստոն . և անդ դատէին գողոնք ատուրն ջենայինք մինչև ց յիսուն գրամակչիս , և գիշերայինք առ հասարակ . և նմա յանձն էր պահպանութիւն բանախց , և զդատակնիքս մահու ածել ՚ի կատարումն :

ժԵ . Ատեան քառասնիցն վիճակաւ ընարելոց , որ յամենայն աւանս Ատտիկեայ դատաւորք կացեալ՝ դատէին մինչև ցտան գրամակչիս :

ժԶ . Ատեան իրաւարարաց , որոց ոչ միշտ նոյն եկաց թիւ , այլ էր երբեմն՝ զի հազարներկերիւր իրաւարարք կային . բայց Դեմոսթենէս ետ ամբոյփել հրովարտակաւ զթիւ նոցա յերեքարիւր :

ժԷ . Նաւորդատաք , որ գումարէին ՚ի Պիրէոն ՚ի վերջնու՛մ աւուր ամսոց իւրաքանչիւր . և յատեան նոցա ելաւ ներ նախ դատ վաճառականաց և օտարականաց և նաւորդաց առ հասարակ :

Առփակն անկնադոց :

Մականուն , մի յինունց իշխանացն .

(Εἰπωνυμος) .

Արքայ , մի յինունց իշխանացն .

(Βασιλεύς) .

Մարտակա , մի յինունց իշխանացն .

(Πολέμαρχος) .

Սահմանադիրք վեցերին .

(Θεομοθέται) .

Արքոնք ինն :

Սորա իննեքին իշխանք ժողովեալ յերգարանն , կազմէին զատեան պետութեանն :

Վերակացու .

(Επιστάτης) .

Ինն յեղապետք .

(Πρόεδροι) .

Նահապետք (Πρυτάνεις) հինգհարիւր , հանդերձ վերակացուան և յեղապետք , կազմէին զատեան խորհրդոյ , և ՚ի համախումբ ժողով ժողովրդեանն պահելոց բազմին կարգաւ , ըստ կարգի նահապետութեանն :

Եփեպք (Εφέται) արք յիսուն և մի առեւտակալք կային փոխանակաւ յատեանս սոցի սոզի սպանութեանց :

- Օրինապահ (Νομοφύλακες) . տեսուչք թուարկութեան 'ի համարումք ժողովի :
